

ԱՐԵՎԱՆԻ  
ՀՐԿԵՐ  
ԾԱՀՈՅՑՑԱՆ,  
ՀՐԿՈՒ  
ՀԱՅՈՄՈՒԴԻ,

Նկարիչ՝ Հենրիկ Մամյան

«Արևանի գրող» լուսապատճենական  
հանրական 1985


# ԱԴԱԳԻ ԵՐԿԵՐ

# ԱՎԻԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՈՒԹԻՒՆ

Հայերգություն. Ծովի նիստնե.  
Ասք սիրու արի. Ասք Խայտոցի  
մասին. Ճերմակ զիավորը.  
Ճշվարթնոց. Շոնդրակեցի  
ներ. Հիրանի ժառ. Եղոմիտաս  
լայս ժնվեցի. Ինեքվիեմ  
Գիղերային պրոցց Նարեկացու ընտ.

ԳՄԴ 84 Հ 7

Դ 264



Դավթյան Վ. Ա. 149913

Դ 134 Երկեր: 2 հատորով.— Եր.: Սովետ. գրող.: Հ. 2.,  
1985, 424 էջ.


Վ. Դավթյանի երկերի երկնատորյակի երկորդ հատորում  
ամփոփված են Ռեյխնակի պոեմները:

4702080200  
Դ 705 (01) 85 «Տ»

ԳՄԴ Հ 7

© «Սովետական գրող» հրատարակություն,  
Ճեմավայրման համար, 1985





Դաւ վանքի զանգակու ռազմի դու փող,  
Դու վիճ անկում, գագաթի ներբոշ...

## ՎԻՃԵՐԳՈՒԹՅՈՒՆ.

... Եվ ճանապարհը ինձ տանում է վեր:

Ծեկ քարափներ են, պղնձե վիճեր,  
Պղնձե տապ է,  
Պղնձե տոթ է,  
Պղնձի համ է,  
Պղնձի հոտ է,  
Պղնձի շողուն, պսպղուն փոշի:

Արևահարվող, մարող օշոշի  
Դեղին հորանջ է, ծարավ է դեղին,  
Դեղին մորմոք է ու ցա՞վ է դեղին:

Եվ ճանապարհը ինձ տանում է վեր:

Մի հոգնած, ծարավ, շնչահատ ստվեր  
Իրեն հազիվիազ այդ տապից հանել,  
Ժայի մութ խորշում լուռ ապաստանել  
Ու գիրկն է առել մի կապույտ ծալիկ...  
Եվ բարակ, բարակ, բարակ մի աղբյուր,  
Որ չես հասկանում՝ ծիծա՞ն է մի բուռ,

Թե՞ մի բուռ լաց է, մի բուռ հեկեկանք,  
Մի վայրկյան միայն պեծին է տալիս,  
Թողնում ակունքը ու մահանալիս  
Զուգում է իրեն կանաչ պսակով...

Հայաստան աշխարհ,  
Ինչպե՞ս ապրեցիր  
Այդ մի բուռ ջրով ու մի լուրջ ծաղկով...  
Եվ ինչպե՞ս եղավ,  
Որ գլխիդ վրա խշխշում է դեռ  
Կանաչից, աստղից ու քամուց հյուաված  
Մենավոր բարդին....

Հայաստան աշխարհ,  
Առեղծված ես հին,  
Խրթին առեղծված,  
Ու չեմ կարենում գաղտնիքդ բացել,  
Սեպագիր ես դու հողմերից եղծված,  
Ու չեմ կարենում խորին խորհուրդդ  
Խոսքի վերածել,  
Ծակատագիր ես,  
Որ մրուրի մեջ թաթախված շանթն է շառաչով գրել  
Եվ սրբագրել տառապանքն ինքը...

Բայց ինչպե՞ս եղավ, որ քո երկինքը  
Մաքոր է այճքան,  
Ասես չի լսել և ոչ մի անեծք,  
Եվ ինչպե՞ս եղավ, որ ապրում ես դու  
Ծիծեռնակների  
Ու արծիվների  
Ու աստվածների կապոյտ աշխարհում...

Հայաստան աշխարհ,  
Դու լոռում, լոռում,  
Լոկ տալիս ես ինձ  
Ծիծեռնակների  
Ու արծիվների

Ու աստվածների կապույտ աշխարհից  
Դեմքդ դիտելու շնորհը վերին:

Ու ես նայում եմ լեռնապարերին,  
Ուր շողջողում է լուսաբացն անժիր...

Հայաստան աշխարհ,  
Դնձ ուշ ծնեցիր,  
Ու ես չտեսա լուսաստղի մաքուր քուրայից ելած  
Առավոտները քո այն նախնական,  
Որ քայլում էին հովիտներն ի վար  
Ու ոտներն ի վար թափթփկում էին ճառագայթ ու ցող:  
Ու ես չտեսա կապույտի միջով դանդաղ ընթացող  
Քո աստվածներին,  
Որոնց անունը կրակ էր ու սեր...

Ես աչք եմ բացել ու քա՛ր եմ տեսել...

Քարը՝  
Աստղծո խիղճը քարացած,  
Քարը, որ ծանր է, ինչպես չլացած  
Ու սրտին կաթած մարդու արտասուք...

Քարերի բուք էր ու քարերի սուզ...

Ու երբ իմ հոգնած երակների մեջ  
Ցավն է տնքացել քարի ծանրությամբ,  
Իմ ոխն արթնացել  
Ու ծառացել է քո դեմ, արարո՛ղ,  
Դնչո՞ւ այս քարի ու չարի հետ բիրտ,  
Չլացար մի բուռ քարություն ու հող...

Բայց երբ նույն հոգնած երակներիս մեջ  
Զարթնել է հանկարծ արարիչ մի դող,  
Ծշնչացել եմ.  
— Ների՛ր, արարող,  
Քանզի այդ քարի երակների մեջ

Դու կարծրությունն ես դրել իմ ցեղի,  
Դրել ես կայծի հրաշքը մաքոր  
Եվ աղբյուրների լուսը արարող...

Ու նայում եմ քեզ,  
Մրբազան իմ հող...

Նախաստեղծության մոլուցքը վայրի  
Այստեղ քարեղեն իր ոխն է թռղել,  
Բայց կատարներին լճեր կան քարի,  
Իբրև աստղն բորիկ ոտքերից  
Կաթելթած ցողեր...

Այստեղ ժայռերը հոշոտել իրար,  
Քարեր են ձևել, քարափներ քանդել,  
Բայց և կախել են քարափներն ի վար  
Աղբյուրներն իբրև արծաթե ծամթել:  
Ապառածն այնքան վայրի է ու բիրտ,  
Որ շանթերն անգամ չեն կարող խոցել,  
Բայց քարե ձեռքով, իբրև սեր ու սիրտ,  
Բոնել է բոսոր կակաչի բոցեր...

Ալ կակաչների ապստամբություն  
Եվ խոնարհություն մանուշակների...

Հայաստան աշխարհ,  
Բիրտ խոռվքների ու քնքանքների  
Անվերջանալի ալերախություն,  
Բարբարոս բարբար ու զտված հնչյուն,  
Դու անմեկնեղի ու մեծ ներշնչում,  
Որ մերթ հանում ու թաթախում է քեզ  
Աստղալույսի մեջ ու արշալույսի  
Եվ մերթ տապալում անդունդներն ի վար...

Դու՝ լույս, դու՝ խավար,  
Դու՝ խառն ու խորթին,  
Որպես խավարով ու մառախուղով

Խմորվող խոռվ նախաստեղծություն,  
Եվ դու՝ դաշնավոր բանաստեղծություն,  
Որ աղոթում է լուսի, բարության,  
Քո խաղաղության ու հացի համար...

Եվ բուրում է քո հոգնոր հացը...

Քո մագաղաթի ամեն մի էջը  
Խշխշուն ու տաք մի լուսաբաց է,  
Եվ ամեն տողը  
Լուսաբացի մեջ միացող ակոս,  
Ուր ոգիդ շոայլ ցորյան է թափել,  
Եվ ամեն նախշը՝  
Որդան կարմիրի հրեղեն թևով  
Երկինք սավառնող հարության հրաշք  
Եվ համբարձումի անսուտ առասպել...

Մագաղաթնե՞րդ...

Ու մինչև հիմա չեմ կարողանում  
Վերծանել նրանց խորհուրդը խորին,  
Այդ ինչպե՞ս եղավ, որ օրը օրին  
Ծնել խավարը քո տառապանքի,  
Արտաշնչել են «առավոտ լուսո»,  
«Արեգակ արդար», «փառք ճառագայթաց»...

Մայրենի լեզու,  
Դու՝ ոգի, դու՝ հաց,  
Դու՝ անզուգակից, դու՝ միակ աստված,  
Որ աստծո նման զոհ է պահանջում...  
Եվ երբ շաշել է փարձության քամին,  
Մենք մեզ ենք դրել զոհասեղանին,  
Սակայն չենք զիշել  
Քեզնից ոչ մի բառ և ոչ մի հնչյուն...

Հայաստան աշխարհ,  
Դու՝ խոնարհ աղոթք,  
Բայց նաև՝ տարծվի ահեղ կոնչյուն,

Դու՛ վանքի զանգակ ու ռազմի դու փող,  
Դու՛ վիհի անկում, գագաթի ներբող,  
Դու՛ ներման թափիշ, վրեժի եղջուր,  
Դու՛ խաղաղ կրակ, մոլեգնած դու ջուր,  
Դու՛ սիրո ծաղիկ ու վայրի տատասկ,  
Դու՛ լեղի որոս, կաթնահամ դու հասկ,  
Նարեկա վանքի քարե հրթիռով  
Առ աստված միտող դու Նարեկացի  
Եվ աստծո կողը գանգատով խրվող  
Ամեղ ցասումը Փրիկյան կայծի...  
Եվ դու՛ տառապանք,  
Որ ծանր է որպես կուանը՝ սալին...

Բայց այդ խոռված անդաշնության մեջ  
Դու ինչպե՞ս գտար  
Դաշնության խորհուրդն՝ այդ զարմանալին:  
Խաչքարիդ վրա  
Ասես թե ինքը հրաշքն է թառել,  
Որ թեթև շնչից պիտի վերանա:  
Եվ քո կամուրջի  
Սլաք կամարը այնպես է սուրում,  
Ասես հրեղեն հովատակ է նա:

Հայատան աշխարհ,  
Այդ ինչպե՞ս արիր, որ քարը շնչի  
Ու ոգիանա ու դառնա Անի...

Ինձ ուշ ծնեցիր,  
Բայց ես երևի քո մայր ոստանի  
Մի գմբեթի մեջ խորհուրդ եմ եղել,  
Մտորմունք մի լուռ,  
Նրա մի զանգի ղողանջը տխուր,  
Ծքեղ թախիծը ինչ-որ կամարի  
Եվ քար եմ եղել պարիսպների մեջ՝  
Վեմ հպարտության...

Ինձ ուշ ծնեցիր  
Ու կտակեցիր ցավը պարտության...

Իմ սրտի միջով խուժում է ահա  
Դեղին սամումը անապատային,  
Հորդան այդ շեղաչ, խուժութը, վայրին,  
Որ խոլ կոնչում, երգում ոնգաձայն,  
Վարգում բյուրեղյա հրաշքի միջով  
Ու նիզակներն է մեխում քրքիջով:

Հայաստան աշխարհ,  
Այդ հեղեղի դեմ բիրտ ու հողմատոն  
Դու՝ փլչող գմբեթ ու ծալվող դու այոն,  
Դու՝ թոխքի մեջ տապալվող կամար,  
Լպիրշ աչքի դեմ՝ դու մերկ Տիրամայր,  
Քարե հառաջանք, քարե արտասուք  
Եվ գեղեցկության ծնկածալ դու սուգ...

Եվ քո տապալվող գեղեցկության հետ  
Դարեր ու դարեր տապալվել եմ ես,  
Ամեն սասանվող ու ծալվող այան հետ  
Սասանվել եմ ես ու ծալվել եմ ես,  
Մոխիր եմ ծամել ու ծամել փոշի,  
Այդ փոշու միջից նորից թնել եմ  
Ու քո ցավի պես հարատնել եմ...

... Աշնան առավոտ... Մենավոր բարդին  
Ասես գիշերվա թափած աստղերը  
Մեկ-մեկ հավաքել, բարձել սաղարթին  
Ու նորից դեւափի երկինք է տանում...

Հայրենի հովիտ՝ սրբազան անուն,  
Այստեղ ծեր նոյը, այդ պատկառելին  
Քամեց առաջին ողկույզը արդար,  
Խմեց, խեճացավ ու աստվածացավ  
Ու աստծո նման կանգնեց մերկ ու բաց...

Աշնան առավոտ,  
Քո իսկ խելագար բույրերով հարրած,  
Քայլում ես նորից աստծո նման մերկ

ԵՎ առած հողի շոայլ նախընծան,  
Հողոտ ու շողոտ մտնում ես հնձան...

Աշնան թուխ գիշեր՝ հոգնած այգեպան,  
Նստել ես ահա քո այգու քարին,  
Զեռքիդ գավաթը, որ դեռ աստղային  
Կայծկլտումների տենդով է եռում...  
Գդակդ խաղաղ դու վար ես բերում  
ԵՎ աչքերիդ մեջ կապույտը վերին,  
Գիճին տանում ես քո շրթունքներին  
Ու սուրբ մի ծեսով,  
Սուրբ դողով լեցուն,  
Խաղաղություն ես մաղթում դու խոնարհ  
Քո վազին, այգուն ու ամենեցուն...

Բայց դու, Հայաստան,  
Մմբակների տակ տրորված ողկույզ,  
Դու՝ հեղված գիճի, բզկտված դու լուս,  
Հանգչող փեթակի տաք ու խոլ դու ձայն,  
Դու՝ անդուռ հնձան...

ԵՎ գիշերային անքնության մեջ,  
Երբ իմ արյունը մխացել տխուր,  
Մեջքիս երակը տնքացել է խոլ,  
Տնքացել, ինչպես մայր Արածանին,  
Հնազանդպել եմ ես նրա ձայնին,  
Ծամփա եմ ընկել,  
Որ նշխարներդ մեկ-մեկ հավաքեմ  
Ու ոտից գլուխ քեզ երկրպագեմ:

ԵՎ թափառական գուսանի նման  
Անցել Մասիսի կապուտակ փեշով,  
Հոգնած ոտքերս ցողել մշուշով,  
Իշել եմ նորից հովիտներդ հին...

Անձրևից հետո  
Արտույտներն այնտեղ խենթանում էին,

Անձրևից հետո երկնքի միջով  
Յոթ միրիավ էին թռել երևի  
Եվ թռել էին իբրև ծիածան  
Հետքը թռերի...

Անձրևից հետո այնտեղ յոթ երկինք,  
Յոթ ծիածան կար ու յոթ մանկություն...

Հողի կոնքերին  
Դողում մայրության մի տաք ցանկություն,  
Հևում տարփանքով, փարփում էր խոփին:

Օրը՝ բարության արցունքը կոպին,  
Ուկե սերմեր էր ակոսին հղում:  
Եվ խոփն այնպես էր այնտեղ պսպղում,  
Ասես նրա մեջ աշխարհի խիդճը  
Ամենախոշոր իր աստղն էր վառել...

Հայաստան աշխարհ,  
Դու՝ արտ, դու՝ արև,  
Դու՝ ծլարձակման կանաչ արշալույս,  
Երկնքի դիմաց դողացող դու հույս,  
Քրտինքով ցողված հասկի ճառագայթ,  
Իմաստության պես խոնարհված դու արտ,  
Դու՝ ամառային մեծ արևագալ,  
Դու՝ հնձի զնգոց, ոսեղեն դու կալ...  
Վանքի խավարում Տիրամոր առաջ  
Հասկերից հյուսված ոսկեցող դու խաչ  
Եվ արյուն՝ հեղված այդ հուստ խաչին...

Ինձ ուշ ծնեցիր,  
Ու ես չտեսա  
Քո Թղոր Դավթի թուրը հրածին,  
Ինձ կտակեցիր  
Տիսուր արյունը Փոքր Մհերի՝  
Նրա զորավոր անզորությունը,  
Քարանձավային հառաչը նրա,  
Քարանձավային այդ դառնությունը:

Հայաստան աշխարհ,  
Քո անձավներում  
Առեղծվածային ոգիդ է ապրել,  
Որ հեզ էր իբրև աղոթք ու ներում  
Եվ ըմբոստ, որպես լույսի առասպել:

Քարի արցունքն է որպես ջինջ կանթենդ,  
Նրանց կամարից կախվել հեծությամբ,  
Քո երազներն են բնակվել այնտեղ  
Իրենց սովահար ճգնակեցությամբ:  
Քո մոլոր հույսն է այնտեղ թափանցել,  
Խաչվել է քարի արտասուրբներում  
Եվ այդպես խաչված, նորից համբարձել,  
Միտել է դեալի անհայտն ու հեռուն:

Միտել, սլացել, սուրացել է վեր,  
Որ կապույտի հետ, աստծո հետ խոսի,  
Քանի անգամ է այստեղ կրկնվել  
Ավետարանը ըստ Մատթեոսի...

Հայաստան աշխարհ,  
Դու ինձ ծնեցիր  
Մեծ ու գերագույն տառապանքիդ մեջ,  
Քո անկումի մեջ մեծ ու գերագույն...  
Եվ գիշերները, երբ իմ արյունը  
Ալրոդ ծարավից մխում է անքուն,  
Ինձ թվում է թե բերդ եմ պաշարված  
Ու որոնում եմ դեպի ջոր տանող  
Միակ գաղտնուիին,  
Չեմ գտնում սակայն...  
Ու մերթ թվում է,  
Թե անապատի ավագի միջով  
Միայնակ քալլոդ որբ մանուկ եմ ես,  
Որ ձայն եմ տալիս,  
Բայց չեմ ստանում ոչ մի արձագանք...

Տնակ եմ ավեր, թոնիր եմ հանգած  
Եվ ավերակի ճեղքերից բլսած

Եղինջի կսկիծ,  
Հուրիրան աստղն է ծագում գիշերով,  
Որ վրաս հսկի ,  
Բայց արցունք դարձած՝ կաթում է վրաս...  
Ու մերթ թվում է,  
Բյուրեղ առ բյուրեղ փշրված հրաշք,  
Վանք եմ փշրված  
Ու մի բզկտված, արնոտված «Նարեկ»,  
Ընկած գավիթում:

Քամին գալիս է,  
Իմ մագաղաթյա հառաշը թերթում  
Եվ իմ հեծության մրրիկը առած,  
Տանում, փոռում է ամայի երկրի  
Որք ու ամայի թախծության վրա:

Ու մերթ թվում է՝ աղբյուր եմ մաքուր,  
Որի կոկորդում մեր վարդավառի  
Ծիծաղը մնաց որպես հեկեկոց...

Կալ եմ ամայի, ջրաղաց եմ գոց  
Եվ գյուղի ճամփին  
Արծաթ թափթփող մենավոր բարդի,  
Որ էլ ոչ մեկի ճամփան չի պահում...

Բայց ինչպե՞ս եղավ, որ աւրում եմ դեռ  
Ծիծեռնակների  
Ու արծիվների  
Ու աստվածների կաւույտ աշխարհում...

Հայաստան աշխարհ,  
Ո՛չ, իոդ չես դու լոկ, դու քար չես միայն,  
Դարեր ու դարեր գոյացել ես դու  
Մեր երազների տաք աճյուններից,  
Որոնցից անվերջ նոր երազների  
Հրաշքն է աճել,  
Դու գոյացել ես

Մեր ըմբռստության շառաչյուններից,  
Որոնց արձագանքն ահագնացել է  
Ու անվերջ շաշել...

Դու գոյացել ես առեղծվածներից,  
Մեռնող ու ծնվող մեր աստվածներից,  
Մեր համբերության քարե քերդերից,  
Մեր սիրո մաքուր ծաղկաթերթերից,  
Լացող մամուռի արտասուքներից,  
Նահատակներիդ սուրբ մասունքներից,  
Օչախի բոցից, ծխանի ծխից,  
Քո ոգուց ելնող այն մառախուղից,  
Որից աստղեր են ծնվում աշխարհում...

Հայաստան աշխարհ,  
Իմ կավ, իմ արյուն,  
Իմ հիճ տառապանք ու իմ պարտություն,  
Իմ լուսե խոյանք, իմ հպարտություն,  
Իմ թաքրուն գանգատ ու իմ գոհություն,  
Իմ բախտ, իմ հավատ ու իմ գոյություն...

Հայաստան աշխարհ,  
Դու խաչելության, ցավի, թախծության  
Եվ հրաշալի ու մեծ հարության  
Անվերջանալի արարողություն...

Հայաստան աշխարհ՝ Արա Գեղեցիկ,  
Հայաստան աշխարհ՝ հրեղեն դու այուն...

Եվ ձիս մեզ Խերմակ Վրարատն էր ցոլում,  
Եվ խշում էր, Խշում Վրտաշատի բարդին

## ՃՈՒՆ ՇԽԱՆԻ

Եվ պղնձե Բազար շեփոր պարզվեց ծագող արեգակին,  
Եվ պղնձե արեգակից փայլատակեց Բազար ծնծղա,

Եվ շեփորներն այդ պղնձե դողանջեցին Միանգամից,  
Միանգամից ծիծաղեցին ծնծղաները պղնձաձայն...

Ու երկնային աներևույթ զորքի նման

Գունդը գնդին գումարելով,

Հազար-հազար ալիք տալով,

Հոխորտալով ու ծփալով,

Ղողանջներն այդ ահագնացան

Ու գնացին նվաճելու երկինքն արար:

Պղնձաղեմ Բազար խորմեր ծունկի եկան Միանգամից,

Միանգամից ծունկի եկան Բազար կրակ քրմուհիներ,

Ծունկի եկան ու ոչեցին արևի դեմ.

— Փա՛ռք քեզ, արև, օրինա՛նք քեզ, Ռա՛,

Դու ես ցոլում մեր սրբազան

Ու մայրաջութ նեղոսն ի վարի,


Դու ես սրում ու զորացնում

Սուրբ Ապիսի եղջուրը խոլ...

Փա՛ռք քեզ, արև, օրինա՛նք քեզ, Ռա՛,

Դու ես տախիս արմավ ու ձուկ

Եվ նաև խեժ անուշահոտ,



Դու ես լցնում ողկոյզն արդար  
Եվ ստիճքը մատադ կույսի:  
Փա՛ռք քեզ, արև, օրհնա՛նք քեզ, Ռա՛...

Նեղոսն ի վար արեգակի ցոլքն է Բոսում՝ պղիճն է լույծ,  
Նեղոսն ի վար ասես վագրի մորթիներ են փոել հազար,  
Նեղոսն ի վար հազար ճերմակ առագաստ է լողում դանդաղ,  
Հազար ճերմակ ու մի կարմիր, բո՛ց առագաստ...  
Բոցն այդ ծփում, ցոլք է նետում Նեղոսն ի վար,  
Նեղոսն ի վար ցոլքն այդ կարմիր՝ արյուն է տաք,  
Վին է զնգում Նեղոսն ի վար,  
Զնգում ջնար ու թամբուրա...

Պղնձադեմ հազար քուրմեր խոնարհվեցին կրկին անգամ,  
Կրկին անգամ խոնարհվեցին հազար կրակ քրմուիչիներ,  
Ու հնացող լուության մեջ  
Մի երգասան ոգեց, ասաց.

— Կլեոպա՛տրա, թագավորաց դու թագուիի,  
Կլեոպա՛տրա, գեղեցկություն տիեզերաց,  
Կանգնել ես դու առագաստիդ բոցի ներքո,  
Եվ մարմինդ սյուն է բոցի,  
Կլեոպատրա, և ինչի՞ց է, որ չի վառվում  
Քո պարեգուտը թափանցիկ...

Կլեոպա՛տրա, հայացքիդ տակ  
Ընկ առյուծներն անապատի  
Սողուն դարձած, գալիս, ոտքերն են քո լիզում,  
Կլեոպատրա, հայացքիդ տակ  
Սողունները անապատի  
Ծառս են լինում ու մոլեգնում են կախարդված:

Կլեոպա՛տրա, ծամիդ հյուսկեն թոկ ես արել  
Եվ գցել ես պարանոցին թագավորաց,  
Քո մատների շոյանքը մեղմ  
Ստրկության խարան է խոր  
Ծակատներին թագավորաց,

Կլեոպատրա, քո այդ քնքուշ ոտքերի տակ  
Տերություններ են խարխլում թագավորաց...

Նեղոսն ի վար հազար ճերմակ առագաստ է լողում դանդաղ,  
Հազար ճերմակ ու մի կարմիր, բոց առագաստ,  
Նեղոսն ի վար հազար-հազար թի է ելում միանգամից,  
Միանգամից հազար-հազար թի է ցոլում արևի դնմ,  
Ու թիերից հալած պղինձ է կաթկթում...

Հազար ճերմակ առագաստներ անշարժացան Նեղոսի մեջ,  
Ու մի կարմիր, բոց առագաստ դեպի ափը լողաց դանդաղ,  
Եվ թագուհին իշավ նավից:  
Ռսկեմունակ փոքրիկ ոտքը դրեց հողին՝  
Զիստը դողաց մետաքսի տակ:  
Ռսկեմունակ փոքրիկ ոտքը պոկեց հողից,  
Եվ թրթուաց ստինքը տաք:  
Նա քայլ արավ, ու գալարվեց մեջքը բեկ-բեկ,  
Ինչպես մեջքը պիթոն օձի,  
Նա քայլ արավ, ու մետաքսը կոնքերն ի վար  
Ծփաց, ինչպես շողքը բոցի:

Նա քայլ արավ, և հայացքներ հազար-հազար  
Խոնարհվեցին ու փովեցին ոտքերի տակ,  
Նա քայլ արավ, և հայացքներ հազար-հազար  
Եղան դանդաղ ու հիացքով գալարվեցին մարմինն ի վեր:

Դեմք բեմն է, ու բեմն ամբողջ արծաթ է ձույլ՝  
Անտոնիոսն է այդպես կամել,  
Դեմք բեմն է, ձույլ ոսկի է գահը բեմի՝  
Անտոնիոսն է այդպես կամել,  
Հովանին է ոսկերանված,  
Գոհար ակով ու մարգարտով ծիածանված,  
Եվ բազրիքներն են պորիյուրեն՝  
Անտոնիոսն է այդպես կամել:  
Ծովացել է աշխարհն այստեղ ու կարկամել  
Եվ սպասում է շնչարատ:  
Եվ շնչարատ շոգն է հնում,

Եվ դունչերը իրենց քարե թարին դրած,  
Քարե ամեղ առյուծներն են ասես Անում  
Բեմի աջին ու ամյակին:

Կլեոպատրան ելնում է բեմ,  
Ելնում, կանգնում աշխարհի դեմ ու տորթի դեմ:  
Կլեոպատրան՝  
Հպարտություն սքանչելի  
Եվ թագակիր օձ է շողուն,  
Կլեոպատրան՝  
Միրաժի պես անմատչելի  
Եվ տենչալի մահ է ու թույն...  
Կլեոպատրան՝ այրամարդու  
Տաք ձեռքերի տենչանքը տաք,  
Կլեոպատրան՝ այրամարդու  
Արյան մրրիկ ու փոթորկանք...  
Կլեոպատրան ելնում է բեմ  
Նժույգի պես առույգ ու ձիգ  
Եվ արևի շողբին պարզում  
Իգությունը իր գեղեցիկ...

Պղնձադեմ հազար քուրմեր խոնարհվեցին կրկին անգամ,  
Կրկին անգամ խոնարհվեցին հազար կրակ քրմութիներ,  
Եվ որոտաց մունետիկի թմրուկը բամբ.  
— Թող լսելի լիճի համայն տիեզերաց,  
Աշխարհներին արևելյան,  
Աշխարհներին արևմտյան  
Թող լսելի լիճի հավետ.  
Սուրբ օրինությամբ Օսիրիսի և Ապիսի  
Եվ օրինությամբ Կլեոպատրա աշխարհաշող արեգակի  
Եվ Անտոնիոս զորավարի զորեղ բազկով  
Արմենիան է հավետ պարտված ու նվաճված...  
Եվ արդ արքան Արմենիայի՝  
Արտաքազը շղթայակաաւ,  
Կլեոպատրա արեգակի առաջ գլուխ պիտի թեքի  
Եվ հաստատի՝  
Արմենիան է հավետ պարտված ու նվաճված...

Ցնցվեց հանկարծ հայոց շղթայակապ արքան,  
Եվ ցնցվեցին ձեռքի շղթաները ոսկե,  
Զգաստացան նրա պահապաններն իսկույն,  
Ու ցցվեցին իսկույն նրանց տեգերը շեշտ:  
Արտավազդի դեմքով զայրույթի ամպ անցավ,  
Եվ քմծիծաղ շողաց աչքերի մեջ տխուր.  
«Արմենիա»ն է պարտված, այդ ումի՞ց է պարտված,  
Եվ նվաճված նաև, և նվաճված ումի՞ց...

Գո՞յ Անտոնիոս, դու գող, փառքի չնշին դու գող,  
Եվ մուրացիկ փառքի, և մուրացիկ սիրո,  
Գո՞յ Անտոնիոս, դու գող... Պարթևներից պարտված,  
Պարթևներից ջարդված դու երկիրս եկար,  
Ստրուկի պես եկար ու բրածեծ մի շան,  
Երկար շողոմ խոսքով ու քննությամբ եկար...  
Հաց մուրացիր՝ տվի, գութ մուրացիր՝ տվի,  
Ծածկ մուրացիր՝ տվի զինվորներին քո գող,  
Գո՞յ Անտոնիոս, տվի, տվի հային վայել,  
Մարդուն վայել տվի ու արքային վայել...  
Գո՞յ Անտոնիոս, տվի... Եվ գիտեի սակայն,  
Ես գիտեի վատիդ, այդ դու էիր հատել  
Կիկերոնի գլուխն, այն գլուխը լուսե,  
Որ ճաճանչ էր տալիս քո հոռոմաց հողին  
Եվ ճաճանչ էր տալիս տիեզերացն արար...  
Ես գիտեի... Ու ես կարող էի պարարտ  
Պարանցիդ վրա սրիս շեղքը փորձել  
Եվ Շիզակս փորձել ճարպակալած կրծքիդ,  
Կարող էի, հոռո՞մ, սակայն չարի, զի մենք  
Սովորություն չունենք զարկել զարկված մարդուն  
Եվ ընկածին ոտնել...

Ու ես չարի, հոռո՞մ,

Գո՞յ Անտոնիոս, չարի, սակայն դու ի՞նչ արիր...  
Զորք հավաքած նորից իմ երկիրը եկար,  
Դարձյալ շողոմ խոսքով ու քննությամբ եկար,  
Եղբայրության երդմամբ, ընծաներով եկար,  
Ու ես՝ զինվոր ու մարդ՝ հավատացի վատիդ  
Եվ վրանդ եկա... Ու գողացար դու ինձ,

Ելուզակի նման իմձ գողացար,  
Զեռքիս շղթա դրիր, շղթաներն այս ոսկե,  
Որ պարտության ամոթ խայտառակ  
Ուկեզօծես այսպես, գող Անտոնիոս,  
Եվ ինձ նվեր բերես հոմանութուն քո բոզ,  
Գո՞ն Անտոնիոս, դու գող, Բազար անգամ դու գող...  
Եվ արդ ի՞նչ է ճշում մունետիկդ...  
Հայաստա՞նս է պարտված, այդ ո՞ւմից է պարտված,  
Եվ նվաճվա՞ծ նաև, և նվաճված ումի՞ց...  
Հայաստա՞նս... Այնտեղ առավոտ է հիմա, արևագալ,  
Արտաշատի բարդին կապույտն ի վեր միտող թիթոոց է ոսկե,  
Բարի ծլվլոց կա թոշունների բարի կտուցներին,  
Եվ Մեծամորն ի վար արծաթի ու լուսի թափալում կա զվարթ:  
Հնամեններից պոկած գինեթաթախ փեշերն առույգ ծածանելով,  
Հովն է անցնում հիմա խարտյաշ այգիներով Արտաշատի,  
Ծավի ծուխ է պոկում արևն ի վեր շնչող ծխանների շուրթից,  
Թոնիրների շուրթից տաք բուրմունք է պոկում ցորեա Բացի...  
Հայաստա՞նս... Այնտեղ առավոտ է հիմա նավասարդյան,  
Եվ վաղ առավոտի ծիրանածիր ու ծուփ ծխի միջով  
Կուոքերի պես զորեղ ու աննվաճ ցովեր  
Իրենց երթն են անում Արարատյան դաշտով,  
Եղջյուրներին՝ ծանր, շեկ ողկոյզներ,  
Ծակատներին՝ արև ու ճառագայթ...  
Խակ տաճարի առջև Աստղիկ աստվածութու  
Կաքավում կա զվարթ ու փանդիոի նվագ...  
Եվ աղջիկները մեր լուսատինք  
Մոտիկ վայելումի թաքուն դողից շիկնած,  
Կաքավում են զվարթ և սպասում  
Փեսաներին իրենց քաջագոտի,  
Որ Աստղիկի բարի Բայացքի տակ  
Իրենց անմեղության տատրակները զոհեն...  
Եվ բացվում են հիմա Արտաշատի  
Դարպասները ծանր ու պղնձակոփ,  
Եվ նժույգներ՝ պլաք ու նետ պարանոցով,  
Եվ հրդեմի ծվեն ալ նժույգներ,  
Եվ փոթորկի ծվեն խոլ նժույգներ  
Ալանում են բացված դարպասներով,

Որունգների մեջ ჩեռու զովը լեռան,  
Ուր քարայծն է թոշում քարերն ի վեր,  
Ուր վարդում են խարտյաշ եղջերուներ,  
Եղնիկներ են վազում տխուրաչյա...

Ո՞ այր, օ, ո՞ տայր ինձ ծխանիս ծուխը սուրբ,  
Ո՞ տայր առավոտը նավասարդյան,  
Եղնիկների վարդը հայոց լեռներն ի վեր,  
Ու եղջերվաց վարդը ձորերն ի վար.  
Ո՞ տայր, օ, ո՞ տայր ինձ...»:

Եվ պղնձե հազար շեփոր կրկին պարզվեց արեգակին,  
Եվ պղնձե արեգակից փայլատակնեց հազար ծնծղա,  
Եվ շեփորները պղնձե դողանշեցին միանգամից,  
Միանգամից ծիծաղեցին ծնծղաները պղնձաձայն...

Կլեոպատրան նստեց գահին մետաքսների ցոլք ու փայլով,  
Ցոլք ու փայլով մետաքսների տուրնառեց արևի հետ,  
Եվ շքերթը շարժվեց դանդաղ...

Դանդաղ քայլեց հայոց շղթայակապ արքան,  
Ու զնգացին ձեռքի շղթաները ոսկե:  
Հայոց արքան՝ անձնյա մի այրամարդ,  
Հայոց արքան՝ խայտակն ու գանգրադեղ,  
Հայոց արքան ասես կուոք է մի կուո,  
Որ Վահագնի մարմար պատվանդանից իշել  
Եվ քայլում է... Գանգուր գիսակներին  
Զյուն է դիպել թեթև, թեթև եղյամ:  
Քայլում է նա, ասես դրոշմում է հողին  
Կշիռը իր անձի... Քայլում է նա դանդաղ,  
Աշքերի ում թեռու, կապույտ մի ծուխ,  
Որ ծփում է թեթև, երակ-երակ  
Ու ձգվում է դեպի ոլորտն անամս,  
Ուր տեսիլքի նման Արարատն է ցոլում..

Արարատը՝ նրան դար ու դարեր  
Հայոց ըմբուտ հողի աստվածներն են նայել

ԵՎ թողել են ձյունե կատարմերին  
Իրենց հայացքն իբրև հավերժություն...  
Արարատը՝ նրան հեռու մի օր  
Հայոց ըմբոստ հողի նահապետն է նայել  
ԵՎ ժայռերին նրա ու քարերին  
Թողել ադամանդյա մի կարծրություն...

Քայլեց այդպես հայոց շղթայակապ արքան  
Ու երբ հասավ թեմին, որոտացին կանչեր,  
Աղաղակներ թուան աջ ու ձախից.  
— Գլուխ թեքիր, արմեն...  
— Բարբարոս, թեքի՞ր...  
— Թեքի՞ր Կլեոպատրա արեգակի առաջ...

Բայց հայացքը հեռու Արարատի ցոլքին,  
Անցավ հայոց արքան վսեմ ու լուս:

Սակայն հրաշք եղավ կարծես,  
Կլեոպատրան եղավ տեղից,  
ԵՎ աչքերում չկար ցասում,  
ԵՎ ճակատին չկար կնճիռ,  
ԵՎ շորթերին վճիռ չկար...  
Առեղծված կար աչքերի մեջ,  
ԵՎ ճակատին պայծառություն,  
ԵՎ շորթերին գորով կար տաք:

ԵՎ Անտոնիոսն ահա հեռվից մարտակառքով սուրաց, եկավ,  
Կանգնեց հայոց արքայի դեմ և հոխորտաց ցասումնալից.  
— Հանդենեցի՞ր, ստոր արմեն,  
Հանդենեցի՞ր, ստրուկդ նենզ,  
Հանդենեցի՞ր իմ կամքի դեմ ու թագութու:

ԵՎ փրփուրն է հեռում շորթին,  
ԵՎ քրտինքն է ծորում կաթ-կաթ,  
Կաթ-կաթ ճարաք է ծորում դեմքից:

— Ե՛տ, նորից ետ, ու այս անգամ  
Ոչ թե գլուխ պիտի թեքես,

Այլն ծունկի իշնես ահտի,  
Թե չես ուզում դու քառատվել:

Ու ետ քայլեց հայոց շղթայակապ արքան,  
Եվ ցնցվեցին կրկին շղթաները ոսկե:  
Ու ետ քայլեց հայոց շղթայակապ արքան,  
Աչքերի դեմ հեռու, կապույտ մի ծուխ,  
Ուր տեսիլքի նման Հայաստանն է ցոլում...

Հայաստա՞նը... Այնտեղ աստվածները մի օր  
Հավանաբար քարե մրրիկներ են հանել,  
Եվ քարը ծառս եղել, որձաքարն է եղել  
Ու ծառացած կեցել երկնցի մեջ ծավի:  
Հայաստա՞նը... Այնտեղ երկնքի շանթը շեկ  
Իր շեղբերն է փորձում ժանիքներին ժայռի,  
Սակայն փշուր-փշուր թափվում է վար:  
Հայաստա՞նը... Այնտեղ մրրիկներ են շաշում,  
Որ լեռները պոկեն իրենց տեղից,  
Եվ չգիտեն սակայն մրրիկներն այդ անմիտ,  
Որ արմատներ ունեն լեռներն այնտեղ,  
Եվ այդ արմատներն են պղնձաշիդ,  
Եվ այդ արմատներն են երկաթաշիդ...  
Հայաստա՞նը... Այնտեղ ամպերը սն  
Գալար-գալար սողում լեռներն ի վեր  
Ու փորձում են նրանց ձյունե ցոլքը մարել...  
Եվ չգիտեն սակայն ամպերն անմիտ,  
Որ կատարներն այդ սեգ ու ձյունացոլ  
Հավերժ օթևանն են աստվածների  
Եվ աստղերի համար՝ զրուցավայր,  
Եվ շողերի համար մրցարան են մաքուր...

Եվ Բայացքն այդ մաքուր կատարներին,  
Անցավ հայոց արքան վսեմ ու լու:

Կրկին Բրաշք եղավ ասես,  
Կլեոպատրան ելավ տեղից,  
Եվ աչքերում չկար ցասում,

Եվ ճակատին չկար կմծիո,  
Եվ շուրթերին վճիռ չկար...  
Առեղծված կար աշքերի մեջ,  
Եվ ճակատին՝ պայծառություն,  
Եվ շուրթերին՝ թաքուն մի դող:

Անտոնիոսը մարտակառով սուրաց կրկին,  
Կանգնեց հայոց արքայի դեմ,  
Կանգնեց գոռոզ... Եվ, սակայն, ո՞չ,  
Չհոխորտաց, այլ... շշնչաց.  
— Գլուխ թեքիր, գոռոզ արմեն,  
Անսա խոսքիս, գլուխ թեքիր,  
Եվ ինձանից ետ կտանաս կյանքի փրկված...

Բայց չխոսեց հայոց արքան:

— Ով Արտաքազ, անսա խոսքիս եղբայրական,  
Աղերսանքիս անսա, արմեն...

Բայց չխոսեց հայոց արքան:

Կլեոպատրան ելավ տեղից մետաքսների ցոլք ու փայլով,  
Մետաքսների ցոլք ու փայլով տուրևառեց արևի հետ  
Ու շուրթերի թաքուն դողով երգեց ասես.  
— Հայոց արքա Արտաքազին իր զնդանը տարեք կրկին:

Եվ չհնչեց ոչ մի շեփոր,  
Չորոտաց ոչ մի թմբուկ,  
Լոկ մի ծննդա լոռության մեջ ընկավ գետին  
Ու ծիծաղեց պղնձաձայն:

• • •

Երենույա սև մահմի մեջ մինչ է մտել քաղաքն ահա,  
Նինչ է մտել տարփոտ ու տաք թագութու պես, \  
Եվ գիշերը՝ խափշիկ նաժիշտ, արմավենու Ռովիարներով  
Ասես հով է անում վրան:

Նեղոսն ի վար ցոլք է նետել ճերմակ մարմարն ապարանքի,  
Եվ ցոլքն ի վեր օրորվելով մի մակույկ է լողում դանդաղ,  
Ու մակույկից երգ է գալիս.

— Կլեոպատրա թագուհու դուռ,  
Թե մի գիշեր բացվես իմ դեմ,  
Ես քեզ համար զոհ կրերեմ  
Հարյուր հազար ամենի ցոլ...  
Եվ քեզ համար, ոսկե կողպեք,  
Հարյուր հազար ճերմակ երինջ,  
Եվ քեզ համար, դուան ծխնի,  
Հարյուր հազար գառ նորածին,  
Եվ քեզ համար, դուան բռնակ,  
Հարյուր հազար տատրակ վայրի...  
Իսկ թագուհու մի գիշերվան  
Միայն մի զոհ ես կրերեմ  
Պարանոցս կտամ դահճին...

Իսկ թագուհին թիկնել բարձին իր փետրալից.  
Հեռվից եկող երգն է լսում և սպասում:  
Եվ հնում են շուրթերը տաք,  
Եվ ոունգներն են դողում թեթև,  
Ինչպես ոունգները զամբիկի...

Եվ թագուհու աշքերի դեմ,  
Կարմիր-կարմիր մուժի միջով  
Քայլ է անում հայոց արքան,  
Քայլ է անում գանգրագիսակ ու կորովի.  
Եվ թագուհին իր կողերին  
Ասես զգում է կորովի  
Այդ ձեռքերի օղակը տաք,  
Իր դողացող շրթունքներին  
Զգում է շունչ մի հնացող  
Եվ գալարվում բարձերի մեջ...  
Եվ գալարվում է թագուհին  
Բարձերի մեջ իր փետրալից  
Եվ գալարում բարձերի մեջ  
Իգությունն իր սքանչելի

Ու սպասում...

Ու սպասում...

Եվ վերջապես զրնգոց է գալիս դրսից,  
Եվ վերջապես հետ են զնում դոները ձուլ,  
Եվ ծանրաքայլ ներս է մտնում  
Ծղթալակապ հայոց արքան:

— Արձակեցե՛ք շղթաները Արտաքազի  
Եվ հեռացեք բոլորդ մեկ...

Կլեոպատրան քայլ է անում գորգի վրա՝  
Ասես սահմանը է կարապի,  
Կլեոպատրան խոսք է խոսում տաք շուրջերով՝  
Եվ հնչում է ասես տավիդ մի բազմալար:

— Հայո՞ց արքա, Բապա՞րտ արքա,  
Ոտքերիս տակ արքաներ եմ տեսել ես շատ  
Եվ ծարավի եմ այրական հպարտության,  
Քո այրական հպարտությամբ  
Սրտիդ ուզածը պահանջիր:

«Ահա Կլեոպատրան՝ մոտիկ ու մերձ,  
Ահա Կլեոպատրան...

Եվ թափանցիկ  
Քողերի տակ ահա մարմինը մերկ՝  
Կանչող, սքանչելի ու... մատչելի...  
Կլեոպատրան՝ գոռող այն Կեսարի  
Հոմանութին լլկված...

Եվ Կեսարի

Զեռքով իր եղրորն իսկ կառափնարան տարած  
Կլեոպատրան ահա...

Կլեոպատրան՝  
Հոմանութին բազմաց ու բյուրերի,  
Հոմանութին խափշիկ զինվորների,  
Լոկ մի գիշեր նրա ննջարանը բերված,  
Ծեգին կառափնատված ստրուկների...

Կլեոպատրան, Է՛գը...

ԵՎ ՎԵՐՁԱՎԵՆ

Կլեոպատրան՝ այդ գող Անտոնիոսի  
Ծարպոտ ձեռքերի մեջ գալար եկած,  
Ծարպոտ շրթունքները կրծով պազած  
Կլեոպատրան, Է՛գը...

Ծախո՛ւ, ծախո՛ւ,

Հոռոմների ծախու հոմանուիին,  
Հոռոմների զազիր շունչը շնչած էգը...  
Մինչև արևածագ կվայելի իրեն,  
Ապա, Բագենալով, դահճի ձեռքը կտա,  
Որ Անտոնիոսն այն գող չկասկածի ոչինչ»:

ԵՎ գապելով ճիշն ու ընդվզումը արյան,  
Հայոց արքան խոսեց, այսպես ասաց.

— Կլեոպատրա, գեղեցկությունդ մարմնավոր  
Բազմապատկիր քո հոգեսոր գեղեցկությամբ  
ԵՎ տո՛ւր ինձ ծուխն իմ ծխանի...

Ու թագուիին սիգաց Բանկարծ  
ԵՎ պատից պատ քայլեց ընդոստ,  
Ալիքվեցին քողերը նուրբ  
Ու ծփացին զիստերն է վար,  
Հետո կանգնեց ջահելիր տակ,  
Խոսեց, ասաց.

— Ով Արտաքազ, նայիր դու ինձ:

Նայեց Բայոց արքան արձանացած,  
ԵՎ թագուիու քողերն ալիք-ալիք  
Ծածանվելով ընկան ու կիսամերկ  
Կանգնեց այնտեղ կինը...

Հրաշալի՝

Հրաշալի, ինչպես կինը միայն:  
Հրաշալի կորերն իր կոնքերի  
Ջալար մեջքին Բասած, իրար գալիս

Եվ ճոճում եմ մի պիրկ, բարակ իրան,  
Եվ կրծկալները ձիգ ու հուրիրան  
Ասես պողոթկան պիտի լուս ու քոցով...  
Եվ ողորկ եմ ուսերն ու վիզը ճոճ,  
Շրթունքները խոնավ եմ ու դողոջ,  
Եվ ունագներին դոդ կա ու թրթում...

— Հայո՞ց արքա, հպա՞րտ արքա,  
Քո այրական հպարտությամբ  
Մրտիդ ուզածը պահանջիր:

— Կլեոպատրա, գեղեցկությունդ մարմնավոր  
Բազմապատկիր քո հոգևոր գեղեցկությամբ  
Եվ տո՞ւր ինձ ծուխն իմ ծխանի...

— Հայո՞ց արքա, հպա՞րտ արքա,  
Ինչ-որ երգ է գալիս դրսից,  
Մի պահ ականջ արա երգին...

Եվ գիշերվա լուսության մեջ  
Երգն էր հնչում նեղոսն ի վար...

— Կլեոպատրա թագուհու դուռ,  
Թե մի գիշեր քացվես իմ դեմ,  
Ես քեզ համար զոհ կբերեմ  
Հարյուր հազար ամենի ցոլ...  
Դոկ թագուհու մի գիշերվան  
Միայն մի զոհ ես կբերեմ.  
Պարանո՞ցս կտամ դահճին...

Կլեոպատրան կանգնեց կրկին ջամփերի տակ,  
Խոսեց, ասաց.

— Ով Արտարազ, կրկին անգամ նայիր դու ինձ...

Նայեց հայոց արքան արձանացած,  
Եվ թագուհու կրծկալը հուրիրան

Հուրիրալով պոկվեց, ու դողացին  
Իր ստիճաները գույգ... Ու դողացին  
Ինչպես ստիճաներն են միայն դողում:

Կանգնած էր կինը մերկ,  
Հրաշալի՝,

Հրաշալի, ինչպես կինը միայն,  
Եվ բաղձալի, ինչպես կինը միայն:  
Կանգնած էր կինը մերկ,  
Կանգնած խոնարհ...  
Կինը՝ արյան մրրիկ,  
Կինը՝ արյան մոլուց,  
Կինը՝ արյան տենչանք  
Ու հիացում:

Եվ թագութին խոսեց կրկին,  
Եվ դողուզ էր ձայնը նրա  
Ինչպես ձգված լարի թրթիռ...

— Հայո՞ց արքա, Բապա՞րտ արքա,  
Քո այրական Բապարտությամբ  
Սրտիդ ուզածը պահանջիր...

— Տո՛ւր ինձ ծուխը իմ ծխանի...

Կլեոպատրան վրան նետեց  
Իր քողերլ ալեծածան,  
Եվ ցասում կար աշքերի մեջ,  
Եվ ճակատին կնճրո կար մութ,  
Եվ վճիռ կար գունատ շուրթին:

Կլեոպատրան կանգնեց Բապարտ, անմատչելի,  
Կանչեց՝  
— Դահիճ...

Դրսում փայլ էր առնում Նեղոսի մեջքն արդեն,  
Եվ չքնաղ էր Նեղոսն ինչպես պիթոն օձը,

Սև նոճիներն էին կեցել անշարժ ու լուս,  
Եվ արևելքն ամբողջ արյուն էր ու բոց էր:  
Քայլեց հայոց արքան դեպի կառավիճարան  
Ու գլուխը դրեց կոճղին արյունաներկ,  
Եվ կապույտի, լուսի, արշալույսի մեջ պաղ  
Ասես ծփաց մի տաք, զարմանալի մի երգ...  
Տիտուր զնգում էին բամբիոները ուսկե,  
Կապույտ ծուխն էր ծփում ու ծավալվում անծայր,  
Եվ ծխի մեջ կապույտ ոգում էին, ոգում,

Լեռներն էին ոգում,  
Ոգում էր հողը տաք,  
Եվ անդունդներն էին  
Կոկորդաձայն ոգում...

Ո՞ տայր, օ, ո՞ տայր ինձ ծխանիս ծուխը սուրբ,

Ո՞ տայր առավոտը նավասարդյան,

Եղնիկների վարգը հայոց լեռներն ի վեր,

Ու եղքերվաց վարգը ձորերն ի վար

Ո՞ տայր, օ, ո՞ տայր ինձ...

Ո՞ տայր Արտաշատի ոսկեփոշի ճամփան,

Հնձանների բուրմունքն ու փշատի փոշին,

Ո՞ տայր թռնիրների բուրմունքը սուրբ,

Ո՞ տայր, օ, ո՞ տայր ինձ...

Տիտուր զնգում էին բամբիոները ուսկե,

Կապույտ ծուխն էր ծփում ու ծավալվում անծայր

Եվ ծխի մեջ՝ ճերմակ Արարատն էր ցոլում,

Եվ խշշում էր, խշշում Արտաշատի բարդին:



Օ, սուր զառներ, մարդիկ, ընդեմ սիրո...

## ԱՅԲ ՍԻՐՈ ԵՎ ԱՐԻ

Երեք փոշեթաթավ ու հոգնաբեկ գուսան  
Ուսերն ի վար երեք արծաթալար փանոին,  
Պղնձե կուռ ու կոփ դարպասներով  
Քաղաքամայր մտան հանդիսաքայլ  
Ու միջամուխ եղան հանդիսաքայլ,  
Ողջույն առաքելով ամենեցուն,  
Ինչպես գուսանաց է օրեն ու կարգ:

Մեկն էր ալևորիկ, ալեմորուս,  
Ապա երկորորդն այր էր թխամորուս  
Եվ երրորդն էր հուրիեր մի պատանյակ:

Եվ կանգ առան նրանք աղբյուրի մոտ  
Եվ վար առան ապա աղբյուրի մոտ  
Փանդիոները իրենց արծաթալար:

Եվ աղբյուրից այն պաղ ու քարագուտ  
Պղնձե մեծ թասով ջուր ըմպեցին  
Եվ փառք տվին ապա այդ պաղ ջրին,  
Եվ փառք տվին ապա առհասարակ  
Հայրենահամ հողին ու արևին:

Եվ նստեցին ապա աղբյուրի մոտ,  
Առան փանդիռները արծաթալար,  
Եվ լարերով փանդիռն արծաթալար,  
Ակնորիկ գուսանը որոտաց  
Եվ բամբ որոտալով վիպեց, ասաց.

— Նախ քեզ ասեմ, Արշակ, Բայոց արքա,  
Սյոր կաղներազուկ ու մեծագործ |  
Եվ տարաբախտ, սակայն, և տարաբախտ...

Եվ ապա քեզ ասեմ, Բայոց տիկին,  
Փառանձեմդ չքնաղ ու գեղաշյա,  
Եվ տարաբախտ, սակայն, և տարաբախտ...  
Եվ ապա քեզ ողբամ, պատանյակդ Գնել,  
Խարտիշագեղ, անձնյա ու սիրառատ  
Եվ տարաբախտ, սակայն, և տարաբախտ...  
Եվ նզովեմ ապա քեզ, դավադիր Տիրիթ,  
Եվ նզովեմ ապա քեզ դարեղար:

Գուսանն ալևորիկ դրեց փանդիռը վար,  
Խոսքը տալով հուրիեր պատանյակին:  
Եվ պատանյակն հուրիեր վիպեց, ասաց.

— Եվ գեղեցիկ էր հույժ և հույժ մոգիչ  
Փառանձեմը, դուստրը Սյունյաց հողի,  
Փառանձեմը, դուստրը քաջ Անդովկա:  
Աչքերը ծով էին՝ խավարամած,  
Եվ ծովերի վրա լույս էր քամված  
Եվ ծովերի վրա ծուփ-ծածանված  
Մի շողակաթ, անհուն արևագալ:  
Եվ շուրթերից ճրա լեցուն ու տաք  
Կաթկթում էր լույս մի ծիրանագույն,  
Եվ դեղձենու ծաղիկ էր կաթկթում:  
Խսկ պարանոցը սեգ՝ կոթող էր սեզ,  
Եվ պարանոցն ի վար գոհար ու ակ  
Փայլակ չէին տալիս պարանոցին,  
Պարանոցից էին առնում փայլակ:

Ապա կուրծքը լուսե և առկեցում,  
Եվ առկեցուն դողով ու մայրությամբ  
Եվ առկեցուն գինով աստվածների:  
Ապա մեջքը ասեմ, մեջք չէր, օ՛, ոչ,  
Այլ մարմարից տաշած սափորի վիզ...  
Եվ պարմանիք հազար ու բյուր հազար,  
Պայազատներ հազար ու բյուր հազար,  
Օ՛, կտային արևն իրենց կանաչ՝  
Արձակելու նրա մեջքի գոտին...  
Ու երբ քայլ էր անում, չէր քայլում, ո՛չ,  
Այլ սիգում էր նա սեգ ու սիգալով  
Շուրջը սեր էր փոռում ու առավոտ...  
Այսպես գեղեցիկ էր և հույժ մոգիչ  
Փառանձեմը՝ դուստրը Սյունյաց հողի,  
Փառանձեմը՝ դուստրը քաջ Անդովկա:

Եվ սիրելով սիրում Փառանձեմին,  
Եվ տենչալով տենչում Փառանձեմին,  
Տոշորում էր Գնելն այն պատանյակ:  
Գնելն՝ արծվաչյա, սոսեհասակ,  
Ծակատը լայն ու բաց մի ասպարեզ,  
Ուր մրցախաղ էին անում ասես  
Ցոլքերն ազնվության ու բարության:  
Գնելն՝ արծվաչյա, կորովաձեռք,  
Ծամրուտների մեջ շեկ երասին գետի  
Սեպուհների հետ քաջ որս անելիս,  
Հովազն իրրն ուլ էր նա սպանում:  
Իսկ երբ արի արքա Արշակի հետ  
Ելնում էր նա ընդդեմ պարսից զորքի,  
Սուրբ շանթ էր դառնում նրա ձեռքում...  
Գնելն արծվաչյա... Նա սեր ուներ  
Եվ ապա ճիրտ ուներ մի ահագին,  
Որից նեղվում նրա զրահը կուտ,  
Ծաք էր տալիս պղինձը թանձրածալ...  
Եվ այդ սիրով սիրում Փառանձեմին,  
Եվ այդ սիրով տենչում Փառանձեմին,  
Տոշորում էր Գնելն այն պատանյակ:

Եվ այդ սերը վսեմ, աստվածային  
Հոյժ հաճելի եղավ աստվածներին,  
Հոյժ հաճելի եղավ քաջ Վահագնին  
Եվ ամուսնուն նրա՝ լուս Աստղկան:  
Եվ Աստղիկը՝ սիրո բաշխիչն առատաձեռն,  
Եվ Աստղիկը՝ սիրո սատարուին,  
Հարսանիքի փոխեց սերը նրանց:  
Եվ հարսանիք եղավ յոթը գիշեր,  
Եվ հարսանիք եղավ յոթը ցերեկ:  
Ծառագայթյալ ժամից մինչև խավար  
Եվ խավարակ ժամից՝ ճառագայթյալ,  
Փողեր էին փշում,  
Թմբուկ զարկում,  
Եվ ոսկի էր տեղում տեղատարափ,  
Մարգարիտ էր տեղում որպես անձրև:

Եվ Փառանձեմ անզույգ գեղեցկուին,  
Աստվածների բարի հայացքի տակ,  
Գնել պատանյակին ընծա բերեց  
Եվ լիաբուխ այնպես ընծա բերեց  
Ծկուն ու ճոճ մեջքի կանաչ գոտին,  
Ընծա բերեց կույսի կանաչ գոտին  
Ու տիրաբար սիրեց, սիրեց, սիրեց,  
Խոնարհաբար սիրեց, սիրեց, սիրեց,  
Սիրեց Փառանձեմը Գնել պատանյակին:

Եվ գուսանը հուրիեր դրեց փանդիոը վար.  
Խոսքը թխամորու այն գուշանին տվեց,  
Որ վիպելով, ասաց.

— Եղո՛ւկ ասեմ ես ծեզ, ասեմ՝ ավա՛ղ,  
Մեր ազնավոր, անձնյա ու քաջ պապեր,  
Վիշապաքաղ Վահագն էր ծեզ աստված,  
Եվ Աստղիկն էր չքնաղ՝ աստվածուին,  
Եվ ծեզ աստված էին արիություն,  
Ազնվություն ու փառք առաքինի,  
Ապա աստված էին սուր ու կորով,

Ապա աստված էին սեր ու գինի,  
Աստվածներով էիք հարուստ, պապեր...  
Բայց ձեր երկրպագած արևի տեղ,  
Այն ծիրանի, կարմրիկ արևի տեղ,  
Ավաղ, մոմեր դրին դողդոց ու թուլ...

Եվ Աստղիկի տեղակ ու Վահագնի,  
Արդար սիրո տեղակ ու քաջության,  
Մարդիկ գործակիցներ արին իրենց  
Խարդախությունն ու դավն աղվեսակերպ  
Եվ նենգության օճը գալարածն:

Եվ նենգության օճը գալարածն  
Գալար-գալար եկավ ու ծվարեց  
Արշակ թագավորի եղբորորդու՝  
Տիրիթ կոչեցյալի սև սրտի մեջ,  
Երբ նա տեսավ չքնաղ Փառանձեմին,  
Տեսավ, շամբուշացավ ու ցանկացավ...  
Դարձյալ եղո՛ւկ ասեմ, ավա՛ղ ասեմ ես ձեզ,  
Աւցած ոսկեղենիկ ժամանակներ,  
Եվ ձեզ, մեր նախնիներ կորովածեռք,  
Չեզ, որ հանուն կնոջ աստվածային սիրո  
Մրցախաղի էիք հանում հպարտ  
Վեհանձնության նժույգը սիգապանծ,  
Ազնվության վահանն անխոցելի  
Եվ քաջության սուրը ճաճանչափալ:  
Այս Տիրիթը, սակայն, խորհեց իր խոհը սև  
Ու նենգության մթին խորխորատից  
Ի դուրս գոչեց շարի ոգիներին:

Եվ նենգության մթի խորխորատից  
Դուրս ելավ դավն իր կենտ, կանաչ աշբով,  
Ստությունը ելավ ձեռքին կծիկ մի սև,  
Նաև քննությունը՝ լեզվին մեղր ու թուլն:

Եվ այդ սպասարկու վտառն առած,  
Զգեց, գնաց Տիրիթն Արշակի մոտ,  
Հալոց արի արքա Արշակի մոտ:

Նախ քծնությունն իր մեղրը ծորացրեց,  
Եվ դա հաճո եկավ արքայական քիմին,  
(Օ, քծնության մեղր, ո՞ւ չես հաճո),  
Ստությունն իր կծիկն ապա բացեց  
Եվ իր ամերևույթ ու նուրբ թելով  
Խիտ խճճեց խոհերն արքայական:  
Եվ ապա դավն իսկոյն անցավ գործի  
Ու խոլ բարբառելով, այսպես ասաց.  
— Գնել պատանյակն այդ արի է հոլժ,  
Գեղեցկադեմ, անձնա ու սիրառատ,  
Եվ սիրում են նրան սիրով առատ  
Նախարարներն ամեն ու սեպուհներ,  
Եվ ուսմիկն է սիրում առհասարակ:  
Եվ ամենքն են ուզում առհասարակ,  
Որ ի վերա հայոց թագավորի  
Պատանյակն այդ և ոչ Արշակ արքան...  
Եվ զայրութից դողաց Արշակ արքան,  
Բոռունցքն իր թափամազ զարկեց գահին,  
Ու երերաց գահը ոսկեդրվագ:  
— Մարդ առաքեք իսկոյն Գնելի մոտ  
Եվ պարզեներ տարեք նրան առատ  
Եվ ասացեք ապա ողոքագին,  
Որ կարոտ եմ տեսքին իր ազնավոր:  
Եվ պատշաճ է, որ նա իր ողջ աղխով  
Ծնորհ բերի տոնին նավասարդյան,  
Որ գավաթները մեր զարկենք իրար,  
Դիտենք պարը չքնաղ վարձակներիս,  
Ապա թմրուկ հարենք, փողեր փշենք,  
Որսի ելնենք աշնան անտառներում,  
Ինչպես օրեն է դա թագավորաց:  
Եվ ասացեք՝ սա կամքն է արքայի:

Այսպես ասաց հայոց ամեն արքան,  
Ապա իշավ գահից ոսկեդրվագ  
Եվ ծանրաթաթ քայլեց սրահներով:  
Եվ քայլերից նրա այդ ծանրաթաթ

Լուս տնքացին գորգերն արյունացոյ  
Եվ հուր մորթիները Բովազների:

Թխամորուս գուամն իր փանդիոը դրեց,  
Խոսքը կրկին հուրիներ պատանյակին տալով,  
Որ վիպելով, ասաց.

— Եվ առավոտ եղավ նավասարդյան,  
Եվ վաղ առավոտն այդ նավասարդյան  
Իրեն վարդամատն մի քրմուհի  
Ոտաքորիկ կանգնեց լեռան վրա  
Եվ ապա քայլ արավ լանջերն ի վար,  
Եվ մատներից նրա ու ոտքերից  
Վարդեր կաթեթեցին հող ու քարին  
Ու շաղվեցին շողեր շուշանագույն:

Եվ առավշտ եղավ նավասարդյան,  
Բարդու տերեն իբրև ոսկեդրամ  
Փայլակ առավ ծագող արեգակից,  
Ծագող արեգակին փայլակ տվեց:  
Եվ առավոտ եղավ նավասարդյան,  
Ծխանների ծուխերն անուշ ելան,  
Կապույտ գումարելով կապույտ առավոտին:  
Եվ առավոտ եղավ նավասարդյան,  
Երիվարը Գնել պատանյակի  
Լուս էր շնչում տամուկ իր ոռոճներով,  
Ապա նորից լուս էր արտաշնչում:

Իսկ ոսկեդեն համառ մի ճառագայթ  
Փորձ էր անում անվերջ թառել մի պար  
Գնել պատանյակի կումբ-զրահին  
Ու չէր կարողանում, սակայն, թառել:  
Եվ Գնելի կողքին, Գնելին կից  
Փառանձեմն էր վարգում ինքնավայել,  
Ու սեգ երիվարի ամեն քայլքից  
Ակեկոծվում կուրծքը նրա կանգուն,  
Եվ շապկի տակ լուս էր ալեկոծվում:

Ես այդ նույսառարդը առավոտի միջով  
Վարդում էին նրանք, ու նրանց հետ  
Սերն էր աստվածային,  
Սերն էր՝ հալված, ձուլված  
Եվ տերևի դողին,  
Եվ ցողերին ցոլուն,  
Սերն էր, որ արտույտի թուխ թներին թառած,  
Բարձրացել էր մինչև ոլորտն արեգական  
Ու ճախրում էր ազատ՝ տիեզերքի  
Գմբեթի տակ կապույտ ու լուսալիր...  
Սե՛րը, որ բողբոջ է  
Ու բագինի կրակ,  
Որ շարժմունքն է միակ աստղերի ու ջրի,  
Սերը, որ սիրուն է լոկ հպատակ  
Եվ ոչ, և ոչ երբեք արքայական սրին...  
Սերը, որ արմատն ու հողովումն է կյանքի,  
Սերը՝ սերմը բարու,  
Հունդը ազնվության  
Եվ անսպառ ակունքը զորության:  
Սերը, այդ սիրուց էր ալեկոծվում  
Գնել պատանյակի արյունը տաք,  
Փառանձեմի կործքը աստվածային  
Եվ աշխարհին իջած լույսը արդար:

Իսկ անտառում մութ կար դեռ ծվարան,  
Մութը, որ լուսին է միշտ հետամուտ,  
Մութը, գործակիցն ու պասարկուն դավի:  
Մութն այդ հանկարծ ծոցից  
Մութի մի գունդ հանեց,  
Որ սրերով էին,  
Նիզակներով էին,  
Որ սակրերով էին  
Ու վաղրերով էին,  
Սկիններով էին,  
Ասպարակիր էին...  
Եկան նրանք, Բասան Գնել պատանյակին,  
Գլորեցին ծիուց Գնել պատանյակին,

Կապկեցին ամուր Գնել պատաճյակին  
Ու իրենց հետ տարան:

Փառանձեմը... ճշաց Փառանձեմը ցավից,  
Եվ նիզակի նման ճիչը սուրաց հեռու,  
Խրվեց արշալուսի տաք սրտի մեջ  
Եվ արյունեց սիրտը արշալուսի:  
Եվ ապա ծառս հանեց նա երիվարն իր սեգ  
Ու սրաթև սուրաց:  
Հանդիպակաց քամին  
Քանդեց Փառանձեմի ծամի ծանր հյուսկեն  
Ու ծածանեց օդում սև բոցի պես:

Հասավ Փառանձեմը բանակն արքայական,  
Մտավ Փառանձեմը խորան-եկեղեցին  
Ու հերարձակ փովեց սուրբ Ներսեսի առաք:  
— Կաթողիկոս,— ասաց,—  
Հասիր, առանց մեղքի  
Խողխողելու տարան իմ ամուսնուն:

Եվ Ներսեսի շուրթին սառեց աղոթքը սուրբ,  
Ու նա խափանելով պաշտոնն առավոտյան,  
Դեպի արքայական ալ վրանը սուրաց:

Եվ ծառաներն իսկույն արքային լուր տվին,  
Թե Ներսեսը ահա, տագնապած ու վրդով,  
Խոյանում է դեպի վրանն արքայական:

Քայլեց արքան դեպի վրանի խորքը մութ,  
Թիկնեց իր գահութքին ոսկեդրվագ,  
Գլխին քաշեց փափուկ սամուրենին  
Ու ձևացավ քնած...

Մտավ կաթողիկոսն այլագունած  
Ու նախ խոսքեր ասաց ողոքագին,  
Հորդորանքի խոսքեր ասաց խոնարին:

Սակայն իզուր, միայն քնած մարդու  
Ծնչառությունն եղավ պատասխանը նրա:

Ապա խոսքեր ասաց նա խորհրդի  
Եվ խրատի խոսքեր ասաց մեղմիվ:

Կրկին իզուր, կրկին քնած մարդու  
Ընշառությունն եղավ պատասխանը նրա:

Ապա խոսքեր ասաց նա զայրույթի  
Եվ անեծքի խոսքեր ասաց ահեղ:

Օ՛, վերստին իզուր, քնած մարդու  
Խոսմփոցը եղավ պատասխանը,  
Մի խոսմփոց, սակայն, որ առյուծի  
Մոնչյուն էր ասես...

Եվ այդ պահին վրանն արքայական  
Մտավ երազմակը այն դահճապետ  
Ու մեջքածալ ասաց.

— Ի կատար է հրամանն արքայական:

Բացեց Արշակ արքան աչքերն ամեն,  
Նստեց իր գահույթին ոսկեդրվագ,  
Հևկա ու բավամազ ռոռունցքներով  
Ծիկեց մի պահ աչքերն արյունամած  
Եվ հարց տվեց, ասաց.

— Եղե՞լ է ինչ...

Սուրբ Ներսեսը կանգնեց արքայի դեմ  
Եվ որոտաց, ասաց.

— Ինչպես որ օձն է քարբ ականջները խցկում,  
Որ չլսի ձայնը ճարտար թովչի,  
Այնպես էլ դու, արքա,  
Դու խցկեցիր ունկի,  
Դու փակեցիր, արքա, լսողությունը քո,  
Որ չլսես խրատն աստվածային,  
Ուստի՝ անեծքի գաս:

Այսպես ասաց Ներսեսն, ապա չվեց, զնաց,  
Էլ շդարձավ բանակն արքայական:

Եվ հրաման եղավ արքայական,  
— Թող ամենայն մարդիկ, որ բանակում են իմ,  
Եվ ամենայն մարդիկ, որ հողում են հայոց,  
Բոլորն առհասարակ՝ փոքր ու մեծ  
Ողբան մահը Գնել մեծ սեպուիի:  
Թող գան հայոց հողի ճարտար եղերամայրը,  
Եվ ձայնարկու կանայք ամեն կողմից թող գան /  
Ու հերարձակ ողբան Գնել պատանյակին:  
Ապա թող գան նաև հմուտ ոսկերիչներ  
Եվ դրվագեն ոսկով դագաղն սպանվածին

Եվ գուսանը հուրիեր դրեց փանդիոը վար,  
Խոսքը թխամորուս այն գուսանին տվեց,  
Որ վիպելով ասաց.

— Ով դու նավասարդյան խարտյաշ արևագալ,  
Եվ դու, նավասարդյան ծխանի ծովին...  
Հայոց լեռնաստանի կատարներով կապույտ  
Քայլում էին հայոց աստվածները բոլոր,  
Ուսերն ի վար ծփուն ծիրանիներ...  
Եվ այդ հուրիեր, խարտյաշ արևագալին ի տես  
Մի սիրատարի եղնիկ ու եղջերու  
Վարգում էին դեպի հովիտները սիրո,  
Երբ անտառից ելավ մի ծանրաթաթ առյուծ  
Ու ջախչախնց մեջքը եղջերուի...  
Եվ եղնիկը՝ խարտյաշ արևագալին ի տես  
Բառաշում էր ահեղ...

... Արքայական հսկա բանակի մեջ  
Բացել էին արձակ մի ասպարեզ  
Եվ մրտենուց մյուսված պատգարակով  
Բերել, դրել էին Գնելի դին:  
Եվ Փառանձեմ տիկինն իր հերքը սև  
Փոել սիրեցյալի հասակն ի վար,

Ողբ էր ասում ու ողբն այսպես ասում.

— Գնել, ճավասարդյան իմ առավոտն էիր,  
Ծխանիս ծուխն էիր, անուշ Գնել,  
Սև ամպն իջավ հողին, զարկեց կարկուտը սև,  
Ու ծխանիս ծուխը հանգավ, Գնել:

Որսի էիր եկել, դե ե՛լ. ժամն է որսի,  
Բայց դու քնել, եղո՛ւկ, խորն ես քնել:

Եվ ձայնարկու կանայք ձայնում էին ահեղ  
Ու ձայնակցում էին Փառանձեմին:

— Վեր ել, ասպար հագիր, սոսեհասակ Գնել,  
Գնել, Փառանձեմի թագ ու պսակ Գնել:

Եվ Փառանձեմ տիկինը ծնկածալ  
Իր հերքն ի վար բուռ-բուռ հող էր ցանում  
Ու ձայնում էր ահեղ երկինքն ի վեր.

— Տապարո՛վ են զարկել պարանոցին քո սեզ,  
Այս ինչքան է խորունկ վերքդ, Գնել,  
Ա՛յս, թող գնան մարդիկ, հարալեզներ քերեն,  
Որ դու զարթնես քնից, ելնես, Գնել:  
Որսի էիր եկել, դե ե՛լ, ժամն է որսի,  
Բայց դու քնել, եղո՛ւկ, խորն ես քնել...

Եվ մտախոհ, մոայլ ու ծանրաթաթ  
Կոծի վայրը եկավ Արշակ արքան,  
Նստեց Փառանձեմի դեմ-հանդիման  
Եվ սկսեց սգալ Գնել պատանյակին:  
Հառաշանքներ իջան գանգուր մորուքն ի վար,  
Գանգուր մորուքն ի վար արտասուքներ իջան:

Իսկ Փառանձեմ տիկնոց ականջի տակ  
Ինչ-որ մեկը հանկարծ խոլ շշնջաց.

— Փառանձեմդ չքնադ, մի տանջիր քեզձ  
Զի ես բարի եմ, քան Գնելը քո  
Եվ արի եմ, քան նա...

Լսեց Փառանձեմը շշուկն այդ խոլ  
Եվ ծառս եղավ տեղից ու մոլեգնած  
Պատառ-պատառ արեց շապիկն հագի...  
Եվ ի՞նչ... նավասարդյան առավոտին ի տես  
Եվ ամբոխին ի տես մերկացավ կուրծքը գիրգ,  
Որ շառավիդ նետեց արեգակին  
Եվ շառավիդ առավ արեգակից...  
Եվ այդ նավասարդյան առավոտը պայծառ  
Ասես թե առավել պայծառացավ:  
Նայեց Արշակ արքան այդ թրթոռուն կրծքին,  
Սանձահարեց արյան ընդվզումը վարար  
Եվ փակելով աչքերն այդ լուսի դեմ,  
Մտքում տվեց վճիռն արքայական:

Իսկ Փառանձեմ տիկինը շանթահար  
Գուժեց ի լուր մարդկանց ու կոծելով ասաց.  
— Օ՛, լսեցեք, մարդիկ, ականջալուր եղեք,  
Խմ պատճառով հեղվեց այս արյունը արդար,  
Մենք ինձ աչք դրեց և սպանել տվեց  
Իմ գնելին ազնիվ, իմ աստծուն...

Արշակը շեշտ նայեց Փառանձեմին  
Եվ Տիրիթին նայեց թավ հոնքերի տակով,  
Հասու եղավ դավին այն օձաձն  
Ու մտքի մեջ տվեց վճիռն արքայական:

Իսկ Փառանձեմ տիկինը դեռ կոծում  
Ու կոծի Բետ կուրծքն էր ալեկոծում:  
Ալեկոծվում էին երկու ալիք,  
Երկու հուր աստղ էին ալեկոծվում,  
Ալեկոծում արյունը արքայի,  
Արքայի կիրքն էին ալեկոծում:

Թիսամորուս գուսանն իր փանդիոը դրեց,  
Խոսքը ալնորիկ այն գուսանին տալով,  
Որ վիպելով, ասաց.

— Եվ գլխատվեց Տիրիթն այն դավադիր,  
Իսկ Փառանձեմ անզույգ գեղեցկութուն  
Արշակը կին առավ:

Արշակը կին առավ Փառանձեմին,  
Գոհար ու ակ տեղաց Բասակն ի վար,  
Սեր ու քնքշանք տեղաց Բասակն ի վար  
Եվ աղերսանք տեղաց Բասակն ի վար,  
Ու չսիրեց, սակայն, չքնաղ Փառանձեմը  
Արշակ թագավորին:  
Այլ առավել՝ ատեց, ատեց, ատեց,  
Ատեց Փառանձեմը Արշակ թագավորին:

Եվ ի՞նչ... Սերը մեռավ...  
Աստվածները հայոց, զայրացած ու վրդով,  
Թողին իրենց գահերն ամպածրար  
Ու փակվեցին մթին անձավներում...

Աստվածներից թափուր հայոց հողին  
Արհավիրքներ իջան այնուինեն...

Հիմա լարեմ փանդիռու ու ոգելով ասեմ,  
Ասեմ կրկին անգամ ու բյուր անգամ ասեմ.  
Օ՛, սուր չառնեք, մարդիկ, ընդդեմ սիրո...  
Եվ բնության,  
Մարդու բնության դեմ,  
Օ՛, սուր չառնեք, մարդիկ, օ՛, սուր չառնեք...



Խոսեց մեր լեզուն,  
Հոգուն ռև դարձավ ու Հանճարին՝ պուն...

# ԱՅԲ ՄԻՃԱՅՅԻ ՄԵԱՐՆ

Մենք վիշտ ունեինք,  
Քանզի սանձակոծ առշավում էին քոլոր կողմերից  
Ու մեր ժայռերը դարձնում ահեղ սրերի թեսան,  
Եվ արևելյան, և արևմտյան խորշակ-հողմերից  
Խանձվում էր արդեն հայոց ցորյանի արտը սրբազան:  
Հայոց ծիրանին իր ծաղիկներն էր թերթ առ թերթ թափում,  
Եվ կորանում էր մեր հպարտության բարդին այն շիտակ,  
Ցամաքում էին ակն-աղբյուրները մեր մարմարաքուխ  
Օտար ձիերի երախների տակ:  
Մեր ինքնությունը ու մեր ոգին էր ոստիխն ավար,  
Մեր կենաց ծուխը, ծիրանի ծուխն էր ցրվում հողմերը,  
Ու մեկիկ-մեկիկ քար էր գլորվում անդունդներն ի վար  
Մեր հին բերդերի սյուն ու որմերից:

Բայց մի ժողովուրդ, որ ազատաշունչ իր առապելի  
Եռաքն Շետով խոցել էր սիրտը քոնակալ Բելի  
Եվ իր ինքնության կրակը վառել,  
Որ աստվածներ էր բոցից արարել,  
Եվ իր Արայի նման գեղաթով  
Արհավիրքների դժնդակ պահին  
Մահանալ գիտեր գեղեցիկ մահով

Եվ գիտեր մահով հաղթել իր մահին,  
Ապրել էր ուզում, ուզում էր մնալ,  
Եվ սակայն չկար ապրելու հնար:

Ապրելու համար մեզ զարմանալի մի հրաշք էր պետք,  
Հրաշք, որ դառնար լեռներին հենված բյուրեղյա գմբեթ,  
Հողմի դեմ՝ սոսյաց անտառ մի դալար,  
Ոգու աղեղին՝ պնդաջիղ մի լար,  
Փոթորկի հանդեպ՝ մի ծանր խարիսխ,  
Հորձանքի դեմ սև՝ կոփածո պարիսպ,  
Ոգու երաշտին՝ ներշնչման տարափ,  
Մոլոք գիշերի մեջ՝ լույսի պատարագ,  
Քուրայի կրակ, օջախի անթեղ,  
Հանճարի բուրվառ, մտածման կանթեղ,  
Դառնար անսպառ ու մաքուր ցորյան,  
Մեր ոգու հացը, հանապազօրյան...

Ապրելու համար մեզ զարմանալի այդ հրաշքն էր պետք:  
Եվ գեղջուկ մի այր,  
Որ զորական էր, սրի տիրապետ,  
Ճամապեց, խորհեց,  
Որ անհնար է այդ սուրբ հրաշքը լոկ սրով անել,  
Որ այդ հրաշքի արարման համար  
Պետք է լույս հանել... 

Հրաշքի համար, այո՛, լույս էր պետք:

Ով սքանչելի լույսի վարդապետ,  
Ով դու տառապած բանի ուխտավոր,  
Քո դեմ անտառ կար մի խորհրդավոր,  
Մի մթնշաղ կար, մի ծով կար անհուն,  
Որ անքոնելի ձայնի, հնչյունի,  
Անշոշափելի մի կարկաչյունի  
Առեղծվածով էր քո դեմ բարձրանում: ]

Այնտեղ թնդում էր մեր ուզմի կանչի որոտմունքը բամբ,  
Ինչպես վաղ գարնան ամպրոպն է թնդում լեռներում հայոց,

Գողթան երգերի կորովն էր այնտեղ խոսում վեհությամբ,  
Ծառաշում, որպես եղեգան փողից դուրս ելած մի բոց:  
Ռլովովում չին հորովելները մեր լուսաթաթախ,  
Ինչպես ծիրանի ծռիսն է ոլորվում արևագալին,  
Այնտեղ խոսում էր մայրական արտի օրինանքը խաղաղ,  
Եվ հոր պատգամը՝ ծանրաշեշտ, որպես կոանը սալին:  
Ակնտեղ՝ ողջովովի բարի մեղմություն,  
Այնտեղ՝ անեծքի ժանտ ահեղություն,  
Ակնտեղ՝ հեզ աղոթք ու անզուսպ հառաչ,  
Այնտեղ՝ ցասումի շանթակերպ շառաչ,  
Ոգորման բամբյուն,  
Ահեղ փոթորկանք,  
Եվ ամրող, ամբողջ մի ժողովրդի  
Միրտ, ոգի ու կյանք...

Եվ մենության մեջ, անհունության մեջ քո խավար խցի,  
Ով դու հողեղեն, գուցե ոգեցիր՝

Թող լուս եղիցի...

Եվ այդ ձայների հրախաղը թեծ  
Քո խցի որմին և մեր շառաչուն պատմության վրա  
Զարմանահրաշ ձներ ստացավ,  
Մի զարմանալի պարզ տեսիլք դարձավ,  
Դարձավ լույս ու գիր ու Այբբենարան...

Մենք վիշտ ունեինք,  
Մեծ էր ցավը մեր,  
Իսկ ցաված սիրտը ուզում է խոսել,  
Չորերում բանտված գետերի մման  
Ուզում է շաշել, ուզում ընդվզել:  
Ու բացված լույսով քո արևազուն,  
Հաւատված հանճարիդ ոսկե կճիքով,  
Բարբառեց, խոսեց,  
Ոգեց մեր լեզուն  
Իր հանճարափայլ ոսկեղենիկով:  
Խոսեց, բարբառեց.  
Որ թեն փոքր ենք մենք մորպես ածու,  
Բայց Հայկն ապստամբ իր զորքը վարեց

Ու կամքը փշրեց բիրտ բարելացու...  
Ու թեն փոքր ենք մենք որպես ածու,  
Բայց կորովն ունենք Վահագն աստծու,  
Գիտենք փորձության ու դավի ժամին  
Դիմադարձ լինել ենք Շամիրամին...  
Ու թեն փոքր ենք մենք որպես ածու,  
Բայց մեր սիրության ոգին թագածում  
Ու Տիգրան Մեծի շառաչուն սրով  
Գիտենք պահպանել մեր սուրբ հայրենին,  
Մեր հավասարդյան առավոտը զով,  
Մեր վարդավառը, մեր հացն ու գիճին,  
Հպարտությունը Արարատ լեռան,  
Խոնարհությունը մայրացող վազի,  
Մեր օջախների կրակն հուրիրան  
Ու բոցկլտումը մեր տաք երազի:  
Եվ այնպես, ինչպես լեռները մեր սեգ ու ձյունապսակ  
Իրենց հասակն են չափում Գեղամա կապույտ հայելում,  
Մեր պատմության մեջ մեր վեհությունը մենք նորից տեսանք  
Ու մեր հասակը տեսանք վայելուչ:  
Եվ մենք բարձրացանք, շտկեցինք նորից մեջքերը մեր կոր,  
Մեր կամքը նորից սրեցինք որպես եռաթև մի տեգ,  
Ու երբ ոսոխը բարբառեց հեռվից որոտով մի գոռ,  
Թե՛ հարկ է թողնեք լեզու և հավատ ու իմը պաշտեք,  
Ով սքանչելի լուսի վարդապետ,  
Ով տառապաքայլ ուստավոր բանի,  
Սաներիդ շուրթով դու ի պատասխան գոչեցիր՝ երբեք,  
Ոչ հավիտյան և ոչ էլ մինչև մահն հավիտյանի...

Եվ Ավարայրում,  
Ուր խոսում էին երկաթ ու արյուն,  
Վիճարկում բախտը հայոց աշխարհի,  
Ով բանի, լուսի վարդապետ արի,  
Դու Վարդանի հետ, Վարդանի կողքին,  
Արշավում էիր, սուրում անկապան,  
Եվ աննյութական քո սրի շողքից  
Նահանջում էին պարսիկ ու բաբան:  
Եվ Ավարայրում,

Ուր խոսում էին երկաթ ու արյուն,  
Ընկավ Վարդանը մահով իմացյալ,  
Ընկան քաջերը մահով գեղեցիկ,  
Եվ սակայն ապրեց լեզուն մեր պայծառ,  
Ու մենք ապրեցինք:

Ապրեց մեր լեզուն,  
Ոսկեղենիկը մեր մեարոպազուն,  
Ապրեց ոսկեղեն այն ծաղկի կյանքով,  
Որ հյութ է քաղում ապառաժ քարից,  
Որ արմատների, նուրբ արմատների խոր տառապանքով  
Վիճում է քամու, հողմի թետ վայրի,  
Որ համառորեն փշրում է ժայռը, փշրում ու ձևում,  
Գտնում ջուր ու հող ու սերմ է տալիս ու հարատևում:  
Ապրեց մեր լեզուն,  
Ապրեց ճամփամերձ այն վազի նման,  
Որ սմբակների կոխան է դառնում,  
Որ կոտրտվելոց լալիս է կամաց,  
Սակայն այն լացով,  
Որից հարության ընձյուղն է հաւնում,  
Եվ հրաշագործ գինի պարզենող ողկուզ է դառնում:  
Ապրեց մեր լեզուն,  
Ծողաց, հուրիրաց նա բոցի նման,  
Ու երբ շուրջբոլոր մոայլը մութի շատ էր խտանում,  
Բոցն այդ առավել բորբոք էր դառնում,  
Քանզի ցաստմի փայլակն էր գալիս, ձուլվում այդ բոցին,  
Ատելությունն իր շանթերն էր տալիս նրա հնոցին,  
Մերն իր շիկնանքն էր նրա մեջ վառում,  
Հույսն իր շողերն էր նրան գումարում,  
Իր մաքրությունն էր տալիս արցունքը,  
Քրտինքն՝ իր լուսը,  
Խունկն՝ իր բուրմունքը,  
Նետն՝ իր ալացքը,  
Եվ սուրն՝ իր շողը,  
Խոփն՝ իր ցոլանքը,  
Մուրճն՝ իր կորովը,  
Խսկ մեր արյունը, իսկ մեր արյունը

Տալիս էր նրան իր տաք ավյունը  
Եվ անմահության գաղտնիքն էր տալիս:

Մենք վիշտ ունեինք,  
Բայց և ունեինք  
Մենք ստեղծումի սրբազան մի հոր,  
Որ պիտի խոսեր,  
Պիտի ընդպնդեր,  
Ծառանար պիտի մինչև գահն աստծո,  
Մինչև հավերժի ոլորտը մաքուր:  
Ու խոսեց լեզուն,  
Ուկեղենիկը մեր ոսկեդրվագ,  
Ու մեր վաճքերի, դպրանոցների կամարների տակ,  
Այրերն այն ճարտար լուսի տակ մոսի,  
Կամովին տրված պասի ու ծոմի,  
Արշալույսների բուկում էին սրտերից հանում  
Ու մագաղաթի վրա սերմանում:  
Եվ ի հեճուկս բախսի դժնդակ ու ցուրտ ձմեռվա,  
Դժգույն մագաղաթն ասես հրաշքով դառնում էր այգի,  
Զարդագիր դարձած սոխակն էր այնտեղ գեղգեղրւմ գերված  
Ու սիրամարգն էր ծածանում իր ճոխ ու շքեղ ագին:  
Այնտեղ լեռնային մեր եղջիւկների լլացքն էր ճկուն,  
Ասպրիլին ծաղկած դեղձենիների բոցը շառագուն,  
Արշալույսների շեկ հրախաղը երկնքում ծավի,  
Աստծու հետ խոսող Գեղամա ծովի լաջվարդը թափի,  
Այնտեղ վարդ, այնտեղ կարմիր վարդավառ ու բոցի օազանք,  
Այնտեղ լուս, լուսի անմահ երազանք:

Խոսեց մեր լեզուն,  
Ուկեղենիկը մեր ոսկեբարբառ,  
Որ շիրակացի մի կորովամիտ ու լմբոստ մի այր  
Իր խավար դարի խավար երկնքից հրաշքներ պեղի,  
Անշեզ հիրի պես մատյանների մեջ հավետ անթեղի  
Խորհուրդն աստղերի, խորհուրդը նյութի,  
Անմահ խորհուրդը հավերժ պտույտի,  
Խորհուրդներ, որոնք  
Ցած էին բերում աստծուն իր գահից

Ու մարդուն տալիս գահն այդ աստղալին:  
Խոսեց մեր լեզուն,  
Հոգուն թև դարձավ ու հանճարին՝ սյուն,  
Խոսեց, որ մի այր խավար խցի մեջ նարեկա վաճքի  
Իր հոգին բանա մի աստվածային վսեմ ճախրանքի,  
Կապույտ աղոթքով մրրկի, ինչպես ծովակը Վանա,  
Սրբի, մաքրվի,  
Մերձենա աստծուն  
Ու... աստվածանա:

Մենք վիշտ ունեինք,  
Մեր գանգատն էր մեծ,  
Լոել չէր կարող  
Լեզուն մեր անեղծ,  
Նա պիտի խոսեր,  
Պիտի ընդվզեր,  
Որ մի տառապած ու հեգ ծողովուրդ,  
Կանգնած լեռներուն բարձրաբերձ ու լուրծ,  
«Ֆրկան ասացյալ» շանթակերպ խոսքով  
Անարդար աստծու ճակատը խանձի,  
Թե՛ մեկն ինչո՞ւ է ծովանուն ոսկով,  
Մյուսը չունի փող մի պղնձի:

Մենք վիշտ ունեինք,  
Բայց և ունեինք անարատ մի սեր,  
Եվ պիտի ապրեր և պիտի խոսեր  
Մեր ոսկեղենիկ ու ճարտար լեզուն,  
Որ սիրուց գինով մի Աղթամարցի  
Աշխարհի առաջ իր սիրտը քացի  
Եվ խոստովանի ,որ կրակ կա ալ  
Իր վաճականի սև սքեմի տակ,  
Որ մի հանճարեղ, զվարյօ մի Քոչակ  
Իր սիրեցյալի ճերմակ ծոցիկը ժամատուն անի  
Եվ իր սուրբ մեղքերն արդ խորանի դեմ լոկ խոստովանի,  
Որ դժբախտ ու մեծ մի Սայաթ-Նովա  
Ասի աշխարհին, թե ի՞նչպես գիտենք մեզք սիրամարվել  
Եվ ի՞նչպես գիտենք սիրո մեջ այրվել...

Սակայն մեր սիրուն միշտ տառապանքի Բողմն էր ուղեկից,  
Մեր գլխի վրա միշտ ատելության մրրիկն էր վայում,  
Մեր սիրտն էր խոցվել սրից ու տեգից,  
Ու դժմի, դժմի գիշեր էր իջել հայոց աշխարհում:  
Իջել էր մի սև, զարհուրիկ խավար,  
Ու ողջը ավեր ու ողջը ավար,  
Հայոց հույսերը՝ պատառ-պատառիկ,  
Հայոց կույսերը՝ հարեմին գերի,  
Կիսալուսինը՝ շիկացած չարիք,  
Բարիքն էր հնառուն հայոց արտերի:

Մենք վիշտ ունեինք,  
Խորունկ էր այնպես վերքն Հայաստանի,  
Ու պիտի ապրեր, խոսեր մեր լեզուն,  
Որ մի հանճարեղ, ըմբոստ պատանի  
Արարատ լեռան կատարից անեղծ  
Արձակեր անզուսպ, խրոխտ մի գոշյուն.  
— Այդ ո՞ւմ վրա եք ձեր սուրը հանել,  
Հայոց մեծ ազգին դուք չե՞ք ճանաչում:

Ու շատրվանեց նորից մեր լեզուն,  
Մըրկեց ըմբոստ, թախծեց երազուն,  
Ծողաց, հուրիրաց նա բոցի նման,  
Ու երբ շուրջբոլոր մույլը շատ էր խտանում,  
Բոցն այդ առավել պայծառ էր դառնում:  
Քանզի ցասումի փայլակն էր գալիս, ձուլվում այդ բոցին,  
Արդար բողոքն իր շանթերն էր տալիս նրա Բնոցին,  
Սերն իր շիկնանքն էր նրա մեջ վառում,  
Հոյսն իր շողերն էր նրան գումարում,  
Խսկ մեր արյունը, խսկ մեր արյունը  
Նրան տալիս էր իր տաք ավյունը  
Եվ անմահության գաղտնիքն էր տալիս...

Մենք վիշտ ունեինք,  
Մենք դատ ունեինք,  
Բայց որ մեր վիշտը շասենք աշխարհին,  
Չկարողանանք մենք չարին դատել,

Ոսկին ուզում էր հատել մեր լեզում,  
Արմատից հատել...

ԾՌ՝ Դեր-Զոր, Դեր-Զոր, դու հւայոց շիրիմ,  
Առաջ է արդյոք աճապատ էիր,  
Թե՞ հայ մայրերի ողբից չորացարι  
Զգվում է ահա մահապարտների,  
Ուրգվականների քարավանն անծայր...  
Ու պառավ մի կին,  
Մի մամիկ, մի մայր, մի մայր Հայաստան  
Իո թոռնիկներին շուրջը հակաքած,  
Սոռացած անգամ տառասանք ու քաղց,  
Սորազան մի լուս խորշումած դեմքին,  
Ավագի վրա գրում է դանդաղ,  
Դողդոց մատներով գրում՝ Այք. Բեն. Գիմ...  
Ավագի՝ վրա...  
Ո՛չ, գրում է նա  
Իո թոռնիկների երազի վրա... ]

Մենք վիշտ ունեինք,  
Ցասում ու բողոք,  
Սիրել գիտեինք,  
Գիտեինք ատել,  
Ու ոչ մի քազուկ  
Բիրտ ու անողոք,  
Չկարողացավ  
Մեր լեզուն հատել:  
Եվ անագորույն իր ճանապարհին  
Հերքելով չարը, հաստելով բարին,  
Եկավ նա, հասավ  
Մրրիկով, արշամք ու լուսով Բոլի  
Այս ահեղ դարին:  
Եկավ ալեհեր մոխիրների տակ հավերժ ամթեղած  
Իր պարմանության բորբոք կրակով,  
Եկավ նա կենաց ժայռերից պեղած  
Իր իմաստության ոսկե երակով,  
Եկավ բուրմունքով հացի ու խունկի,  
Ծողարձակումով վճիտ արցունքի,

Եկավ որպես խոփ,  
Եկավ որպես սուր,  
Եկավ քարակոփ,  
Աղամանդակուու,  
Եկավ հառաջով,  
Եկավ շառաջով,  
Եկավ նա քարու ու եղբայրության խոսքնրով շոայ՝  
Եվ իր Զարենցի շուրթերի վրա  
Դարձավ խելագար ամբոխների երգ  
Ու դարձավ ըմբոստ «Խնտերնացիոնալ»:

Գիշեր է գարնան:

Եթերում երգն է իմ ահեղ դարի,  
Եվ ալիքվում է իմ հայրենախոս Երևանը հոծ...  
Բայց հրաշք է սա...

Հայոց երկնքի կապուտ պաստառին

Հրես տառերով գրված է «Մաշտոց»:

Հրե՛ս տառերով...

Այն նույն տառերով,

Որ դու, վարդապետ, տեսար պահ որմին քո քարե խցի,  
Երբ արարչական այն սուրբ տեսիլքն էր եկել քեզ այցի:  
Հրաշք է նորից...

Ո՞չ, հրաշք չկա:

Այն շենքի վրա,

Ուր պահ ենք տվել մեր գանձերն անգիս,

Դարերից բերած մատյանները հին,

Եվ որին քո սուրբ անունն ենք ձոնել,

«Մաշտոց» է գրել լույսը նեռնե...

Նեռնե... Օ՛, ոչ...

Այդ տառապանքն է վառվում դարերի,

Դարեր շառաջող ցաման փայլակն է ձուլվել այդ բոցին,

Սորդար բողոքն իր շանթերն է տվել նրա հնոցին,

Սերն իր շիկնանքն է նրա մեջ վառել,

Հույսն իր շողերն է նրան գումարել,

Իր մաքրությունն է տվել արցունքը,

Քրտինքն՝ իր լույսը,

Խումկա՝ իր բուրմունքը,

\

Նետն՝ իր պլացքը  
Եվ սուրճ՝ իր շողը,  
Խոփիճ՝ իր ցոլանքը,  
Մուլճճ՝ իր կորովը,  
Մեյ երազանքն իր կապույտ անհունը,  
Մեր ալ դրոշը՝ իր շառագույնը,  
Իսկ մեր արյունը,  
Իսկ մեր արյունը  
Նրան տվել է իր տաք ավյունը  
Եվ անմահության գաղտնիքն է տվել...

1982



...Ու մի սակավիկ  
Ծառացավ բարին աշխարհի վրա:

## ԽԵԲՄԱՆ ԶԻՒԼՐԵ

Եվ Բազար-Բազար վանքերի ծանր զանգերի զարկով,  
Եվ Բազար-Բազար անդունդ ու ձորի խոլ արձագանքով  
Սև գույժը նորից սողեսող մտավ աշխարհը Բայոց.

— Ծապո՞ւին է գալիս...

Ծապո՞ւին է գալիս...

Ծապուին է նորից Հայաստան սողում իբրև վիշապ օձ...

Եվ գումեան ու սև բոթին հետամուտ՝

Ծապուինը մտավ աշխարհը Բայոց:

Ծապուին արքայի նժույգը բոց է ու դրոշը՝ բոց,

Եվ շեկ առյուծն է բոցին դրոշի,

Ու երբ ծփում է բոցը դրոշի,

Ծեկ առյուծն ասես մեջքը ճկելով քայլում ծանրաթաթ,  
Ուզում է ոստնել և ժանիքներն է միրճել ուզում

Հայոց աշխարհի ողին ու կողին:

Ծապուին արքայի ծիրանին ալ է ու միրուքը ալ,

Եվ ալ աչքերը, աչքեր չեն բնավ՝ բներ են ոխի:

Եվ ծառու է լինում Ծապուհ արքայի Աժույգը քեթն  
Եվ պար է գալիս հայոց աշխարհի քամիների մեջ:

Ծապուհ արքայի ձեռքերը ցամաք  
Միրութն են շոյում Ծապուհ արքայի,  
Ծապուհ արքայի փառքերն անքանակ  
Միրտն են օրորում Ծապուհ արքայի:

Եվ Ծապուհի հետ  
Ահարումազդան հաշտ է ոգնին,  
Ահարումազդան  
Եղբոր Յան է պարզապես իր, հետ,  
Ահարումազդան  
Աջակից եղավ Ծապուհ արքային,  
Եվ Ծապուհ արքան  
Կալեց-կալանեց քեզ՝ շուն արմենիդ,  
Եվ Անհուշ բերդի զնդանը նետեց:  
Հա՛-հա՛-հա՛, Արշակ, հայոց թագավոր,  
Ծապուհ արքայի միտքը սուր է դեռ,  
Իր թրից էլ սուր,

Եվ Ծապուհ, արքան իր մտքով ալդ սուր  
Սպարապետին քո այն սիրեցյալ,

Քո աղվեսացյալ  
Գոռոզ Վասակին մորթազերծ արեց,  
Մեջը խոտ լցրեց ու դրեց քո դեմ:

Եվ Ծապուհ արքան  
Իր, խորը պարզած,  
Երկիրդ մտավ,  
Եվ Ծապուհ արքան  
Որտեղ շեն տեսավ  
Ու տեսավ քաղաք,  
Որտեղ արտ տեսավ  
Ու տեսավ այգի  
Ու տեսավ հնձան,  
Ծարակ դարձեց սրբազան հրին:

Եվ, Ծապուհ արքան  
Ժողովեց երկրիդ մանուկ իմերին,  
Նետեց իր հարբած փղերի ահեղ

Կճղակների տակ...

Եվ Շապուհ արքան

Ժողովեց երկրիդ այրերին զմբոստ  
Եվ նրանց շմբոստ ցցերի, հանեց:

Եվ Շապուհ արքան

Ժողովեց երկրիդ կին ու կույսերին,  
Նր զորքին տվեց իբրև վայելում:

Եվ Շապուհ արքան

Արշավեց ապա-դեպի Արտագերս,  
Բերդի պաշարեց,  
Քարե բերդիդ հետ  
Պաշարեց փափուկ քո Փառանձեմին:

Հա՛-հա՛-հա՛, Արշակ, Բայոց թագավոր,  
Համբակ չես եղել դու կին ոնտրելում:

Քո Փառանձեմը

Հովազ էր մի ճգ,

Քո Փառանձեմը մոլուցք էր վայրի,

Քո Փառանձեմի մազիլները սուր

Մի ամրող գիշեր փորել ուզեցին

Ակնախորշերը Շապուհ արքայի:

Սանայմ Շապուհը տղա չէ, տիկին,

Տերն է աշխարհի,

Կիրք է նա վայրի,

Մոլուցք է ու ոխ...

Եվ մոլուցքի մեջ իր ահագնացոյլ

Նա պատառտնեց, ծվատեց, ծևեց

Մետաքսը հագիդ,

Տիրացավ քեզ, է՛գ...

Ու երբ լիացավ, այդան բաց ու մերն

Նր զորքին նետեց իբրև վայելում:

Շապուհ արքայի ձեռքերը ցամաք

Միրուբն են շոյում Շապուհ արքայի,

Շապուհ արքայի փառքերն անքանակ

Միրտն են օրորում Շապուհ արքայի:

Եվ Շապուհ արքան նորից ժանիքն է ուզում միսրճել

Հայոց աշխարհի ողին ու կողին...

Հովազի նման փշաքաղվում է աշխարհը Բայոց

Եվ նիզակներն է ցցում իր ոխի:

\* \* \*

Հայոց աշխարհի բարձրիկ լեռներում քամին է խաղում,

Հայոց աշխարհի բարձրիկ լեռներում կապույտ է ու լուս,

Եվ կապույտի մեջ ցոլում է իբրև սպիտակ կրակ

Նժույգը Մուշեղ Մամիկոնյանի...

Քեզ ասեմ, Մուշեղ, քաջ սպարապետ,

Քեզ ասեմ, որդուդ ազնավոր այն հոր,

Որ զույգ ոտքերով կանգնած էր անպարտ

Զույգ լեռան վրա...

Ու երբ հենվում էր քաջը աջ ոտին,

Աջ լեռն էր տանում խորխորատն ի վար

Ու երբ հենվում էր քաջը ձախ ոտին,

Ձախն լեռն էր տանում խորխորատն ի վար:

Իր այրուձիու վարգով հողմավար

Նա թռչում արյաց արքայի ընդդեմ

Եվ բանակները քամուն էր տալիս...

Եվ նա, որ, ավաղ,

Բյուր հազար ավաղ,

Արդ Անհուշ բերդում չոր խոտով լցված

Ու դեմն է դրված իր թագավորի:

Քեզ ասեմ, Մուշեղ, որդի Վասակա,

Քեզ ասեմ, հայոց քաջ սպարապետ,

Քեզ ասեմ, արիդ, ու կոչեմ ոխի:

Հայոց աշխարհի բարձրիկ լեռներում քամին է խաղում,

Հայոց աշխարհի բարձրիկ լեռներում կապույտ է ու լուս,

Եվ կապույտի մեջ ցոլում է իբրև սպիտակ մրրիկ

Նժույգը Մուշեղ Մամիկոնյանի:

Սուրբ շիկացել սրբազան ոխից,

‘Իարձել լուսի շեղք

Ու շանթ է դարձել:

### **Ծապուհի գործը**

**Հայոց ձորերում ճգվել, օճացել  
Եվ գալար-գալար առաջ է սողում:**

**Հայոց աշխարհի ձորերը բիրտ են ու վայրիվերո,  
(Արարման պահին գլխապտույտ է ունեցել աստված),  
Հայոց աշխարհի ձորերը սողում, դառնում են վիթեր,**

**Եվ վիթերմ՝ անդունդ:**

**Անդունդների մեջ**

**Թնդյուն կա ու մութ,**

**Անդունդների մեջ**

**Հովազների պես որսին հետամուտ**

**Գետեր կան ամեն՝**

**Փրփուրը կախված երախներն ի վառ:**

### **Ծապուհի գործը**

**Հայոց ձորերում ճգվել ընդերևար**

**Ու գալար-գալար առաջ է սողում:**

### **Սպարապետը**

**Եղնում, կանգնում է ասպանդակներին,**

**Որոտում է շեշտ.**

**— Ի զե՞զ, Բայորդիք, հանուն Արշակա,**

**Հատենք այս անգամ պոչը վիշապի:**

**Եվ օճաշապիկ**

**Պատյաններն ի դուրս**

**Սրերն են թոշում ու սոլում են առիր,**

**Եվ կատարների հովերը լազուր**

**Սրերի բարակ սայրերի վրա**

**Զնգոցով կիսում,**

**Խզվում են կապույտ, ձիգ պաստառի պես:**

### **Սարալանջն ի վար**

**Մոռնչ է սուրում:**

**Կոփնչ է սուրում,**

Եվ ոյս է սուրում  
Սարալանջն ի վար:

Այդպես կրակն է անցնում հողմավար  
Աշնան չոր ու շեկ շամբուտի միջով,  
Այդպես կայծակն է հոտի մեջ զարկում:  
Հայոց գնդերը զարկում ահարկու,  
Սրատում,  
Հատում  
Պոշը վիշապի  
Եվ նորից թեթև սլանում են վեր:

• • •

Հայոց աշխարհի  
Գիշերը սև է, զարհուրիկ ու սև,  
Անդունդից ելած,  
Նա ստվերներ է թերու ամիեթեթ,  
Եվ ստվերներն այդ պարում անհեթեթ,  
Թափալ են գալիս անդունդից անդունդ:

Հայոց աշխարհի  
Գիշերը սև է, սևակնած ու լուս,  
Սև վանքերն այստեղ լուս են աղոթում.  
Լուս են աղոթում սև քարերն այստեղ,  
Ու սև սարսափը լուս է թափառում:  
Եվ արյաց զորքը կրակ է վառում  
Եվ արյաց զորքը ուզու է վանել  
Շունչն Ահրիմանի,  
Որ խավարի Բետ  
Սողում է, սողում...

Լեռների վրա  
Սպարապետի մերկ սուրն է շողում,  
Օծված աստղերի շողակաթ լույսով:

— Ի զե՞ն, Բայորդիք, Բանուն Վասակա,  
Զարդենք այս անգամ մեջքը վիշապի:

**ԵՎ օՃԱՂԱՓԻԿ**

Պատյաններն ի դուրս

Մրերն են թռչում ու սուզում են սուր,

**ԵՎ ԳԻՉԵՐԱՋԻՆ ՔԱՄԻՑ ԱՆԱՍՈՒՅՐ**

Մրերի բարակ սայրերի վրա

**ՀԱՊԱԽՈՎ ԿԻԽԱՎՈՒՄ**

Ու խզվում է սև, ձիգ պաստառի պես:

Դեմն արյաց զորքի խարույկներն են Բուր,

Դեմը՝ բանակը պորտը թաց Բողին,

**ՄՐԱՓՈՒՄ Է ԼՈՒՌ**

Սարսափի աշքերն անդունդներ են կույր,

**ԵՎ ԱԲԱԴԻԿ Է ՃԱՅԱԿ ՍԱՐՍԱՓԻ**

ԵՎ գիշերվա մեջ ընդերկար ճգվում

Ահանիկ վայում ճայնը սարսափի,

**ՈՒՆՈԳ Է ԴԱՊԱՆՈՒՄ:**

Ծողակաթ սրերն ահեղ սավառնում,

**ԹՐԱՊՈՒՄ ՄՈՒԹԸ**

ԵՎ քնաթաթախ սարսափ են ԲԱՃՈՒՄ,

Վիշապի մեջքը ճնկում, ճոնչում

Ու ճարճատում է գալար-գալարիկ...

**ՀԱՅՈԳ ԱԺԽԱՐԲԻ**

Արևածագը քրքում է ու բոց,

**ՀԱՅՈԳ ԱԺԽԱՐԲԻ**

Արևածագը որդան է կարմիր,

Արտերից պոկված արտուտիկը թուխ

Արևագալի ցոյանքների մեջ

**ԲՆՆԿՎՈՒՄ ԲԱՆԿԱՐԾ**

Ու թևանարող կրակ է դառնում:

Մշուշի միջից լեռներն են հառնում.

**ԻՆԿ ՄԱՍԼԱԳ ՃՅՈՒՆՔ ԿՐԱԿ Է ԱՍԵԱ,**

**ՈՐ ԱՍՏՎԱԾՆԵՐՆ ԵՆ**

Վառել երկնքի անհումի մեջ ցուրտ:  
Եվ բռնկվում են կատար ու բարձումք:  
Հայոց աշխարհն է բռնկվում համակ  
Եվ ալեվետում  
Կապույտների մեջ:

— Ի զե՞ն, հայորդիք, այս անգամ արդեն  
Գլուխը հատենք պարսից վիշապի:

Պատշաճներ ի դուրս  
Սրերն են թոշում բոցերի հանգույն,  
Եվ լուսաբացի քամին վարդագույն  
Սրերի բարակ սայրերի վրա  
Արնելով կիսվում,  
Խզվում է կարսիր, ծիգ պատառի այս:

Եվ հեծյալների խթանները սուր  
Թոփչք են տալիս  
Պրկված ձիերի մկան-ջղերին:  
Թոշող ձիերի ծփուն բաշերը  
Մրրիկ են ու հողմ,  
Թոշող ձիերը  
Ծապուի արքայի բանակը հասած,  
Դառնում են ահեղ մի պատուահողմ,  
Որ վրաններ է պոկում, հալածում,  
Որ արնաթաքախ զորքերի միջով  
Ծամփա է բացում  
Դեպի վրանը Ծապուի արքայի:

Ծապուի արքայի ձեռքերը ցամաք  
Միրուբն են փետում Ծապուի արքայի,  
Եվ Ծապուի արքան մոլոցք է համակ,  
Եվ Ծապուի արքան ցասում է վայրի,  
Եվ Ծապուի արքան թոշում է թամրին  
Իր երիվարի  
Ու սուրն է հանում:

Ծապուի արքայի խթանները սուր  
Կողերն են արնում իր երիվարի,  
Եվ Ծապուի արքան սուրում է արի  
Եվ Ծապուի արքան արշավում է խոլ,  
Սակայն այս անգամ ոսոխին պարզած

Ոչ թե գլուխը,  
Այլ ջողուն գավակն իր երիվարի:

Եվ ականջներում Ծապուի արքայի  
Հայոց աշխարհի քամինները պաղ  
Հոմոռում են խենթ.

— Հա՛-հա՛-հա՛, Ծապուի, արքայից արքա,  
Այդ ո՞ւր ես այդպես սուրում քաջաձի՝  
Թողած ծիրանիդ,  
Դրոշներդ ամեն  
Եվ կանանո՛ցդ...  
Եվ կանանո՛ցդ...

Հայոց աշխարհի  
Արևածագը քրորան ու բոց է,  
Հայոց աշխարհի  
Արևածագը որդան է կարմիր,  
Հայոց աշխարհի  
Արևածագի ցուքերն ի տես  
Եվ հայոց հաղթած զորքերին ի տես  
Իրենց մետաքսն ալ վրաններից,  
Լաշվարդ, փիրուզն, զառ վրաններից  
Ելնում են մեկ-մեկ,  
Ելնում կիսամերկ  
Ծապուի կանայք՝  
Պատիվն ու փառքը Ծապուի արքայի:

Տիկնանց տիկինն է՝  
Ցոլ աղամանդը,  
Հակինթը գաճի...  
Ծղարշների մեջ իր գիշերային  
Տիկնանց տիկինը հրաշալիք է.

Աչքերմ անդունդ եղ՝ աստղերով լիբը,  
Իսկ սև Բոնքերը ուր որ է ահա  
Թևին պիտի տան,  
Սլանան պիտի...

Չափում Բասակը սպարապետի  
Եվ իր թափանցիկ շղարշների տակ  
Գալարք է տալիս մեջքին իր օալար  
Եվ ալիք տալիս կոնքերին իր գիրգ...  
Տիկնանց տիկինն է՝  
Խավար է ու լույս,  
Թասում է ու ոխ,  
Նազանք է ու կիրք...

Եվ սկյութութին՝  
Սիրեցյալ կինը Շապուժ արքային  
Ուկե վարսերի հեղեղը թեղ-թեղ  
Արշալույսի պես ուսերին նետել,  
Արշալույսի պես գալիս է, կանգնում  
Արշալույսի դեմ:  
Աճքուն է, հոգնած,  
Նվազ ու փխրուն:  
Կապույտ աչքերում մեղսանքն է տիսրով,  
Ու մեղկություն կա աչքերում կապույտ:  
Եվ մեղկությունը կապույտ աչքերի  
Եվ կապույտ ստվերն այդ աչքերի տակ  
Եվ կուրծքը դողդոշ,  
Եվ վարսը խոիվ,  
Եվ շրթունքները, որ խոնավ են դեռ,  
Խոսում են անխոս, որ ոսկեծամի  
Գիշերն այդ գիշեր բարի է եղել:

Եվ ասորութին...  
Ծղարշները բաց,  
Վարսերի սև մերկ կրծքին թափած,  
Գալիս է թեթև:  
Ու երբ թափառիկ, մոլորված քամին

Կրծքից խորություն է սևերն այդ ծամի,  
Սան հարավի գիշերվա միջից  
Արևագալն է շողակաթ շողում:

Գալիս է թեթև  
Ծփում է ասես,  
Ու կուրծքն է դողում:

Իր սև աչքերի սև հրացոլքով  
Սպարապետին մի պահ ողողում,  
Նա խաղ է տալիս իր կեռ հոնքերին  
Ու բարբառում է.

— Ով ճերմակաձի,  
Բնավ էլ ցավ չէ լինել քո գերին:  
Ու եթովպուիին...  
Նուրբ քողերի տակ  
Զույգ արևներ կան, որ լույծ են ու տաք,  
Եվ արևներ կան մաշկի տակ իր թուխ,  
Եվ արևներ կան շուրթերում իր լի:  
Ցոլանքների մեջ արևագալի  
Նա քայլք է անում թուխ նժույգի պես,  
Ու մորքն է ցողում յուղերով օծուն:

Լույծ արևները  
Ելեւզում են իր տաքուկ ծոցում,  
Ելեւզում են զիստերը զորեղ,  
Եվ ալիքվում է գալակը պարարտ:

Եվ վրացուիին...  
Վրաց լեռների լույսն է անարաւություն և անարաւություն  
Իր լայն ու լուսե կոպերից կաթում,  
Իր լայն ու լուսե կոպերը թարթում,  
Բացում է մի զույգ ակաթե գիշեր,  
Մի զույգ ակաթե գիշեր է փակում:

Իսկ պարանոցը  
Նազով ալաքվում  
Շարունակում է սլացքն իրանի:  
Ու թվում է թե, եթե քայլ անի,

Փշրվի պիտի, հալչի, վերանա,  
Ծուխ դառնա բարսկ,  
Լոյս դառնա ու ցող...

Եվ քուշանուիհին...  
Ծեղ աշքերի մեջ  
Անապատների կրակն է խոցող,  
Ծարավն ու տոթն է անապատների:  
Նա քայլում հպարտ  
Ու ինքնավայել,  
Սիգում է իբրև թեթևոտ ների:  
Իսկ կրծքին իշած քողերը ծփուն  
Անզոր են մարել  
Ու թաքուն պահել  
Ցոլցուն աստղերն իր ստիճաների:

Եվ հելլենուիհին...  
Դաշնություն է նա երգող ձների,  
Երգող ձների հաշտություն է նա,  
Տավիդ է ասես,  
Ցոթնաղի քնար:  
Ու երբ փոխում է քայլերը մանրիկ  
Ու երբ նայում է սպարապետին,  
Ծղարշների տակ ծնունդ է առնուն  
Կրծքի, կոնքերի  
Ու սրունքների  
Անհուն մեղեղին:

Եվ կինե՛ր, կինե՛ր,  
Եվ ուրիշ կիներ,  
Ալանուիհիներ  
Ու կիներ հոռոմ,  
Երուսաղեմի  
Շուատրեր սևահոն,  
Եգիպտուիհիներ,  
Թուխ հնդկուիհիներ  
Եվ կինե՛ր, կինե՛ր,

Դեռատի կիներ  
Եվ վեշտասնամյա  
Պարմանութիներ...  
Եվ բոլորը՝ բա՛ց,  
Եվ բոլորը՝ տա՛ք,  
Բոլորը՝ գարուն...

Հայոց զորքերի երակների մեջ  
Զարթնել է արուն,  
Հայոց զորքերի երակների մեջ  
Խելագարվում է մի ծարավ արյուն,  
Հայոց զորքերի ողնաշարի մեջ  
Քաղցն է մոնչում,  
Հայոց զորքերը ծանրորեն շնչում  
Եվ սպասում են սպարապետի  
Խոսք-հրամանին:  
Խսկ սպարապետն իր խոսքն է ասում  
Եվ ասում այսպես.  
— Արդ ժամավարներ սարքեցեք հարմար  
Եվ բոլոր կանսաց Շասութի հետքով  
Տիգրոն հասցրեք անարատ ու ողջ:

Լոռություն եղավ...  
Ու մի զորական  
Այդ լոռության մեջ մոլտում է խով.  
— Սակայն վրե՞մդը Փառանձեմ տիկնոջ...

Սպարապետը շնչում է.  
— Ո՛չ...

Եվ ավագանին մոլտում է խով.  
— Սակայն վրե՞մդը Փառանձեմ տիկնոջ...  
Սպարապետը բարբառում է.  
— Ո՛չ...

Եվ Բայոց զորքը ծանրորեն շնչում,  
Հեռում է ահեղ ու խոլ մոնչում.  
— Սակայն վրե՞մդը Փառանձեմ տիկնոջ...

Սպարապետը որոտում է.

— Ո՞չ...

Շապուինի դեմ եմ ես պատերազմում  
Եվ ոչ իր կանանց:

Եվ կրկին անգամ որոտում է.

— Ո՞չ...

Եվ ապա քերթող իմաստուն մի այր  
Տարեգրում էր վաճքի մոլոր խցում

Ու գրում այսպես.

«Եվ այդ լսելով մեծացան սաստիկ  
Արմամած բիբերն արյաց արքայի,  
Եվ այդ լսելով ծգվեցին սաստիկ  
Անգույն շրթումքներն արյաց արքայի,  
Եվ այդ լսելով զարմացավ սաստիկ,

Եվ տասնապատիկ,

Եվ բյուրապատիկ

Զարմացավ արքամ...

Զարմացավ արքան և հրամայեց,

Որ իր ոսկեձույլ գինու գավաթին

Նկարեն պատկերն սպարապետի,

Նկարեն ճերմակ նժույգի վրա...

Ու ետ այնօրիկ,

Երբ Շապուին արքան նստում էր սեղան,

Ու ետ այնօրիկ,

Երբ խրախճան էր իր զորքին տալիս,

Այդ գավաթն առնում

Եվ բարբառում էր կենացն առաջին.

— Թո՞ղ ճերմակաձին գինի վայելի...


— Թո՞ղ ճերմակաձին արքենա գինով...

Եվ խոսք են խոսում, թե ետ այնօրիկ

Մեղմացավ բարբը գազան Շապուինի,

Ու մի սակավիկ

Շատացավ բարին աշխարհի վրա»:



Օրէնյալ լիննս, որէնյալ, որոնումի տանզանք,  
Օրէնյալ լիննս, գյուտի սուրբ բնրկրություն :

## ԶԱՐԱՐՅԱՆ

Մագող արեգակի առաջին շուրջ շեղ  
Նախ Ազատն Մասսի ձյունը վառեց,  
Զյուների հետ ոսկով տուրեառեց,

Ապա թեկվեց,

Թեքվեց

Վիթերն ի վար

Եվ ապառած բնում դեռ ծվարած

Ու քնի մեջ երկինքն իր թևերին առած

Արծվի կոպին թառեց:

Եվ բաց արեց արծիվն իր կոպերը դեղին,

Եվ բաց արեց արծիվն ապա թևերն իր թավ,

Ու թևերի քամուց ալերախում եղավ,

Մրրիկ եղավ փոքրիկ:

Պոկվեց տեղից արծիվն ու շանթակերպ սուրաց

Ազատ Մասսին ի վեր:

Ու երբ իր թևաբաց ճախրանքի մեջ

Անշարժացավ մի պահ,

Օդում գամվեց,

Վարից այնպես թվաց, թե մի զույգ բաց թևեր

Մասսի գմբեթն առել ու պանում են վեր:

Ծարտարապետ Հովհանն աշքը արծվին հառել,  
Քայլ էր անում դանդաղ դաշտով Արարատյան,  
Քայլ էր անում դանդաղ, իսկ դաշտն Արարատյան  
Զննալոցի վերջին առումերով ողող,  
Մխում էր թաց, ինչպես ջրհեղեղից հետո:

Այրվող եղեգնուտի ծուխը ձգվել գետով,  
Կապույտ ծիր էր տվել ոտքերի տակ Մասյաց,  
Ոտքերի տակ Մասյաց ասես խունկ էր վառել:  
Արշալույսի այտը լեռան սայրին առել,

Արճոտվել էր թեթև

Ու վառվում էր այդպես արճոտ ու շենք:  
Իսկ շեների ծուխը եղել մեկ-մեկ  
Ու երկնքի վերին ոլորտներին հասած,  
Ծիրանի էր խառնել իր կապույտին:

Մասսի լանջերն ի վար

Ու լեռներից Սուկավ

Լույսը՝ առու-առու, լույսը՝ հեղեղ-հեղեղ  
Թափալվելով իջել ու ծփում էր դաշտում:  
Արարատյան դաշտում արարչության սարսուն,  
Արարչության տոն էր, զարթոնքի ծես,  
Դեղնաների վրա ծուխ էր իջել կարծես,  
Ծիրանագույն մի ծուխ,

Ու դողում էր կամաց...

Ծինականը կանգնել էր տանիքին կանաչ  
Եվ աղոթք էր հղում ծագող արեգակին.

— Լո՛յս, առաջին ընծա,  
Լո՛յս, հիասքանչ դու գանձ,  
Լո՛յս, քեզ բարև ու փառք,  
Փառք քեզ, Վահե, Վահե...  
Լո՛յս, հարության դու հույս,  
Լո՛յս, դու ցորյան ու բար,  
Լո՛յս, քեզ բարև ու փառք,  
Փառք քեզ, Վահե, Վահե...

Եվ աղոթքի միջով, լույս ու շողի միջով,  
Խոնավ դողի միջով Արարատյան հողի

Հովհանն էր լուս քայլում դեպի Մասիս Ազատ։  
Արծիվը դեռ ճախրում ու ալեզարդ  
Մասի գմբեթն առած դեռ սլանում էր վեր,  
Տանում դեպի աստծո ոլորտն արարչական

... Մի՞թե որոնածն իր պարզ էր այսքան,  
Մի՞թե Մասիս Ազատ մի տաճար չէ վսեմ,  
Եվ Ազատն Մասի ձևերի մեջ վսեմ  
Իր արարման երազն ու տենչը չի պահված...  
Եվ մի՞թե ինքն արծվի թաց թևերին թառած  
Այս լույս գմբեթը չէ, որ փնտրել է կյանքում...  
Օ՛, տքնության պահեր երշանիկ ու անքուն,  
Օ՛, երկունքի պահեր տառապագին...  
Քանի-քանի անգամ իր խորերում մոլոր  
Ինքը ձև է տվել այդ տաճարին վսեմ,  
Բայց և Բաջորդ պահին իր ձեռքերով քանդել  
Քանզի վաղուց եղած հինգն է խոսել այնտևող,  
Իսկ իր երազն ուրիշ, շա՞տ էր ուրիշ...  
Եվ պահեր են եղել, օ՛, խաբուսիկ պահեր,  
Երր թվացել է, թե ներշնչանքով մի վեր  
Ինքն իր որոնածը ստուգայեն գտել  
Եվ հասել է արդեն հանգրվանին, սակայն  
Սիրտը մտքի գոտածն իսկույն հերքել,  
Բեկոր-բեկոր քանդել ու թափել է ներքեւ։

Բայց այս Մասիսն ահա ու այս արծիվը վեր...  
Օ՛, դաշնություն ձնի  
Եվ պարզության վսեմ գեղեցկություն...

Օրինյալ լինես, օրինյալ, որոնումի տանջանք,  
Օրինյալ լինես, գյուտի սուրբ բերկություն

Եվ նա քայլում է լուս... Արարատյան դաշտում  
Արարշության սարսուն, արարշության աղոթք,  
Արարշության տոն է, զարթոնքի ծես...  
Եվ Հովհանն Բանիեա որմ է եղնում կարծես,  
Քար է դրվում քարի,  
Քար է դրվում քարի,

Եվ խարսիւի վրա սյուն է դրվում միատող,  
Եվ սյուների վրա արծիվները միատող  
Վսեմ գմբեթն իրենց բաց թևերին առնում,  
Սավառնում են,  
Ենում

Ու տանում են դեպի արևածագ  
Ու տանում են դեւի ոլորտն աստծո  
Հմրոստացումն հայոց  
Ու համբարձումն հայոց...

\* \* \*

Արարատյան դաշտում ամառ է ու կեսօր...  
Արարատյան դաշտում մի մենավոր բարդի  
Ուզում է շունչ առնել ու թրթուլ հովից,  
Բայց նվազում հանկարծ ու կարկամում է ծույզ:  
Արարատյան դաշտում ամառավին մի հուր  
Իր շեկ լեզուն հանել ու հնում է, հնում:  
Միայն վերում մերթ-մերթ արագիլն է թնում  
Եվ իր ստվերը սև՝ դեղին խոզանն ի վար  
Դանդաղ պտույտ տալիս ու տանում է հնոսու:

Արարատյան դաշտում մի դեղնաթերթ օշոշ  
Արեգակի դեղինն իր բաժակում առել,  
Դեղին բոց է վառել իր բաժակում փոշոտ...

Արարատյան դաշտում լոռություն է ու շոգ,  
Եվ լոռության մեջ շոգ  
Մուրճ է իշնում քարին,  
Եվ լոռության մեջ շոգ  
Մուրճ է զնգում ու քար,  
Քար է դրվում քարի,  
Քար է դրվում քարի,  
Ծե՛կ են քարերը, շեկ,  
Տա՛ք են քարերը, տաք,  
Ասես թե տաք ամուն քուրայից են հանված,  
Եվ քարերի վրա ողկույզներ են բանված...  
Եվ նոներ են բանված և բանված է տերեւ...

Արարատյան դաշտում քար է դրվում քարի,  
Ծանրիկ քար է դրվում, ծանրիկ ու տաք քարի,  
Եվ խարսխի վրա ծանրաքանդակ քարի

Ծանր այուն է դրվում  
Եվ այունից այուն ճգվում  
Ու կորվում է կամար...

Արարատյան դաշտում ամառ է, շեկ ամառ...

Ու ճամփի շեկ փոշով ճոնչում են սալլեր,  
Եվ սալլերի վրա ապառաժ է ու վեմ,  
Եվ սալլերի վրա՝ սեպով կտրած ժայռեր...  
Իսկ կորովի եզներն աչքերի մեջ արև,  
Աչքերի մեջ թախիծ ու հեռավոր սարեր,  
Խոր աղուրներ թուղած ճանապարհի փոշում,  
Ճգում են դեռ համառ:

Ամառ է, շեկ ամառ:

Ծարտարապետ Հովհանն իր տաճարի որմից  
Ոլորանն է դիտում փոշոտ ճանապարհի  
Եվ սպասում, թե երբ ոլորանի վրա  
Նազով ճոճվի պիտի մի բարալիկ իրան,  
Պաղ ջրի կուժն ուսին:

Տե՛ր, նման է սերը ներշնչումի լույսին,  
Արարման է նման ու բախտավոր գյուտի:

... Կաի վրա երգը թուխ արտույտի  
Կախվել, օրորվում էր վարդավառի հետ վառ,  
Վարդավառ էր կալում,  
Արև, ծաղիկ ու ջուր,  
Օրը ծափ էր տալիս,  
Քրքչում ու ճչուն,  
Օրը վեր էր թռչում շիթերի հետ ջրի,  
Կարմիր-կանաչ կուռած իշնում էր վար... \  
Վարդավառ էր... Ու նա վարսերը թաց,

Թուաց զգեստը կրծքին  
Ու կոնքերին կպած,  
Հանկարծ ելավ իր դեմ...

Եվ օդ չեղավ ասես հանկարծ օդում,  
Վայրիվերում եղավ լուս ու մուլջի:  
Կալի վրա երգն էր թուխ արտույտի,  
Եվ արևն էր զնոցում կալի վրա  
Իր լուսեղեն ու մեծ պատարագով:

... Արագածից փախած անակնկալ մի հով  
Ընկել փշատենու սաղարթների մեջ խիտ,  
Թրթոռում է կամաց շշուկի հետ սիրո.  
— Հոգեկ, ա՛խ, օրը գա, տաճարն ավարտ առնի,  
Ու պսակվեմ քեզ հետ այս տաճարում...

Սաղարթների միջով մի աներես արև  
Ընկնում ու աղջկա դեմքն է վառում:

— Հոգեկ, ա՛խ, օրը գա, տաճարն ավարտ առնի,  
Ու հարսանիք անեմ, քեզ տանեմ տուն...

Խոնարհում է աղջիկն իր թարթիչները խիտ,  
Մի գույգ խոնավ-խոնավ մանուշակ է փակում:

— Հոգեկ, ա՛խ, օ՛րը գա... Հովհանի ձեռքը տաք  
Փարվում ու աղջկա մեջքն է վառում:

Մեջք չէ, ճյուղ է ճապուկ,  
Աղջիկը պոկ գայնս,  
Հեռվից բարակ ձեռքն է թափահարում:  
Գնում, ես է նայում, ծիծաղում է մանրիկ  
Ու այրում է հեռվից, այրում, այրում...

Արարատյան դաշտում  
Քար է դրվում քարի,  
Արարատյան դաշտում  
Մուրճ է զնոցում ու քար,

Եվ զնգոցը մուրճի նուռ է կորզում քարից  
Եվ ողկույզ է կորզում գրնջոցը մուրճի  
Եվ տերևն է բացում շենք փոշու տակ...

Տաք են քարերը, տաք,  
Ծեկ են քարերը, շենք,  
Եվ քարերին կւաթող  
Քրտինքի շիթը շենք  
Մանր է, շողուն ու տաք:  
Եվ ուամկական մեջքեր, մեջքեր պղնձացած  
Ծկող ողնաշարի խոլ ճոյնչ են հանում,  
Եվ ուամկական ձեռքեր, ձեռքեր պղնձացած  
Մանր ու խաղաղ ծեսով  
Մանրիկ քարը առնում  
Եվ այնպես են դնում ծանրիկ ու տաք քարի,  
Որ ասես ոչ թե քար,  
Այլ հավատ են դնում:

... Եվ ամառ է գալիս և ամառ է գնում.  
Օրորվում է հովից փշատենիթ փոշոտ,  
Սաղարթներում պահած սիրո շշուկը շոգ.  
— Հոգե՛կ, աշունը գա, տաճարն ավարտ առնի,  
Ու Բարսանիք անեմ, տանեմ քեզ տուն...

Մագող արեգակի առաջին շողը շեղ  
Նախ Ազատն Մասսի ձյունը վառեց,  
Զյուների հետ ոսկով տուրևառեց,  
Ապա թեկվեց,  
Թեքվեց,  
Մասիսն ի վար,  
Դիպավ Զվարթնոցի ոսկե խաչին,  
Կապույտի մեջ ոսկին բոցավառեց:

Արշալուս է, աշուն... Ողջ աշխարհի վրա  
Ասես կապույտ-կապույտ մի թախիծ են կործել,  
Այգիները հագել հրակարմիր ձորձեր,

Այդ թախսի մեջ այրվում,  
Չեն մոխրանում սակայն...

Մեղրամումն բարդին՝ ամեզրական  
Կապույտի մեջ իր սուր բոցն է տարութերում,  
Զրնգացող ու ջինջ մաքրություն է վերում,  
Առուն՝ մաքրություն է ամբողջովին:  
Դեղձին դեմքը պարզել լուսաբացի հովին  
Եվ ուզում է այրվող շիկնությունը մարել,  
Ծիրանի ծառն ուսին ծիրանի է առել,  
Իսկ տանձենին գլուխն իր գաճգրահեր  
Թաթախել է որդան կարմիրի մեջ:  
Աշնանային ոսկու և հրի մեջ,  
Աշնանային օրվա մաքրության մեջ կապոյտ  
Զվարթնոցն է կանգնել վարապաց,  
Զվարթնոցն է կանգնել եռասլաց,  
Զվարթնոցն է կանգնել Մասսի դիմաց  
Իրըն մի սրբատաշ, բյուրեղ Մասին...  
Եվ ձևերը նրա իրար գալիս,  
Եվ ձևերը նրա տանում են վեր  
Ներդաշնության խորհուրդն անմեկնելի  
Ու երկնքի խաղաղ ոլորտի մեջ  
Սկսում են քարե մի պատարագ:

Զվարթնոցը՝ ոգու մաքուր կրակ,  
Ոգու մաքուր մրրիկ ու ներշնչում,  
Զվարթնոցը՝ քարե արարշություն,  
Հմբուտություն քարե...

**Հովնանը կանգ առել**  
Ու նայում է խաղաղ, նայում հաշտ ու հոգնած:  
Օ՛, արարման խոնջենք, վերին դու գանձ,  
Կա՝ աշխարհում արդյոք քեզնից վսեմ վայելք,  
Քեզնից վսեմ պարզեն ու ամսքում...  
Դու այն լուսն ես քարի, որ փովում է հոգուն  
Եվ ողոքում հավետ կսկիծը այն վերքի,  
Որ ակոսել էին քո սրտի մեջ

Միջակության նախանձն ու քթությունը բիրս:  
Եվ արդ քո կիրակին, քո խրախճանն է, սի՞րո,  
Ու այդ խրախճանքի կոչմակներն այսօր  
Այս կապուտն է՝ նորին իր մեծությամբ,  
Լուսն է՝ արեգական անեղծությամբ,  
Լյառն ամենայն լեռանց՝ Մասիսն Ազատ,  
Իր ծյունափառ, մաքոր վսեմությամբ:

Արագածն է ապա,  
Արամազդը, Արան  
Եվ լեռներն են Սուկավ  
Եվ ամենայն  
Կատարներն են հայոց...

Այս աշումն է խարտյաշ, մեղրամոմե բարդին,  
Այգեստաններն այրվող, այգեստաններն են խիտ,  
Որ ոսկի են թափում, թափում մարջան ակներ,  
Եվ քո սերն է, սերոյ,  
Նա, որ աչքեր ուսի  
Որպես Գառնի ձորում բացված մանուշակներ...

Հովհանը կանգ առել  
Ու նայում է փոշոտ ճամփուշներիս:  
Ծամփով արևելյան,  
Ծամփով արևմտյան  
Եվ հարավա ճամփով,  
Եվ հյուսիսա ճամփով,  
Ծամփաներով ոլոր,  
Ծամփաներով բոլոր  
Երթն է ահա ձգվում ժողովրդյան ..

Եվ փանդիռ է ԲԱշում,  
Եվ մայում են գառներ,  
Բառաշում են ճերմակ,  
Սեգ արջաներ,  
Որ իրենց տաք արյամբ  
Նոր տաճարի որմերն օծեն պիտի:

Օծումն է տաճարի... Ու լոկ աստված գիտի,  
Թե Հոռումն այդ գոռոզ,

Կոստանդինոս կայսրը բյուզանդական,  
Սյու ինչո՞ւ է այդպես շնորհ արել այդքան  
Եվ կամեցել այդքան ներկա լինել  
Հայոց նոր տաճարի օծման ծեսին...

— Բարի է կամքն, — ասին, —

Եվ խորհուրդը բարի...

Ծարտարապետ Հովհանն, դա այդպես է անշուշտ,  
Միշտ բարի է լինում կամքը բռնակալի:

Եվ սակայն ի՞նչ արած, թող հոռոմները գան,  
Թող գան, նայեն հայոց Զվարթնոցին,  
Որ բարձունքից իրենց սուրբ Սոֆիայի  
Չհիսորտան այդքան կոկոզավիզ:

Եվ որոտաց հեռվից եղջերափողը ձիգ,  
Եվ փողփողաց հեռվում մի ոսկեհուու դրոշ,

Մի ծիրանի ծփաց,

Եվ այրուծի մի սեգ

Հոխորտալով խաղաց

Դեսպի տաճարը նոր:

Կոստանդինոս կայսեր դեմքը մարմար է պաղ,  
Եվ աչքերն են հանգած Կոստանդինոս կայսեր...  
Բայց տաճարին ի տես՝ աչքերի մեջ հանգած  
Բոնկում է, շողում  
Ինչ-որ թաքուն մի կայծ  
Ու հանգչում է խկույն:

Կոստանդինոս կայսրը աջը վեր է պարզում,  
Ողջոյն հողում հայոց ավագանուն  
Եվ տաճար է մտնում կոկոզավիզ:

... Հայոց պատարագը նախ թախիծ է թավիշ,  
Սոսափյուն է սոսյաց,  
Եվ միսանք է ոգու,  
Որ ոլորփում վսեմ պյուներն ի վեր  
Ու դողում է կամար գմբեթի տակ...  
Հայոց պատարագը անձրև է տաք,

Եվ անձրևից մեսո  
Ծափալումն է լուսի,  
Թափալումն է շողի  
Եվ խորհուրդ է ոգու,  
Եվ բարձրության աղերս...

Հայոց պատարագը լուսի մրրիկ է, ծես,  
Սաստկացում է լուսի,  
Փառք է ճառագայթման,  
Եվ մրրկող ոգու  
Աղեկոծված կապույտ...

Հայոց պատարագը ալերախում,  
Բարձրանում է վսեմ այուներն ի վեր  
Եվ կորգելով տանում այուներն ի վեր  
Մաքուր զրնգոցը որձաքարի...  
Հայոց պատարագը ալերախում,  
Հայոց պատարագը գմբեթի տակ կախվում,  
Զնգում է ընդերկար...  
Եվ սյուներն են զնգում,  
Եվ գմբեթն է զնգում,  
Զվարթնոցն է զնգում ոտից-գլուխ  
Ստուգված ու մաքուր զանգի նման:

Ու երբ հալվեց, մարեց պատարագը հայոց,  
Եվ լուսթյուն եղավ մի անահման,  
Կոստանդինոս կայսրը  
Խոսեց, ասաց.  
— Ծարտարապետ Հովհանն այր է Բանճարամիտ,  
Եվ տաճարն իր կնոտած վսեմաշուք է շատ...  
Ու ես նրան պիտի շնորի անեմ վերին,  
Բարի կամքով նրան Բրամայեմ պիտի,  
Որ յուր ճարտարաձեռ վարպետներով Բանուրծ  
Իսկույն ճամփա ընկնի դեպի քաղաքս սուրբ,  
Քանզի Բանճարը յուր  
Բյուզանդինում պիտի առավելս շողա...»

Եվ Հովհանի ոտքին փաթաթվել է մի ձիգ,  
Մի ձյուն ու ցեխ ճամփա,  
Եվ Հովհանի դիմաց ծանրացել է մի գորշ,  
Հողին կպած երկինք:

Իր երկինքը մնաց այնտեղ, ჩեռվում...

Առավոտյան կանուխ այդ երկինքը վերում  
Խնկի ծովս էր կապոյտ  
Եվ աստղո ոգի,  
Եվ մանկության երազ,  
Եվ խորհուրդ էր խորին...  
Երբ ծագում էր արևն, այդ երկինքը այնտեղ  
Ասպարեզ էր շողի,  
Ծառագայթի հանդես,  
Մրցախաղ էր լուսի,  
Լուս էր ամբողջովին...  
Ապա օրվա կեսին այդ երկինքը այնտեղ  
Կապոյտի միշ էր ջինջ  
Եվ կապոյտի ծիծաղ,  
Եվ կապոյտի զնգոց...  
Եվ արևի մուտին այդ երկինքը այնտեղ  
Եղեգնուտի հրդեմ  
Եվ ծիրանի ծով էր,  
Ծիրանի բոց...  
Բայց Հովհանի ոտքին փաթաթվել է մի ձիգ,  
Մի ձյուն ու ցեխ ճամփա,  
Եվ Հովհանի դիմաց տարածվել է ահա  
Մուժով պատած մի դաշտ:

Հո՛ղը, ա՛խ, իր հողը մնաց ჩեռվում:

Հո՛ղը... Երբ արևից խոփը վառվում  
Ու ճեղքում էր նրա թխությունը խոնավ,  
Նա այնպես էր մրսում, ալնպես բուրում

Ու երազում այնպես իմաստնորեն,  
Որ անգամ սիրտը քո մի պահ նորեն  
Ուզում էր հող դառնալ ու խառնվել հողին:

Հո՞յլ... Հայոց հողը... Ամբողջովին  
Ոգի է նա, լուսով շաղված աճուն,  
Նա մայրական բուրմունք  
Ու մանկության բուրմունք  
Ու բուրմունք է հացի...  
Հողը, հայոց հողը...  
Նա տուն է ու կրակ,  
Աղոթք է ու գինի,  
Նա ծխանի ծովս է բարձրագնա...  
Հողը, հայոց հողը, հայոց ոգին է նա:

Բայց Հովնանի ոտքին փաթաթվել է մի ձիգ,  
Մի ձյուն ու ցեխ ճամփա  
Եվ ճողփում է պղտոր իր ջրերով:

Զո՞յլը, ա՞ն, իր ջուրը մնաց հեռվում:

Այնտեղ, Արագածի բարձունքներում  
Կար մի Կապույտ աղբյուր,  
Կապույտ որձաքարից  
Կապույտ առշալուս էր արտաքիսում  
Ու զնօպով փոփում քարերն ի վար...  
Եվ աղբյուրներ կային,  
Կաթանաղբյուրներ վարար,  
Եվ աղբյուրներ՝ ծնված  
Արտաքիս աստղի,  
Ծաղկի արտասուքից  
Ծնված ծավի ջրեր...  
Ջրեր, ծավի ջրեր  
Ու ծաղկահամ ջրեր,  
Ու կաթնահամ ջրեր,  
Ու աստղահամ...

Բայց Հովնանի ոտքին փաթաթվել է մի ձիգ,  
Մի ձյուն ու ցեխ ճամփա,  
Եվ Հովնանի դիմաց բլուրներ են գաճաճ:

Իր Մասիսը մնաց այնտեղ, հեռվում:

Մասի՞ն, հայոց հողում և աշխարհում համայն  
Ծագող արեգակի շողն առաջին  
Քո կատարն է վառում  
Եվ իրար է խառնում կրակ ու ձյուն,  
Կրակ ու ձյուն խառնած՝ ոգին ես դու հայոց,  
Պարզված հավերժությանն ու աստծուն:

Մասի՞ն, դու՝ հող ու քար,  
Մասի՞ն, դու՝ ժայռ ու ձյուն,  
Մասի՞ն, սակայն հայոց հայացքի դեմ  
Դու՝ հրեղեն կատար,  
Դու՝ հրե պյուն:

Եվ դու տվիր, Մասի՞ն, ինձ վեհությունդ պարզ,  
Եվ դու տվիր, Մասի՞ն,  
Հայոց ոգու խորհուրդն անմեկնելի,  
Հայոց արնաքամվող,  
Խաչվող, գամվող,  
Հայոց մեռնող,  
Սակայն հրաշքի պես հառնող  
Ոգու խորհուրդը պարզ:

Եվ այդ ոգին էր պարզ, որ Զվարթնոց դարձավ,  
Դարձավ հայոց հողի հառնող խորհուրդ,  
Ըմբռատացում դարձավ  
Ու համբարձում:

Եվ Հովնանի ոտքին փաթաթվել է մի ձիգ,  
Մի ձյուն ու ցեխ ճամփա  
Ու քաշում է, քաշում, քաշում է ետ:  
Այնտեղ, հեռու-հեռվում մնաց քարակ մի գետ,

Մնաց փոքրիկ մի տուն ու ծիրանի մի ծուխ,  
Մնաց դոնակն այգու, մի տաք հնձան մնաց,  
Բույրը մնաց հացի...

Գալարվում է ճամփան, ու դիմացի  
Բլուրներին նստած ամպերը գորշ  
Քամու բերանն ընկած, ձգվում երկար  
Եվ իրար են խառնում երկինք ու հող  
Ու սև ստվերները մայրամուտի:

Ե՞րբ էր... Կալի վրա երգն արտույտի  
Կախվել, օրորվում էր վարդավառի հետ վառ...

Վարդավառ էր կալում,  
Արև, ծաղիկ ու ջուր,  
Օրը ծափ էր տալիս,  
Քրքչում ու ճշում,  
Օրը վեր էր թռչում շիթերի հետ ջրի,  
Կարմիր-կանաչ կապած իշնում են վար:  
Վարդավառ էր... Ու նա վարսերը թաց,  
Թաց զգեստը կրծքին ու կոնքերին կպած,  
Հանկարծ ելավ իր դեմ...

Եվ օդ չեղավ, ասես, Բանկարծ օդում,  
Վայրիվերում եղավ լուս ու մութի...

Կալի վրա երգն էր թուխ արտույտի,  
Եվ արևն էր զնզում կալի վրա  
Իր լուսեղեն ու մեծ պատարագով...

Գալարվում է ճամփան... Ամպերը գորշ  
Քամու բերանն ընկած չվում Բեռու,  
Ասպարեզ են բացում հողմի Բամար:

Եւ չի լինի արև, չի լինի կալ,  
Ծափ չի զարկի օրը վարդավառի,  
Եվ աչքերն այն, իբրև մանուշակներ,  
Եւ չեն ժպտա խոնավ խոնարհությամբ:

Քամին սուրում է պաղ մի չարությամբ,  
Քամին սուլում է սուր ու զարհուրիկ վայում...  
Իր հոգու մեջ ինչ-որ բոց է մարում,  
Ինչ-որ լույս է հատնում իր կրծքի տակ...

Այնտեղ, Գառնո ձորում մի քարածայո կար տաք,  
Մի ծանրանիստ, վայրի, մի շեկ քարափ,  
Ասես անձեռակերտ պատվանդան էր ու հիմք:  
Եվ այդ հիմքի վրա ինքը քանի անգամ  
Մտքով որմ է հանել, խոյակ ու այուն  
Եվ ձևերն է դրել նոր տաճարի...

Այդ քարափի վրա պիտի հավետ լոի  
Մի փլատակ երազ...

Ասես ահեղ ու ցուրտ անդունդներից ելած,  
Անդունդների շունչ է բերում քամին,  
Քամին քարանձափի դող է բերում:  
Իր հոգու մեջ ինչ-որ բոց է մարում,  
Ինչ-որ լույս է հատնում իր կրծքի տակ...

Քամին հողմ է դարձել և սպիտակ  
Բաշերով է արդեն ալեվետում:

«— Հոգեկ, աշունը գա, տաճարն ավարտ առնի,  
Ու հարսանիք անեմ, տանեմ քեզ տուն»:

Հարսանիք է, ճերմակ մի հարսանիք,  
Հողմը կաղկանձում է, հողմը վայում,  
Եվ հողմի մեջ գայի ոռնոց կա ծիգ:

Հարսանիք է, ահեղ մի հարսանիք...

Հողմը բաշն է զարկում հող ու քարին,  
Հողմը ծափ է տալիս ձյունի պարին,  
Հողմը արշավում է տիեզերքով...

Եվ օրերն են ծեծվում հողմի երգով,  
Գիշերներն են ծեծվում հողմի երգով,  
Կաղկանձում են ցավից ու գալարվում:

Իր հոգու մեջ ինչ-որ բոց է մարում,  
Ինչ-որ լուս է հատնում իր կրծքի տակ,  
Եվ թախծում է մի պաղ ամայություն:

Շուրջը օտար դաշտեր, հողմ է ու ձյուն,  
Օտար հողմը նրան բերանն առած,  
Տանում է աշխարհով, ո՞ւր է տանում...

Եվ ծնկները արդեն դողում են թույլ,  
Թույլ մխում է ներառում մի թաց կրակ,  
Մարում է ության մեջ իր ամայի:  
Հողմի ոռնոցներում շունչն է մահի,  
Իսկ ճանապարհն անվերջ ձգվում է դեռ  
Ու գալարվում այրող ձյունափոշով:

... Արարատյան դաշտում մի դեղնաթերթ օշոշ  
Արեգակի դեղինն իր բաժակում առել,  
Դեղին բոց է վառել իր բաժակում:

Հեծյալ հողմը ահեղ ասպատակում,  
Բոցն այդ տրորում է կատաղորեն  
Եվ Հովնանին տանում ոտքերի տակ:

Հետո հողմի ալիքն իբրև պատաճք  
Պարուրում է նրան  
Ու հետքերը ջնջում:

Իսկ սանձակոծ հողմը դեռ վրնջում,  
Ասպատակում է դեռ...



Հզոր բռնկումից երեսում է խամփան,  
Եվ հորիզոնն է ողջ տեսանելի դառնում... .

## Թ-ԱՐԵՒՐԻԿԱՅՑԻՆԵՐ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հայոց աշխարհի այրված, շիկացած, պղնձե սարեր,  
Ու քարեր, քարեր, քարեր պղնձե,

Հայոց աշխարհի մի հսկայական, կծու մի արև

Ծեկ հովիտների ձարիսոտը հնձել,

Թափուր հանդերի խոպանը խանձել,

Սարալանջերից լիզել թուփ ու սեզ,

Այդ ճարակումից հագեցել ասես

Ու կապույտի մեջ մրափել է լուռ:

Ամայի լեռներ,

Ամայի ճամփա, ամայի բլուր:

Միայն մենավոր, շողուն մի ճպոտ

Թառել լուսեղեն ինչ-որ մի թելի

Եվ իր անիմաստ ու երանելի

Երգն է ճովողում աշխարհին ի լուր:

Ամայի լեռներ,

Ամայի ճամփա, ամայի բլուր:

Հողը քարացել, դարձել է երկար,  
Եվ նման է օդն անգույն կրակի,  
Ծարավ է աշխարհն, ու օձն իր մի կաթ  
Արտասուբով է երևի մարում  
Ծարավն իր ձագի:

Իսկ շեկ բլուրի ամայի կողով  
Սողում է դանդաղ փոշու գորշ մի ամպ,  
Քարավա՞ն է, հո՞տ,  
Որ փոշու քղողով  
Մածկել է իրեն ու վար է սահում  
Հոգնած ու մոլոր ամպի ծանրությամբ:

Բայց նոսրանում է փոշին այդ դեղին,  
Ու նախ երևում մի արաք հեծյալ,  
Չալման սպիտակ,  
Սպիտակ է ձին,  
Եվ ալ է հագինն ու հայացքը ալ:

Իսկ նրա հետքով շարան առ շարան,  
Ձեռքնրին ամուր շղթա ու պարան,  
Տղաներ են թուխ  
Ու գանգրագիսակ,  
Աղջիկներ մեծաւչ  
Ու մանկահասակ,  
Կին ու այրամարդ,  
Մանուկ ու մայրեր,  
Եվ ճամփի փոշուց՝ բոլորն սպիտակ,  
Բոլորն ալեհեր:

Տոթը հևում է լեռների միջն,  
Ու բույրն է հևում շիկացած քարի,  
Մարդու ստվերն իր ոտքի տակ իջել  
Եվ վախենում է, թե քիչ երկարի:

Դեղնադեմ մի այր արևահարվել,  
Կողքի շլապինդ պատանուն փարվել

Ու քարշ է տալիս ոտքերը անուժ,  
Ու քարշ է տալիս անուժ մի հառաչ:

Եվ քարավանը ձգվում է առաջ,  
Եվ քարավանը քաշում է իր հետ  
Ի՞ն երկար, փոշոտ, գալարիկ ճամփա,  
Որի մի ծայրը, է՛, հեռու-հեռվում,  
Քաղաքում Անի,  
Մյուսն ո՞վ զիտե, ո՞ւր պիտի գնա,  
Ո՞ր շեն ու ապատն Արաբստանի:  
Ծփում են օդի բոցերը անգույն,  
Ու հորանջում է հեռաստանը շեկ,  
Դեմի լեռները ալեվետում են  
Լոյսի ծփանքում,  
Ասես տեսնի մեջ արևահարման  
Դողում են բեկ-բեկ:

Իսկ հեռու-հեռվում գորշաքար մի վանք,  
Իր խաչը պարզել իբրև աղերսանք,  
Այդ ի՞նչ է հայցում քարացած ու լուս:

Ամայի լեռներ,  
Ամայի ճամփա, ամայի բլուր:

Եվ վանքին ի տես եղնում են ձեռքեր,  
Որ աստծուն իրենց տուրքն ու պարտքը տան  
Ու սակայն անզոր ընկնում են Շերքն,  
Զի կապերն ամուր ու ծանր է շղթան:

— Ա՞յս, լառ՝, չկա ողորմ, քան գերին,  
Քար է իր ուսին ու սրտին իր՝ քար,  
Դու ասա, ա՞յս, դու, տեսնող վերին,  
Մինչն ե՞րբ մնա հայն այսպես տկար:

— Հէ՛, Գինդ շինական, Բուզսդ մի մարի,  
Ականջալուր եմ, ու ինձ Բավատա,  
Փրկիչն է ծնվել հայոց աշխարհի,  
Որ ճորտ ու գերուն փրկություն մի տա:

— Հավատավոր ես, եղբայր իմ Տրդատ,  
Եվ սակայն ողորմ կյանքու է քեզ վկա,  
Դյու աստնվորիս փրկիչները շատ,  
Բայց փրկությունը չկա ու չկա:

Ծամփեզերքն ի վար օշինդրը այրվել,  
Տորին է խառնել բույրերն իր լեղի,  
Խոկ ճամփի փոշին ոտքերին փարվել,  
Զգվել է երկար, ձգվել է դեղին:  
Արևով հարբած այն ճպուն էլի  
Քարավանի հետ անբաժան թևում,  
Լողում, շողում է խաղաղ եթերում  
Եվ իր անիմաստ ու երանելի  
Երգն է ճովողում աշխարհին ի լուր:

- Ծարավ եմ, մերիկ, ջուր, ա՛խ, պուտ մի ջուր...
- Համբերի՞ր, հոգեկ, համբերի՞ր, հասանք...
- Ո՞ր ես մեր սարի զմիզմիան ախապուր,  
Ախապուր չեր, լառ՝, զանգ ասա դու, զանգ...

Ու մեկն՝ աչքի դեմ մի զանգակ աղբյուր,  
Ու մեկն՝ անտառի ծմակ մի կանաչ.  
Ու մեկը՝ քարձրիկ սարի ձյան մի բուռ,  
Ու մեկը գետի խշշոցը առած,  
Գնում են, գնում, գնում են առաջ:  
Գնում է, գնում քարավանն առաջ,  
Քարշ տալով իր հետ փոշոտ մի հառաչ,  
Քարշ տալով իր հետ փոշոտ մի ծարավ,  
Փոշոտ մի անեծք,  
Փոշոտ մի արև...

Եվ ահա հեռվից ցոլում է մի խաչ,  
Ու պարիսպներն են երևում քարե:

Հայոց աշխարհում հազար արահետ,  
Հայոց աշխարհում հազար ճանապարհ,  
Եվ այս մեկն ահա քարավանի հետ  
Գալիս է հոգնած,

Գալիս է հեշտապառ,  
Գալիս է ծարավ,  
Մտնում Մանազկերտ:

— Հե՞յ, հեռու կացեք,  
Ասպարեզ բացեք,

Մեծ գերեվաճառն Ալ-Իրն-Մանսուր  
Իր գերիների ստվար բազմությամբ  
Մտնում է շուկա...

— Ուրս կոխեցիր, գեղջուկ անասուն...  
— Անասունն ինչդ ես, քաղըի սրիկա...  
— Հե՞յ, որդան կարմիր, կարմիր, կրմզի...  
— Դվիխի դիպանի...  
— Քիրմանի խաս շան...  
— Այստեղ համեցեք ով գնել ուզի  
Ծենաց աշխարհի մետաքսը անձալ...  
— Այ նաբաթ շաքա՞ր, այ նաբաթ շաքար,  
Մեղրի պես քաղցր է, սառն է ձնան պես...  
— Եղբայր, շաքարիդ գինը հրամես,  
Գնեմ մի նուկի...

— Այ լուսնակերևս,  
Ինձ պագիկդ տուր շաքարիս համի  
Ու ամենը տար առանց դրամի...

— Հա՞-հա՞-հա՞...  
— Հի՞-հի՞...  
Ծիծաղ է լսվում աջից ու ձախից,  
Ու Մանազկերտի շուկան է թնդում  
Աղմուկ-ծիծաղից:

— Հե՞յ, լսեք, լսեք,  
Ես՝ Գորգիկ Ծիլենց բաժրարս կրկին  
Ազդարարում եմ բաժը տերունի.  
Սայլ ու գրաստով բերված ցորենի  
Բաժն այսուհետև արծաթ է քսան,  
Եվ մսի համար՝ լինի ոչխարի,  
Երերովի լինի, թե լինի եզան,

Կեսի համար տան ու կեսն ազատ է...

— Դվին քաղաքի գորգե՞ր բազմագույն,  
Երկայնքը տան է, լայնքը՝ հինգ կանգուն,  
Բուրդը բերված է քաղքեն նահրաբան...

— Հե՞յ, բացեք ճամփան,

Հե՞յ, բացեք ճամփան,

Մեծ գերեվաճառն Ալ-Դրն- Մանսուր

Իր գերիների ստվար բազմությամբ

Մտնում է շուկա:

— Վախ, հայոց աշխարհ, ողբամ ես ըգբեզ,  
Պակասդ' հազար, գերիդ կա ու կա:

— Ո՞վ է ցանկանում ինձնից ուսանել,  
Թե ինչպես պիտի պղինձ-երկաթից

Զուտ ոսկի հանել,

Ո՞վ է ցանկանում

Ուսանել գաղտնիքն այդ արարչական,

Ուզողներ չկա՞ն, ուզողներ չկա՞ն...

— Կորի՞ր, խարեբա...

— Մազե լավ կապա՞՝

Մազե լավ կապա՞...

— Մշո ցորենի լավաշ հաց ընտիր,

Մեկ գրիվն արժեն լոկ կես դահեկան...

— Գերիներն եկան...

— Գերիներն եկան...

Կանգ առավ մի պար արաբն առնացի

Ու այսպես խոսեց նժույգի վրա.

— Չկա՞ այլ աստված ալլահից բացի,

Եվ Մուհամեդն է մարգարեն նրա...

Ով Մանազկերտի ազնիվ ծողովուրդ,

Ընտիր ապրանք եմ բերել քեզ համար՝

Տղաներ պարթեն, գործի մեջ հմուտ,

Աղջիկներ սիրուն, մանկունք անհամար...!

Եկեք, սակարկեք, ջոկեք ու ընտրեք,

Չեզ համար ծառա այլ տեղ մի փնտրեք,  
Այլապես վաղը խումբն այս գերեվար  
— Շարժեմ պիտի վար,  
— Մինչև Դամակո...

- Պարտավի կտա՞վ, պարտավի կտա՞վ...
- Տանձենու ընտիր շերեփ ու գդա՞լ...
- Հաշի՞ց, լավ հաշի՞ց, ով որ ցանկանա  
Հյուր գնալ ջեննեթ, թող ինձ մոտ գա նա...
- Հնդու մարգարի՞տ...
- Մսրա սև սնգո՞ւր...
- Նոան պաղ շերբե՞թ, հենց Բիմա քերի...
- Ծարավ եմ, մերիկ, ջուր, ա՞խ, պուտ մի ջուր...
- Համբերի՞ր, հոգեկ, քիչ էլ համբերիր...
- Սադափե կոճա՞կ, սադափե կոճա՞կ...
- Սեկե ալ կաշվից մույկեր ու մուճա՞կ...
- Ընտիր համեստո՞ւք...
- Զմուռս ու կնդրո՞ւկ...
- Այրարատ երկրի կենարար գլուր՝ ...
- Չինի՞ , լավ չինի՞ ...

Լոռում է հանկարծ ամեն կանչ ու ձայն,  
Ու երկում է այլակերպ մի այր,  
Հագին ձորձեր են, միրուքը ծածան,  
Իւ շուրթին մի խոսք.  
— Վա՞յ ինձ, վա՞յ ինձ, վա՞յ...

Խոսք չէ, այլ հառաչ,  
Զայն չէ, այլ կական,  
Շունչ չէ բերանին,  
Այլ գեհենական  
Ծենճեր է ու մուխ...

Կանգնում է մի պահ, իր շուրջը նայում,  
Զարհուրիկ ձայնով նույն վայր վայում  
Ու քայլ է անում ամբոխի մեջ Բոծ:

— Քսան տարի է այդ վայը շուրթին,  
Ծրջում է մարդն այս աշխարհում հայոց,  
Եվ մինչև հիմա ոչ ոք նրանից  
Զի լսել բնավ այլ մի խոսք ու բառ:  
— Խե՞նթ է երևի...  
— Ե՞՞ի, ինչ իմանաս,  
Խենթ է, թե արդար, իմաստուն մի այր...

Իսկ մարդն այլակերպ կանգնում է կրկին  
Ու որոտում է.  
— Վա՞յ ինձ, վա՞յ ինձ, վա՞յ...

— Երգնկա քաղքի ընտիր աշտանա՛կ...  
— Դամասկոսի թուր, նշտար ու դանա՛կ...  
— Դվինի մաքուր բյուրեղապակի՛,  
Հապա մի լսեք ինչպես է զնգում,  
Ասես թե զանգն է Անի քաղաքի:

Իսկ կուղակների բաց աւալարեզում  
Պարապ վարձվողներ, օրամշակներ  
Մի ծեր գուսանի բոլորներ, կանգնեն  
Ու տաղ են լուս:

— Դե, լս՛ք, մանկտիք, ասեմ,  
Բարի լուր, ավետիք ասեմ,  
Ավետիք աշխարհին հայոց...  
Սիս-Մասիս գերված լյառն ի վար,  
Մեր երկիր տառապյալն ի վար  
Ծագել է արեգակ մի բոց:

Բոցմորուս ու բոցագանջուր,  
Աշքը՝ լուս ու բազուկը՝ կուռ  
Փրկիչն է հայտնվել հայոց,  
Եկել է հաստատի բարին,  
Եկել է մամու տա չարին,  
Գերեղարձ անի գերելոց:

Եկել է դժոխքը քանդի,  
Սասանի հիմերը քանտի,  
Զգետնի թշնամուն դժխեմ,  
Կտրի հոսքն այս արյուն-լացի,  
Աստղերուն դեմ երդիկ քացի,  
Դուռ քացի հարավ քամու դեմ:

Բոցմորուս ու բոցագանգուր.  
Աչքը՝ լուս ու քազուկը կուու,  
Կուու կուած պողպատ է ասեմ,  
Ինքն՝ արդար, խոսք՝ սուրբ-սրբոց,  
Մրտիկը կրակ է ու բոց,  
Անունը Սմբատ է, ասեմ:

Ոչ ոք չիմացավ, թե ուսկից հանկարծ  
Եկավ վանական մի սևահանդերձ:  
Զիլ մտրակի տակ օդը խուլ վնգաց,  
Ու երգը հատվեց.

- Դե, առ քեզ՝ «փրկիչ»...
- Դե, առ քեզ՝ «Սմբատ»...
- Դե առ բաժինդ, հերձվածող դու շուն...
- Եվ ալևորիկ գուսանի դեմքին
- Պտղեց արյունը ու կաթեց փոշուն:
- Սադափե կոճակ, սադափե կոճա՞կ...
- Սեկե ալ կաշվից մույկեր ու մուճա՞կ...
- Հնդու մարգարի՞տ...
- Մսրա սև սնգո՞ւր...
- Նոան պաղ շերբե՞թ, հենց հիմա քերի...
- Մարավ եմ, մերիկ, ջուր, ա՞խ, պուտ մը ջուր...
- Համբերի՞ր, հոգեկ, քիչ էլ համբերիր...

— Ո՞վ է ցանկանում ինձնից ուսանել,  
Թե ինչպես պիտի պղինձ-երկաթից  
Զուտ ոսկի հանել...

Ո՞վ է ցանկանում  
Ուսանել գաղտնիքն այդ արարչական,  
Ուզողներ չկա՞ն, ուզողներ չկա՞ն...

Միկում է շուկան, ալիք է տալիս,  
Հեռում է շուկան, զնգում ընդերկար:

Իսկ Բեռու-Բեռվից դեռ ձայն է գալիս.  
— Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վայ...

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հայոց աշխարհում Բազար ճանապարհ,  
Հայոց աշխարհում Բազար արահետ  
Ու մի արահետ,  
Որ իր մտածմունք-մտմտուքի Բետ

Զոր ու վիճի մեջ  
Ասես կաղալով,  
Հանդ ու դաշտի մեջ  
Ծանր հնալով,  
Ապա անսալով  
Լեռների կանչին,  
Գնում, Բանգչում է  
Թոնդրակա սարի  
Ժայռեղեն լանջին:

Բոնել Թոնդրակա այդ շավիդ-ճամփան  
Քայլում է ահա հոգնաբեկ մի այր:

Գորշ է օրն ու տոյթ: Լեռներում ամպած  
Լույսն ու խավարը զարկում են իրար:

Գորշագույն ամպը՝ գորշագույն հովազ,  
Ծանրաթաթ ելնում լեռան լանջն ի վեր  
Եվ իր շանթերի ժանիքներն է շնկ  
Միարձում լեռան ժայռեղենն կողին,  
Ու ստեպ-ստեպ ծիրանի լույսեր,  
Որուտմունքներ են թափալվում հողին:

Եվ այրն այն ճամփորդ,  
Լույսերի միջով, խավարի միջով

Ու որոսիմունքի,  
Քայլում է հոգնած,  
Աչքը՝ Թոնդրակա ամպոտ քարձութքին:

Ասում են լեռն այդ թոնիր է մի մեծ,  
Հսկա թոնդրան ակ,  
Ինչպես մի հսկա ու թեժ թոնիր մեջ  
Այդ լեռան կրծքում ծովս կա ու կրակ,  
Հրաբուխ կա թեժ,  
Որ խոլ մոնչում,  
Հեռում է անվերջ  
Ու ծանր շնչում...  
Հեռում է, հեռում Թոնդրակն ահավոր՝  
Սրտում ծովս ու կայծ,  
Ու թվում է թե ուր որ է մի օր  
Որտա պիտի  
Ու ծայթքի հանկարծ:  
Իսկ Թոնդրակն ի վար անդունդ է ու ձոր,  
Վիր է ու կապան,  
Եվ շատ քչերն են աշխարհում հայոց  
Սիրտ անում բռնել այդ լեռան ճամփան:  
Թոնդրակա շենի տներն ել բնավ  
Տներ չեն՝ բերդեր,  
Որ դեռ պավղիկյան քաջերն են կերտել  
Ընդդեմ փորձության, ընդդեմ ոսոխի...  
... Ամպի սև ծոցում  
Կայծակը՝ նման հրեղեն ոխի,  
Ծողում է հանկարծ,  
Ամեն ինչ մի պահ լուսով ողողում,  
Բայց և նույն պահին  
Ապառաժի դեմ իր շեղքը ջարդած,  
Մեռնում է թողում:

Եվ այրն այն ճամփորդ  
Այդ կայծակի հետ խոհն իր ոլորում,  
Քայլում է հոգնած, քայլում ու խորհում:  
Տեղատարափը

Աշխարհը առնում իր ոտքերի տակ,  
Վեգոց է հանում ու հանում փոշի,  
Տեղատարափը  
Ծեծում է քարափն ու քարերը տաք  
Եվ տեղն ու տեղը դառնում գոլորշի:  
  
Գոյ է բարձրանում հողից ու քարից,  
Նախաստեղծության բույրն է համբարձում,  
Արցունք է կաթում թուփ ու մացառից,  
Աստղծո՞ արցունք...

Եվ արևն ահա  
Նորից հարության տոն է կատարում,  
Ամեն ինչի մեջ  
Նորից իր պայծառ մասունքն է վառվում,  
Եվ ահա նորից քարափի եզրին  
Աչքերն է ճմլում մի կապույտ ծաղիկ,  
Ու, ցողաթաթախ, շողում է մասրին  
Իբրև սիրո երգ,  
Իբրև հարության հիասքանչ տաղիկ:

Եվ այրն այն ճամփորդ  
Շանապարհի հետ խոհն իր ոլորում,  
Աչքը՝ լուսերին, քայլում է հոգնած,  
Քայլում ու խորհում...  
Եվ իր հողեղեն է ությունն ի վեր  
Մի լուս է զգում, լուս մի անստվեր,  
Ոգեղեն մի լուս,  
Որ փարատել է ամեն տարակուս,  
Կասկածանքների տագնապը ցրել,  
Պոտքի տակ իշոտ այս ճամփան փոել,  
Ասել է՝ գնա...

Ու գնում է նա:

Դեմը Թոնդրակն է,  
Թոնդրակա սարի ծեռ քարափի տակ

Աղբյուր է վարար.  
Ու ջուր են առնում երկու աղջնակ:  
Մեկն իր սափորը ջրի մեջ սուզում,  
Նազում է մանրիկ ու երգ է ասում:

— Պաղ աղբյուր կա Թոնդրակն ի վար,  
Զրիկն է լուս,  
Աղբյուրի մեջ օդս է ընկել,  
Ակն էր փիրուզ:

Օդս է ընկել,  
Ակն էր փիրուզ,  
Ակն էր փիրուզ,  
Գի՛ն ծոցերուս:

Եկ, թուխ տղա, կտրիճ տղա,  
Զուրը մտիր,  
Զուրը մտիր, փիրուզ ակով  
Օդս գտիր...  
Գտիր, կտրիճ,  
Գտիր, որ քեզ  
Պագ տամ ճերմակ  
Իմ ծոցիկես...

Սակայն գոհարե մի շարոցի պես  
Երգը կտրվեց, շաղ եկավ ասես,  
Երբ այրն այն ճամփորդ ելավ լանջն ի վեր:  
— Բարի ողջույն ձեզ, բարի աղջիկներ...  
— Բարին արևիդ, անծանոթ եղբայր...  
— Պուտ մի չէի՞ք տա ինձ ջրից այդ պաղ...  
— Ինչո՞ւ չէ, եղբայր...  
— Չէ՛, չտաս, Սովիթ...  
— Ո՞ր մեղքիս համար, այ թուխ, ինձ գթա...  
— Եղբայր, տեսնում եմ, քրտնել ես ճամփին,  
Զուրն էլ պաղ է խիստ, քեզ վնաս կտա,  
Հանգչիր մի սակավ, ապա, ինչո՞ւ չէ,  
Խմիր, լիացիր...

- Որքան սիրուն ես, նոյնքան խելացի...
  - Իրավ, քույրիկս խելացի է շատ...
  - Պապանձվիր, Սովիի...
  - Սիրուն աղջնակ,
- Թե ջուրը մտնեմ և օդի գտնեմ,**  
**Իրա՞վ է, որ դու ինձ պագիկ կտաս...**
- Ինչո՞ւ չէ, եղբայր, մեկը չէ, այլ տաս...
  - Պապանձվի՞ր, Սովիի, լեզուդ մի բացի...
  - Պապանձվե՞մ, նանե, վատ բա՞ն ասացի...

**Երկու աղջնակ...**

**Մեկը խոնարի է, աստծո գառ է նեզ,**  
**Մյուսը լեռան եղնիկ է վայրի,**  
**Հոնքերով բերդ է քանդում նա ասես**  
**Կամ քաղաք մտնում առ ու ավարի:**

**Եվ նա, որ լեռան եղնիկ է վայրի,**  
**Մանրաքայլ նազում,**  
**Սափորը առնում, դնում է ուսին**  
**Ու այսպես ասում.**

— Անձանոթ եղբայր, եթե շենք գաս.  
 Համեցիր մեր տուն,

**Մենք աղջիկներն ենք դարրին Դանանի:**  
 — Ընորհակալ եմ, քույրեր սիրասուն,  
 Թող աստված ձեր թագն ու պսակն անի:

**Եվ այրն այն ճամփորդ**  
**Հիշում է ուրիշ ծովական աշքեր,**  
**Ուրիշ մի կրակ**  
**Եվ խնձորենու քուրմունք է ჩիշում,**  
**Մի տաք պարանոց, մի խենթ զարկերակ,**  
**Եվ այդ ամենը՝ ჩեռու մշուշում:**  
**Ապա ծնկում է ու խմում երկար**  
**Աղբյուրից այդ պաղ**  
**Եվ շեն է մտնում հոգնած ու դանդաղ:**

Իսկ շենի վրա ցորենի բուրմունք  
Բուրմունք է կալի,  
Եվ բուրմունքի հետ որոտմունք մի խոլ  
Ու տագնապալի:  
Եվ ականջը՝ խոլ այդ որոտմունքին,  
Գնում է այրն այն, գնում ու կանգնում  
Կալի պոռունկին:

— Ախր, այս ձեռքով ես քար եմ մաղել,  
Ախր, այս ձեռքով ես փուշ եմ քաղել,  
Ախր, եզան հետ ես լուծ եմ քաշել,  
Ախր, եզան պես ես ուս եմ մաշել,  
Հիմա եկել ես ու ասում ես՝ տուր...  
Ա՛ն, այս մեկն էլ առ...  
Ձեռքին կոտ մի մեծ այսպես մոլտում,  
Մազե պարկի մեջ ցորեն է կիտում  
Շինական մի այր:

— Արյուն-արցունքով հողը շաղախել, և  
Ախր, ես սերմ եմ հողի մեջ քաղել,  
Ես քար եմ քաղել, ես ժայռ եմ պեղել,  
Զնան ջրիկ եմ սարերից բերել,  
Հիմա եկել ես ու ասում ես՝ տուր...  
Ա՛ն, այս մեկն էլ առ...

Ու շինականը՝ շապիկը պատառ,  
Մազ-միրուքի մեջ՝ քրտինք ու մղեղ,  
Չափում է անվերջ ու ձայնում ահեղ.

— Ախր, ծնկածալ ես քաղ եմ արել,  
Ձեռքերս արճել, թիկունքս եմ վառել,  
Ու դեռ այս հացից պատառ չեմ առել,  
Հիմա եկել ես ու ասում ես՝ տուր...  
Ա՛ն, այս մեկն էլ առ...

Եվ կոտն իր ձեռքի նետում է նա դեն,  
Երկինքն է պարզում ձեռքերն արեառ...

- Ուկորին հասավ, տե՛ռ, դանակն արդեմ,  
Էլ ի՞նչ ես կեցել, ա՛ռ, հոգիս էլ առ...
- Աքաս, որքա՞ն էր պարտքն այս գյավուրի...
- Քսան ջորերեղ...
- Որքա՞նը տվեց...
- Տասննինգը, տեր...
- Մոր փեշից պոկիր լակոտին դրա  
Ու թինգ բեռան տեղ գերեվար արա:

Կալը բոլորած ամբոխի շուրթով

Ծշուկներ անցան,

Ասես արթնացող խոլ շունչ է բուքի,

Ու թեսու պոկվեց զարհուրիկ մի ձայն.

— Զե՞մ տա ձագուկիս...

Ձայնը ճիչ դարձավ ու ահագնացավ,

Մայրն այլակերպվեց, թխասմայր դարձավ,

Թևաբաց կանգնեց հարկահանի դեմ:

Արաբը ժպտաց, գլուխն օրորեց,

Արաբն իր գոտու մտրակը շոյեց

Ու քաշեց դանդաղ:

Եվ հանկարծ, հանկարծ կալը բոլորած

Մարդկանց թիկունքից

Օտարականն այն դուրս եկավ հանդարտ:

Գունատ է, նիհար ու ճապուկիրան,  
Աչքերն ածուխ են, ու ճակատը լայն,  
Թուխ-մելան մազերն ուսերին իր շոր  
Խջնում, ծփում են ալիք առ ալիք,  
Նա լուր քայլում է ամբոխի միջով,  
Գալիս իբրև ոյս ու սպառնալիք:

- Ո՞վ է սա...
- Ուսկի՞ց հայտնվեց հանկարծ...
- Հիսո՞ւ է ասես...
- Փառք շա՛տ, աստված...

Եվ արաբն իր ջիլ մտրակը հանում,  
Հանում է, սակայն մի պահ վարանում,  
Վարանում տեսքից  
Ահառիկ ու սեգ:

— Էլ ի՞նչ ես նայում, տուր դրան, Աքաս,  
Ըմբռստանում է գյավուրը, հասե՞ք...

Եվ հասան ուրիշ երեք հարկահան,  
Եվ գալար-գալար մտրակներ եղան:

— Ցա աղու ալլա՞ն...  
— Ցա աղու ալլա՞ն...

Եվ օդը շաշեց,  
Եվ օդը տնքաց,  
Օդը հառաշեց,  
Սուլեց ու վնգաց,  
Օդն հազար անգամ  
Ծեծվեց ու խաչվեց,  
Մտրակը ելավ,  
Մտրակը դաշվեց  
Օտարականի  
Մեջք ու թիկունքին,

Եվ սակայն նորից մղվեց նա առաջ:

Խարազանները  
Ասես շիկացան,  
Խարազանները  
Հրեղեն դարձան,  
Խարազանները  
Խարկեցին ահեղ,  
Ելան զարհուրիկ,  
Զարկեցին ահեղ

Եվ սակայն նորից մղվեց նա առաջ:

Խարազանները  
Սև օձ են դարձել,  
Երկար, ահառիկ

Սուլոց են դարձել,  
Խարազանները  
Արյուն են հանել  
Շուրթից ու քունքից,  
Խարազանները  
Կաշիմ են փերթ-փերթ  
Պոկել թիկունքից,  
Եվ սակայն նորից մղվում է առաջ:

Խարազանները  
Արդեն ծվատվել,  
Խարազանները  
Քրքրվել, հատվել,  
Խարազանները  
Հոգնել են արդեն  
Եվ սակայն նորից մղվում է առաջ:

Խարազանները  
Անզոր մոնչում,  
Խարազանները  
Կարծես նահանջում,  
Կարծես սարսափից  
«Ալլահ» են ճշում,  
Եվ սակայն նորից մղվում է առաջ:

Խարազանները,  
Իրավ, նահանջում,  
Զարհուրիկ ձայնով  
«Ալլահ» են ճշում,  
Խարազանները  
Զարթուրած փախչում  
Ու թեռու-թեռովից  
Ունում են դեռ ձիգ...

Օտարականը  
Երերում է լուռ,  
Տապալվում որպես  
Արյունոտ կծիկ:

Աստղե՞րն են արդյոք նայում երդիկի երախից խավար,

Թե՞ ինչ-որ աշքեր՝ նենգ ու խուզարկու...

Տենդի ալ բո՞ցն է գալարվում այդպես ողջ մարմինն ի վար,  
Թե՞ անապատի ավազն է դարձյալ իր դեմքին զարկում:

Մեծ անապատն, անապատը շեկ ու սապատ-սապատ,

Սապատներն ի վեր այրվող ավազի թրթիռն է անգույն,

Մի անծայրածիր, մի լուս անապատ,

Ուր ձայնը հալչում, ձայնը կորչում ու չի արձագանքում:

Եվ խշրտում է ատամների տակ անապատն այդ չոր,

Եվ կպել քիմքիդ ու պոկ չի գալիս անապատն այդ տաք...

Այդ ո՞վ էր ընկավ վերջին հառաչով,

Վրան ավազն այրվող մի պատաճք:

... Սիրամարգերը ագիմերն ի վար հրդեն է ու կայծ,

Վարդերը բոց են, տունկերը՝ ոսկի ու կամարը՝ հիր,

Ո՛չ, ավազը չե... Մագաղաթ է դա իր ձեռքով ծաղկած,

Դեղին մագաղաթ ու որդան կարմիր:

Կարմիր ծաղիկ է, նունենու ծաղիկ,

Ու կարմիրի մեջ՝ մի կարմիր տաղիկ:

Եվ բարբառում է տաղիկն այդ կարմիր,

Թե՝ «Սեր է աստված ու աշխարհը՝ սեր».

Բայց այդ ամենը եղե՞լ է արդյոք,

Թե՞ երազում է ինքը լոկ տեսել...

... Բնրդապարսախի ճեղքերից աճած մասրենու թփից

Հին հուրեր էին կաթում պատն ի վար,

Ծաղկած ծառերը կկոցվում էին գլխապտույտից,

Օրորվում էին ու հենվում իրար:

Աճձրեսից հետո խենթացել էին բոցերը պուտի,

Աճձրեսից հետո արցունքով էր լի ծաղիկը նոան,

Հովը հարբել էր, եկել պտույտի,

Ինչ-որ մեղսական խոսքեր էր ասում արան ու նրան:

... Եվ հանկարծ ցողեր ընկան ճյուղերից,  
Եվ հանկարծ խշշաց ինչ-որ ոտնաձայն,  
Ինչ-որ մեկն առավ մատյանն իր ձեռից,  
Եվ այրվող մատներ ճակատով անցան:

Հետո...

Հետո արևն ուշաթափվեց,  
Ու սեղմվեց կրծքին աղջկա կուրծք մի պիրկ...

Խավար եղավ հետո...

Շունչը հատվեց...

Գլխին պտույտ եկավ մի ուղ երկինք,  
Ու լույս ելավ...

Հետո մատների տակ

Նվազում կար ու դոդ, կար պարանոց մի տաք,  
Կուրծք կար դոդդոց,

Կրծքի խենթ եկեց...

Ու չիմացավ՝ ծաղկած խճառքենի՞ն էր դա,  
Թե՛ աղջիկն էր բուրում արբունքի մեջ...  
Փառանձեմը...

Խոնավ, բուրող ու տաք...

Փառանձեմը...

Խոնարհ, խոնարհ տատրակ...

... Աստղե՞րն են արդյոք նայում երդիկի երախից խավար,  
Թե՞ ինչ-որ աչքեր՝ նենգ ու խուզարկու...  
Տեսնի ալ բո՞ցն է թափալվում այդպես ողջ մարմինն ի վար,  
Թե՞ խարազանն է այրելով զարկում:

Զարկում է, շաշում,  
Զարիուրիկ ճշում,  
Թե՞ «Դպիր Սմբատ,  
Դառնաս սիրո տե՛ր,  
Այն էլ ո՞ւմ, ասա,  
Իշխանի դստե՞ր»...  
Չի շաշում, օ, ո՛չ,  
Օ, ո՛չ, չի ճշում,

Երախը բացած  
Ասես քրքջում,  
Հոհողում է խենթ.  
«Հա՛-հա՛-հա՛, Սմբատ,  
Դառնաս սիրո տե՛ր,  
Այն էլ ո՞ւմ, ասա,  
Իշխանի դստե՛ր»...

Ծարավ էր հետո...  
Եվ ծարավի հետ գալարվում մի ցավ  
Ու իրեն առած, տանում է եթեր:  
Զնդանը չկա,  
Մշուշվեց երկիրն ու անէացավ,  
Խսկ այստեղ կապույտ ու լույս է թեթև:  
Այստե՛ն երնի,  
Հենց այստեղ, բազմած իր ամպե գահին,  
Նա՛ պիտի լիճի,  
Նա՛, սրարիչը ամենայն ինչի,  
Նա, սերն անսպառ, աննվազ բարին,  
Նա, ակնաղբյուրը ոգու և շնչի:

— Լսի՛ր, արարիչ, գաղտնատես, լսիր,  
Դատ ունեմ քեզ հետ,  
Եվ թող հանդուգն շթվա դա քեզ,  
Տարակուսանքն իմ ես քեզ եմ քերում  
Այսօր և հավետ  
Ու իմ տրտունջն եմ քերում աղեկեզ:

Լսի՛ր, արարիչ, գաղտնատես, լսիր,  
Թե աստվածային քո նույն կավից են  
Բոլորն արարված,  
Թե աստվածային քո նույն պատկերն է  
Բոլորին տրված,  
Ինչո՞ւ է հապա իմ դեմքի վրա  
Քո պատկերն այսպես  
Մտրակահարված:

Լսի՛ր, արարիչ, գաղտնատես, լսիր,  
Եթե սերն, իրոք, շնորհ է վերին  
    Քո ձեռքով տրված,  
Ինչո՞ւ է ապա իմ սերը այսպես  
    Ծղթայի զարկված  
    Ու զնդան դրված:

Լսի՛ր, արարիչ, նաև այս լսիր.  
Երբ որ աշխարհում սպանում են սեր  
    Ու Բավատ թաղում,  
Ինչո՞ւ ծովերը չեն ելնում ոտի,  
Ու անտառները չեն փշաքաղվում:

•                          •  
Հեզ ոչխարն ի՞նչ է...  
Մոլուցքը արյան  
Ժայթքում, եղջյուր է դառնում ճակատին,  
    Մոլուցքը,  
Ոխը,  
Յասումն իր հառնած  
Զարկվում են, զարկվում  
Զնդանի պատին,  
Զարկվում են, զարկվում  
Ու մի մուլք գիշեր  
Դառնում ճանապարհ  
Ու ազատություն...  
— Ապստամք Թումա՝,  
Որտե՞ղ է արդյոք բանակդ իջել,  
Ես զինվորն եմ քո, ողջո՞ւն քեզ, ողջո՞ւն,  
    Ողջո՞ւն քեզ, Տավրոս,  
    Մըրիկներ, ողջո՞ւն,  
Եվ քեզ՝ ընդվաման առաջին բերկրանք:  
Ու ուսմիկթերի թեղեղն է շաշում  
    Դեպի վաճք ու բերդ,  
    Դեպի մար ու կյանք...  
Եվ սակ'սյն չեղավ ոչ կյանք ու ոչ մաթ,  
    Եղավ ահարկուն...

Տեսնի ալ բո՞ցն է ողջ մարմինն ի վար գալարվում Բիմա,  
Թե՛ անապատի ավազն է դարձյալ իր դեմքին զարկում:  
Երկար է ուղին, ողջ անապատը ոտքերից կախվել

Ու քաշում է վար ու քաշում է ետ...

Տե՛ր, թիս էր կարծես, որ գերություն ես կյանքում արարել  
Եվ անապատ ես արարել նաև այդ գերության հետ:

Մեծ է անապատն, անապատը շեկ ու սապատ-սապատ,  
Սապատներն ի վեր այրվող ավազի թրթիռն է անգույն,

Մի անծայրածիր, մի լուռ անապատ,

Ուր ձայնը հալչում, ձայնը կորչում ու չի արձագանքում:

Լեզուն ծարավից ուռել, թանձրացել ու շուռ չի գալիս,  
Մաշկը ցամաքել, մագաղաթի պես խշրտում է չոր...

Ո՛չ, անապատ, չէ, հրդեհ է, հուր է, հրեղեն ալիք,  
Ինքը չի քայլում, սողում է արդեն ավազի միջով:

... Այդ ո՞ւր էր արդյոք, քարափ կար, անտառ, կանաչ կար  
ու սեզ,  
Եվ քարափի ի վար ջրափոշի էր, ջրվեժ էր վարար,  
Չուրը շառաչում, ջուրը զրնգում, ճշում էր ասես  
Եվ ողողում էր աշխարհը արար...

Սողում է, սողում... Դեպի ջրվեժն է հևիրն սողում,  
Մոտիկ է, մոտիկ... Շուրթերը շուտով կդիպչեն... սակայն  
Փխրուն ավազը սահում է տակից, ինքը ետ լողում,  
Ընկնում է նորից կրակների մեջ տարտարոսական:

Եվ ատամները նորից շիկացած ավազ են ծամում,  
Ծշում են անձայն ու պատառուտվում շուրթերը այրվող,  
Մարավը նորից իր երակներից շիթ առ շիթ քամում  
Ու վեր է հանում ամենի մի ոխ...

Ո՞ւր ես, ախ, ո՞ւր, աստծո շանթ,  
Եվ ո՞ւր է, մա՛թ, մանգաղդ ժանտ...  
Թափ տալով ամպն իր թներից,  
Ոգի՝ էր դա՛ իջավ վերից,

Թե՞ ոխն էր դա՝ ելավ վարից,  
Ելավ հոգու խոլ ծարավից,  
Եվ հայտնությամբ իրենց վերին,  
Նրանք ահեղ շանթը բերին,  
Իր հոգու մեջ դրին այսպես...

— Ինչ էլ լինի, հայոց երկիր,  
Պիտի ապրեմ, հասնեմ ես քեզ:

Անդունդներից քո մթամած,  
Քնած հողմեր պիտի հանեմ,  
Որձաքարե քո լեռների  
Բուքն աշխարհին պիտի տանեմ,

Ռամկի կակիծն հանեմ ոտքի,  
Ոխը սրեմ իբրև ժանիք,  
Ես պիտի գամ, հայոց երկիր,  
Կյանքս բերեմ տարածամիդ:

Սողում է, սողում... իր հետ սողում է տոթը հուրիրան,  
Զուրը մոտիկ է... Եվ ահա շուրթին դիպավ մի ալիք...  
Այդ անապատի բեղվի՞նն է դարձյալ, որ թեքվել վրան  
Ու ջուր է տալիս...

Ո՛չ, բեղվինը չե... անապատ չկա... խրճիթ է մի հին,  
Երդիկն է շողում թրթոռուն լուսով արևագալի...  
Դնքն ո՞ւր է արդյոք, որտե՞ղ է տեսել այս աղջիկներին,  
Որ վրան թեքվել ու ջուր են տալիս:

#### ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

— Հե՞յ, հազար բարով, հազար բարի լուս,  
Թոնդրակա շենի մարդիկ թուխմորուս  
Ու ճերմակմորուս...  
Ես քարափրթա ճամփա եմ անցել,  
Հասել շենը ձեր,  
Որ ձեզ հարց մի տամ...

Եղած Թոնդրակա թեք սարալանջով,  
Այսպես բարբառեց որոտմունք կանչով  
Այր մի շինական:

— Բարով ես եկեղ, թե Բարցդ է բարի:  
— Բարի է, բարի, Սասնա աշխարհի  
Ականջն էս ամառ ձենձենոցի պես  
Մի լուր է ընկել խիստ ուրախական:

Ականջալուր ենք, որ Սասնա տան ջոջ  
Էն Սանասարը, որ հետն աղբերոջ՝

Ծոյն Բաղդասարի,  
Բերեց ապաւած քարերը սարի

Ու զարկեց սան սուն,

Ծինեց մեր բարձրիկ, գովական Սասուն,  
Մի զավակ ունի, որ ժուկով գերվել,

Մըսը է տարվել,

Խոսում են Բիմա,

Թե գերությունից հրաշքով պրծեղ,

Եկել է Էստեղ, նատել շենք ձեր,

Որ գերյալ հավուն փրկություն մի տա...

Ծշմարի՞տ է դա...

— Է՛, ծոյն սասունցի, թե սուտ է մի քիչ,  
Ապա մի շատ էլ ճշմարիտ է դա:

— Մի քիչ սուտը՝ հեշ, մի քիչ սուտը ի՞՞զ...

Ուրեմն Էստեղ ծնկի տի չոքեմ,

Յոթ տեղով էս հողն ու ջուրը պագեմ

Ու փառք տամ ինոր...

— Հե՛յ, Այսեք ձորին, Բե՛յ, Այսեք ձորին,  
Ծենք մարդիկ են գալիս նորից նոր:

— Ի՞՞զ անեմ, լառ, անկար են չգալ,  
Էնան են սեղմել մեր ոտն ու մեր ձեռ,

Որ մոր ծծի կաթն արնի Բետ մեր ալ

Եղունգի բերնից ի դուրս է պրծել:

Հնուց է ասված. ով համբեր ունի,

Նա էլ կյանք ունի,

Շատ հւամբերեցինք... Ու չէ, կյանք չլիւ,  
Համբերն էլ հատավ,  
Հիմա գալիս ենք, որ խոսքը լսենք  
Սմբատ գիտունի  
Ռի եթե պետք է, թե լինենք իրեն  
Ու լինենք սատար:

— Շինական եղբայր, Սասնա հացն անուշ  
Մեր հացի նման շա՞տ է դառնացել...  
— Լաոյիս ասեմ, ինչ խարշադար ենք  
Արարին դարձել,  
Հացի տաշտն ու մաղ կախել ենք պատից:  
Արաք մեր շենի մարդիկ նվազցուց,  
Մեր շենի խորոտ աղջիկներ տարավ,  
Արաք մեր հոգին մեր քերանն հասցուց,  
Էս ծով աշխարհում մեզ թողեց ծարավ:  
Էղ Մատղավանքն էլ ուրիշ մի կուսից  
Տանում է, տանում  
Ու չի կշտանում,  
Վանքի ձեռնավորն եկել, կախվալ էր  
Ն Իմ էս միրուսից,  
Բե՛ տասնորդը տուր,  
Ասում եմ՝ չկա...  
Զէ ու չէ՝ տի տաս...  
Ասի՝ չեմ ի տա...  
Խոսք մի իմ կողմից ու խոսք մի՝ ինոր,  
Ու կոիվ ընկավ...  
Իմ գյուի մեջ էլ ծուռ երակ մի կա,  
Ծոն ևմ մի փշուր,  
Հատ մի որ տվի՝ իր վիզը ծովեց,  
Մնաց էղպես ծուռ...  
Ո՞ւր տի գնայի ևս ձեռից էդ շան,  
Ու փախա շենից, ընկա ձոր ու վլին,  
Գիշերը պայծառ աստղն արի նշան,  
Զօրն էլ Սմբատի անունը տվի  
Ու, սար Թոննդրակա,  
Դեսի քեզ եկա:

— Ու քարով եկա՞ր:

— Ա՛խ, լառ, լառ,

Վախենամ անեծքն էր վաճականի  
Իմ արդար հոգին սև դժոխք տանի:  
— Ի՞նչ դժոխք, եղբայր, չէ, մի վախենա,  
Բարի է աստված ու վաղուց է հա  
Դժոխքը քանդել...

Ես քեզ Սմբատի ասածն եմ ասում.  
Հիմ մատյանների իմաստուն գրից,  
Աստղերի լուսից ու շարժումներից  
Սմբատը արդեն եղել է հասու,

Որ դժոխք չկա:

— Ծշմարի՞տ, լառ...

— Արևս է վկա...

— Թե դժոխք չկա, դրա՞խտ էլ չկա...  
— Չէ՛, չկա, չկա՛... Դրախտ ու դժոխք  
Այստեղ են, եղբայր, այս աստմվորին,  
Նայիր այս սալին, նայիր այս ձորին,  
Տես, ի՞նչ արև է, ի՞նչ լույս է ու շողք,  
Տես, ի՞նչ զմիզմիկան ջրեր են հոսում,  
Ինչ տեսակ-տեսակ հավքեր են խոսում

Ինչ սաղարթ ու ծառ,

Ինչ ծաղիկ պայծառ,

Ինչ եղնիկ ու վիթ ժեռ քարերն ի վեր,  
Ու ծառերն ի վար երկնային նվեր՝

Անուշ մանաճա...

Զուրն էլ հո ջուր չէ՛

Երկնային գինի...

Եղբայր, դրախտն էլ ինչպե՞ս կլինի:  
Բայց անկուչտ մարդիկ մեզ բռնապետել,  
Դրախտն այդ կաել, դժոխք են մեռել,  
Ասում են հիմա տքնեք, տառապեք,  
Որ այնտեղ՝ վերում բախտավոր ապրեք,  
Սակայն Սմբատը հասու է դարձյալ,  
Որ այդ հանդերձյալ կոչվածը չկա,

Չի լինի հավետ...

— Թե դժոխք չկա, չկա հանդերձյալ,

Էլ ի՞մ ենք կեցել, տո լաճ տնավեր,  
Եղենք ու զարկենք ակն ընդ ական:

... Զեռքերին պիզակ,  
Զեռքերին մական,  
Բարձրացան ձորից  
Այրեր շինական,  
Եկան սրերով,  
Աղեղ ու մետով,  
Կածւննով եկան  
Ու արամնորով,  
Եկան Խլաթից,  
Դամուշաճից եկան,  
Չափիպավանից  
Ու Վաճից եկան,  
Մուշից, Արճեշից,  
Տավրոսա փեշից,  
Եկան խսքերով  
Ու մեկ-մեկ եկան,  
Եկավ և գուսան  
Մի թափառական:

Պատառ-պատառ են շորերը հագի,  
Խորշոմած դեմքին հետքն է մտրակի:

— Ծեծե՞լ են, գուսան...  
— Չէ, ի՞նձ չեն ծեծել,  
Իմ տաղն են ծեծել,  
Այրեր մանկամիտ,  
Ու չեն իմուցել,  
Որ նժուզի է տաղը նմանակ,  
Ու չեն իմացել, որ մտրակի տակ  
Ոչ թե խոնարհվում,  
Այլ խոյանում է նա աჩիպարան  
Եվ կտրատում է լկամ ու պարան:  
Այրեր մանկամիտ,  
Ու չեն իմացել,

Որ ձուլ զանգի է տաղը նմանակ,  
Ու որքան զարկեն,  
Այնքան առավել պիտի դողանջի:  
— Այրեր մանկամիտ,  
Ու չե՞ն իմացել,  
Որ ազատության է նա նմանակ,  
Որքան բանտարկեն,  
Այնքան առավել նա պիտի շաշի:

Եվ նա փանդիոը վար առավ դանդաղ  
Ու թոնդրակն ի վեր, բամբ որոտալով,  
Գալարվեց, ելավ  
Շառաշուն մի տաղ.

— Ես փա՛ռք այն արծվիմ ասեմ,  
Ես փա՛ռք այն արծվիմ ասեմ,  
Որ երբ ծերանա արծիվն,  
Հե՛յ վախ, ծերանա,  
Նորմեկեն թները բանա,  
Իր ծանդրիկ թները բանա,  
Երկինք վերանա:  
Բարձրանա հավքերի արքան  
Մերձենա արևին արդար,  
Լվացվի հրով  
Եվ ապա շառաշով գա վար  
Ու լեռան աղբյուրի մեջ պաղ  
Մկրտվի ջրով:

Ու մեկիկ-մեկիկ թոթափիմ,  
Աղբյուրի ջրի մեջ թափին  
Փետուրքն հնացյալ,  
Եվ նա մանկանա նորեն,  
Սլանա ամպերի վերեն,  
Շառաշի դարձյալ:

Քարե մի սև կամար ու քարե սև մի խուց  
Եվ սևի մեջ՝ հորիսնցն արդեն հատնող մոմի:  
Չներուք է դրսում, բռուք, որ ասես վաղուց  
Շգնությամբ մի դաժան իրեն մատնել ծոմի,

Յնորվել է սովից,

Խելագարվել

Ու ոռնում է Ծումբա վանքի պատերն ի վեր:

Հորանջի տակ մոմի նստել է խոնջ մի ծեր

Ու գրում է.

«Օ՛, տե՛ր, օ՛, արարիչ,

Ծնորհեիր ևս դու մի քանի տարի

Քո Սիմավոն անուն աբեղային նվաստ,

Որ մատներիվ իր թույլ, իր մատներով երեր

Նա մատյանն այս վերջին իր ավարտին թերել,

Սերունդներին հանձներ իր ոգեղեն Բունձքը»:

Մոլեգնում է բռուք և բռունցքն իր

Զարկում քարե պատին, ասես սպառնալով,

Թե ուր որ է հիմա կքանդի այուն ու որմ,

Սակայն վանքը բռիքին անտարբեր ու անլոր,

Նստել է ծանր ու սև ու մտորում է լուս:

Եվ գրում է ծերը.

«Կարգով ժամանակի

Արդ հարկ է, որ այստեղ տարեգրենք ճշտիվ,

Տարեգրենք նաև առանց սրտմտության

Երկումն ու գործերն այն Սմբատի,

Որն ի Ծալկուտնն է, գեղջեն Զարեհալան:

Հարկ է, սակայն, որ նախ զգաստությամբ խոհեմ Քննենք, բե վասն ինչի երևեցավ Սմբատ,

Զի, եթն չիք պատճառ, ապա հուրն ի քարե

Դուրս չի ելնի երբեք ու չի շարժվի բնավ:

Ուրեմն, տե՛ր, սատար ու աջակից եղիր,

Որ ես ճշմարտությունն աստ արկանեմ գրով,

Քանզի ժամանակս բարեբաստ չէ բնավ

Ճշմարտության համար ու ողջամիտ խոսքի...»

Եվ աչակից եղիր, որ մատյանն այս նվաստ  
Այն հավատո քննիչ, բայց անհավատ ու պիղծ  
Մարդուկների աչքից հեռու մնա, օ՛, տեր,  
Զի ճակատն իմ հոգնած անզոր պիտի լինի  
Օր ծերության կրել աղվեսակերպ խարան:

Եվ արդ, էջն այս հոգուս արտասուբով ցողած  
Պիտի ողբամ ես քեզ, Բայց բարձրիկ աշխարհ,  
Զի Բովիվները քո, քո քահանայք,  
Որ երբեմ աստծո արդար սիրով լեցում  
Եվ աչքերում լույսը սուրբ Մեսրոպի,  
Աստվածայիմ բանի խորհուրդը էին պեղում,  
Արդ արտաքուստ միայն աստծու Բագել,  
Նյութն են արել աստված, դարձել արծաթասեր  
Եվ շավիղներն ընկել մոլորության.  
Նոքա ոչ թե միայն Քրիստոսից շնորհել,  
Այլ գործում են Արամ ճիշտ Բակառակ:  
Եվ ամենուր իհմա քանսարկությունն է քիրտ  
Սողում գալար-գալար, քորեղով մաղճ ու քում,  
Կարգալույծ են եղել սեր ու ազնվություն,  
Ու մատնությունն է սև իր ատյանը բացել:

Եվ այս ժամանակիս հայտնվեցավ Սմբատ  
Ու սմբատյանք թեն հույժ գաղտնի են պահում  
Իրենց խորհուրդներն ու դավանանքը իրենց,  
Բայց ակունքից ստոյգ հասու եմ ես,  
Որ երևաց Սմբատն, ու ոամիկն ասաց.  
— Աստծո ու մեր միջն պետք չէ միջնորդ,  
Պետք չէ եկեղեցի ու վանք պետք չէ,  
Մենք կաղոթենք աստծուն ուր կամենանք:  
Ուամիկն անսաց Արան ու ապստամբ եղավ:

Ողբամ պիտի ես քեզ, Բայց բարձրիկ աշխարհ,  
Զի իշխանները քո չար ու հափշտակող  
Անմիաբան վարքով բգկտում են իրար  
Եվ միաբան դառնում օտար ոսդներիդ:  
Եվ ոսոյսդ օտար ասպատակում է արդ

Հովհաններդ կանաց ու ցիրուցամ անում  
Քո բանավոր Բոտը... Եվ դու չունես Բովիվ:

Երևեցավ Սմբատ ու ուամիկին ասաց.  
— Աստված իր պատկերն է ամենեցուն տվաւ,  
Թող հավասար լինեն, ուրեմն. ամենեքյան,  
Եվ չինի Իշխան և չինի թող տեր...  
Ռամիկն անսաց նրան ու ապստամբ եղավ:

Ապա ասաց Սմբատ, թե խորություն չկա  
Արանց մեջ ու կանանց, և ազատ է սերը...  
Աստված ինքն է կաքում սիրո դաշինքը սուրբ  
Եվ ոչ եկեղեցին: Եվ արդ, ով ում սիրի,  
Թող իմանա, որ դա կամքն է աստվածային,  
Ու երկնային պարգևն... Տիրեմն թող մարդիկ  
Ազատ սիրեն ասոծո հայացքի տակ...

Դա հույժ հաճո եղավ ուամկի սրտին  
Եվ ի կատարումն մղեց նրան...  
Ու ոչ միայն ուամկին, վանորայքից  
Վանականներ փախան և համախոհ դարձան  
Եվ գործակից դարձան թոնդրակեցոց:  
Եվ արդ, Հայոց աշխարհ, չունես խաղաղություն,  
Սավառնում է վրադ անագորույն մի ահ,  
Զնդաններդ բոլոր լիքն են բերնեքերան,  
Ուրկանոցները քո լիքն են անմեղներով,  
Եվ այրերդ խոհուն խենթանց են Աւտված:  
Օ՛, զարհուրիկ բարքեր, ժամանակներ դժնի,  
Արդ երեքից մեկը քննիչ է հավատո,  
Եվ երկուսից մեկը՝ վարձու լրտես:  
Ու դու խեղդես պիտի ձայնը սրտիդ,  
Խեղդես ձայնը խղճիդ ու հառաչդ խեղդես:  
Եվ բանսարկու մարդիկ, նենգ ու քսու մարդիկ  
Ասպարեզ են գտել ու ելել են որսի:  
Եվ բավ է քեզ կնքեն Աերձվածողի անվամբ,  
Որ կորստյան գնաս դու սերնդե-սերունդ:  
Եվ վերացել են արդ վստահություն ու սեր,

Չի վատահում, ավա՞ղ, հայրն իր զավակներին,  
Այրամարդը՝ կնոշն ու եղբայրը՝ եղբոր:  
Եվ խեղվում է, խեղվում մարդու կնրպարը սուրբ,  
Եղծանվում է հոգին...

Ժամանակներ դժնի,

Արդ սուտ մատյաններ են վաճքների մեջ գրվում,  
Կաղապարով ձուլվում փծուն ու սին տաղեր,  
Հանճարդ չի շողում, ով ժողովորդ իմ հայ,  
Որ քեզ նեցուկ լինի տարածամին այս սև  
Եվ պահպանի հավետ ჩրաշագործ ոգիդ:  
Օ, զարհուրիկ բարքեր, ժամանակներ դժնի,  
Ինչպես պիտի արդյոք

Այդքան ամոթապարտ ու արյունուտ տեսքով  
Դուք երևաք գալիք սերունդներին»:

Զներուք է դրսում, հողմի ողբ է ու լաց,  
Հառաշանք է ասես, որ անդունդի ելած,  
Իր ալևոր բաշով ծեծում է որմ ու վեմ  
Ու ծառս լինում ամպոտ երկնքի դեմ:  
Իսկ հրեշտակ մի լուս իր մատներով ստած  
Մի լավ երազ առել ոլորտներից վերին,  
Վար է իշել, մտել խոր մի խավարամած,  
Տվել երիտասարդ Տիրայր աբեղային:

... Զով անտառ է, արևածագ  
Ու մի կանաչ-կանաչ բացատ:  
Բացատն ի վար՝ աղոյթքի պես  
Մուժի ծվեն կա ծխացող,  
Եվ ծաղիկներ,  
Եվ ծաղիկներ,  
Աչքերի մեջ արև ու ցող:  
Ու ծխացող մուժի միջով,  
Ինչպես միջով ծխածանի,  
Քայլ է անում մի աղջնակ  
Ծոճ տալով հյուսն իր սև ծամի:  
Քայլ է անում, մանրիկ նազում,  
Մանրիկ նազում, երգ է ասում.

— Լուս երես, սև աչքեր ունեմ,  
Այ օանո՞ր, օանանո՞ր ծամեր,  
Իմ սիրուն ճորտ ու տնը ունեմ,  
Այ օանո՞ր, օանանո՞ր ծամեր...

Սքրեշում գորգիկը վուեմ,  
Ուկեթել ծածկոցը վրան,  
Հոգեկիս իմ տունը բերեմ  
Ու դնեմ ես նիգը դուան:

Սափոր մի ալ գիճի հանեմ,  
Ու խմենք մեր սիրո վրա,  
Իմ շարե շապիկը հագնեմ,  
Որ ճերմակ ծոցիկս երես...

Լուս երես, սև աչքեր ունեմ,  
Այ օանո՞ր, օանանո՞ր ծամեր,  
Իմ սիրուն ճորտ ու տեր ունեմ,  
Այ օանո՞ր, օանանո՞ր ծամեր...

— Սա ի՞՞զ է, տեր, չա՞րթ է, ոգի՞,  
Ելած ջրի մամոռտ ակից,  
Ծլած կաղնու մութ փշակից...

— Հա՞-հա՞-հա՞-հա՞... խեղճ արեղա,  
Այդ ե՞ս եմ, ե՞ս շարքն ու ոգին...  
Ես Թոնդրակա Դանան դարբնի  
Աղջնակն եմ՝ սիրուն Սովիին:  
«Չարթ ու ոգի՞»...

Կեցի՞ր, ասեմ ես հայրիկիս,  
Որ միրութդ տեղից պոկի...

— Ի՞նչ ես անում այս ծմակում:

— Գազպա էինք մենք հավաքում,  
Ու կորցրի ես քույրիկիս,  
Հիմա տաղ եմ ասում, որ գա...

— Լա՛վ ես երգում...

— Եվ ճի՞շտ է դա...

Հա՛-Բա՛-Բա՛-Բա, տեր, քեզ մեղա,

Երբե՛ք, Երբե՛ք ես չեմ տեսել

Այսքան սիրուն մի աբեղա...

Դե, գնացի....

— Քիչ է մնա...

Բայց ամպի պես մութ ծմակից

Ելավ Քունձիկն աჩեղատես.

— Տիրա՛յր, Աեղի դու գործակից,

Չարքին տվիր հոգիդ այդպես...

Զով անտառում է, արևածագ

Ու մի կանւաչ-կանաչ բացատ:

Բացատն ի վւար՝ աղոթքի պես

Մուժի ծվեն կա ծխացող

Ու ծաղիկնե՛ր,

Ու ծաղիկնե՛ր,

Աչքների մեջ արև ու ցող:

Ձներուք է դրսում, ձնեհողմ է ու լաց;  
Սաեւ մեղքն է քավում մի սպիտակ պատված,  
Հառաչում է երկար, ողոքագին հեծում,  
Բոռունցքներով իր պաղ վանքի դուռն է ծեծում,  
Սակայն վանքը, բքին անտարբեր ու անլուր,  
Նստել է ծանր ու սև ու մտորում է լուս:

Իր մութ խցում նատել ու մտորում է լուս

Նաև վանահայրը՝ կորովարիք մի ծեր:

✓ «Եվ նյութվեցին նորից բորբորիտյան գործեր,  
Եվ աշխարհն նորից խոռվալ է սաստիկ...

Ռամիկն ապստամբել և կամենում է, տեր,

Իշխանին վար բերել երիվարից իր սեգ,

Իմքը Բեծզեղ վրամ:

Աղանդապետմ այս նոր

Վտանգավոր է հույժ և հույժ սպառնալի,

Զի ասում եմ, թե նա այր է ճարտարաբան

Եվ Աերշնչված այնքան, որ հավատում է, թե  
Լատրյալն է աստծո...

Խոսք են խոսում նաև,

Թե մի պարսիկ մոգից մոգություն է ուսել

Եվ հասու է դարձել այն արվեստին դժվար,

Որով կարող է նա կամքն իր թելադրել

Ու Աերշնչել այլոց...

Հավատացի դորան,

Հավատացի այնձամ, երբ ռամիկն այն բոի,

Որին կալանեցինք ու գելարան դրինք,

Դմքն իր ատամներով կտրեց լեզուն,

Ի բաց թքեց այդպես արնաշաղախ,

Որ մեզ ոչինչ չափ դավանանքից իր նոր...

Հավատում եմ, այո՛, հավատում եմ դորան,

Քանզի հուրն իր վառած ճարակում է արդեն

Ապահունիքն ամբողջ և ի դուրս է սողում:

Եվ վտանգված է արդ, վտանգված է կարի

Հայոց հավատը սուրբ ու միաբան ոգին,

Որ պատվարն է ազգիս, փրկությունը միակ

Եվ գոյության խարիսխն այս խոռվյալ ծովում:

Ուստի, եղիր սատար, տե՛ր, գորավիգ եղիր,

Որ հապշտապ մարենք հուրն այս հայրենադավ

Եվ անադարտ պահենք ժողովրդյան ոգին

Պառակտության ախտից:

Ներող եղիր նաև,

Թե այս արդար գործում մեզ աշակից անենք

Անգթություն ու ոխ ու անողոք ցասում,

Դեն աշակից անենք ամիրային արար

Եվ դարձնենք նրան գավազան մի պատժող

Ի ձեռն մեր տյառն Քրիստոսի:

Ներող եղիր, թե մենք գործենք ჩրով, սրով,

**Տարտարոսով գործենք, գործենք շանթով ահեղ,  
Չխնայենք անգամ ծեր ու մանուկ»:**

**Զներութը դրառում սպառնաձայն ոգում,  
Սարպանջի մացառն ու փշերն է պոկում,  
Ծակծկում է, արնում ձեռքերը մերկ,  
Յավից ոռնում, մատներն իր բերանը առած,  
Եւ է փախչում, զարկվում ժայուին սառցակալած  
Եվ սկսում նորից ահեղ մի երգ:**

#### **ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ**

**— Մեզ օգնական տեր կենդանին,  
Մեզ օգնական Սմբատը սուրբ...**

**Կուանն իշնում է զնդանին,  
Ծուրջը փոռում աստղ ու ասուաց...**

**Թեծ է քուրան, աստված գիտի,  
Թե ինչ ահեղ հնոցից են  
Հուրն այդ բերել,  
Ծանր է կուանն, աստված գիտը.  
Թե ո՞ր լեռան ո՞ր ծոցից են  
Այդ մետաղն  
Ոխը պեղել...  
Թեծ է քուրան... իսկ դարբնոցի պատերի տակ  
Հողմն է վայում հառաչանքով իր սպիտակ  
Ու ձյան շեղեր հանրւմ ոտի,  
Հողմն է վայում, ընկնում, կախվում վիթերն ի վար,  
Անդունդներում դեգերում է կույր ու շվար,  
Փոխվում ահեղ մի որոտի:**

**— Մեզ օգնական տեր կենդանին,  
Մեզ օգնական Սմբատը սուրբ...**

**Կուանն իշնում է զնդանին,  
Ծուրջը փոռում աստղ ու ասուաց:**

— Գամկոները շղամերի  
Հոդն ու զոդը վաղոց կրծել,  
Լույս աշխարհ են հանել նեռին  
Ու մեզ նրա ձեռն են գցնլ:  
Սիրով փշրենք սուրը նեռի,  
Մրի դեմ սուր, ակն ընդ ակամ...

Եվ մաշկի տակ բազուկների  
Խաղ են անում ջիղ ու մկան:  
Վար է հոսում  
Հատիկ-հատիկ  
Ծակատների  
Քրտիճը տաք,  
Սուր է կոփկում  
Պողովատիկ,  
Շանթ է կոփկում  
Կուանի տակ...

— Մանազկերտից մինչև Արձեշ  
Ու Տիվրիգից մինչև Սասուն,  
Հողմն է բռնել աշխարհն հայոց,  
Հողմ է բռնել, ոխ ու ցասում  
Թող շիկանա երկաթն ոիմա,  
Թող կարծրանա պաղ ու տաքից,  
Որ մեր բազկիմ ընկեր դառնա,  
Դառնա եղբայր ու բախտակից:

Իսկ Թոնդրակա բաշից սլոկված հողմը վայրի  
Կաղկանձում է անդունդի մնջ ու քարայրի  
Եվ դուրս ելած, ոռնում է ձիգ...  
Ժայռից կախված, նորից կատար է մագլցում,  
Ժայռից պոկված, խոր անդունդն է իրեն գցում,  
Վայում, սուլում է զարհուրիկ:

— Աշխարհը լոկ խոփով է շեն,  
Ու մենք շատ ենք կոել խոփեր... \  
Սակայն սուր կա ձեռքին ննի,

Եվ հիմա սուր պիտի կուիեմք:  
Իսկ սուրը քո, եղբայր Սմբատ,  
Կցրդեղենք հյութով նոան,  
Որ երբ հանես, խաղա, շողա  
Աստվածային շանթը կ'րան:

Դե՛, զարկ զարկ, դարբին Դանան,  
Դե՛, զարկ զարկ, Թոնդրակա շեն.  
Չարի շղթայք թող ամրանան,  
Բարու շղթայք ի սուր մաշեն:  
Մրով փշրենք սուրը նեռի,  
Մրի դեմ սուր, ահմ ընդ ական...

Եվ մաշեի տակ բազուկների  
Խաղ են անում ջիղ ու մկան:  
Վար է հոսում  
Հատիկ-հատիկ  
Շակատների  
Քրտինքը տաք,  
Սուր է կոփկում  
Պողովատիկ,  
Շանթ է կոփկում  
Կուանի տակ...

Իսկ Թոնդրակա բաշից պոկված հողմը երգում,  
Իր պաղ շեղրով կաղնու կոճա է ասես ճեղքում  
Եվ հառաչում երկարորեն,  
Ժայուից կախված, նորից կատար է մագլցում,  
Ժայուից պոկված, խոր անդունդ է իրեն գցում,  
Բարնքար է զարկում իրեն:

#### ԳԼՈՒԽ ՑՈԹԵՐՈՐԴ

Գարո՞ւն է, գարո՞ւն,  
Հայոց աշխարհի ամպ ու գոլ գարուն,  
Թոնդրակա սարի  
Զնիկը հալվեց ու լցվեց առուն:

## Հետո առուներմ

Իրար գիրկ ընկած՝ վազեցին առաջ,  
Եվ վիթերմ ի վար  
Որոտմունք եղավ ու եղավ հառաչ:  
Գարո՞ւն է, գարո՞ւն,  
Եվ ասես անմասն այդ խոլ հառաչին:  
Մասրին է ծաղկել,  
Որ ժայռից բխած սեր է առաջին,  
Բոց է թրթրուն,  
Որ բռնկվել է գարնամ կայծակից,  
Նսկ վայրի առնին մշշոտ ճյուղերով  
Ալ ծվեմներ և ասես պոկոտել  
Իր կողքով անցած արևածագից:  
Հարավա քամին  
Ծյուղերից կախվում իր տաք հնոցով,  
Ներքև է թռչում  
Ռի խաղ է անում կակաչի բոցով,  
Զանգակածաղկի բաժակը մտած,  
Օրորվում է նա,  
Ցող ու շաղի մեջ փեշերը թրջած,  
Պառկում է քարին, որ քիչ չորանա:  
Գարո՞ւն է, գարո՞ւն...  
Եվ աղբյուրների ջրերը վարար  
Արև եմ գզում,  
Արև քրքրում  
Ու տանում են վար:  
Թռնդրակա շենի թաց կտուրներն են  
Տալիս կանաչին,  
Եվ աղջիկների շորերն են վառվում  
Սարերի լանջին:  
Ժախ են հավաքում աղջիկներն այստեղ,  
Ժախ ու թթուկիչ,  
Ու երգն է զնօրում սարերի լանջից,  
Զորերի գրկից.  
— Այսօր ալ հագնեմ  
Ու լաշվարդ հազնեմ, հա՞յ...  
Երթամ հոգեկիս

Դունչիկը պազմեմ, Բա՛յ...  
Գարո՞ւն է, գարո՞ւն,  
Հայոց աշխարհի ամպ ու գոլ գարուն,  
Ու խոփը նորից  
Թոնդրակա սարի կողերն է վարում:  
Աղոթալուսին  
Դաշտերի վրա, սարերի լանջին  
Աղոթքի նման  
Հորովելներն են ճգվում առաջին.  
— Օրինյա՞լ է աստված,  
Հիշյալ է աստված, Բո՞...  
Լույսը լուսացավ,  
Բարին շատացավ, Բո՞...

Նորից եզների սև-սալոր աչքում  
Բոց է ու թախիծ,  
Ու նորից հավքերն ակոս են մետվում  
Աչից ու ձախից:

Իսկ սերմնացանն արտի ծայրին,  
Գոգնոցի մեջ սրսուն գարին,  
Ակոսն ի վեր քայլ է ամում,  
Քայլ է անում ու սերմանում  
Բուռ-բուռ բարիք...  
Եվ ցոլքնյում արեգական  
Իբրև վսեմ մի շարական  
Երգն է հնչում սերմնացանի.

— Փա՛ռք քեզ, աստված, տուր ացողում,  
Թող մեկն հազար դառնա հողում...  
Հղեմ ես բուռն օրինանքի պես  
Մնր պալերու սուրբ աճյունին,  
Բուռն այս երկրորդ աղքատներում,  
Գերյալներուն, որ հասց չունին,  
Բուռն այս հղեմ ուրախ սրտով  
Անցվորական ամեն մարդու,  
Էս էլ՝ պանդուխտ ու տնանկին,

Էս էլ՝ երկնուց ճնշուղ-հավքին...

Ըղոն-թողոն,

Իշեք վերից,

Չեր բաժն սուեք ակոսմերից

Ու փա՛ռք ու.վեք շինականաց՝

Առատ լինի բարիք ու հաց:

Ըղոն-թողոն թուխ ճնշուղիներ ու արտուտիկ,

Դեղձանիկներ ու սարեկներ վերից գալիս,

Թաց ակոսից կտցում իրենց ուկե կուտիկ

Ու թի՛ն թուծ, շինականին փառք են տալիս:

Եվ հորովելը մամկալի,

Սնրմանացն օրհնանքն արդար

Իրաշ հյուսվում, իրար գալիս

Ու միացւած թուխ հավքերի

Ուրախական ծրվլոցին,

Ոլորվում են երկինքն ի վեր

Հողին ձունված, ջրին ձոնված

Աղոթքի պես սրբանվեր:

Եվ սակայն հանկարծ.

— Հե՛յ, զորք է գալիս Թոնիրակա ճամփով...

— Եվ շատվորիկ են...

— Եվ ծայրը չկա...

— Էն, մենքնև ձզի, գալիս է, թող գա,

Զոր ու անդունդից էս քարափրթա,

Ո՞ւր պիտի փախչի, ո՞ւր պիտի երթա:

— Սմբատ, մի թեում գունդն է իշխանի,

Եվ Աբով-բարդն է այն մյուս թեում:

— Թող ամեն մեկը իր զենքերն առնի

Ու պատսպարվի ժայռի ետևում:

— Բայց չէ, չեն գալիս, կանգ առան անա,

Եվ զորքից զատվեց մի սևահանդերձ

— Մեր Ծումբա վանքի վանահայրն է դայ  
Գալիս է, ոսկե իր խաչով հանդերձ:

— Աղոթք է ասում ու ելնում է վեր...

— Սմբա՛տ, ժեռ մի քար չղրկե՞մ Ըզեր...

— Ժամը չէ, Դաման, Բե՛յ, լինգերն ստեք,  
Ծարժեցեք տեղում ապառած ու քար  
Եվ պատրաստ կախեք, որ անդունդն ի վար  
Գլորեք, երբ ևս հրամանն իմ տամ:

Եվ վանահայրը՝ միրուքը փարթամ,  
Ու միրուքն ի վար ոսկեշող մի փայլ,  
Ելավ կորովի, ելավ տիրաքար,  
Ելավ վեհատես ու գեղեցկադեմ,  
Կանգնեց Թոնդրակա ռամիկների դեմ:

— Ողջո՛ւմ, ձեզ բյուր ողջում, իմ մոլորյալ գառներ,  
Ողջո՛ւմ ձեզ, բյուր ողջում, նաև ապաշխարանք...

— Ապաշխարա՞նք, ինչո՞... Մեղք չենք գործել քնավ  
Արածներս միայն արդար վար է ու ցանք:

— Մեղք չե՞ք գործել քնավ... Օ՛, մեկը չէ, ցավոք,  
Բյուր եմ մեղքերը ձեր, իմ մոլորյալ գառներ...

— Եվ սակայն մեկն ասա...

— Ասեմ և ճախ ասեմ,

Որ դադարել եք դուք աղոթել առ երկինք  
Եվ դադարել եք դուք Բաղորդություն առնել  
Ու զո՞ւ անել աստծուն:

— Ամեն արևածագ

Մեր առաջին աղոթքն առ աստված ենք Բիում  
Ու փա՛ռք տալիս նրան...

— Եվ դա որտե՞ղ արդյոք,

Երբ չեք Բանում մտնել եկեղեցի ու վանք:

— Մեր սրտի մեջ, Բոգում, անտառներում կանաչ,  
Մեր Բանդերում ծաղկոտ, մեր լեռների վրա,

Ուր առավել ենք մենք աստծուն մոտիկ ու մերձ...  
Չե՞նք հաղորդվում... Ինչո՞ւ... Ամեն արևածագ  
Տերն է մեզ հաղորդում իր երկնային ցողով  
Ու հայացքով պայծառ... Սակայն զոհի մասին  
Խոսք իսկ պետք չի անել... Ի՞նչ է անձիկը մեր,  
Զո՞ր չէ՝ ամբողջովին:

— Հեթանոսներ՝ իք դուք...

— Եվ դու Բիմա առած զորքը անհավատի,  
Ժամանել ես այստեղ ներշնչելու համար  
Մեզ դավանա՞նքը քո...

— Ժամանել եմ այստեղ,

Որ դուք իմ ձեռքը տաք ձեր աղանդի պետին,  
Ու ես ետ կդառնամ խաղաղությամբ:

— Իսկ թե չտա՞նք...  
— Նայն ք, ներքն նայեք մի պահ...  
— Այդ վաղուց ենք արել...

— Չե՞ք սարսափել սակայն...

— Սարսափել ենք, այս, բայց տեսել ենք նաև,  
Որ այդ օտարական զորքերի հետ  
Ժամանել է ծառան Քրիստոսի,  
Եվ հուսով ենք, որ նա պիտի բարեխոսի  
Ու գառների համար իր մոլորդալ  
Ներում պիտի հայցի...

— Ծաղրադիր ես, որդի՝,

Եվ հասու եմ արդեն, որ հենց Սմբատն ես դու,  
Եվ հասու եմ նաև, որ հույժ աղետալի  
Այս գործի մեջ, որդի՝ ս, ոչ բանական ոգին,  
Այլ խենթությունն է լոկ դաշնակիցդ միակ:

— Ծշմարիտ ես գուցե, բայց խորամանկ մտքի  
Ծարտար շահարկումից ե՞րբ է արդյոք կյանքում  
Երջանեկությունն ծնվել... Մի անգամ եմ միայն  
Ես երջանիկ եղել ու եղել եմ այնժամ,  
Երբ չանալով մտքիս խորհուրդներին խոհեմ,  
Էնդառաջ եմ ելել խենթությանը...

— Գիտեմ, որդի՝ ս, գիտեմ, ստուգապես գիտեմ  
Ես ամբողջ կյանքը քո, գիտեմ սիրուդ մասին,  
Գիտեմ նաև, որ դու Թոնմա Գագիրացու

Զինակիցն ես եղել և գերվել ես ապա...

— Լրտեսե՞լ եք արդեն...

— Հարկ է, որ թշնամուդ

Լավ ճանաչես, որդի՛ ... Եվ արդ ի՞նչ ես ուզում...

Մի կարճատն ու սին երջանկության համար

Աղետի՞ ես մատնում ժողովուրդս հայոց,

Պառակտելով նրան եկեղեցուց իր սուրբ...

— Պառակտում եմ, քանզի ձեր հեզության կոչով

Ծորտություն եք սնում հայի հոգում,

Որ նա անվերջ միսա...

— Միսանք պիտի, որդի՛ս,

Միսանք պիտի այսպես, որ չհանգչենք երբեք:

— Ո՛չ, շառաչենք պիտի կայծակի պես:

— Բայց կայծակը, ավա՛ղ, մի վայրկյան է տևում:

— Մի վայրկյան է տևում, բայց այդ վայրկենական Հզոր բռնկումից երևում է ճամփան,

Եվ Բորիգոնն է ողջ տեսանելի դառնում:

— Ծամփան գտնել պիտի իմաստության լուսով:

— Վերին իմաստությունն այն է կյանքում, երբ դու Իմաստությունը քո մոռանալով,

Ընդառաջ ես գնում ոգուդ կանչին,

Քանզի ոգին մեր մեջ ներշնչում է աստված:

Իսձ ներշնչել է արդ, որ աշխարհում հայոց

Եվ ամենուր ապա ազատություն փոեն,

Որ չինի էլ ճորտ ու չինի իշխան,

Լինի արդարություն ու սեր լինի ազատ:

— Սքանչելի խոսքեր և գաղափար բարի,

Բայց ամենայն բարի գաղափար ու խոստում,

Երբ աշխարհ է մտնում և դիպչում է կենաց

Խոռ ու խութին ամուր և օրենքին նրա,

Խոտորնակ է գնում, միշտ խոտորնակ:

Պարզ առակով խոսեմ. մի բարեմիտ արքա,

Երբ պտույտ է անում իր տերության ներսում,

Տեսնում է, որ մարդիկ՝ հպատակները յուր,

Խիստ են նեղվում երկրի կիզիշ աղեգակից:

Եվ բարեմիտ արքան հրաման է տալիս,

Որ ժողովուրդն ամբողջ ճերմակ գդակ դնի

Ու շնեղի շոգից...

Եվ ի՞նչ...

Այնուին

Նույն արքայի մարդիկ հետևելով խատիվ  
Վերին հրամանին, ուր մի մարդ են տեսնում,  
Որ ապիտակ գդակ չունի գլխին,  
Վիզն են հատում իսկույն...

Այդպես է միշտ, որդի,

Լավ գաղափարն այդպես խոտորնակ է գնում:  
— Խյատ անկեղծ ես խոսում դու, վաճառա՛յր,  
Եվ խոսում ես անշուշտ քո կենսական փորձից,  
Քանի ձեր Հիսուսին խոտորնակ ես գործում.

Հիսուս պատգամել է՝ հանիր շապիկը քո  
Ու տուր մերձավորիդ... Դու Հիսուսից ճառում,  
Բայց տեսնում եմ ահա, որ միրուքդ ես օծել  
Ուկենիշով առատ, ուկեն խաչ ես կախել,  
Մինչեւ մերձավորդ անոթի է ու մերկ...  
— Տիրի՛ս, աշխարհն անխալստ իր օրննքներն ունի,  
Ուս որ շատ է տրված ժառանգություն և ինչք,  
Նա էլ շատ է ուսում, ուս տրված է սակավ՝  
Նա ուսում է սակավ:

— Հենց այդ օրենքն է, որ

Պիւտ տիշրենք կյանքում:

— Այդ օրենքը, որդի,

Ուսի զարմանալի մի հատկություն.

Ծո՛ւտ է կպչում իրար:

— Ուրեմն, քո կարծյոք,

Փրկության դո՛ւ չկա:

— Կա՛... և սքանչելի,

Անցվորական կյանքի ցավ ու տառապանքով  
Պիւտի ջանանք մաքրել մեր մեղավոր հոգին,  
Որ կարենանք հասնել հանդերձյալին վսեմ:

— Բարի և շատ բարի, մենք կիսենք շուտով  
Վանքի հողերը ողջ, քո այդ խաչը ոսկե,

Որ այս անցվորական կյանքի տառապանքով  
Հասնես քո քարոզած հանդերձյալին:

— Բայց դա բնույթք է շան ու բնույթք է գայլի...

— Եվ առավել է լավ բնույթը շամ,  
Քան բնույթը հիւար, մեզ ոչխարի:  
— Ես կավերե՛մ շենք այս, որջն այս բարբորիտյան...  
— Իրավունք է, եթե կարողանաս:  
— Եվ ուր էլ ձեզ բռնենք, պիտի ճակատը ձեր  
Պատվենք աղվեսակերպ շեկ խարանով...  
Պիտի մեկ-մեկ հատենք ջերը ձեր ոտքի,  
Նետենք բորոտանոց ու գելարան դնենք:  
— Իրավունք է, եթե կարողանաք:  
— Կարողանանք պիտի, զի զորություն և ուժ  
Մեր ձեռքին է, որդի՞։  
— Բայց հալթեղու համար  
Զորեղ լինելն այնքան կարևոր չէ,  
Կարևոր է լինել արդարացի։

Վանահայրը ժայտաց ներուղամիտ,  
Ապա շրջվեց դանդաղ ու վար իշավ լանջով։

• • • • •  
— Հե՞, նայեք, նայեք...  
Հարավա կողմից խումբ մի արաքներ  
Գաղտիկ ու մաղտիկ բարձրանում են վեր...  
.

— Դե՛, ժամն է, Դանան,  
Քո ժայռն ապառած ուղարկիր նվեր։

Վեմն ապառած պոկեց տեղից,  
Դիպավ ուրիշ ժեռ մի քարի,  
Եվ քարեղեն այդ հեղեղից  
Կուրծքը թնդաց Թոներրակ սարի։  
Ասես գարնան ամպն է գոռում,  
Շանթն է զարկում զարկ-զարկոցով,  
Քարերն իրար գալիս ձորում,  
Բախվում են խոլ դղրդոցով։  
Ժայռերն իրար գալիս ձորում,  
Մուխն են հանում ու խանձահոտ,  
Մուխն ու փոշին վեր ոլորվում  
Եվ բռնում են արև ու օդ։

Իսկ երբ նորից արևն արդար  
Բաց է անում երեսը իր,  
Արաբների դիակներն են  
Թոնդրակն ի վար,  
Որ տափակել ու դարձել են  
Նախշուն խսիր:

- Գալի՛ս են, գալի՛ս,  
Գալի՛ս են նորից,  
Վերն են սողում  
Բոլոր կողմերից...  
— Ե՛թ, գալիս են՝ գան, քարն ու վեմը լի,  
Թոնդրակա լանջի ապառաժը շատ...  
— Դո՞ւ է ես այստեղ, Նանե սիրելի,  
Եվ ի՞նչ ես անում...  
— Ինչ որ դու, Սմբատ...  
— Շեն գնա, հոգիս...  
— Դու հոգի չունես,

Հոգիդ առել է ինչ-որ Փառանձեմ:  
— Այդ ի՞նչ ասացիր, մեղա՛, տեր իմ, քեզ,  
Ինչեր ես խոսում, երազում հո չեմ:  
— ԶԵ՛, երազում չես, քայց միշտ երազում  
Նրան ես կանչում, նրա թետ խոսում...

— Գալի՛ս են, գալի՛ս,  
Գալի՛ս են նորից,  
Վերն են սողում  
Բոլոր կողմերից...

Եվ թոթվեցին ծայուրն իրենց  
Բաշերը շեկ,  
Ու որոտաց ու խոլ թնդաց  
Թոնդրակը սեզ,  
Ապառաժներ գլոր-գլոր  
Ծայուրն ի վար իջան խոլոր,  
Գողգոռացին, ձենձենեցին,  
Նրար եկան, մուխ հանեցին,

Մուխ հանեցին, հուր ցանեցին...  
Եվ արծիվները բնաքանդ  
Երկինք ելան իրրն ևն շանթ  
Ու հոտն առած թարմ արյունի  
Կոնչացին  
Ու ճշացին,  
Զրերն իրենց ճամփան փոխած,  
Որոտացին,  
Նոր հուն քացին  
Եվ մոսեցին խոզ հառաչով:

Երկինքն ասես հուր շառաչով  
Հողին զարկեց կայծակ-գոտին,  
Ասես դիպան Բազար ևն ամպ,  
Ու Թոնդրակա քամբ որոտին  
Հյուսվեց ահա տաղիկ մի քամբ:

— Ես թնդուն Թոնդրակեն ասեմ,  
Թոնդրակա կրակեն ասեմ  
Ու ասեմ Թոնդրակա մարտեն,  
Ժեռ քարերն ի գիլ գան, ի գիլ,  
Վեմ քարերն ի գիլ գան, ի գիլ,  
Գիլ-գլոր՝ ոսոխին ջարդեն...

Թոնդրակա քարերը ծանդրիկ  
Մեր սրտի ցավերն են ծանդրիկ,  
Հայ, ցավերն են մեր...  
Մեր ցավերն՝ արյուն ու հառաչ,  
Մեր ցավերն՝ ահառիկ շառաչ,  
Գնում են ոսոխին շանթեն...  
Աշխարհը ծաղիկ է ու շողք,  
Մեզ համար՝ զնդան ու դժոխք,  
Գնում են դժոխքը քանդեն,  
Հայ, հիմեն քանդեն...

Վարդավան՝ է, վարդավառի կիրակի,  
Արեգակը օրհնանք ու սեր է մաղրում,  
Կաւկաչներն են ծփում նման կրակի  
Ու հովի դեմ կրակի պես կատալում:

Թոնդրակն ի վար ծիծաղ-ջրեր են հոսում  
Ծիծաղի մեջ՝ փշուր-փշուր արեգակ,  
Խած կաքավն է ժայռին նստած սաղմոսում,  
Եվ գուսանզ տաղ է ասում ժայռի տակ:

— Ա՞յ իմ կանաչ, կարմիր ու լվան,  
Պաղ աղբյուր կա Թոնդրակն ի վար...  
Ախ, ես պաղուկ ջուր լինսի,  
Այդ աղբյուրին խառնվեի,  
Կարկաչեի ժայռի տակից,  
Սեր կանչեի աղբյուրակից,  
Ա՞յ իմ կանաչ, կարմիր ու վաւ...

Ու երբ է՛մ թուխն արշալույսի՛ն  
Աղբյուրը գար սափորն ուսին,  
Ես իմ ակից անուշ լայի,  
Սափորի մեջ գլգլայի,  
Ա՞յ իմ կանաչ, կարմիր ու վաւ:

Ու երբ սափորն իբրև լուսին,  
Է՛մ թուխն առներ, դներ ուսին,  
Կաթկթեի օձիքն ի վար,  
Կաթկթեի ծոցիկն ի վար,  
Ա՞յ իմ կանաչ, կարմիր ու վաւ...

Վարդավան՝ Է... Հարս ու աղջիկ ելել դուրս,  
Խառնվել եմ ծաղիկների ծուփ ծովին,  
Թուխն ծամերին պսակ դրել ծաղկահյուս,  
Կաքավում ու տաղ են ասում խմբովին:  
Կաքավում եմ, ծփում գալար-գալարիկ,

Սամում թեթև, մանրիկ ոտքերն են փոխում,  
Ծոճ են տալիս մեշքերն իրենց բարալիկ,  
Ու ծոցերի, ծոցերի մեջ իրենց տաք  
Տատրակներ են դողդողում:

Եվ տղաներ, ծուռ տղաներ բոլորած,  
Աչքով անում, խոսք են նետում ամերես,  
Ու թեթևոտն աղջիկները այն մոլորած,  
Կարմրում են շառափն առած ամպի պես:  
Կարմրում են, նազանքի մեջ բռնկում,  
Ու խմբերգն է զրնգում.

— Հոգեկդ քեզ սոլ է բերել,  
Ինչ աննմա՞ն է,  
Պագն է քո լույս երեսն էրել,  
Նոսն նմա՞ն է:

— Հագնես սոլեր,  
Երթաս կալեր,  
Էն թուխ քաջին,  
Էն ծուռ լամին,  
Ծույց տաս կրծքիդ  
Սիրուն խալեր,  
Ինչ աննմա՞ն է...

— Կտրի՛ճ, քեզ Բետ  
Կգամ կալեր  
Ու ցույց կտամ  
Կրծքիս խալեր,  
Թե դու ինձ հետ  
Զգաս ձիով,  
Զգաս ջորով,  
Կտրի՛ճ, ոչ էլ  
Գաս հետևակ:

— Կտրիճ տղան  
Ելել սարեր,  
Երեք օրիկ

Որս էր արել,  
Բոնել արծիվ,  
Վրան թառել,  
Դուռն էր իջել  
Իր սիրածի...

— Ինչ դու ասիր՝  
Ես արեցի,  
Չեկա ձիով,  
Չեկա ջորով,  
Ոչ էլ եկա  
Ես հետևակ:

— Էն թուխն ելեր,  
Հագել սոլեր,  
Կտրիմի հետ  
Գացեր կալեր,  
Կոճակներն իր  
Մեկիկ-մեկիկ  
Բաց էր արել  
Ու էն քաշին,  
Էն ծուռ լաճին  
Ցույց էր տվել  
Կրծքի խալեր:

Մինչ պարում են աղջիկները նազելով,  
Ասես հարբած ամոան շոգից ու բույրից,  
Ցղաները սափորներով, թասերով  
Գաղտագողի ջուր են առնում աղբյուրից:  
Վարդավառ է, վարդավառ է, վարդավառ...  
Ու տեղում է ջրիկն արար ու վարար,  
Աղջիկների անձիկն ի վար, ծոցն ի վար,  
Վարդավառ է, վարդավառ է...  
Մի թուխ սիրուն, ա՞ն, այնակես է լողացել,  
Որ զգեստը կպել կրծքին, զիստերին  
Ու մեղավոր, թաքրուն ձևերն է բացել, \  
Բացել հրաշք մի վերին...

Իսկ մի կտրիծ նայում, ել չի համբերում,  
Սուս է վազում, գիրկն է աւնում, համբուրում...

Վարդավառ է, վարդավա՞ն...

Եվ աղջիկը հոնքերն անում վեր ու վար,  
Խոռվում է.

— Ինձ խաղթ արիր, անառակ...

— Ախ, չէ՞, հոգեկ, մի պագիկը ցերեկվա,  
Արժե մրան հազար պագ...

— Վիճակ...

— Վիճակ...

— Հե՞յ, վիճակ...

— Նա, ով տերն է այս օդերի,

Պիտի էրի, պիտի գերի

Ու մի սիրուն արեղաշի

Պիտի բեմեն ի վար բերի...

— Քո՞նց է, Սովի...

— Քո՞նց է, Սովի...

— Ու հաստատ է, վար կը բերի... ✓

— Գոտի... Ո՞վ է ձգել գոտի...

Սա սիրածին կկարոտի,

Բայց սիրածի սիրտը, ալվա՞ղ,

Պաղ է վրան ու շա՞տ է պաղ:

— Նանեհնց է...

— Ա՞խ, քոնց է դա,

Չէ, քույրիկս, մի հավատա,

Ես սիրո դեղ կեփեմ ու ճար,

Ու կսիրի ճա անպատճառ... ✓

— Ով որ տերն է այս նարոտի,

Սրտիկը շա՞տ կարյունոտի...

— Ծովիկինց է...

— Նշանված է...

— Ինչո՞ւ պիտի արյունոտի...

Վարդավառ է, երգ է, պար է ու քրքիչ...

Սակայն հանկարծ վարդավառի լույսի մեջ

Միարձնվում է մի զարթուրիկ, սուր մի միջ...

Մի վանական է վազում լանջն ի վար,  
Վազում է լանջն ի վեր,  
Ու նրա հետքով շինական մի այր,  
Եվ վանականի սքեմը բացվել,  
Դարձել է թևեր,  
Ծածանվում է սն ու տագնապահար:

Նա վազում է վար,  
Նա վազում է վեր,  
Զայնում է ահեղ,  
Զարհուրիկ ճշում,  
Իսկ շինականը  
Թևերը պարզել,  
Գնում է հետքով  
Ու խենթ քրքջում:

Թոնդրակը կանգնել,  
Թոնդրակը լոել  
Ու չի հասկանում  
Թոնդրակը ոչինչ,  
Իսկ վանականը  
Զարհուրիկ ճշում  
Եվ ծվատում է  
Ամուան օրը շինչ:

Նա վազում է վար,  
Նա վազում է վեր,  
Զայնում է ահեղ,  
Սարսափած ճշում,  
Թոնդրակը կանգնել,  
Նայում է ներքն,  
Նայում է Թոնդրակն  
Ու խենթ քրքջում...

— Փոկասն է, Բա՛-Բա՛,  
Փոկասն է դա մեր...  
— Եվ Ծումբա վս նքի

Քունձիկ արեղան...

— Ուզում է բռնել,  
Ուզում է հեծնել...

— Վայ, կրակ չուտի,  
Էղ Փոկաս տղան...

— Չէ, չէ, ի՞նչ հեծնել,  
Գրկել է ուզում,  
Մի տես, թե թներն  
Խնչպե՞ս է բացիկ...

— Հա՞-հա -հա, հի՞-հի...

Այդ վաճականին  
Իր Ծովիկի հետ  
Փոխս է դա գցել...

— Հոգնեց արեղան...

— Սքեմը նետեց...

— Աղջիկնե՞ր, տարեք,  
Զուր Շետեք վրան...

— Ոտաշորո՞վ է...

— Ոտաշորո՞վ է...

— Վայ, կրակ չուտի,  
Էղ Փոկաս տղան...

Ու ոտաշորով

Վազում վար ու վեր  
Ծչում է ահեղ,  
Օգնության կանչում,  
Թոնդրակը կանգնել,  
Նայում է ներքև,  
Նայում է Թոնդրակն  
Ու խննթ քրքջում...

— Չէ՛, չէ՛, ի՞նչ գրկել,  
Պագնել է ուզում...

— Հասավ, հայ, հասավ.

— Ու պագավ, պագավ...

— Քունձիկ արեղան  
Քարացավ, տեսեք...

— Ու փախավ, փախավ,  
Հայ, ինչպես փախավ...  
— Ծան է ծաղրադիր  
Ու կատակարան,  
Վայ, կրակ չուտի  
Եղ Փոկաս տղան...  
— Բնույթքն է ուրախ,  
Ուրախ է ու տաք...  
— Ո՞նց հոհուացրեց  
Մի ամբողջ Թոնդրակ...  
— Դե, աչքներդ լուս,  
Փոկասը եկավ...  
— Սրտիկդ եկավ,  
Ծովինար սիրուն...  
— Որդեկդ եկավ,  
Արմալան մարե...

— Վայ, նրա եկած ճամփին ես մատայ,  
Կարոտից ջուր են աչքերս դառել...

Արմաղան մարեն պոկվեց իր տեղից,  
Փեշերը հավաք, վազեց ընդառաջ,  
Վազեց Ծովիկը նրա հետևից,  
Բայց գոռաց հեռվից Փոկասն ահառած.  
— Չէ՛, չգաս, մարե, Ծովինար, չգաս,  
Ով ինձ մոտենա, մա՛ն է արդարե...

— Աչքերս կուրնան, ծովել է տղաս...  
Վ Չեմ ծովել, մարե, վարակ եմ դառել...

Թոնդրակը կանգնել,  
Թոնդրակը լուել  
Ու չի հասկանում  
Թոնդրակը ոչինչ...  
Փոկասը հնում,  
Խոսում է այսպես  
Ու ծվատում է  
Ամոան օրը ջինջ.



— Այդ Մումրա վանքում ինձ կալանեցին,  
Սովորութիւն ինձ խորանեցին,  
Դրին գելարան, գանահարեցին,  
Հանց քար քաղեցին,  
Հանց հող մաղեցին,  
Հետո նետեցին ինձ բորոտանոց,  
Էլ Փոկասը չէ, մահն է ձեր դիմաց... ✓

— Հե՞յ վախ, մարել են մի թռնդրի թեժ բոց,  
Տնակս են ավրել, թափել վեր հիմաց:

— Էհ Քունձիկն արեց... Աստված, փառքդ շատ,  
Բոնեցի դրան ու էնքան պագի,  
Որ, ակն ընդ ական, ատամն՝ ատաման,  
Դրեն էլ տվի թույնն իմ վարակի:

— Ա՞խ, երազ տեսա, նենգավոր երազ,  
Օձ մի դեպի քեզ կու գար գալարիկ,  
Կանչեցի ,ասի, ա՛րտ մտիր, տղաս,  
Արտը բարիք է ու օձը՝ չարիք,  
Օձը արտի մեջ չի կարող սողա...  
Ծուտ արա, ասի, արտերը փախիր,  
Բայց տո՞թն էր տվեց, կրա՞կն էր, վառեց,  
Ծով արտը դարձավ մի բուռ սև մոխիր,  
Եկ օձը եկավ, գալարվեց, լարվեց,  
Թուավ քեզ վրա, ու մուխս մարեց...

— Երազդ ելավ, մարե, ա՞խ, մարե,  
Օձի սև թույն է արյունս դառել...  
Բորոտանոցից գիշերը փախսա,  
Ծամփան բռնեցի Թոնդրակա սարի,  
Մեռնել է՝ մեռնել, ասացի՝ արի  
Երթամ ու մեռնեմ Թոնդրակա լանջին,  
Մեր պաղ ջրերի ձայնն իմ ականջին,  
Մեր ծաղկունքի մեջ, մեր սեզ ու ցողի,  
Մեկ էլ հոտն առնեմ մեր անուշ հողի  
Ու մեկ էլ լսեմ՝ ինչպես է շաշում

Թոնդրակա սարի կրակը անշեց:  
Մեռնեմ, ասացի, ազատության մեջ..  
Դե՛, շենացիներ, մի բահ տվեք ինձ...

— Բահն ինչի՞ն է պետք...  
— Տուն պիտի շինեմ  
Ու այստեղ ապրեմ Բուր-Բավիտենից:

Փոկասն առավ բահն ու փորեց,  
Փորեց ձևով գերեզմանի,  
Արտասուզով հողը ցողեց  
Ահեղ ողբը Արմաղանի:  
Իսկ շենացիք լուռ են, կարծես  
Մահտուն լինի ու մահվան ծես:  
Փորեց Փոկասն իր սուր բահով,  
Աւա ելավ, կանգնեց ոտի.

— Դե՛, շենացիք, մնաք բարով,  
Մահը մեջս է, մեռնեմ պիտի...  
Մնաս բարով, անուշ մերիկ,  
Ծովիկ, Բոգի՛ս, չլաս սրտում...

Ու դաշույն մի շողաց կեռիկ,  
Խոր միարճվեց նրա սրտում:  
Նա երերաց արյունլվիկ  
Ու փոսն ի վար ընկավ լոիկ:

Սմբատը ելավ, Սմբատը կանգնեց  
Մի բարձր քարի,  
Ու ձայնը հնչեց հանց ահեղ մի զանգ.  
— Ի զե՛ն, շենացիք, Բատուցենք չարին,  
Ի զե՛ն, երբայրներ, արևագալին՝  
Դեպի Ծումբա վանք...  
— Ի զե՛ն, օ՛ն, ի զե՛ն...  
— Ակն ընդ ական...

Ու որոտում է սարը Թոնդրակա: \  
Թոնդրակա սարի այդ որոտ-ձայնին  
Հյուսվում է ահեղ ողբն Արմաղանի.

— Եղի՛ր, որդի, ա՞յս, ելիր վեր,  
Հերիք պառկես անուշ քամուն, ✓  
Եղի՛ր, նայի՛ր, քո ախատերներ  
Կոհվ կերթան դեմ թշնամուն...  
Ա՞յս, չէ, Փոկասն իմ չի մեռել,  
Դնչքան վարդ կա զլսուն դրել,  
Մանուշակի անուշ հոտին  
Քուն է մտել կանաչ խոտին,  
Հիմա կելնի, կառնի իր սուր,  
Կոհվ կերթա հանց ազնավոր...

### ԳԼՈՒԽ ԻՆՍԵՐՈՐԴ

— Տեր ամենատես և ամենագոյթ և ամենասեր,  
Դու լուս անսպառ, անսպառ շնորհ, անսպառ ներում,  
Ներիր արդ, Օերիր քո Սմբատ անուն ծառային նվաստ,  
Որն այս պանծալի ու ահեղ գիշեր,  
Պանծալի օրվա և ահեղ օրվա գալստից առաջ  
Այս լեռան վրա քեզ հետ մերձենալ  
Եվ զրուցել է կամենում մի պահ:  
Ո՞վ անճառելի, շնորհապարտ եմ ես քեզ հավիտյան,  
Զի ինձ ընտրեցիր դու բյուրերի մեջ  
Եվ իմ հողեղեն այս էության մեջ  
Քո աստվածային կրակը դրիր  
Եվ ինձ կոչեցիր, որ առաքյալը դատնամ ճշմարտի:  
Ծնորհապարտ եմ ես քեզ հավիտյան այն պահի համար,  
Երբ իմ հոգու մեջ լուսի հիասքանչ բռնկում եղավ,  
Եվ այդ լուսի մեջ ինձ տեսանելի եղավ ամեն ինչ:  
Ես տառապանքով մաքրված հոգուս ցոլանքը տեսա,  
Ես ճաշակեցի ինքնամանաշման վայելքը վսեմ  
Եվ ընթռշննեցի ինքնազոհումի բերկրությունը սուրբ...  
Եվ չկար մարմին, կար միայն հոգի՝ թեթև, անարատ,  
Չկար տառապանք, կար միայն ցավի անկսկիծ վայելք,  
Եվ չկար երեկ, վաղվա օր չկար,  
Կար մի անսկիզբ ու անվերջ խորհուրդ  
Եվ դու կայիր, տե՛ր...

Հ Եվ սեր էիր դու... )

Եվ քեզանով է ներշնչվել, գիտեմ, կավը մարդկային  
Ու քո կերպարանքն ստացել, աստված:

Մա՛րդը... Դու նրան ծննջիր հողի մի բուռ շաղախից  
Եվ սակայն նրան երկվորյակ արիր աստղը երկնքի,  
Որ նա հողի պես արարչագործման գաղտնիքն իմանա  
Եվ աստղի նման ճաճանչավորվի իր բարձրության մեջ...  
Եվ ապա նրան, ո՞վ շոայլ, տվիր աշխարհը արար,  
Տվիր արևի գթությունը մեծ ու անանձնական,  
Տվիր անձրևի շնորհը մաքուր,  
Ծնչառությունը տվիր հողմերի  
Եվ ծանր հասկի բերկրանքը խոնարի  
Եվ պտուղն առողջ և բույրը խոտի  
Եվ աղբյուրների բխումը՝ կայծառ ու ինքնանվեր  
Եվ արտույտների կտուցից կախված երգերը բարի  
Եվ արծիվների թևերի բախումն օրինակելի  
Եվ նժույգների մարմնի մեջ ապրող հողմը գեղեցիկ,  
Գարնան ամպրոպի որոտը տվիր  
Եվ կայծակների մահը լուսավոր ու մեծասքանչ  
Եվ ջրվեժների անկումը հպարտ,  
Տվիր ծովերի կապույտը զորել  
Եվ ինքնավայել հպարտությունը լեռնագագաթի  
Եվ սերը տվիր...

Նա՛ է սերմի մեջ մոլեգնում աჩեղ  
Եվ բողքոջի մեջ նրա խորհուրդն է անհմանալի:  
Եվ դու այդ սիրով լիովի լցրիր մարմինը մարդու,  
Սիրո հրաշքը խառնեցիր նրա ամեն հյուլեին,  
Նրա ձեռքերում սերը դարձրիր քնքշանք ու գորով,  
Ծուրթերի վրա դարձրիր համբույր,  
Երակների մեջ՝ արյան ընդվզում  
Եվ ունկերի մեջ՝ անհուն մեղեղի...

Եվ այդ ամենը, ով շնորհաբաշխ, դու մարդուն տվիր,  
Որ նա աշխարհում քո մրցակիցը դառնա արդարն  
Եվ դառնա հպարտ ախոյանը քո:

Եվ սակայն, ավա՞ն, արծիվը վերից հեգնում է մարդուն,  
Եվ գայլը անգամ հեգնում է վարից,  
Զի չի հոշոտում արծիվը արծվին,  
Եվ գայլը գայլին, ո՞չ, չի հոշոտում...

**ԵՎ ՄԱՌԻԴ ՍԱԿԱՅՆ...**

**Տե՛ր, գիշեր է արդ,**

**ԵՎ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՅՍ ԼՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԻՑ**

**ԱԼԵՐԱԽՈՒՄ Է ԲԻԱՄՐ ՃԱՅԱՆԵՐԻ ՄՐՐԻԿԸ ԱԲԵԼ...**

**ԱՆՇՈՐԻ ԲԻԱՆՎԱԾ ԱՊԱՍՏՈՒԹՅՈՒՆ Է ՄՈՆՉՈՒՄ ԱՆԳՈՐ,**

**ԵՎ ԱՊՆԱՆԳՎԱԾ ԱԵՐՆ Է ԲԵՋԿԱՄՊՈՒՄ ՄԱՍՏՐԱԿԻ ՆՄԱՆ,**

**ԹԻԱՎԱՐԱՏՈՒԹՅԱՆ ԲԻԱՎԱՀՆ Է ՃՎԿՈՒՄ ԸՆԴԵՐԼԿԱՐ ՊԼ ԽՈՎ,**

**ԽԱՐԱՎԱՆՆԵՐԻ ԿԱԼԻԾՆ Է ՊՈՆՈՒՄ ԱՎԻՆԵՐԻ ՄԵԶ,**

**ԵՎ ՎՐԵՆՉՈՒՄ ԵՆ ՊԻՐՈՒԿՎԱԾ ՃԻԵՐ,**

**ԵՎ ԱՄՈՒՋԱՏՎԱԾ ԲՈՂՈՔՆ Է նՎՈՒՄ...**

**Տեր, այդ ճայների ձիգ ԲԻԱՆԳՈՎՅԱՆ ԵՄ Ես**

**ԵՎ ԽԻՒ ՄՐՐԻԿՆ ԵՄ Ես այդ ճայների:**

**ԵՎ ԱԲԱ ԲԻՄԱ ԱՅՍ ԼԵՆՈՎԱՆ ՎՐԱ**

**ՊԱՆԾԱԼԻ ՕՐՎԱ և ԱԲԵԼ ՕՐՎԱ ԾԱԳՈՒՄԻց Առաջ,**

**ԵՍ ԻՄ ԱՊՈՔՔՆ ԵՄ ԱՊԱՐՈՒՄ ԱՊ ՔԵզ**

**ԵՎ ԱՊԵՐՍՈՒՄ ԵՄ լԵ՛Ր ԻՆՆ ՕԳՆԱԿԱՆ,**

**ՈՐ ՍԱՆԴԱՎԵՐԾԵՄ ՃԱՅԱՆԵՐՆ Այդ ԲՈԼՈՐ**

**ԵՎ ՈՒԹՔԻ ԲԻԱՆԵՄ ՄՐՐԻԿԸ ԱՐԱՆց:**

**Թող այդ մրրիկը սրարշավ անցնի ԲԻԱՅՆ ԱՇԽԱՐԻՌՈՎ,**

**ՇԱԿՈՉՈՎ ԲՐԱՋԻ ԴԱՐԱՎԱՍՆԵՐԸ ՎԻԱԿ**

**ԵՎ ԾԽԱՆԻՄԵՐԸ ՄԵԴԱՀԻԱՆ ԱԲԻ,**

**Թող զԱՆԴԱՆՆԵՐԻ ԵՐԿԱԹԸ ՃԿԻ ԻՐ ՃԵՆՔԵՐԻ ՄԵԶ,**

**ԻՐ շԱՇԿ ՎԱՆԻ ԳՈՂԱՆ ԱՅՍ ԾԱԲԾԱԲՈՒ**

**ԵՎ ՕՄԱՐԱՌՈՒՄ ԽՈՐՉԱԿԸ ՎԱՆԻ:**

**Թող ԲԻԱՅՆ ԱՇԽԱՐԻՆ ԱՐՇԱԼՈՒՄ շԱՇԿ**

**ԵՎ ԱՐՏԱՇՆԾԻ ՆՈՐԻ ԱՐՇԱԼՈՒՄ...**

**Թող սԵԼԱՆ ԲՐԱՋԻ ԲԻԱՆՈՒՐԻ ԲԻԱՄԱՐ,**

**ԵՎ ԱՊԱՏՈՒԹՅԱՆ ԽՄԻՉՔԸ ԴՐՎԻ ՍԵԼԱՆԻՆ Այդ ԲՐԱՋ,**

**ԵՎ ԴՐՎԻ ԱԻՐՈ ԱՆՈՒՆԵՐ ԱՐԴԱՐ:**

**Թող մԱՐԴՈՒ ԱՐՏԻ ՄԱՔՈՒՐ ԽՈՐԱՆՈՒՄ**

**ՍԵՐԸ ԾՆԿԱՇՆՔ ԻՐ ԱՊՈՔՔՆ ԱԲԻ,**

**ԻՐ ԽՈՒՆԿԸ ԾԽԻ ԽԻԴԸ ԱԲԱՐԱՏ,**

**ԵՎ ԲՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԻ պԱՏԱՐԱԳԱՆ ԻՐ ԵՐԿԱՆՎԵՐ:**

**Տեր աՄԵՆԱԳՈՒԹ և աՄԵՆԱՏԵԽ և աՄԵՆԱՍԵՐ,**

**ԴԻՈՒ ԼՈՒՄ ԱՆՍԱՊՈ, ԱՆՍԱՊՈ շԱՇԿԻ, ԱՆՍԱՊՈ ԱԵՐՈՒՄ,**

Ներիր ինձ, Աերիր, թե այս պանծալի ու ամեղ գիշեր,  
Պանծալի օրվա և ամեղ օրվա ծագումից առաջ,  
Նաև իմ մասին զրուցեմ քեզ հետ  
Եվ ողոքագին աղերսեմ ես քեզ.  
Վերադարձու, տուր իմ սերը ինձ,  
Ոչ ոք չգիտի, ու լոկ դու գիտես,  
Որ ինձ համար ես նրան արարել  
Եվ կյանքի կոչել իմ արյան կանչով.  
Որ նրա մեջ են հաղորդվում, ով տեր,  
Աղերսն իմ արյան և քո արարման հրաշքը վերին...  
Տո՛ւր ամենեցուն ինչ որ աղերսեն նրանք քեզանից,  
Ինձ այս աշխարհում նրա շո՛ւնչն է պետք...

#### ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Արևն արդար ելնում դանդաղ  
Ու մի ճարտար ծաղկողի պես  
Վաղորդայնի գունատ ու գորշ մագաղաթին

Սրշալույս է ծաղկում ահա:

Արևելյան կողն աշխարհի որդան կարմիր է նա ներկում,  
Լերանց ձյունոտ գլուխներին լուսապսակ դնում սրբի,  
Լույծ ոսկի է քսում դանդաղ բարդիների տերներին

Եվ շրերին լաջվարդ փոռում:

Արշալո՞ւս է... Եվ Թոնդրակա ժայռերի մեջ

Զրնգում է զարթնած քամին:

Արշալո՞ւս է... Եվ Թոնդրակա լանջերն ի վար

Նժույգները արդեն հնում,

Սմբակներով հողն են պեղում

Եվ սպասում հրամանին:

Արշալո՞ւս է... Եվ Թոնդրակա զնգուն քամին

Իր հետ տանում, լանջերն ի վար ձգում է ձիգ

Որոտմունքը հրամանի.

— Ի զե՞ն, հառա՞ջ, թուղուակեցիք...

Եվ պայտերը կայծի խրձեր հանում քարից,  
Ապառաժից հուր են հանում ու խանձահոտ

**Եվ պայտերը ծեծում ամուսն գետինը չոր,**

**Խոլ վնագոց են կորզում Բողից,**

**Կորզում մի խոլ, ահեղ մի բռք:**

**Եվ բաշերը նժոյգների ալեվետում**

**Ու փոխվում են ծփուն բուքի**

**Եվ բաշերը նժոյգների հետ են նետվում**

**Ու խառնվում հեծյալների**

**Մազ-մորուքին:**

**Ծումբա ճամփան ոլոր-մոլոր՝**

**Թոնդրակն ի վար ձգված պարան,**

**Ծումբա ճամփով վարգում են խոլ**

**Նժոյգները փրփրաբերան...**

**Ծումբա ճամփան վնագում է խոլ,**

**Տնքում են խոլ գետին ու քար,**

**Եվ փոշին է Ծումբա ճամփի**

**Զգվում դեղին հառաչի պես,**

**Հորանջի պես ձգվում երկար...**

**Զնգուն քամին իրենց սուր-սուր ունկերի մեջ,**

**Արշալույսը խոնավ ու սև ոռնգների մեջ,**

**Նժոյգները սուրում են ձիգ,**

**Պայտերի մեջ աստղ է թարթում, աստղ է հանգում,**

**Եվ ալեբախ ագիների սև հորձանքում**

**Մրրիկ կա սև ու գեղեցիկ...**

**Ծումբա ճամփան ոլոր-մոլոր՝**

**Թոնդրակն ի վար ձգված պարան,**

**Ծումբա ճամփով վարգում են խոլ**

**Նժոյգները փրփրաբերան,**

**Նժոյգները ահիպարան**

**Եվ խստերախ**

**Եվ խստերախ...**

Իսկ վանքը հեռվում սև ծանրությունը քարափին դրել,  
Իր սուր գմբեթը միտել է երկինք ու Բոգնած լոել:

Արևագալի երկնքի վրա  
Վանքը՝ գիշերվա կոփածո բեկոր,  
Արևագալի լուս դեմքի վրա  
Վանքը՝ սև խոկում  
Ու ծանր մի խոհ:  
Վանքը՝ քարակոփ, վանքը՝ քարակոտ,  
Ապառաժակերտ,  
Վանքը՝ պարսպած ու պղնձադուռ՝  
Ամենի մի բերդ:

Ծագող արևի ցոլքերն առաջին  
Դիպել են վանքի պղնձե խաչին  
Եվ հրդեհել են կապույտի մեջ բաց,  
Թեքվել են հետո, առել գմբեթին  
Սև ստվերներ են տապալել գետին,  
Փաթաթել վանքի ոտքերին մամոած:

Տատրակներն ահա իրարու ետև  
Վանքի գմբեթից վեր թռան թեթև  
Ու կապույտի մեջ թնահարեցին...  
Սակայն երկնքից շանթակերպ մի ցին  
Զարկեց, միարձվեց լույսի երամի մեջ  
Ու իր որսն առած լեռները թնեց:

Իսկ վանքի բակում մի հայր Ուլյասանես  
Յոթն անգամ ահով դեմքին խաչ հանեց.  
— Տե՛ր, փրկյա չարեն, ժամն է տարածամ,  
Զի վանքիս գլխին չարիքն է դաժան  
Պտտվում որպես գիշակեր մի ցին:  
Հայր Սիմավոնին զնդան նետեցին  
Ու դողում եմ ես ահօց չարագույժ,  
Օ՛, ժամանակս զարհուրիկ է հույժ...  
— Բարի առավոտ, Ուխտանես եղբայր,  
Ինչպես ըմբոշխնեց հոգին քո արդար  
Նինջն այս գիշերվա...

— Ազարիա անգին,  
Մերկ ծնկներիս տակ չեշաքար դրել

Եվ գիշերն ամբողջ ես ողոքագին  
Աղոթք եմ արել և ապաշխարել,  
Զի չեմ հասկանում անցքն այս աշխարհի,  
Խիդճս ինձանից խոռվել կարի,  
Կեղեքում է ինձ անողորմաքար...  
— Կամաց զրուցիր, Ուխտանես եղբայր,  
Քունձիկն է գալիս...

— Անե՛ծք այդ չարին,

Անեծք մատնության այդ նենգ ծառային...

... Ծումբա ճամփան ոլոր· մոլոր  
Թոնդրակն ի վար ձգված պարան,

Ծումբա ճամփով վարգում են խոլ

Նժույգները փրփրաբերան:

Նժույգները՝ բնազդ ու կիրք,

Նժույգները՝ ձգված մկան,

Նժույգները լուսերի մեջ արեգական

Վայրի թախսիծ, ոխ են վայրի,

Նժույգները բռնել ճամփան դաշտավայրի

Ու սլանում են սանձակոծ,

Սլանում են արիպարան

Ու խատերախ,

Ու խատերախ...

Ել շեներից Հերլան, Գետափ ու Դալարիս  
Հեծյալներ են, Բեծյալներ են ահա գալիս

Ու խառնված խոլ հեղեղին,

Դուկում, ծեծում

Ասպարակում

Ինաշտը ռեղին

Եվ սլանում են սանձակոծ,

Եվ սլանում են արիպարան...

... Խսկ վանքը հեռվում դեռ առավոտյան աղոթքն է ծամում,  
Խսկ վանքը հեռվում միտում գմբեթով ու վեր է տանում

Իր ծանրությունը սև ու կոփածո,

Մըմունջն իր խոռվ ու խաչն աստծո...

Իսկ վանքի բակում Քունձիկ արեղան  
Զայնում, ճշում է դեռ փրփրաբերան,  
— Հավաքվե՞ք, հայրեր...

Այս վանքի վսեմ գմբեթների տակ,  
Ուր մեր լուսեղեն աղոթքն է ծորում,  
Ահա ես կրկին ի հայտ եմ բերել  
Հերձվածողական մի նոր խմորում...

... Ծումբա ճամփան՝ դաշտի միջով  
Թռչող լլաք ու թռչող նետ,  
Ծումբա ճամփան դաշտի միջով  
Մտաւենու ու ակնդետ  
Սուրում է վանք:

Նժույգների աչքերի մեջ  
Արեգակ է, շանթ է ու բոց,  
Նժույգների երախնելի ից  
Խլում փրփուր ու վրնջոց,  
Բաշերին է քամին խառնում:  
Օղում սրեր են սավառնում  
Եվ սրատում սույլը օդի,  
Եվ պայտերի դոփյունը բամբ  
Փոխվում ամեն մի որոտի,  
Ահագնանում,  
Հասնում է վանք...

Իսկ վանքի բակում մի հայր Ուխտանես  
Դեմքին յոթն անգամ նորից խաչ հանեց.  
— Տե՛ր, փրկյա շարեն, ժամն է տարածան,  
Այս ինչ ամպրոպ է զարիուր ու դաժան,  
Ինչ որոտմունք է երկնքից ծավի,  
Արա՞բն է արդյոք ելել արշավի...

Եվ վանականի սարսափած տեսքով  
Հանկարծ բակ խուժեց ճիշ մի բամբ ու ճիգ.  
— Թռնդրակեցի՛ք են,  
Հե՛յ, թռնդրակեցիք...

- Դարպասը ծածկե՞ք,
  - Դրեք փակ ու նիգ...
  - Գալի՛ն են Բեծյալ,
  - Գալիս սրամերկ...
- Զանգե՞րը հարեք...
  - Զանգե՞րը հարեք...

Ասես լեռներից գլորվել մի վեմ  
Ու շառաչում է խորունկ անդնդում...  
Վանքի պղնձե դարպասների դեմ  
Ծինականների որոտն է թնդում:

Զանգերը վանքի՝  
Զանգեր ծանր ու ձույլ,  
Զարկում են, զարկում,  
Զարկում տագնապով,  
Մերթ ասես բեկված, հառաչում են խոլ,  
Մերթ շառաչում են ամերի թափով,  
Մերթ հորդորում են ասես լալագին,  
Մերթ կերկերում են, մարում են օդում,  
Մերթ զնգում վսեմ ու տառապագին,  
Մերթ մաքո՞ւր, մաքո՞ւր աղոթք են ոգում:

Եվ ուսմիկների ոխը խելանեղ  
Զարկո՞ւմ է, զարկո՞ւմ, զարկո՞ւմ է սասաիկ...  
Պղնձավահան դարպասը վանքի  
Ծոնչում ահեղ,  
Երեր է գալիս,  
Ընկնում է թափալ ու դիտապատիկ ..

Բաց է դարպասը...  
Ու կամարի տակ  
Կուոքի պես ծանր, կուոքի պես շիտակ  
Կանգնել, լոել է վանաժայրը ծեր,  
Կանգնել կորովի, կանգնել փառանեղ,  
Կանգնել է գունատ, վսեմ ու ահեղ  
Եվ զոյզ թևերն է օդում տարածել,

Իսկ նրա ետև  
Վաճականները ծունկի են չոքում  
Ու կոկորդաձայն աղոթք են ոգում:  
  
Զարկո՞ւմ են, զարկո՞ւմ զանգերը վերից,  
Եվ սևամանդերձ վաճականների  
Աղոթքն է հառնում,  
Ասես բեկրեկուն լուսեր են բխում  
Նրանց սևերից  
Եվ ալիք-ալիք երկինք համբառնում:  
Հեղեղն ընկրկել հնում ծանր ու խոր  
Ու երերում է որպես երկմտանք.  
Եվ որոտում է ձայնը վաճախոր.  
— Մոլորյալ գառներ,  
Չե՞ք խուժի դուք վաճք...

Չե՞նք խուժի, Բա՞-Բա՞...  
  
Եվ հեղեղից  
Նախ վաճախոր ծունկն է ծալվում,  
Եվ հեղեղից  
Կուոքի նման վար տապալվում,  
Ընկնում է լուռ ու անմոռնչ...

Վաճքի բակում  
Պտուտահողմ,  
Վաճքի բակում  
Խորշակաշունչ  
Մթին մրրիկն է մոնչում,  
Վաճքի դուներն են ճոնչում,  
Ծխճիներն են գալիս թափալ.  
Ու հեղեղն այս ծանրածափալ  
Օրորվում է վաճքի բակում,  
Գնում է ետ,  
Գալիս առաջ  
Ու մագլցում զանգակատուն...  
Տատրակները տագնապահար

Ու սարսափիած,  
Դուրս են թոշում երամ կապած  
Ու վերանում երկինքը ծով:

Մի զարհուրիկ դղրդոցով,  
Մի զարհուրիկ ծուխ ու բոցով  
Ծանր զանգեր  
Ու ձույլ զանգեր  
Քարե պատով վար շառաչում,  
Հառաչում են պղնձաձայն,  
Ասպա բեկոր-բեկոր՝ տնքում...

Քար է զնգում,  
Որմ է զնգում,  
Փոշին կանգնում է երկնքում  
Ու բռնում դեմքն արեգակի...

Վանքի բակում  
Պտուտահողմ,  
Վանքի բակում  
Խորշակաշունչ  
Մթին մրրիկն է մոնչում,  
Վանքի ողերն են ճոնչում,  
Ու որմերն են գալիս թափալ...  
Վանքի բակում ավեր, ավար,  
Ո՞յնն է պարում վանքի բակում ..

Օրլ հոգնած աչքն է փակում...

Եվ մութն արեն անդունդներից ելնում դանդաղ  
Ու մի ճարտար ծաղկողի պես  
Խամրող օրվա գունատ ու գորշ մագաղաթին  
Մայրամուտ է ծաղկում ամա:  
Արևմտյան կողմն աշխարհի  
Արյան գույնով է նա օծում,  
Մով է Աերկում հովիտ ու հանդ,  
Խսկ ավերակ վանքի մոայլ բեկորներին  
Սևի հառաշն է նա փոռում...

... Դեպի վանք բերող կածանով անձայն  
Քալլում է դանդաղ այլակերպ մի այր,  
Հազին ձորձեր են, մորուքը՝ ծածան,  
Ու շուրթին՝ մի խոսք.  
— Վա՛ ինձ, վա՛ ինձ, վա՛ յ...

Խոսք չէ, այլ հառաչ,  
Զայն չէ, այլ կական,  
Ծունչ չէ բերանին,  
Այլ գեհենական  
Ծեմճեր է ու մուխ...

Կանգնում վանքի մոտ, իր շուրջը նայում,  
Ապա պտույտ է անում այսահար  
Ու զարհուր ձայնով նորից է վայում.  
— Վա՛ ինձ, վա՛ ինձ, վա՛ յ...

Ավերների մեջ պտույտ է տալիս  
Եվ ճանապարհով սլանում է վար:  
Իսկ հեռու հեռվից դեռ ձայն է գալիս.  
— Վա՛ ինձ, վա՛ ինձ, վա՛ յ...

#### ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Լրած լուսինը  
Թոնդրակա սարի թիկունքից ծաթել,  
Ապառած քարի մամուռն արծաթել,  
Արծաթեն թելեր  
Ու բռժոժներ է կախել անհամար  
Մասրենու մացառն ու թփերն ի վար:

Լուսնկալուս է...  
Ննջում են Բանգիստ լեռները խոնչած  
Ու լոկ աղբյուրն է զնգում դիմացի,  
Մուգ երկնքի մեջ  
Կայենծիրն ասես ճյուղ է բողբոջած,  
Որ պիտի ոսկե ծաղիկներ բացի:

Լուսնկալույս է,  
Լուսնկա գիշեր,  
Լեռները ասես  
Մի հրաշալի աղոթք են հիշել  
Եվ անդունջների կապույտ կոկորդով  
Վեր են առաքում...  
Եվ սիրտն է զարկում...  
Տագնապի ժամին  
Ու տարածամին  
Այդպես տագնապած,  
Այդպես աჩարկու  
Իր զարկն էր զարկում  
Զանգն իրենց վաճքի...

Հիմա աշխարհը ննջում է հանգիստ,  
Ու սիրտը միայն,  
Իր սիրտն է զարկում:  
Ծուրթերով ասաց.  
— Չե՞ն գա, չե, չգաս...  
Աշքերով ասաց.  
— Ա՞ն, կգամ, արի...  
Ծուրթերը սուտ են,  
Ա՞ն, շուրթերը չար,  
Աշքերը ճիշտ են,  
Աշքերը բարի...  
Հոնքերի խաղով,  
Աշքերով բարի,  
Նա ասաց՝ կգամ...  
Նա ասաց՝ արի...  
Ասաց ու չկա:

Ծունկի եկ, ծունկի,  
Ով դու կարգալույծ Տիրայր արեղա,  
Լեռներմ այս քեզ հետ թող ծնկի չոքեն,  
Քեզ հետ աղերսի խոսքերը ոգեն,  
Ու Սովիին կգա:

Սպասումի մեջ սառել են ասես  
Աչքերն աստղերի  
Ու էլ չեն թարթում,  
Սպասումի մեջ շուրթերն ակամա  
Աղոթք են կարդում,  
Օ՛, ոչ, աղոթք չէ, տա՞ղ է զվարթուն.

— Աչքերը սև, սև ծովեր են գիշերային,  
Հոնքերը սև, սև տաճարի կից կամարներ,  
Լուս երեսից լուս է կաթում արեգական  
Ծրթունքներից վարդ է կաթում ու վարդիթեր:  
Ծոցիկը լուս լեցուն է լուս շուշաններով,  
Մեջքը ճկուն ու բարունակ մի նշենի,  
Զայնը ասես տավիլի ձայն է քնքաթով,  
Քաղցրանվագ, աստվածային, շարժվարժենի...  
Ծաղիկ ծոցով կոյսն այդ ծովաչ  
Ծաղկանց ծավի ու ծիրանի  
Ծովերի մեջ պսակ հյուսում  
Ու ճեմում է թեթևաքայլ:  
Ծեմում է նա ու նոճու պես  
Ծոճում իրանն օճաճապուկ ու հույժ ճկուն,  
Ծեմում է նա ու շուրջբողոք  
Ծաղկանց ծովն է ծիրանածիր  
Ծիածանվում ու ծավալվում ծալվեծավալ...

... Բայց սեզի միջով  
Մոլորված հովի ծվեննե՞ր անցան,  
Թե՞ քարայծ անցավ մոտիկ կածանով,  
Հնչեցին ասես  
Մասրենոց կախված բոժոժներն արծաթ  
Ու դողանջեցին աստղային ձայնով:  
Քարափից քարափ, կածանից կածան  
Ասես արևի ալիքներ անցան,  
Լույսեր ծփացին,  
Ու լույսերի մեջ  
Քայլեց սիգաճեմ  
Ու եղեգնամեջք

Նա՝ արյան կանչը,  
Աղերսն իր արյան,  
Ամենավերին  
Հրաշքն արարման...  
Կանգնեց նա բորիկ  
Ու մերկ թևերով,  
Եվայից առած  
Կոնքաձևերով,  
Ծապիկը պատող  
Կրծքով իր հասուն,  
Կանգնեց՝ տենչալի,  
Հլու և, երազո՞ւն...

Թոնդրակա սարի քառերը տաք են,  
Ու մամուռը տաք,  
Դեռ միջօրեի տաք արեգակն են  
Իրենց մեջ պահում,  
Ու երբ սահում է հովը կապուտակ,  
Հովի հետ ասես արև է սահում:

Ինչ-որ հրեղեն  
Խոսքեր խոսեցին  
Աստղերն իրար հետ...  
— ԱՇԽ, Սովի, Բոգեկ.  
Թող օրհնյալ լինի  
Քո գալուստն հավետ:

Լուսնկալուս է,  
Հայտնության գիշեր,  
Լեռները ասես մի հրաշալի  
Աղոթք են Բիշել  
Եվ անդունդների կապույտ կոկորդով  
Վեր են առաքում:  
Գիշերը մեծ է, գիշերն ահարկու:

Աղջկա բարակ շապկի տակ ասես  
Բոց է ու անթեղ,

Աղջկա բարակ շապկի տակ ասես  
Հրդեմ է ու կայծ,  
Այդ հովն էր արդյոք, որ Բանկարծ կրծքի  
Կոճակը քանդեց,  
Ու լուսնյակի դեմ ու լուսնյակի պես  
Յոլցլաց Բանկարծ  
Ստիճքն աղջկա...  
Աղոթք են փնտրում,  
Աղոթք են փնտրում  
Շուրթերը այրվող,  
Բայց աղոթք չկա:

Զեռքերը դողդոչ  
Սահում աղջկա մերկ ուսերն ի վար,  
Ու կոնքերին են կարոտով փարվում,  
Զեռքերը դողդոչ  
Եղում աղջկա գալար մեջքն ի վեր  
Եվ կրծքի վրա  
Այրվում են տեմդով ու խելագարվում:

Ծունկի եկ, ծունկի,  
Այս լեռներն անգամ թող ծունկի չոքեմ,  
Եվ անդունդերի կապույտ կոկորդով  
Փառարանության խոսքերը ոգեն:

— Օրինյան լինես դու,  
Եվ զարմանալի հայտնությունը քո  
Թող օրինյան լինի,  
— Օրինյան լինես դու  
Եվ շնորհաբաշխ մեղանչումը քո  
Եվ մեղանչումը իմ աստվածաթաճ  
Օրինյան լինեն թող...

Թե Սողոմոնը մեզ տեսներ մեկտեղ,  
Մեզ պիտի օրինեն.  
Եվ ասեր պիտի,  
Որ դու Սարոնի ծաղիկ ես չքնաղ

Եվ Բովիտների շուշան ես մաքուր...  
Օրհնյա՞լ լինես դու,  
Եվ քո մարմինը թող օրհնյա՞լ լինի,  
Եվ քո մարմինը թող օրհնյա՞լ լինի...

Թոնդրակա սարի քարերը տաք են,  
Ու մամուռը տաք,  
Դեռ միջօրեի տաք արեգակն են  
Իրենց մեջ պահում,  
Ու երբ սահում է Բովը կապուտակ,  
Հովի Բետ ասես արև է սահում:

#### ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

- Ա՞յ որդան կարմիր, կարմիր, կրմզի...
- Դվինի մահո՛ւտ...
- Քիրմանի խաս շա՞լ...
- Այստե՞ղ համեցեք, ով գնել ուզի  
Ծենաց աշխարհի մետաքսը անծալ...
- Վանա՞կն շողուն...
- Ուկե մատանի՞ք...
- Այրարատ երկրի գիճի՞ կենարար...
- Աշնակի ժանիք, աշնակի ժանիք,  
Սիրո միակ դեղն աշխարհում արար:  
Վա՞նքան, ով որ սիրո տեր լինի  
Եվ այս ժանիքից զույգ մի չգնի,  
Չտանի դճի արեգակի տուկ,  
Ապա հավանգում չծեծի բարակ  
Ու, գինուն խառնած, չտա սիրածին...
- Լսե՞լ ես, եղբայր, թե ինչ է արել  
Սմբատ կոչեցյալ Զարեհավանցին...
- Լսել եմ, այս...
- Եվ սակայն գիտե՞ս ինչպես է արել,  
Ասում եմ, լոկ մի խոսք է բարբառել,  
Սրբազն մի խոսք, ու այդ խոսքի հետ

Ցնցվել են վանքի հիմերն ու գմբեր,  
Եվ որմերն ամեն կուռ ու վիմաքար  
Խարխլել իսկույն ու թափվել են վար...  
— Սուրբ է, հիրավի, սուրբ է դա, եղբայր...

— Վանա լավ տառե՞խ...  
— Աղ է, Կողքա ա՞ղ...  
— Խաղող, ընտիր է, Վաղարշապատի...  
— Հեյ, գարիս գցեմ, բախտ բացեմ, Բե՛յ, բախտ  
Ու մեկնեմ ստույգ գիրը ճակատի...

— Լսե՞լ ես, արդյոք, եղբայր իմ Արել,  
Պատահմունքը նոր...  
— Ոչ, ի՞նչ պատահմունք...  
— Թոնդրակա շենի գյուղացիք թափել  
Եվ ավերել են Ծումբա վանքը սուրբ...  
— Իրա՞վ ես ասում...

— Քանդել, ավարել  
Ու տեղն էլ վեցկե գութանով վարել...  
— Տե՛ր, դու մեզ վերից փրկությունդ տաս,  
Այդ թոնդրակեցիք գունդ են գողերի,  
Ծների շարք են ու դների դաս:

— Հաշի՛շ, լավ հաշի՛շ, ով որ ցանկանա  
Հյուր գնալ ջեննեթ, թող ինձ մոտ գա նա...  
— Արմա՛վ, ընտիր է, Արարատանա...  
— Ալրարատ երկրի սերկնիլ ու նո՛տ...  
— Մաղկոտնա մե՛ղր, իսկը մանանա...  
— Դավրեժա չամի՛շ, լույսի պես մաքուր...

— Մատյա՛ն վաճառեմ, «Պատմություն հայոց»,  
Կա և Մովսեսի և Փավստոսի...  
Վաճառեմ մաս ես «Եղծ աղանդոց»,  
Մատյանը Եզմիկ փիլիսոփոսի:  
— Եվ սակայն չունե՞ն Զարեհավանցու  
Գիրը, որ կոչի «Բանք ճշմարտության»...  
— Կամա՛ց զրուցիր...

— Ծար շապիկացո՞ւ...

Ալ կարմիր թափիշ ու քող հարսնության...

Ալիք է տալիս, ծփում է շուկան,  
Ծփում է շուկան, հնում ու տնքում:

Շուկա է մտնում մի թշվառական

Վիզն ի վար կախված

Զանգակ մի զնգուն...

Զընգ հա զրընգ,

Զընգ հա զրընգ...

Զանգն է զնգում,

Խոսում ասես.

— Բորոտ եմ ես,

Ինձնից հեռու,

Բորոտ եմ ես...

— Հեյ, հեռու կացեք,

Ասւարեզ բացեք,

Մեծ գերեվաճառ Ալ-Իբն-Մանսուր

Իր գերիների ստվար բազմությամբ

Մտնում է շուկա...

— Ալլահն իրեն հետ, թող բարով մտնի,  
Հարեմիս հարմար, տեսնես, կին չկա”...

— Սադափե կոճա”կ, սադափե կոճա”կ...

— Սեկե ալ կաշվից մույկեր ու մուճա”կ...

— Մշո ցորենի լավաշ հա”ց ընտիր,

Մեկ գրիկն արժե լոկ կես դահեկան...

— Գերիներն եկա”ն...

— Գերիներն եկա”ն...

Նախ շուկա Նտավ արարն առնացի

Եվ այսպես խոսեց նժույգի վրա.

— Զկա այլ աստված ալլահից բացի,

Եվ Մուհամեդն է մարգարեն նրա...

Ով Մանազկերտի ազնիվ ժողովուրդ,

Ընտիր ապրանք եմ բերել քեզ համար՝  
Տղաներ պարթև, գործի մեջ հմուտ,  
Աղջիկներ սիրուն, մանկունք անհամար...  
Եկեք, սակարկեք, ջոկեք ու ընտրեք,  
Զեզ համար ծառա այլ տեղ մի փնտրեք,  
Ալլապես վաղը խումբն այս գերեվար

Շարժեմ պիտի վար,

Մինչն Դամասկոս...

— Ալ-Իրան-Մանսուր, ի՞նչ արժե, ասա,  
Սյս մանկահասակ, վտիտ հայուհին:  
— Հինգ հարյուր դիրինեմ, շեյխտ սրբազան:  
— Հինգ հարյուր դիրինե՞մ... գին ասա դու, գին:  
— Մի՞թե չես տեսնում, շեյխտ պատվելի,  
Որ աստվածային գանձ է այս գերին,  
Նայիր դու հապա նրա աշքերին,  
Ասես աշքեր են լեռան գազելի,  
Հապա հասակին նայիր նազելի,  
Նոճի է ասես, ջենմեթի նոճի,  
Խակ կուրծքը դեռ նոր պիտի բողբոջի:  
Չի անցնի անգամ մի երկու տարի,  
Ու քո հարեմը նա կզարդարի  
Իր շնորհներով աստվածապարզն,  
Գնի՞ր, շեյխ, գնի՞ր,  
Այսպիսի ընտիր ապրանքի համար

Հարկ չէ սակարկել:

— Հե՞յ, լսեք, լսեք,

Ես Գոգիկ Միլենց բաժրարս կրկին  
Ազդարարում եմ բաժը տերունի՝  
Սայլ ու գրաստով բերված ցորենի  
Բաժն այսուհետև տասնհինգ արծաթ,  
Իսկ մսի բաժը արծաթ է քսան...

— Շուկայում այսօր շինականն է շատ,  
Ու չեմ հասկանում այս ուրկի՞ց բուսան...  
— Թոնդրակեցիք են...

— Ի՞նչ...

— Կամաց խոսիր,

Թոնդրակեցիք են, լցվել են շուկա...

- Սմբա”տն էլ...  
— Դեռ ոչ, բայց հիմա կգա...

Եվ շուկայի

Վարի դոնից, դոնից վերին  
Ռամիկներ են նորից գալիս  
Եվ օղակում գերիներին:

Շուկան ի վեր,  
Շուկան ի վար՝  
Զը՞նգ Բա զրոնց,  
Զը՞նգ Բա զրոնց,  
Այն բորոտած  
Մուրացկանի  
Զանգն է զնգում,  
Խոսում ասես.  
— Բորոտ եմ ես,  
Ինձնից Բեռու,  
Ինձնից Բեռու,  
Բորոտ եմ ես...

— Բորո՞տ ես, Բա՞...

Եվ պահնորդի մտրակն ահա  
Ելավ գալար ու ահառիկ,  
Ու թշվառի քրծերն ամեն  
Դարձան պատառ ու պատառիկ:  
Նա գալարվեց, զանգը զնգաց,  
Զանգը զնգաց, նա գալարվեց,  
Ասես զանգն էր իր թաղումի,  
Որ շուկայի փոշում մարեց...

— Հաշի՞չ, լավ հաշիչ, ով որ ցանկանա  
Հյուր գնալ ջեննեթ, թող ինձ մոտ գա նա...

— Աշնակի ժանիք, աշխարհում արար  
Սիրո միակ դեղն ու ճա՞րն է ստույգ...

- Հսո՞ւմ ես, նանք, եկ ժանիքն այդ առ...
- Իզո՞ւր է, Սովորի...
- Ես կառնեմ մի զույգ...
- Եղբայր, ի՞նչ արժե ժանիքն աշնակի...
- Զույգը, սիրունս, երկու դահնեկան...
- Վո՞ւ, որքան թանկ է, գին է կրակի...
- Գին է կրակի, սիրունս, սակայն
- Անսեր սրտիկը այնպես կվառի,
- Որ աստված ինքն էլ քնավ չի մարի...
- Դե առ դրամը, տուր մի զույգ ժանիք:
- Բարով վայելես թագ ու հարսանիք...
- Եղբորս ասեմ, ինչ յոնդրակեցիք
- Աշխարհ են ընկել, սեր են քարոզում,
- Մաքուր դրամ է գրապանս հոսում:
- Եվ հանկարծ, հանկարծ այր մի շինական
- Իր ահեղ ճիշով խացրեց շուկան
- Ու գրկեց գերի մի աղջնակի...
- Գտե՛լ եմ, գտե՛լ, Թենի, զավակս,
- Անսեր որրուկս, իմ արեգակս,
- Գտե՛լ եմ, գտե՛լ...
- Քաշել մտրակի...
- Գտե՛լ եմ, գտե՛լ...
- Ախ, փրկիր, Բերիկ,
- Ուրեմն արնել, սրտիկս կերի...
- Հնդու համեմո՞ւնք...
- Մսրա սև սնգո՞ւր...
- Նոան պաղ շերբեթ, Բենց հիմա բերի...
- Ախ, փրկիչն այդ նոր ո՞ւր է, ասեք, ո՞ւր,  
Ինչո՞ւ չի գալիս...
- Կգա՛, համբերիր...
- Ալ-Իբն-Մանսուր, ասում են այսօր
- Դու գերիներ ես բերել շատ ընտիր.
- Գնե՞լ ես ուզում...
- Ուզում եմ, այո:
- Ուզում ես, ընտրի՞ր:
- Գնիր ինձ, կտրիճ, թե գնել կարես,
- Ծորտակ եմ, գինս էլ ծանր չէ այնքան:

- Այս, ինձ էլ, ինձ էլ, քաջառողջ եմ ես,  
Հմուտ դարբին եմ ու լավ շինական:
- Այս, ինձ էլ, ինձ էլ իմ զավակի հետ...
- Արաբատանում կկորչենք անհետ...
- Զայներդ կտրեք, հանդուգն լրբեր,  
Իսկ դու շուտ ընտրիր ու դրամը բեր...
- Ընտրեմ, սիրելիս, հենց հիմա ընտրեմ,  
Ի՞նչ արժե աղջիկն այս մանկահասակ...
- Հինգ հարյուր դիրհեմ...
- Թանկ չէ՝, սիրելիս...
- Թա՞նկ, ինչո՞ւ է թանկ...
- Խալիֆին վայել գանձ է այս գերին,  
Նայիր դու հապա նրա աչքերին,  
Ասես աչքեր են լեռան գաղելի,  
Հապա հասակին նայիր նազելի,  
Նոճի է ասես, ջեննեթի նոճի,  
Իսկ կուրծքը դեռ նոր պիտի բողբոջի...
- Կարճկտուր խոսիր... գնեցի դրան:  
Իսկ սա ի՞նչ արժե:

— Հինգ հարյուր դիրհեմ:

- Մի խոսքով, Մանսուր, ինձ բոլորն են պետք,  
Բոլորի համար իմշքա՞ն վճարեմ:
- Բոլորի համա՞ր... Հարո՞ւտ ես այդքան...
- Հարո՞ւտ եմ, այո, եղբայր պատվական...
- Բոլորի համար՝ մի հարյուր հազար...
- Գնեցի՛, Մանսուր ..

— Փառքի շատ, աստված,

- Որ գերյալներիս օգնության հասար:  
— Իսկ դուք այլնս գերի չեք, մարդիկ,  
Ծամփան ոտքն առեք ու վերադարձեք

Զեր տունն ու երդիկ,

- Զեր հանդն ու ձեր կալ,  
Իսկ ով կցանկա մեր Թոնդրակը գալ,  
Կընդունենք, մեզ հետ հողը կվարեք,  
Զեր նոր օջախը այնտեղ կվառեք,  
Կդատեք մեզ հետ ձեր հացը արդար...  
— Օրինված լինես, ո՞վ փրկիչ դու այր...

- Աշխարհի բարին թող կյանքիդ լինի...
  - Թշնամուդ օրը թող մթնի սկով...
  - Զրիկդ դառնա նոնահատ գինի,
  - Սրտիկդ լցվի կարմիր արևով...
  - Ապրես քաջառողջ դու հազար տարի,  
Օրիկ մի անգամ չգաս դու չարի:
  - Եվ սակայն ո՞վ է այրն այս ողորմած  
Ու արդարադատ...
  - Ինչպե՞ս թե ով է...
  - Սմբա՞տն է...
  - Ինքը՝ Զարեհավանցին...
  - Փրկիչ մարք լրեն...
  - Սուրբը նորահայտ...
  - Փա՞ռք նրան...
  - Օրինա՞նք սրբազն անձին...
  - Դե՛, վերջացնենք, կառո՞ղ եմ արդյուն  
Դմ դրամները հիմա ստանալ...
  - Կարող ես, սակայն դրանից առաջ  
Ուզում եմ, Մանսուր, ես քեզ հարց մի տալ:
  - Տուր, տեսնենք...
  - Ասա, ո՞վ է ստեղծել  
Այս մարդկանց, այս խեղճ արարածներին...
  - Ինչպե՞ս թե ով է... մի՞թե չգիտես.
  - Սլլահ աքրարը, բարձրյալը վերին:
  - Իրավ ես: Ու թե այդպես է ապա  
Քեզ ինչո՞ւ պիտի վճարեմ դրամ:
  - Դու իմ ապրանքն ես գնում, բարեկամ:
  - Ո՛չ, ինքդ ասիր, արարածներն են  
Սրանք ալլահի, դրամը պիտի  
Ալլահին ետ տամ...
  - Ալլահին... հա՞-հա՞, կատա՞կ ես անում...
  - Սա իմ ապրանքն է, ուզեմ կվառեմ,  
Ուզեմ, այ այսպես, կսրահարեմ...
- Գերեվաճառի կեռ սուրը շողաց,  
Մի ծերուկ գերի տեղում դողդողաց  
Ու վիզն արյունոտ՝ տապալվեց հողին...

... Մարտը կարճ տևեց: Զեռքերն ամբոխի  
Զիուց ցած բերին գերեվաճառին  
Ու պահնորդներին զինաթափ արին:

— Լսել ենք, ով որ Հիսուս է պաշտում,  
Ողորմած է շատ ու չե նա դաժան,  
Արդ, ողորմացեք կյանքս անարժան...

— Ալ-իրԱ-Մանսուր, սովորել ենք մենք  
Ողորմել միայն ողորմածներին,  
Անողորմ ես դու...  
Թոնդրակեցինե՛ր,  
Դուրս տարեք սրան ու քաշեք սրի:

#### ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Բացկում է դուռ մի ոսկեհուռ,  
Դուռ մի շքեղ, ծանրաքանդակ,  
Ու բացկում է ջեննեթ մի հուր  
Հենց Քունձիկի ոտքերի տակ:

Գորգ է հւկա,  
Խավը ոսկյա՝  
Օսկելույսով ծիածանմած,  
Գոյզ է հսկա, անես ռանված  
Ծածանչնարով արեգակի,  
Ծողքով սաթի ու սուտակի  
Ծվ լուսնայակի արծաթ թէկրվ...  
Ու գույներն այդ ալիքվելով  
Դառնում են ճոխ, շող մի այգի:  
Ցողն՝ աղամանդ, գոհար է ջինչ,  
Վարդերն արյուն, գունդ-գունդ ւարյուն,  
Եվ արցունքի, արյան միջից  
Մի ջեննեթ է հրավառվում:  
Եվ ջեննեթում այդ հուրիրան,  
Մաղկունքի մեջ, շող ու վարդի,

Կաքավում են քարակիրան  
Հուրիները Աբով-Բարդի:  
Գալարվում են նրանք թեթև  
Պորտապարով մի նազանի  
Եվ ճախրում են հրաշաթև  
Գագելի տակ երգասանի:

Քունձիկ արեղան քարանում շեմքին  
Ու սարսափում է Քունձիկ արեղան,  
Վարանում է նա, խաչ հանում դեմքին  
Ու ողջոյնի տեղ շշնջում «մեղա»-ն:  
Քունձիկ արեղան դժվար է շնչում  
Ու շփոթում է քայլերը վարան,  
Ամիրան նատած մանր քրքջում,  
Երկար միրուքն է շոյում ամիրան:

— Դե, ե՛կ, վանական, ե՛կ, մի ամաչի,  
Թող իրենց համար երգեն ու պարեն,  
Տիսուր եմ այսօր, քեփս տեղը չի,  
Մի արի տեսնեմ, թե ի՞նչ ես արել...  
Ո՞վ ալլան աքքար, այս ո՞ւր ենք հասել,  
Որ հոխորտում է ճորտը մեր առաջ,  
Հանդնում զարկել ու պատուհասել,  
Չուալ զգին ու չտալ խարաջ...  
Վանքեր է քանդում, թե վանքեր քանդի,  
Իւզ ինչո՞ւ պիտի նա հնազանդի:

Իսկ Քունձիկը ծուռ ու գաղտագողի  
Իր հայացքները սրան է նետում,  
Մփանքների տակ շղարշ ու քողի  
(Մեղա՝ քեզ, մեղա՝ ...)  
Մերկ աղջիկների պարն է վետվետում:

Գալարվում են նրանք թեթև  
Պորտապարով մի նազանի  
Ու ճախրում են հրաշաթև  
Գագելի տակ երգասանի.

— Վարսերը ձեր մի-մի սև գետ,  
Ո՞վ դուք հարսներ մարգարեի,  
Թարթիշները նշտար ու նետ,  
Ո՞վ դուք հարսներ մարգարեի:  
Աստղագետներն անգամ հմուտ  
Ծփոթում են աչքերը ձեր  
Այն գիսավոր աստղերի հետ,  
Ո՞վ դուք հարսներ մարգարեի:  
Ձեր կուրծքն ի վար մեղմ ալիքվող  
Մետաքսեղեն քողերի տակ  
Լուսիններն են դողում վետ-վետ,  
Ո՞վ դուք հարսներ մարգարեի:  
Ով ձեռ կրծքին սեղմի իր կուրծքն,  
Հմախ ձեր բույրն անմահական,  
Նա կգտնի մի նոր ջեննեթ,  
Ո՞վ դուք հարսներ մարգարեի:

Եվ թութակի իր վանդակից  
Հանգերգում է շահիրի հետ.  
— Ձեն-նեթ, ջեն-նեթ...

— Ուշքդ տեղը բեր, Քունձիկ վանական,  
Եվ ասա տեսնեմ ի՞նչ լուր ես բերել...  
— Բարի է, բարի...

— Բարի... Եվ սակայն  
Բարին վերացավ: Հե՞շտ է առավել  
Արարատանը ողջ կառավարել,  
Քան իմ հարեմը և Արմենիան ձեր...

— Բարի ամիրա, զուր ես զայրացել,  
Եկել եմ ամա, որ քո ձեռքը տամ  
Գաղտճիք մի, որով  
Կարող ես խսկույն բռնել Սմբատին...  
— Խոսի՛ր, վանական:

— Վաղը, գիշերով  
Կիմի նազիկ լճակի ափին,  
Հենց մատուի մոտ:

— Եվ ստո՞յգ է դա...

— Լուսի պես ստոյգ, դու ինձ հավատա:

Այդ գործը այնպես հմուտ է սարքած,

Որ ձեռքիդ մեջ է Սմբատն անկասկած:

— Թե այս անգամ էլ սուտ եղար, Քունձիկ,

Կպատուհասեմ անիծյալ մոգիդ,

Աչքդ կհանեմ և հոգի՛դ, հոգի՛դ:

Եվ թութակը իր վանդակից

Հանգերգում է.

— Հոգիդ, հոգիդ...

Քունձիկը դեռ ծուռ ու գաղտագողի

Իր հայացքները սրամ է նետում,

Ծփանքների տակ շղարշ ու քողի

(Մեղա՛ քեզ, մեղա՛...)

Մերկ հուրիներն են անվերջ վետվետում:

Գալարվում են նրանք թեթև

Պորտապարով մի նազանի

Եվ ճախրում են հրաշաթեն

Գազելի տակ երգասանի:

— Քունձիկ վաճական, դե ասա հիմա,

Քո Քրիստոսի սուտ դրախտն է լավ,

Թե՛ ճիշտ հարեւմը մեր Մուհամեդի...

Եվ թութակը հանգերգում է.

— Մու-հա-մեդի...

— Մու-հա-մեդի...

#### ԳԼՈՒԽ ՏԱՄՉՈՐՄԵՐՈՐԴ

Մայրամուտով օծված պղնձագոյն սարեր,

Եվ սարերի վրա՝ ամպեր թափառական,

Ամպեր, կախված ամպեր,

Ալբախված ամպեր,

**Մեռնող արեգակի շառափն առած ամպեր,  
Ու գորշ ամպեր,  
Ամպեր ծխակուտակ...**

**Դաշտն է փոված լեռան ոտքերի տակ,  
Եվ ամպերը դաշտի հեռաստանով  
Իրենց սուզերներն են տեղափոխում:**

**Հեռու-հեռվում ինչ-որ լուս է դողում,  
Ցողցլում է ինչ-որ կապույտ երիզ,  
Փայլատակում իբրև շեղը սրի.  
Եվ աշքերն այդ հեռու-փայլատակումին,  
Մի հեծյալ է սուրում թոներակն ի վար:**

**Սև սաթի պես շողուն մի երիվար  
Իր պայտերի առկայծ պողովատով  
Պաղ օդի՞ց է ասես զնօցոց հանում  
Եվ ո՞չ հոյ ու քարից ճանապարհի:**

**Եվ պաղ մայրամուտի քամին քարի  
Իր պաղովացուն սույլը այդ հեծյալի  
Տաք ճակատին դրել ու չի պոկում:**

**Մեռնող արեգակի հրացուքում  
Մոխրանում են դանդաղ անպերն արդեն  
Եվ մոխիր են մաղում հեռաստանին,  
Հեռաստանին փոռում գորշ մի թախիծ:  
Անդունեները իրենց սև երախից  
Գիշերային մութ են արտաշնչում...**

**Սուրող երիվարը զիւ վոնջում  
.Եվ դոփում է մթին լուսիքյան մեջ...  
Եվ ինչ-որ տեղ ուրիշ մի երիվար  
Արձագանք է ասես նրան տալիս  
Ու նրա հետ դոփո՛ւմ,  
Դոփո՛ւմ, դոփո՛ւմ...**

Ինչո՞ւ մի տեղ կուանն ասես կոփում,  
Հարց է տալիս անվերջ.  
«Ինչո՞ւ, ինչո՞ւ...»

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ Բիշեց Բանկարծ,  
Ինչո՞ւ Բանկարծ ուզեց տեսնել իրեն...  
Ե՞րբ էր...

Արեգակը ուշաթափվեց,  
Ու իր կրծքին կպավ աղջկա կուրծք մի պիրկ...  
Խավար եղավ հետո...

Ծունչը Բատվեց...

Գլխին պտույտ եկավ մի ողջ երկինք,  
Ու լույս եղավ...

Հետո մատների տակ  
Նվադում կար ու դոդ, կար պարանց մի տաք.  
Կուրծք կար դոդոց,

Կրծքի խենթ ելևէց...

Ու շիմացավ, ծաղկած խնձորենի՞ն էր դա,  
Թե՞ աղջիկն էր բուրում արբունքի մեջ...  
Փառանձե՛մը...

Խոնավ, բուրող ու տաք,  
Փառանձե՛մը...

Խոնարհ, խոնարհ տատրակ...

Լոկ այսքանը...

Հետո դարձավ երազ,  
Անմատչելի, ամմերձ, անիրական:  
Եվ ինչո՞ւ է հիմա Բիշել սակայն  
Եվ ինչո՞ւ է կանչել, ինչո՞ւ, ինչո՞ւ...

Սուրող երիվարը զիլ վրնջում,  
Սուրող երիվարը ծանր շնչում  
Հոտոտում է անվերջ խավարը պաղ:

Եվ ամպերը ահա լուռ ու դանդաղ  
Անդունդներից կրկին սև են առնում,\  
Իրենց սևին կրկին սև են խառնում  
Եվ գնում են մթին լողարկության:

Եվ մթան մեջ ինչ-որ մոլոր մի հավք  
Իր թևերն է զարկում տագնապահար  
Անհետանում, տանում  
Վրդուվ չի ճիշ:

Իսկ ցոլանքը ունուի, պաղ մի ցոլանք,  
Ընդառաջ է վազում երիվարին,  
Դարձած գիշերային փայլատ մի լիճ:

Լիճը նազիկ...  
Լիճը ճողփում հազիվ,  
Շշուկներ է բերում անմեկնելի  
Եւ ափերին թողած, գնում է ետ:  
Լիճը նազիկ...  
Լիճը դողում հազիվ,  
Փայլատ կայլակներով փշաքաղվում  
Եվ հեռում է, հեռում սպասումով:  
Երիվարը շնչում գիշերը զով,  
Հոտոտում է անվերջ, լկամն ուտում:

Քնած բաղը զարթնում եղեգնուտում,  
Կափկափում է ահով  
Ու լուս է կրկին:

— Ինչ-որ մի տեղ այստեղ մատու պիտի լինի,  
Ու ճա լինի պիտի մատուի մոտ...  
Տե՛ր, օգնական եղիր, սատար եղիր դու ինձ,  
Որ կարենամ տանել բախտն այս վերին,  
Այս շնորհը առատ,  
Լույսն այս անակնկալ,  
Այս անհնար ընծան,  
Անկարելին...  
Տե՛ր, օգնական եղիր անարժանիս  
Ու զորացրու սիրտն իմ այս նվադոյ:

Առկայծում է հեռվից լուս մի աղոտ,  
Ասես խորհրդավոր աստղ է թարթում:

— Մո՞ւ է... Կուցե նա է մատուի դեմ վառել  
Եվ գեղեցիկ ու սուրբ՝ չոքել ծնկի  
Ու աղոթում է լու:

Զին հոտոտում մութը, ծառս է լինում թերևն  
Եվ քայլերն է փոխում դժկամորեն:

— Տա՛ սը տարի... Աստվա՛ծ... Մի՛թե նորեն  
Նրան տեսնեմ պիտի:

Երիվարի երեր քայլերի տակ  
Սև զիշերը հանկարծ ելնում ոտի,  
Ծափ է զարկում ահեղ,  
Ահեղ ճշում...

Խավարի մեջ պառկած երամ-երամ  
Թոշուններն են ելնում սարսափահար,  
Զայնում իրար, կանչում ու կոնչում:

— Չիլող կոունկներ են, իմ երիվար,  
Ինչո՞ւ վրդովեցինք նրանց, ինչո՞ւ:

... Սև մատուղ ասես միանձնուի է սև,  
Մոմի թրթուացող բոցը ձեռքին:  
Եվ մատուի առաջ, իրավ, ծունկի չոքել,  
Աղոթում է մի կին:

Սակայն ոտնաձայնի՞ց երիվարի,  
Թե՞ երամի կանչից սարսափահար  
Նա ոստնում է տեղից ու ակնդետ  
Խավարին է նայում:  
Նա՛ է... Հրաշալի ու հարազատ...  
Նա՛ է... Հրաշալի ու վախվորած...

Խոռվ կոունկները լճի վրա  
Մախրում ու խավարն են թևահարում:

Սև մատուին կպած կինը նայում,  
Խաշակնքում է լու:

Հեծյալը վար գալիս երիվարից  
Ու քայլում է դանդաղ դեպի մատուռ:

Կինը նայում է լուռ,  
Նայում, նայում,  
Եվ պոկվում է շորթից ճիչ մի նվադ:

Մոմի բոցը հովից տարութերվում,  
Ստվերներ է ճոճում հսկայական:

— Միթե դո՞ւ ես, Սմբատ...  
— Ես եմ, իշխանութի...  
— Տե՛ր իմ, տեսի՞լք է սա...  
— Տեսի՞լք... Սակայն  
Միթե գիր չե՞ն հղել, չե՞ն կանչել իւձ...  
— Ե՞ս... Չեմ հղել ես գիր...

Լճից պոկված ալիքն ափին զարկում,  
Փշրվում է, փլչում տառապագին:

— Եվ ինչո՞ւ ես հապա հիմա այստեղ:  
— Մորս մատուռն է սա, ամեն տարի՝ այսօր  
Ես այստեղ եմ, Սմբատ, լոկ աղոթում:

Խոռվ կոռւնկները ճախրում են դեռ,  
Տագնապահար ճշում մթին օդում:

— Դա՛վ է լարած, Սմբատ...  
Դա՛վ է, փախիր...

Եվ Սմբատը սակայն էլ չի լսում ոչինչ:  
Նա՛ է...

Հրաշալի...  
'Աշքերը ջինչ...  
Նա՛ է...

Մաքուր, սիրող ու սարսափած...  
Եվս մի քայլ...

Ու իր մատմերի տակ  
Կնվաղի նորից այդ պարանոցը տաք,  
Եվ կրուրի նորից աշխարհն արար  
Խճճորենու բոլյով...

Եվս, ևս մի քայլ...  
Սակայն մթան միջից ինչ-որ զորեղ ձեռքեր,  
Կառշում, բռնում իրեն ու տանում են ներքն,  
Ներքն,  
Ներքն,  
Դեպի անդունդը մութ...  
Խոռվ կոռունկները ճախրում են դեռ,  
Ծչում, իրար կանչում օդի մեջ ցուրտ:

#### ԳԼՈՒԽ ՏԱՄՆՃԻՆԳԵՐՈՐԴ

— Զին ծակել են, պատը տարել,  
Զին էր կալե, ու պատն՝ աշխետ,  
Ութը կանգուն կով են առել  
Ու կտավ մի՛ իր հորթի հետ:  
Դե՛, զարկդ զարկ ու թոփր վեր,  
Այ փահլան, չարքի ընկեր...

Ս. Հ. Վեսուկին սրբացրել  
Ու կարգել են հավնոցի ուս,  
Ո՞վ է աշխարհն էսպես ծոել,  
Թե՞ միշտ ծուռ է եղել էսպես: ↓  
Դե՛, զարկդ զարկ ու թոփր վեր,  
Այ փահլան, չարքի ընկեր...

Ու Մանազկերտի Արապարակում  
Աբուլ-Բարդի ճոխ պալատի դիմաց,  
Ծաղրածուն երգում, փանդիռ է զարկում,  
Ու պար է գալիս մի լարախաղաց:  
Մուրացիկները նատել են շար-շար, ↓  
Պղնձե մաշված թասերն առաջին:  
Եվ զուգակներով գալիս անդադար,

Գալիս են մարդիկ փանողիոի կանչին:  
Իսկ պահնորդ մի շար, ջիլ մտրակն առած,  
Զաղկում է անվերջ, անվերջ հալածում  
Մոլոքիկներին խեղճ ու ահառած:

— Ո՞վ է ծոել աշխարհն այս, ո՞վ,  
Ով մուրում է աղաշանքով,  
Նրան ծեծում, խարազանում,  
Ամեն տեղից դուրս են անում:  
Ո՞վ է ծոել աշխարհն այս, ո՞վ,  
Ով խլում է հուր ու սրով,  
Նրա առաջ ծնկի գալիս  
Ու պատիվ են նրան տալիս:

— Ծաղրածու եղբայր, ծաղրածու եղբայր,  
Լագլագի վիզը ինչո՞ւ է երկար...

— Դե, լսիր, լառ, վիզը լագլագի  
Էնդուր է երկար, որ ի սեր ձագի  
Գլուխ է տալիս ամեն ուրուրի  
Ու երկարում է վիզը օր-օրի:

— Ի՞նչ տեղին բերեց...  
— Ծիշտ տեղին բերեց...

— Այդ լավ իմացար, բայց նայիր ու տես,  
Լագլագն ինչո՞ւ է կանգնել մի ոտին:

— Ով դու մեծատուն, ինձնից լավ գիտես,  
Ինքդ ես կաշառել էդ երկարտոտին,  
Որ մյուս ոտքը չդնի գետին,  
Թե մյուս ոտքը դնի նա գետին,  
Փուլ կգա աշխարհն ու կտատանի  
Եվ քեզ էլ հետը դժոխք կտանի:

— Լսեք, Բե՛յ, լսեք, ով մանազկերտցիք,  
Ոչ ոք չգնա, բոլորդ կեցիք,

Արդ պատիճն արդար դուք տեսմեք պիտի  
Սմբատ կոչեցյալ աղանդապետի,  
Որ երևեցավ ի գեղջն Թոնդրակ...

— Ի՞նչ... Կալանել են Սմբատին...  
— Հե՞յ, վախի...  
— Բայց նա՝ չէ գուցե...  
— Չէ՛, նա՝ է, ավաղ...  
— Եվ ինչո՞ւ ավաղ, նա մոգ էր, գազան,  
Վանքերն ավերող ծնունդ էր ների...  
— Ո՛չ, փրկիչ էր նա, ահեղ խարազան՝  
Մեջք ու թիկունքին այս զրկողների...  
— Փրկիչ էր, այր էր նա արդարադատ,  
Իր փրկած անթիվ գերիք են վկա...  
— Այս աստնվորին փրկիչները շատ,  
Բայց փրկությունը չկա ու չկա:

— Հե՞յ, հեռու կացեք,  
Ասպարեզ բացեք...

Հիմա դուրս կելնի ամիրան վսեմ,  
Ապահունյաց տերն արդար ու բարի:  
— Ես ամիրայի պատաճքը հյուսեմ,  
Տնակը շինեմ մեջ տապան բարի:

Եղերափողն է հնչում որոտով,  
Պալատի դուռն է բացվում ծանրագին,  
Եվ իր ոսկեհուու,  
Ալ պարեգոտով

Աբովլ-Բարդն ահա դուրս ելնում դանդաղ,  
Բազմում է բարձր գահավորակին:  
Բազմում, միրուքն է շոյում թափարծի  
Ու խոսքն է կախում միրուքի վրա.

— Չկա այլ աստված ալլահից բացի,  
Եվ Մուհամեդն է մարգարեն նրա:  
Ամենակարող ալլահի կամքով  
Եվ Մուհամեդի օրինությամբ վերին,  
Ես կալանեցի Սումբատին այն գող  
Ու շղթա դրի նրա ձեռքերին...

Հիմա իմ արդար դատն եմ անելու:  
Ո՞չ, սակայն նրան չեմ սպանելու...

— Փառք շա՛տ, աստված, խղճտանք դրիր  
Անգամ սրտի մեջ այս Արուլ-Բարդի...

— Չի՝ սպանելու...

— Դե եկ հավատա...

— Սո՛ւ կացեք...

— Լսե՛ք...

— Թող խոսքն ավարտի...

— Այո՛, ես նրան չեմ սպանելու...

Խոսք էիք խոսում, թե մի որ Հիսուս,

Մարգարե է նա...

Ուրեմն խաչենք, թող Հիսուսի պես

Երկինք համբառնա:

Ձեր Հիսուս հարյավ լոկ երեք օրում,

Երեսուն օր եմ ես սրան տալիս:

Ամրոխից հատվում, վազեվազ գալիս,

Ամիրայի դեմ գլուխկոնծի է

Ծաղրածուն տալիս.

— Փա՛ռք ամիրային,

Այսքան գթառատ ու այսքան բարի

Արև չէր ծագել ի վեր աշխարհի...

Եվ Սմբատն, անշուշտ, երբ երկինք հառնի,

Լավության դիմաց

Ամիրային էլ իրեն հետ կառնի,

Որ ճամփին չեննեք գցի ապահ:

— Հե՛յ, Բեռու կացեք,

Ասպարեզ բացեք,

Բերո՛ւմ են Անին,

Բերո՛ւմ են Անին...

Ծանր շղթաներ ուռ ու ձեռքերին,

Մազերը խոիվ, ճակատն արնամած,

Սմբատը ահա գալիս է կամաց...

— Բարձրագլուխ է...

- Զիլ է ու ճապուկ...
- Աչքունքին նայիր, տես ոնց են լրում...
- Սրբի կերպ ունի...
- Հիսուս է իրավ...
- Խաչն էլ ետևից ուղտով են բերում...
- Գանահարել են...
- Տանջել են սաստիկ...
- Հազիվ է փոխում քայլքն իր երերուն...

Եվ իր շղթաների գրնգոցով խաղաղ  
Կանգնեց ահա Սմբատն ասպարեզում այն բաց...

Օր է աշնանային, մաքուր ու մեծ մի օր,  
Եվ երկնքում մաքուր տատրակներ կան ճերմակ,  
Որ թևածում անփոյթ ու արևով օծված  
Լողանում են խաղաղ...

Բարդիներ կան հեռվում,  
Որ մերթ ընդ մերթ իրար ընդհատելով,  
Սոսափում են թերթն և զրուցում ասես  
Աստնվորի, կյանքի ու աստղծու մասին...  
Եվ այնպես է թվում, թե շղթաները չեն՝  
Օրն է զնգում խաղաղ...

Ու ձայներ են գալիս,  
Հեռու հեռուներից գալիս են ջինչ ձայներ,  
Աղբյուրների ձայներ, անտառների,  
Տերևներից կաթող ծանր ցողի ձայներ  
Եվ մանկության հեռու քարայրներում հնչող  
Արձագանքներ կորած...

Եվ զանգերի ձայներ,  
Որ դողանջում էին իրիկնային մուժում,  
Հետո կապուտի մեջ հալչում խաղաղ...  
...Մահից հետո, այո, չի լինելու ոչինչ,  
Սակայն լիներ այնպես, որ կարենար լսել  
Այդ ձայները հեռու... Աղբյուրների ձայներ,  
Տերևների ձայներ ու ցողերի...

... Խաչը արդեն դրին, բարձրիկ մի խաչ...  
Լավ է, վերջին անգամ պիտի բարձրից նայի

Իր աշխարհին Բայցո...

Ժողովուրդը սակայն

Ինչո՞ւ է լուս այսպես... գուցե ամենին  
Լուս չէ, ու ինքն արդեն էլ չի լսում ոչինչ  
Հեռավոր ու կորած այն ձայներից բացի...  
Իսկ սա... Դահիճն է սա... Զի կարմիր է հագել...  
Մոտենում է ահա...

Մոտենում է...

Սակայն

Իր սիրտն ինչո՞ւ այդպես տագնապով է զարկում  
Եվ ինչո՞ւ է դողում... Չէ որ վաղուց արդեն  
Ինքը հաշտ է մարման խորհրդի հետ  
Ու ոգնին պատրաստ նրա կանչին...

Սակայն

Մահն այն հեռու էր շատ, շատ էր հեռու... Իսկ սա...  
Իսկ սա...

Դահիճ է սա...

Կարմիր հագած դահիճ...

Վեր են տանում իրեն, վեր են հանում արդեն  
Ու խաչին են կապում...

Եվ չգիտես ինչու

Ինքն ուզում է նայել աշքերի մեջ դահճի,  
Նայել երկա՞ր, երկա՞ր...

Եվ սակայն՝ զուր,

Փախցնում է դահիճն իր աշքերը...

Եվ ինչ...

Աշքերի մեջ նրա համբերություն է լոկ  
Ու մեղավոր քախիծ...

Սակայն կողքից

Ո՞վ է իրեն նայում այդպես երկար...

Ախ, դա

Ուղտն է, խաչո բերեց...

•                  Ուղտի վճիտ աշքեր,

Խաղաղություն ուղտի...

Եվ լեռներ են հեռվում,

Պղնձագույն լեռներ ու ամայի լեռներ,

Ծծված աշնանային հատնող արեգակով

Եվ այդ լուսով դարձած գարմանալի քնքուշ...  
Եվ լեռների փեշին խոզաններ են դեղին  
Եվ դաշտեր են դեղին, դեղին ամայություն...  
Ու ամայի դաշտից բարձրանում է միայն  
Ծխի կապույտ մի ծիր...

Եվ իրենն են դրանք,  
Ցավելու չափ իրենն... Ուրեմն թող գնա  
Միանալու հավետ այդ լեռներին, դաշտին,  
Այդ տիրությանն ամա ու երիզին ծխի...

Կայծակ զարկեց հանկարծ,  
Գալար-գալար եռաց հրակարմիր մի ծով,  
Գալար-գալար եռաց կապարագույն մի ծուխ,  
Եվ հրեղեն գնդեր գլոր-գլոր եկան  
Ու ձուլվեցին իրար... Եվ հրեղեն գնդեր  
Գլոր-գլոր փախան, անջատվեցին իսկույն  
Եվ ձուլվեցին կրկին...

Եվ ցավի սուր մի ճիչ  
Կողերն ի վեր ելավ, ելավ կոկորդն ի վեր,  
Մեռավ ծնոտների տվայտանքով...

Եվ կայծակեց մտքում.

— Այդ մեխնցին աշս...

Եվ կայծակեց մտքում.

Հրաշք լիներ հանկարծ,  
Ու հեղեղով վայրուգ թոնդրակեցիք գալին  
Ու հանեին գամն այս ու տանեին իրեն  
Դեպի լեռները, վեր, ու չեր լինի էլ ցավ,  
Ու չեր լինի էլ մահ:

Եվ աչքերը բացեց,  
Նայեց.

Մի կաթ արյուն, միայն մի կաթ արյուն  
Ծանր ծորաց ափից ու ընկավ վար...  
Խսկ երկնքում մաքուր՝ տատրակներ կան ճերմակ,  
Որ թռածում անփոյթ ու արևով օծված  
Լողանում են խաղաղ...

Եվ կան ուղտի աչքեր,

Որ իրեմ են նայում... Եվ կան ուրիշ աչքեր...

Նա՛ է... Հրաշալի ու հարազատ...

Նա՛ է... Հրաշալի ու սարսափած...

Եվ կայծակեց կրկին,

Զարկեց մի բութ կայծակ...

Մառախուղ է ու ծով...

Դնչ-որ մեկը ահա ոտագորիկ քայլում

Ու գնում է ծովի ալիքներով կապոյտ...

Ծով չե սակայն, օ, ո՞չ... Կրակ է լույծ...

Կրակե ծով է ալ... Ու ներբաններն իր զոյգ

Կրակին են կապել...

Ինքն ուզում է պոկել,

Չի կարենում սակայն,

Ինքն ուզում է պոկել,

Չի կարենում սակայն,

Ու թաթերն են վառվում,

Ուկորներն են վառվում,

Ողնաշարն է վառվում,

Ողջ աշխարհն է վառվում

Ու փուլ գալիս...

Ծեղքում ամրոխի հեղեղ անձայն,

Առաջ է գալիս այլակերպ մի այդ,

Հագին ձորձեր են, մորուքը ծածան,

Ու շուրթին մի խոսք.

— Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ...

Խոսք չե, այլ հառաչ,

Զայն չե, այլ կական,

Ծունչ չե բերանին,

Այլ գերենական

Ծենճեր է ու մուխ:

Կանգնում խաչի դեմ, խաչվածին նայում,

Ապա պտույտ է անում այսահար

Ու զարհուր ձայնով նորից է վայում.

— Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ...

Ասպարեզի մեջ պտույտ է տալիս  
Ու նեղ զուգակով սլանում է վար.  
Եվ հեռու հեռվից դեռ ձայն է գալիս.  
— Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ...

Ու երբ խաչվածը մի վերջին անգամ  
Աչքերը բացեց.  
Նրիկնամուտ էր ու ամպած երկինք:  
Ու երբ խաչվածը մի վերջին անգամ  
Աչքերը բացեց,  
Ամպած երկնքում շանթը թևածեց,  
Ամեն ինչ մի պահ ողողեց, օծեց  
Լուսով իր շողուն,  
Եվ ինչ-որ մի տեղ ապառաժի դեմ  
Իր շեղը ջարդած,  
Մահացավ մողում...

1958

1968

Լիրսի առաջ Հավբերը բնշուր  
Լիրացածներ և Եղիշ գնտնամամա  
Լիշ չարչարանքով թներ ևն առնէ  
Դարչնէլ թեավշր...

# ԾԻՐԱԿԱՆ ՇՈՒԱ-

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

## Առաջին պատկեր

(Ժամանակը միջնադարն է: Ծիրակից Այրարատ տանող ժամապարհին, Արագածի փեշի տակ, քարն կամարակապ իշխանատուն է: Իշխանատան կողքին ժայռուտ է, ու ժայռուտի միջից աճած ծիրակի ծառ, որ ճյուղակոտոր է, քվարված. քայց կառարին կարմրին են տալիս հասուն պատուղները: Իշխանատան քակում մի կիսակերտ խաչքար է: Վաղորդյան է, աղջամուղք: Ամայի քակն են մտնում Գուսանը, Ծաղրածուն, լարախաղացներ, աճպարարմեր, նվազածուներ: Գուսանը մոտենում, սկսում է ծնծել իշխանատան դուռը):

## ԳՈՒՍԱՆ

Հե՞յ, Բե՞յ, դուռդ քաց, իշխանատեր...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Ձեմ ու ձուն չկա... Առել եմ կուտը,  
Մտել եմ մութը:

## ԳՈՒՍՏԱՆ

Հե՛յ, Բե՛յ, դուռդ բաց...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Քո ձայնը, Գուսան, փափուկ բամբակ է,  
Կաց, որ ես գոռամ, իմը զանգակ է:  
ՀՇԵՅ, ԲԵՇԵ, դուռդ բաց, իշխանատեր...

(Բացվում է դուռը, ու երևում է իշխանատեր Գորգիկը):

## ԳՈՐԳԻԿ

Ի՞նչ եք ձայներդ աշխարհը գցել:

## ԳՈՒՍՏԱՆ

Տեղ չե՞ն տա, քնենք...

## ԳՈՐԳԻԿ

Իսկ ունե՞ք դրամ...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Դրամ, Բա դրամ... Ես ել քեզ ուրիշ  
Մի Բարց պիտի տամ...

## ԳՈՐԳԻԿ

Հարցող քեզ պարիր...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Չե... Ասա՛, ոսկին ինչո՞ւ է դեղիմ...

## ԳՈՐԳԻԿ

Ե, ի՞նչ իմանամ, ինչու է դեղին...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Դե, լսիր ասեմ... Քեզ նման ազան  
Մարդիկ եմ ընկել նրա ետևից...

## ԳՈՐԳԻԿ

Զայնի, անառակ...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Քեզ նման ագար

Մարդիկ են ընկել ճրա ետևից,  
Վախից պատռել է այդ խեղճի լեղին,  
Դրա համար է նա այդպես դեղին...  
Ու այդպես դեղնած ու լեղապատռ  
Փախչում է, փախչում... Մեզ ուսկի՞ց դրամ...

## ԳՈՐԳԻԿ

Դե որ այդպես է, կորեք այստեղից...  
Ագար... Ավանակ, այդ ե՞ս եմ ագար...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Ավանակ ասաց ու թե ասեր էշ,  
Կասեի՝ մարդ կա, էշից էլ է գեշ,  
Օձ ընկնի ձեռքը՝ կուզենա խուզել,  
Աչքդ դուրս եկավ՝ կասի ինձ տվեք,  
Տանեմ իմ կատվին...

## ԳՈՐԳԻԿ

Փախիր, քանի դեռ

Մոտոյ չեմ եկել...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Աքլորը ելել,  
Կանգնել կտորին, գոռում է՝ փախեք,  
Կտուցում պիտի իմ ոտքը քորեմ  
Ու ողջ աշխարհը փուլ պիտի քերեմ...

## ԳՈՐԳԻԿ

Լայի՛րշդ զքեզ...

## ԳՈՒՍԱՆ

Լսիր, բարեկամ,  
Դրամի մասին դու Բոգ մի անի,  
Լույսը որ բացվեց, դրամը կգա,  
Մեր գործն է այդպես...

## ԳՈՐԳԻԿ

Եվ ի՞նչ գործ է դա...

## ԳՈՒՍԱՆ

Գործ է գուսանի ու ծաղրածուի.  
Լարախաղացի ու աճպարարի:

## ԳՈՐԳԻԿ

Է, միով բանիվ, սուտասան եք... հը...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Այնպես ճիշտ ասեմ, որ այս աշխարհի  
Մեծ-մեծ ստերը պազեն կողքին...

## ԳՈՐԳԻԿ

Դե, որ այդպես է, Ձերս հրամեցեք...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Լեզուի չար է քիչ, բայց Բոգիո՞՝ բարի...

## ԳՈՒՍԱՆ

Մտեք, մանկտիք, իսկ ես կնատեմ  
Այստեղ՝ գերանին, կանչեմ մի քիչ:

(Բոլորը մտնում են Շերս, Գուսանը նատում է պատի տակ ընկած գերանին: Բեմը դանդաղորեն սկսում է լուսավորվել:՝ Քիչ Բետո իշեանատնից դուրս է գալիս քարտաշ Քերովքեա):

## ՔԵՐՈՎԲԵ

Բարի լույս, ճամփորդ...

## ԳՈՒՍՏԱՆ

Բարին Բենտը գաւ

(Քերովբեն զնում, նառում է խաչարի դեմ ու սկսում տաշել):

## ՔԵՐՈՎԲԵ

Գիշե՞րն ես եկել...

## ԳՈՒՍՏԱՆ

ՀԵ, լուսադեմին:

Սուրբ արևագալ, օգնական ինձ լեր,  
Որ ես կարենամ ճշմարիտ խոսքով  
Սև ողբը հյուսել Անի քաղաքի  
Եվ գովքը հյուսել քաջ Պահլավունու...

## ՔԵՐՈՎԲԵ

Ի՞նչ ես մրմնջում...

## ԳՈՒՍՏԱՆ

Ոչինչ, ասում եմ,

Թե այդ քարը քեզ շատ կշարշարի,  
Պինդ է երևում:

## ՔԵՐՈՎԲԵ

Քա՞ր է իր Բամար:

## ԳՈՒՍՏԱՆ

Մուլճդ Բագիկ է փշուրներ պոկում:

## ՔԵՐՈՎԲԵ

Թող Բագիկ պոկի, միայն թե պոկի:

## ԳՈՒՍԱՆ

Ծշմարիտ ասիր՝ միայն թե պոկի:

## ՔԵՐՈՎՔԵ

Եվ ո՞ւր ես գնում...

## ԳՈՒՍԱՆ

Է, ի՞նչ իմանամ,  
Հայոց աշխարհի ճամփաները շատ...

## ՔԵՐՈՎՔԵ

Չե՞ս ուզում ասել ու մի է ասա,  
Մարդ Բիմա պիտի փակրերան լինի:

## ԳՈՒՍԱՆ

Չէ, այդ չէ, վարպետ, ճշմարիտն ասի,  
Ինքս է չգիտեմ, թե ո՞ւր եմ գնում,  
Իմ գործն է այդպես:

## ՔԵՐՈՎՔԵ

Եվ ի՞նչ է գործդ...

## ԳՈՒՍԱՆ

Գուսան եմ, վարպետ:

## ՔԵՐՈՎՔԵ

Հա, եղավ, եղավ,  
Ես է կարծեցի, թե Բալածական  
Թոնդրակյան ես դու

## ԳՈՒՍԱՆ

Դողանջեք անմխիթար,  
Զանգակներ Հայաստանյաց,  
Հյուսիսից մինչև Բարավ

Ղողանջեք տրտմաթաի իշ,  
Լուր տարեք ամենեցուն,  
Որ ծախվեց Անին մեր սուրբ,  
Արծաթով ծախվեց Անին,  
Միածին Հիսուսի պես...

### ՔԵՐՈՎԲԵ

Ինչո՞ւ լոեցիր, լսում եմ, ասա...

### ԳՈՒՍՏԱՆ

Առաջմ միայն այդքանն եմ հյուսել:

### ՔԵՐՈՎԲԵ

Ափսոս... Երկի լավ տաղ հյուսելն էլ  
Դժվար է նույնքան, որքան պինդ քարից  
Խաչքար հանելը... Դե, ուրեմն թող  
Սուրբ առավոտն այս քեզ սատար լինի,  
Որ տաղդ բարով ավարտի բերես  
Եվ հյուսես արդար, լուսի պես արդար,  
Ծշմարիտ խոսքով, զի ճշմարտությունն  
Անհայտ է մնում դեռ ժողովրդյան...

### ԳՈՒՍՏԱՆ

Այդպես է, այո:

(Դիմամառամ դրնից երկար, ոսկեգույն մազերը սանրելով, դուրս  
է գալիք տարատութի Խուշուշը):

### ԽՈՒՇՈՒՇ

Բարի առավոտ...

Խցում տոթ էր խիստ, ասացի՝ գամ դուրս,  
Խստեմ զովի մեջ, մազերս սանրեմ...

### ՔԵՐՈՎԲԵ

Է, Խուշուշ աղջիկ, այդ Բյուզանդիոնը  
Աղարտել է քեզ: Ի՞նչ շնորհը է դա,

Ամեն առավոտ գլխաքաց զալիս,  
Նստում ես դեմս, մազերդ ես սանրում:

### ԽՈՒՇՈՒԾ

Իսկ դու մի նայիր...

### ՔԵՐՈՎԲԵ

Ու չեմ ել նայում:

Թե նստեմ, Խուշուշ, մազերիդ նայեմ,  
Երեսիդ նայեմ ու այլ տեղերիդ,  
Մուրճիս հարվածը խոտոր կը նթանա,  
Ու կիաթարվեն նախշերն իմ բոլոր:  
Ե, Խուշուշ աղջիկ, այդ Բյուզանդիոնից  
Դեռ շատ աղետ է մեր գլխին գալու:

### ԽՈՒՇՈՒԾ

Այդ Բյուզանդիոնի անունն է ելել,  
Քերովք վարպետ, մի ասա տեսնեմ,  
Քո Աօհին հիմա ինչո՞վ է պակաս  
Այդ Բյուզանդիոնից... Մի ամիս առաջ  
Աօհում էի: Կինարմատները  
Ալ ու զառ հագել, պատշգամբներում  
Տղամարդկանց հետ նստել խնջույքի,  
Գիճի վայելում, տաղ էին ասում,  
Ապա կաքավում սիրուն, կարմրած...  
Այ այսպես, նայի՞ր...

(Արձակ մազերը ծածանելով, սկսում է մանրիկ պարել):

### ՔԵՐՈՎԲԵ

Մեղա, տեր, մեղա,  
Գոնե այս մարդուց, այս ծեր գուսանից  
Քաշվեիր մի քիչ:

### ԽՈՒՇՈՒԾ

Գուսա՞ն ես, իիա՞վ,  
Դե, փանդիոդ առ, նվագիր, ու ես՝

**Մի կուշտ կաքավեմ: Ախ, վաղուց, վաղուց  
Սիրտս կարոտ է երգի ու տաղի:**

### **ՔԵՐՈՎՔԵ**

**Մամանակներս փոփոխվել են հույժ,  
Ու նոր աղետ է սիրտս գուշակում  
Հայոց աշխարհին:**

### **ԳՈՒՍՏԱՆ**

**Հայոց աշխարհից  
Ե՞րբ է աղետը անպակաս եղել:**

### **ՔԵՐՈՎՔԵ**

**Իրավ ես ասում, և սակայն այսօր  
Սղետը հազար կերպարանք ունի,  
Մերթ հայտնվում է հոռոմի տեսքով  
Ու դավի տեսքով ու մերթ ապական  
Վարքի ու բարքի, ընչաքաղության,  
Ոչ ոք չի ուզում արդար գործ անել,  
Բոլորն ուզում են վայելել միայն,  
Եվ աղարտվում է մարդկային հոգին,  
Ազգն է աղարտվում: Եվ վախենում եմ,  
Որ անզեն մնանք ժամանակների  
Ու հոդմերի դեմ: Այ, իմ աշակերտը՝  
Արամանյակը, քեզ լավ օրինակ,  
Մի տես, արևը ուր է բարձրացել,  
Իսկ նա իր համար քնած է հանգիստ...**

### **ԽՈՒԾՈՒԾ**

**Արամանյակդ ծույլ է ու անբան...**

### **ՔԵՐՈՎՔԵ**

**Ծույլ չեր նախապես, այդ պատանյակին  
Քո Սիմավոնը շեղեց իր ուղուց,**

Գլուխը լցրեց Արարստանի  
Ու Հնդստանի մարգարիտներով,  
Տեսավ՝ տղա է քաջ ու պնդաշիղ,  
Խոսք ու զրուցով միտքը պղտորեց,  
Որ հետը տանի ու քարավանի  
Պահնորդների մեջ ունենա մի քաջ,  
Զորեղ պատանի։ Իր գործը գիտի  
Բո Սիմավոնը...

### ԽՈՒՇՈՒԾ

Ի՞մ Սիմավոնը...

Տապանը շինեմ մեջ մամոած քարի,  
Դոնակը քարեմ... Ի՞մ Սիմավոնը...  
Ոչ առնում է ինձ ու ոչ էլ թողնում,  
Որ մարդու գնամ։ Գնում, կորչում է  
Հնդստանների ճանապարհներին,  
Տարին բոլորած հազիվ է գալիս.  
Խուշո՞ւշ, քեզ համար տես ինչ եմ բերել,  
Խուշո՞ւշ, քեզ համար տես ինչ եմ առել...  
Գլուխը հողեն ես քո առածի  
Ու քո բերածի... Ինձ դրա՞նք են պետք։

### ՔԵՐՈՎԲԵ

Ի՞նչ է պետք, Խուշուշ...

### ԽՈՒՇՈՒԾ

Է, ի՞նչ իմանամ,  
Թե ինձ ինչ է պետք. ինքս էլ չգիտեմ...  
Եվ գիտեմ սակայն, որ պետք է մի բան,  
Անհայտ, անծանոթ, հեռավոր մի բան,  
Որ ինքս էլ հաստատ չգիտեմ, ի՞նչ է...

### ՔԵՐՈՎԲԵ

Մարդ էլ չիմանա՞”, թե ի՞նչ է ուզում...

## ԳՈՒՍՏԱՆ

Լինում է, վարպետ, այդպես լինում է,  
Ինչ-որ ծարավ է սկսում անվերջ  
Տոշորն հոգիդ, ու չես իմանում,  
Թե ի՞նչ առ ուզում... Եվ պատեպատ ես  
Գլուխ տալիս...

(Մշանատնից ճմլկոտալով դուրս է գալիս Արամանլակը):

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Բարի առավոտ,  
Ախ, Խուշուշ, Խուշուշ, իմ ու քո բախտը  
Չի բերում կյանքում, չի բերում ու վերջ:

## ԽՈՒՇՈՒՇ

Բախտս որ բերեր, այս ավերակում  
Վեր չէի ընկնի քոռ բուի նման,  
Որ ծառան դառնամ սրա ու նրան

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Ի՞նչ երազներ եմ տեսել այս գիշեր,  
Ա՞խ, ինչ երազներ... Ի՞նչ աշխարհ էր դա՝  
Կարմիր ու կանաչ... Ի՞նչ ծառեր կային,  
Ի՞նչ ալ պտույներ, ի՞նչ զմրուխտ հավքեր,  
Ու ծով կար, Խուշուշ... Ու, խոսքը մեր մեջ,  
Իօձ թետ էիր դու...

## ԽՈՒՇՈՒՇ

Հենց այդ էր պակաս,  
Ի՞նչ էի անում ես անբանիդ թետ:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Ականչդ բեր մոտ, որ ասեմ, թե ինչ...

## ԽՈՒՅՈՒՆ

Կորի՞ր, անառակ...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Ա՞յս, ինչ երազ էր,  
Ավաղ, արթնացա, ձեռքիցս փախավ...  
Ծիշտ այնպես, ինչպես այն կայսրը, Խուշուշ,  
Փախավ քո ձեռքից... Ոտքդ պագանեմ,  
Ե՛կ, մեկ էլ պատմիր, թե ինչպես եղավ:

## ԽՈՒՅՈՒՆ

Սիրտ չունեմ, կորիր...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Պատմիր, կկորչեմ...

## ԽՈՒՅՈՒՆ

Քերովք վարպետ, զսպիր այս խենթիդ...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Այսպես, ուրեմն, մեր այս Խուշուշը  
Եվ Կատարինեն...

## ՔԵՐՈՎՔԵ

Լսել ենք, գիտենք...  
Ե՛կ, անցիր գործիդ...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Այսպես, ուրեմն,  
Մեր այս Խուշուշը ու Կատարինեն  
Կոստանդնուպոլսի մի գինետան մեջ...  
Խուշուշ, հոգեկս, գինետան անունն  
Ի՞նչ էր, մոռացա...

## ԽՈՒԾՈՒՅՑ

Գինետան անունն

Արամանյակ էր, գիծ Արամանյակ...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Հա, Բա, Բիշեցի՝ «Հարբած կառապան»...  
Մեր այս Խուզուչը և Կատարինեն  
Մատովակել են այդ գինետան մեջ,  
Ու Շերս է մտել հիրավի Բարբած  
Մի խեճթ կառապան... Խմել է, խմել,  
Դարձյալ է խմել, ոսկե դրամներ  
Շաղել աջ ու ձախ, Բետո աշքունքով  
Մոտիկ է կանչել մեր այս Խուզուչին,  
Ասել է՝ գնանք...

## ՔԵՐՈՎՔԵ

Ե՛կ, գործիդ անցիր:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

ՉԵ՛, թող սկսեմ ու գիտեմ Բաստատ,  
Որ հետո ինքը կշարունակի,  
Իսկ ինքը, վարպետ, շատ լավ է պատմում,  
Խնդալով, լալով... Սկսիր, Խուզուչ...

## ԽՈՒԾՈՒՅՑ

Կոծոծի ճման փեշիս է կպել:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Ուրեմն այսպես, մոտիկ է կանչում  
Մեր այս Խուզուչին, ասում է՝ գնանք...  
Բայց, դե, երկի այդպես չի եղել,  
Այդ Կատարինեն երկի քեզնից  
Առ ավելին է եղել գեղեցիկ,  
Ու հենց սկզբից նրան է կանչել:

## ԽՈՒԹՈՒԾ

Իսձնից գեղեցիկ... Տեսա՞ր ինչ ասաց.  
Ո՞չ, ինձ է կանչել, ինձ աշքով արեց  
Ու ասաց՝ գնանք... Ես էլ ասացի՝  
Դե գնա կորիր, հարբած կառապան...  
Ու մետո կանչեց Կատարինեին,  
Ու սա էլ գնաց... Գնաց ու հանկարծ  
Դարձավ կայսրութի... Ի՞նչ իմանայի,  
Որ հարբած ու խենթ այդ կառապանը  
Ծորերը փոխած մեծն կայսրն է  
Բյուզանդիոնի...

(Երկար, երկար ծիծաղում է, ու ծիծաղը հանկար  
է մեկեկոցի):

Խե՞նճ Կատարինե,  
Խմ սիրո՞ւմ, սիրո՞ւմ... Քիչ վայելեցիր:  
Հետո գլուխը կտրեցին խեղճի,  
Ի՞նչ գլուխ ուներ, սիրում, գեղեցիկ  
Ու լիքը լցված սատանաներով...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Դե՛, լացու կտրիր... Այդ արցունքներդ է  
Խոշոր են այնքան, ասես ամպրոպի  
Կաթիւներ լինեն... Ծիշոն ասա, Խոշուշ  
Եթե կայսրութի դառնայիր հանկարծ,  
Ու ես էլ հանկարծ Պոլիսսդ գայի,  
Ինձ քեզ սիրեկան չեի՞ր պահի դու...

## ԽՈՒՇՈՒԾ

Օուն կպահեի քեզ դուանս մոտ...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Աստված է վկա, սիրով կգայի:  
Խոշուշ, լսել եմ, որ Սիմավոնը՝  
Քո սիրեկանը...

## ԽՈՒՅՈՒՆ

Լեզուի քե՞զ քաշի...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Լա՞վ, լա՞վ, բան չասի, սիրենանո չէ,  
Քո ազգականն է, մորքուրիր, տղան,  
Պապիդ հորեղբոր տղայի տղան,  
Ի՞նչ ասեմ, ել ով... է, միով բանիվ,  
Քո Սիմավոնը: Ասում են արդեն  
Պարտավ է հասել ու այսօր-էգուց  
Այստեղ կլինի...

## ԽՈՒՅՈՒՆ

Կլինի, քե՞զ ինչ...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Գլուխս կառնեմ ու Բետը կերթամ...  
Թե չէ՝ ինչ է սա, նստիր ու տաշիր,  
Տաշիր, հա տաշիր, մանդրիկ տաշիր,  
Փշուր առ փշուր... Մինչև պստիկ  
Մի ճախշ դուրս բերես...

## ՔԵՐՈՎԲԵ

Է՛, Արամանյակ,  
Բան չես Բաւկանում դու դեռ աշխարհից:  
Բան չես Բաւկանում վաստակից արդարու

(Պշեանատնից դուրս է գալիս Գորգինը):

## ԳՈՐԳԻԿ

Բարի առավոտ...

## ՔԵՐՈՎԲԵ

Բարին Բետը գա:

## ԳՈՐԳԻԿ

Զի գալիս սակայն... Նայում եմ ահա  
Շամապարհմերին. ոչ ձիու դոփյուն,  
Ոչ ուղտի զանգակ ու ոչ էլ անգամ  
Զոռոցն է լսվում էշ-ավանակի:

## ԽՈՒՅՈՒԾ

(Միծաղելով ցուց է տալիս Արամանյակի կողմը):

Քիչ առաջ գայիր ու կլսեիր...

## ԳՈՐԳԻԿ

Մի՛ խնդա, աղջիկ, գործերս վատ են  
Ու պաստիկ են վատ...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Խիստ մի դժգոհիր,  
Տե՛ս, ինչ-որ մեկը գալիս է ահա:

## ԳՈՐԳԻԿ

Ե՛, ոտավոր է, մախաղն էլ ուսին,  
Մի ծակգրպանի մեկն է երնի:

(Ծամփեքի փոշին մագ-մորուքի մեջ մտնում է Աղամոս, որ  
Բոգնած է ու մի քիչ Բարբած):

## ԱՂԱՄՈՍ

Բարի ողջոյն ձեզ, հարգարժան այրեր...

## ՔԵՐՈՎԲԵ

Բարին արևիդ, ճամփորդ բարեկամ:

(Աղամոսի Բայացքը Բանկարծ դիպչում է Խուզուշին ու երկար ժա-  
մանակ չի պոկվում):

## ԱՂԱՄՈՍ

Իչևանատերն ո՞վ է ձեզանիշ:

## ԳՈՐԳԻԿ

Ասենք թե ես եմ, դու խոսքդ խոսիր:

## ԱՂԱՄՈՍ

Օթևան կտա՞ն...

## ԳՈՐԳԻԿ

Եթե բորոտ չես  
Եվ ունես դրամ...

## ԱՂԱՄՈՍ

Բորոտովթյունը  
Երևի քեզ պես մարդկանց է սիրում,  
Իսկ դրամ ունեմ:

## ԳՈՐԳԻԿ

Ո՞վ ես, ինչացո՞ւ...

## ԱՂԱՄՈՍ

Մարդ եմ...

## ԳՈՐԳԻԿ

Տեսնում եմ, բայց ի՞նչ մարդ ես դու,  
Նրանցից Բո չե՞ս, Էն, որ քշեցին,  
Որ աքսորեցին.։

## ԱՂԱՄՈՍ

Թոնդրակյա՞ն...

## ԳՈՐԳԻԿ

Հա, Բա,  
Նրանցից Բո չե՞ս...

## ԱՂԱՄՈՍ

Չէ, ճրանցից չեմ,  
Աստծո կավից շաղված, շաղախված  
Մարդ եմ ինձ համար...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Բայց երևում է,  
Որ շաղախելիս աստված մի քիչ էլ  
Գինի է խառնել քո ասած կավին...

## ԱՂԱՄՈՍ

Իսկ ի՞նչ իմացար, որ քիչ է խառնել...  
Կուզեկի՞ր սակայն, որ ե՛ս գուշակեմ,  
Թե քեզ հունցելիս աստված ինչեր է  
Խառնել քո կավին...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Գրբա՞ց ես, գուշա՞կ...

## ԱՂԱՄՈՍ

Հեմց այդ եմ, որ կամ...

## ԽՈՒԾՈՒԾ

Իրա՞վ, գուշա՞կ ես...

## ԱՂԱՄՈՍ

Ասենք, թե իրավ, ի՞նչ կցանկայիր...

## ԽՈՒԾՈՒԾ

Կցանկանայի, որ բախտու բացես:

## ԱՂԱՄՈՍ

Օ՛, շատ դժվարին քան ես պահանջում:  
Կանացի հոգին տարրալուծելը  
Բարդ է, խիստ է քարդ:

## ԽՈՒԾՈՒԾ

Եվ սակայն ինչո՞ւ...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Ինքդ չգիտե՞ս... Քո այդ հոգու մեջ  
Ցոր սատանա կա:

## ԽՈՒԾՈՒԾ

Դու ձայնդ կտրիր:

## ԱՂԱՄՈՍ

Այո, խիստ բարդ է, սակայն ձեռքդ տուր  
Եվ աշքերիս մեջ նայիր ակնդետ:  
Այսպես, ուրեմն, նախ սահմանված էր,  
Որ դու լինեիր երկնային էակ...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Հո՛, հո՛, Խուշուշը՝ երկնային էակ...

## ԽՈՒԾՈՒԾ

Էլի մեջ մտավ, թո՛ւի, ձայնդ կտրիր...

## ԱՂԱՄՈՍ

Բայց հողը ծանր է ու քեզ ցած քերեց:  
Եվ սահմանված էր, որ դու ծովահարս  
Լինեիր ճան... Զի վարսեր ութես  
Մովային հարսի...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Հո՛, Բո՛, Բո՛, Խուշուշ,  
Երկնքից իջար ու ծովը մտար,  
Չէ, շա՛տ սիրուն է խոսում այս մարդը,  
Ուսյալ կլինի...

## ԱՂԱՄՈՍ

Եվ սակայն ծովն է  
Դաժան է սաստիկ ու ափ նետեց քեզ;  
Բայց քո հոգու մեջ չի մարել երբեք  
Հուրը երկնային և չի խաղաղվել  
Խոռովը ծովի... Խոռվ սիրտ ունես  
Ու ման սիրուլ, չես սիրել սակայն,  
Տառապել ես լոկ. շատ ես տառապել...

## ԽՈՒՇՈՒՇ

Դու սուրբ ես, եղալո...

## ԱՂԱՄՈՍ

Եվ սպասում ես,  
Սպասում մեկին, ոռ հեռուներից  
Պիտի գա շուտով ու սեր քերի քեզ:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Այդ մեկը ահա ճիշտ գուշակեցիր,  
Սիմավոնն է դա, գալու է շուտով:

## ԱՂԱՄՈՍ

Ով է՝ չգիտեմ: Եվ գիտեմ սակայն,  
Որ գա պիտի նա, հասակիդ նայի,  
Մազերիդ նայի, նայի աչքերիդ  
Առեղծվածներին... Հոգուդ մեջ նայի,  
Հաղորդվի պիտի հոգուդ կրակին  
Եվ այդ կրակից խենթանա պիտի...

## ԽՈՒՅՈՒՅԾ

Թող տերը լսի քո ձայնը, եղբայր,  
Դու սուրբ ես իրավ...

## ԳՈՐԳԻԿ

Սուրբ է, չէ, չէ մի,  
Խենթ է պարզապես, հարբած է ու խենթ:

## ԱՂԱՄՈՍ

Չգիտե՞ն սակայն, որ խենթ լինելը  
Առավել է լավ, քան լինել հիմար...

## ԳՈՐԳԻԿ

Դե, դե, հարբած ես, բայց լեզվիդ կապը  
Չեռքիդ մեջ պահիր...

## ԱՂԱՄՈՍ

Թե լեզվիս կապը  
Չեռքիս մեջ լիներ, հիմա երևի  
Եպիսկոպոսի կարգ կունենայի,  
Ու դու ծնկածալ կիշճեիր իմ դեմ:

## ԳՈՐԳԻԿ

Եպիսկոպոսի՞... Ես հենց էն գլխից  
Խսկույն հասկացա, որ դու կարգալույժ  
Վանական ես մի, վանքից վոնդել,  
Դուրս են արել քեզ...

## ՔԵՐՈՎԲԵ

Կարծյոք, այս մարդը  
Իրավ է ասում:

## ԱՂԱՄՈՍ

Այո՛, այդ մեկը  
Իրավ է ասում:

## ՔԵՐՈՎՔԵ

Եվ սակայն, եղբայր,  
Վասն ինչո՞ւ են քեզ կարգալուց արել:

## ԱՂԱՄՈՍ

Ծշմարիտն ասած, ինքս էլ չգիտեմ...

## ԳՈՐԳԻԿ

Երևի վասն հարբեցողության...

## ԱՂԱՄՈՍ

Երևի... Սակայն իմացիր, եղբայր,  
Որ գինին բնավ գինի չէ միայն,  
Այլ ճշմարտություն... Գինին է Բաճախ  
Ծշմարտությունը լուսերես հանում:  
Նա բարի մարդուն դարձնում է իսկույն  
Առավել բարի, քաջին՝ առավել  
Քաջ ու աներկյուղ, ճշմարտալսուին՝  
Առավել արդար ու պայծառամիտ,  
Իսկ Բիմարներին՝ առավել Բիմար,  
Այդ իսկ պատճառով երևի կյանքում  
Չես խմում երբեք ու լավ ես անում:  
Չխմես երբեք:

## ԳՈՐԳԻԿ

Եվ խմեմ պիտի...

## ԱՂԱՄՈՍ

Քո գործն է, խմիր...

## ԽՈՒՇՈՒԾ

Իսկ ինձ էլ ոչինչ  
Չումն՞ս ասելու...

## ԱՂԱՄՈՍ

Ունեմ, այն էլ շատ,  
Այն էլ անսպառ... Եվ թողնենք սակայն,  
Որ մնացյալը քեզ գիշերային  
Աստղերը ասեն, Թովերը ասեն  
Թաքու շշուկով, խոտերը ասեն  
Սոսափով քնքուշ...

## ԽՈՒԾՈՒԾ

Աստղե՞՞րը, ինչպե՞ս...

## ԱՂԱՄՈՍ

Կասեն, կլսես...

## ԳՈՐԳԻԿ

Ասում եմ խենթ է,  
Ու չեք հավատում...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Խելքիդ բանը չէ,  
Իսկ ես հասկացա միտքը այս մարդու:

## ՔԵՐՈՎԲԵ

Շատ բան հասկացար, բայց չհասկացար,  
Որ վաղուց ժամն է գործի անցնելու:  
Դե եկ, մուրճդ առ ու գործիդ անցիր:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Նախ, քիչ հաց ուտենք, Քերովբեն վարպետ,  
Դմ որովայնո դատարկ է լրիվ:

## ՔԵՐՈՎԲԵ

Իմն էլ է դատարկ... Զգում եմ սակայն,  
Որ երբ դատարկ է իմ որովայնը,

Արթուն է միտքս, և աչքս է արթում,  
Ու այդ պահերին նախշերս առավել  
Լավ են ստացվում...

## ԱՂԱՄՈՍ

Իմաստուն խոսեց,  
Այդպես է, այո, փորձովս գիտեմ:

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Իմաստուն խոսեց... Տես, ոնց է քրտնել,  
Մեջքը ջուր է ողջ...

## ՔԵՐՈՎՔԵ

Քրտինքը, տղաս,  
Օգտակար է խիստ, ճան է դուրս մղում  
Մարդկային մարմնից ամենայն աղտոտ,  
Թունավոր տարրեր, և դառնում է մարդ  
Սուարյալի պես մաքուր ու արդար:

## ԱՂԱՄՈՍ

Դարձյալ վարպետը իմաստուն խոսեց:

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Բայց որովայնս օգուտ չունեցավ:

## ՔԵՐՈՎՔԵ

Է, Արամանյակ, համբերությունդ  
Եղունգաշափ է... Հնոց խոսք է սա՝  
Ասում են. ով որ համբերանք ունի,  
Զրադաց ունի, որ կլոր տարին  
Սղուն է աղում... Խուշուշ, բեր սինին:

(Աղամոսին)

Իսկ դու, բարեկամ, անունդ էլ չասիր...

## ԱՂԱՄՈՍ

Աղամոս...

### ՔԵՐՈՎԲԵ

Նստիր, նստիր, Աղամոս,  
Ծամփից ես գալիս, սոված կլինես,  
Նստիր ու մեզ հետ աղ ու հաց կիսիր...

## ԱՂԱՄՈՍ

Ծամփից եմ գալիս, սոված չեմ սակայն,  
Չեմ սովում երբեք... Թե գինի ունեք,  
Մի գավաթ, անշուշտ, անուշ կանեի:

### ՔԵՐՈՎԲԵ

Գիճի էլ ունենք:

## ԱՂԱՄՈՍ

Դե, փառք աստծո:

(Խուշուշը բերում է սինին ու դնում վարպետի առաջ):

### ՔԵՐՈՎԲԵ

Նստիր, Աղամոս, մոտ արի, Գուսան...

## ԱՂԱՄՈՍ

Ես այս գավաթով կենացդ եմ խմում,  
Պատվական վարպետ: Արդար մարդ ես դու  
Եվ շատ ճշմարիտ խոսքեր ասացիր:  
Ծշմարիտ խոսքեր շատերն են ասում,  
Եվ սակայն, ավաղ, քշերն են միայն  
Ծշմարիտ խոսքը վերածում նյութի,  
Գործի, հրաշքի: Քո այս խաչքարը  
Ծշմարտություն է ու հրաշալիք:  
Կենացդ լինի:

## **ՔԵՐՈՎՔԵ**

**Ողջ լեր, Աղամոս...**

## **ԱՂԱՄՈՍ**

**Խշեանատեր, ինձ տե՞ղ պիտի տաս**

## **ԳՈՐԳԻԿ**

**Նախ դրամը տուր...**

## **ԱՂԱՄՈՍ**

**Ա՛ռ, դրամի առ  
Եվ ամուր պահիր: Դրամը ձեռքից  
Հանկարծ թռչելու հատկություն ունի:**

## **ԳՈՐԳԻԿ**

**Իմ ձեռքը պինդ է: Խուշուշ, տար սրամ  
Ու տեղավորիր...**

## **ԱՂԱՄՈՍ**

**Գնացինք, Խուշուշ...**

**(Գնում են)**

## **ԳՈՐԳԻԿ**

**Բան չհասկացա... Խենթի է նման:**

## **ԱՐԱՄԱՆՑԱԿ**

**Խակ ինձ դուր եկավ այդ կարգալուծ...**

## **ԳՈՐԳԻԿ**

**Հարկավ դուր կգա: Դրա գլխի մեջ  
Հով է ու քամի, ինչպես քո գլխում:**

## ՔԵՐՈՎԲԵ

Չէ, չեղավ, Գորգիկ... ԻԱԾ էլ այդ մարդը  
Դուր եկավ իրոք, թեև մի սակավ  
Խորհրդավոր է ու տարօրինակ:

## ԳՈՐԳԻԿ

Հայց աշխարհի ճանապարհներին  
Ծատ են շատացել խենթ ու ցնորված  
Ծրջմոլիկները:

## ՔԵՐՈՎԲԵ

Բայց սա ուրիշ է...

## ՎԱՐԱԳՈՒՅՐ

### Երկրորդ պատկեր

(Գիշեր: Իջևանառան կամարների տակ սեղան է որված:  
Պատերին գամլած մոմակալներից մոսնը լույս ու ստվերներ են  
տարրութերուն: Սեղանի շուրջը նստած են Աղամոսը, Քերովբեն,  
Արամանյակը, Գորգիկը, Գուսանը. Ծաղրածուն, լարախաղացները,  
աճպարարները: Քիչ այն կողմ միայնակ նստած է Խուզուշը: Սե-  
ղանին գինու գավեր են դրված, ուտելիք: Ծաղրածուն ելուս է  
տեղից ու բարձրացնում գալստթը):

## ԾԱՂՐԱԾՈՒ

Խմելուց առաջ մի առակ ասեմ.  
Մի ոմն լավ մարդ խմող էր սաստիկ  
Եվ տկարություն ունեցավ աչքի...  
Բժշկին դիմեց, ու սա էլ ասաց.  
«Գինու գավաթին ծեռք չտաս բնավ,  
Այլապես իսկույն կուրանաս պիտի»:  
Իսկ նա գավաթը ձեռքն առավ, ասաց.  
«Ին, մնաս բարով, իմ աչքերի լույս,  
Լավ է կորցնեմ լուսամուտներս,  
Քան ամբողջ տունս ավերակ տեսնեմ»...  
Ես էլ նույնն ասեմ ու խմեմ գինիս:

## ԱՂԱՄՈՍ

Ես էլ նոյնն ասեմ, Ծաղրածու եղբայրի  
Խմելուց հետո աշխարհը աչքիս  
Ուրիշ է թվում... Ի՞նչ սքանչելի  
Վայր է, նայեցեք: Արարատ լեռան  
Ծերմակ կատարը ցոլանք է տախիս  
Ու շառափիղ է նետում աստղերին  
Ինչ վսեմ լյառ է... Եվ այսպիսի լյառ,  
Հավատացեք ինձ, ոչ մի տեղ չկա,  
Ոչ մի աշխարհում...

## ՔԵՐՈՎՔԵՑ

Ծա՛տ աշխարհներ են  
Տեսել, Աղամոս...

## ԱՂԱՄՈՍ

Ծա՛տ... Թափառել եմ  
Աշխարհե-աշխարհ ու երկրե-երկիր:  
Իմ այս ոտքերին փոշիները կան  
Արարստանի ու Հնդստանի:  
Արարստանի իմաստունների  
Զրույցն եմ լսել ու մատյաններն եմ  
Ընթերցել նրանց: Հնդիկ մոգերին  
Ընկեր եմ եղել, շատ բան եմ տեսել  
Ու շատ բան ուսել...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Աղամոս եղբայր,  
Այդքան աշխարհք ես տեսել դու կյանքում,  
Այդքան թափառել... Ինձ չէի՞ր ասի,  
Թե ո՞ւր են արդյոք գնում, վերջանում  
Ծանապարհները համայն աշխարհի...

## ԱՂԱՄՈՍ

Գնում են, տղա, ու չեն վերջանում:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Այդ ինչո՞ւ, ինչպե՞ս, պետք է որ մի տեղ  
Վերջանան սակայն...

## ԱՂԱՄՈՍ

Ու չեն վերջանում  
Քանզի աշխարհը գնդի ձև ունի...

(Բոլորը գարմացած սկսում են իրար նայել, իսկ Գորգիկը  
քրքչում է):

## ԳՈՐԳԻԿ

Գնդի ձև, Բա՛-Բա՛... Լսեցի՞ք, մարդիկ,  
Աչքովս եմ տեսնում, որ տափարակ է,  
Իսկ սա ասում է գնդի ձև ունի:  
Որ ասում էի խենթ է, ցնորված,  
Չէիք հավատում, դե հավատացեք...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Ես ել ասում եմ, մարդու ականջը  
Ինչու է այսպես պստիկ մնացել...  
Արի մի ասա՛ շատ բան է լսում  
Ու կուշ է գալիս խեղճը ամեն օր...

## ՔԵՐՈՎԲԵ

Եվ դու դա լո՞ւրջ ես ասում, Աղամոս...

## ԱՂԱՄՈՍ

Հարկավ, Քերովբե...

## ՅՈՐԳԻԿ

Գնդի ձև, Բա՛-Բա՛...  
Դեղումի նման... Սատանան ասես  
Խտուտ է տալիս, ու չեմ կարենում

Քրիչս պահել... Բա դա ինչպե՞ս է,  
Որ ես վրայից ցած չեմ գլորվում...

### ԱՂԱՄՈՍ

Դու չես գլորվի, նստուկդ հաստ է:

### ՔԵՐՈՎԲԵ

Բա՛ չեմ հասկանում, դու լո՞րջ ես ասում:

### ԱՂԱՄՈՍ

Մի՞թե, Քերովքն, ես կարող եմ քեզ  
Անլուրջ բան ասել... Բայց ե՛ս չեմ ասում,  
Ինձանից առաջ, շատ ու շատ առաջ,  
Դա իր մատյանում գրել, ասել է  
Մի հանճարամիտ, իմաստուն մի այր՝  
Անանիա կոչյալ մեծ Ծիրակացին:  
Հզոր այր էր նա, ծանոթ էր նրան  
Ծարժմունքն աստղերի ու տիեզերաց  
Գաղտնիքը խորին ու անմեկնելի...

### ԱՐԱՄԱՆՅԱԿ

Աշխարհը կլո՞ր... Հրաշալի է,  
Ա՛խ, գլոր-գլոր ես այդ աշխարհով  
Գնայի անվերջ ու ճանապարհին  
Գտնեի հանկարծ ես այն երկիրը,  
Որ հենց այս գիշեր երազում տեսա...  
Ա՛խ, ինչ աշխարհ էր, կարմիր ու կանաչ,  
Ի՞նչ ծառեր կային, ի՞նչ ալ պտուղներ,  
Ի՞նչ զմրուխտ հավքեր ու ծո՛վ կար կապույտ...

### ՔԵՐՈՎԲԵ

Աղամոս եղբայր, ես միտք եմ անուն,  
Որ գուցե մարդն այդ՝ Անանիա կոչյալ  
Այդ Ծիրակացին, իրավ է ասել:  
Մեծ ճշմարտությունն այդպես է, այո՛,

Նա խենթության է ճախապես նման  
Ու ենթակա է ծաղր ու ծանակի  
Եվ հետո է լոկ լույսի պես պարզվում...

## ԱՂԱՄՈՍ

Այո, լույսի պես, բայց մինչ պարզվում է,  
Լույսն արարողը մեռած է լինում,  
Եվ սկսում են մեծարել նրան...  
Ինչ որ է, խմենք... Խուշուշ, ինչո՞ւ ես  
Միայնակ նստել... Ե՞կ, դու ել խմիր...

## ԽՈՒՇՈՒՇ

Կխմենմ, այո՛, ծարավ եմ սաստիկ:

(Մոռանում է, նստում և միանգամից դառարկում գտվաթը):

Ինչ երանություն, երակներս ի վար  
Ասես թե աստծո օրինանքն է Բոսում,  
Ծրագն է Բոսում ամենաչքնաղ...  
Այս, Գուսան եղբայր, մի լավ տաղ ասա,  
Սիրտս կարոտ է երգի ու տաղի...

## ԳՈՒՍԱՆ

Սիրուն աղջիկս, ծերացել եմ ես  
Եվ մոռացել եմ բոլոր տաղերը  
Սիրո, վայելքի ու խրախնության,  
Եվ Բիմա արդեն միայն մի տաղ է  
Հնչում սրտիս մեջ...

## ԱՂԱՄՈՍ

Հենց այդ տաղն ասա:

## ԳՈՒՍԱՆ

Ասե՞մ, ինչո՞ւ չե...  
Ղողանջեք անմխիթար,

Զանգակներ Հայաստանյաց,  
Հյուսիսից մինչև Բարավ  
Ղողանջեք տրտմաթախիծ,  
Լուր տարեք ամենեցուն,  
Որ ծախվեց Անին մեր սուրբ,  
Արծաթով ծախվեց Անին՝  
Միածին Հիսուսի պես...

Քե՛զ ասեմ, Անի քաղաք,  
Քե՛զ ասեմ, սքանչագույն,  
Քե՛զ ասեմ և մանավանդ  
Փաղքն ասեմ մայր տաճարիդ,  
Տաճարդ ոտից գլուխ  
Աստծո հարսն էր ասես,  
Երեսին՝ քողը լուսո,  
Ծրթունքին՝ լուսո աղոթք...

Հոռոմաց կայսրը պագշտ  
Աչք դրեց այդ սուրբ հարսին,  
Հոռոմաց կայսրը պագշտ  
Ցանկացավ Անին զավթել...  
— Ո՛չ, երբեք,— բամբ որոտաց  
Գագիկը՝ մանուկ արքան,  
— Ո՛չ, երբեք,— արձագանքեց  
Ակնոր Պահլավունին:

Եվ կայսրը Մոնոմախոս  
Փրփրեց գահին նստած,  
Եվ կայսրը Մոնոմախոս  
Հեղեղեց լուտանք ու թույն,  
Եվ կայսրը Մոնոմախոս  
Գումարեց գալլերի գունդ  
Եվ հայոց հողը հղեց  
Խախտաս զորավարին:

Եվ եկավ գունդը գալլոց,  
Ծովացավ ի դեմ Անվո,

Ծովացան ի դեմ Անվո  
Նիզակներ, բարան ու ճետ,  
Խսիտան ասաց՝ բերեք,  
Բանալին տվեք Անվո  
Եվ փոեք ոտքերիս տակ  
Իբրև լաթ դրոշը ձեր:

Եվ Անին ի պատասխան  
Հոհոաց զվարթ ու խենթ,  
Եվ Անին ի պատասխան  
Բյուրավոր զանգեր հարեց,  
Ալևոր Պահլավունին  
Իր աշխետ ձիուն հեծավ,  
Ալևոր Պահլավունին  
Սեգ բաշն իր թափահարեց...

Քե՛զ ասեմ, Պահլավունի,  
Ալևոր սպարապես,  
Քե՛զ ասեմ, այր գերագույն,  
Քե՛զ ասեմ, արծվի զարն,  
Քո ձեռքը թև էր արծվի,  
Սակայն թև բռունցքավոր,  
Եվ բռունցք, որ շանթակերա  
Մրով է շարունակվում:

Ալևոր արծվի նման  
Կոնչաց Պահլավունին,  
Եվ Անվո դարպասներից  
Դուրս սուրաց քաշերի. հետ,  
Լեռները ասեն հեռվից  
Տեռունուն գլուխ տվին,  
Շառաշեց գեւն Նիսուրյան  
Եվ քաջի գովիքը վիպեց...

Արշավեց Պահլավունին,  
Միսրմվեց ոսոխի մեջ,  
Հավքերի երասի մեջ

Արծիվն է այդպես խրվում,  
Առյուծն է այդպես թռչում  
Եղջերվաց Բոտին ընդդեմ,  
Ամպերի գնդերի դեմ  
Կայծակն է այդպես շաշում...

Եվ եղավ ահեղ նախճիր,  
Վիրավոր գայլի նման  
Կաղկանձեց զորքը հոռոմ  
Եվ փախավ, որչը քաշվեց:

### ԾԱՂՐԱԾՈՒ

Գուսան, Յերիր ինձ, մի պահ ընդհատեմ,  
Ասում, խոսում են, թե Խախտասը  
Մատակ ձիով է Անիից փախել...

### ԱՐԱՄԱՆՅԱԿ

Ի՞նչ տարբերություն, մատակ ձիով է  
Փախել Անիից, թե՝ որձ նժույգով:

### ԾԱՂՐԱԾՈՒ

Մատակ ձին, տղաս, միզելու համար  
Չի կանգնում ճամփին,  
Այդ իսկ պատճառով փախուստի համար  
Մատակն է հարմար:

### ԱՐԱՄԱՆՅԱԿ

Հա՛-հա՛-հա՛-հա՛-հա՛...

### ԳՈՒՍԱՆ

Այդպես է, այո:

### ՔԵՐՈՎՔԵ

Դե, շարունակիր...

## ԳՈՒՍՏԱՆ

Ետ դարձավ Պահլավունին,  
Մազերին իր մոխրագույն  
Նստել էր ռազմի փոշին,  
Ասես սուրբ լույս էր թառել...

Եվ կայսրը Մոնոմախոս  
Փրփրեց ռսկե գահին,  
Եվ կայսրը Մոնոմախոս  
Իր դժնի խոհը խորհեց.  
Չե՞ք տալիս Աճին սրով,  
Չե՞ք տալիս Աճին սիրով,  
Ես Աճին դավով կառնեմ  
Ու կառնեմ խարդավանքով...

(Գուսանը խոնարհում է գլուխն ու երկար լուս):

## ԱՂԱՄՈՍ

Ինչո՞ւ լոեցիր, մնացյալն ասա,  
Պատմիր դավն այդ նենգ ու անարգանքի  
Սյուներին գամիր դավաճաններին...

## ԳՈՒՍՏԱՆ

Առայժմ միայն այսքանն եմ հյուսեն...

## ԱՇԱՄՈՍ

Ափսո՞ս, բյուր ափսոս...

## ՔԵՐՈՎՔԲԵ

Ո՞ղջ լինես, Գուսան,  
Որ քո շանթակերպ, ճշմարիտ խոսքով  
Ծանթես Բավիտյան այդ վեստ Սարգիսին  
Ու մնացյալին... Մեղա, տե՛ր, մեղա,  
Լեզուս չի դառնում, խոսում են սակայն,  
Որ այդ Աենգ դավին, այդ Աենգ վաճառքին  
Մասնակից է և Բայրապետն Հայոց...

## ԱՂԱՄՈՍ

Մասնակի՞ց, օ, ո՞չ... Դավաճաններից  
Առաջինն է նա...

## ԳՈՐԳԻԿ

Ես չեմ հավատում,  
Ոխ ունես իր դեմ...

## ԱՂԱՄՈՍ

Ոխ, այն էլ ահեղ,  
Ահավոր մի ոխ, զորավոր մի ոխ...

## ԳՈՐԳԻԿ

Երևի ինքն է հերետիկոսիդ  
Կարգալույթ արել...

## ԱՂԱՄՈՍ

Եվ դա է նրա  
Այն միակ բարի ու արդար գործը,  
Որ նա արել է աշխարհիս վրա...

## ԳՈՐԳԻԿ

Իսկ իմ կարծիքով սուրբ Հայրապետը  
Մեղք չունի այդտեղ: Մեր Գաօհիկ արքան  
Անխոհեմաբար ինքը վեր կացավ,  
Գնաց Բյուզանդիոն... Գնաց և, ավաղ,  
Կալանվեց այնտեղ:

## ԱՂԱՄՈՍ

Անխոհեմաբա՞ր...  
Տասը անգամ էր Մոնոմախոսը  
Կանչել Գագիկին, բայց նա անսալով

Մեր Պահլավունու իմաստուն խոսքին,  
Ձեր շարժվել տեղից... Դե, լսիր Բիմա,  
Քերովե վարպետ... Եթե մոտդ գար  
Փոխանորդն աստծո, կաթողիկոսը  
Ամենայն հայոց, և իր գրիչը  
Թաթարիսեր ոչ թե սև մելանի մեջ,  
Այլ պատարագի գինու մեջ արդար,  
Որ Քրիստոսի արյունն է կարմիր,  
Եվ այդ սուրբ արյամբ երդման թուղթ գրեր,  
Թե Մոնոմախից քեզ չի լինելու  
Եվ ոչ մի վտանգ, և ոչ մի վնաս,  
Չէի՞ր հավատա ու չէի՞ր արդյոք  
Գնա Բյուզանդիոն...

### ՔԵՐՈՎԲԵ

Կհավատայի ու կգնայի:

### ԱՂԱՄՈՍ

Գագիկ արքան էլ, որ այր էր արոար  
Ու աստվածաւեր, հավատաց ահա,  
Այդ միակ անգամ չանսաց իւրիոդին  
Քաջ Պահլավունու, ելավ ու գնաց...  
Գնաց ու չեկավ: Եվ վաճառեցին  
Մեր անտեր Անին... Անին արծաթով,  
Հողը, մայր հողը, որ մեր քաջ նախնյաց  
Աճյունն է արդար, ծախեցին, այո:

### ԱՐԱՄԱՆՅԱԿ

Մեղա քեզ, աստված, մի՞թե այդ ամենն  
Այդպես է եղել:

### ԳՈՒՍՏԱՆ

Տարաբախտաբար

Այդպես է եղել:

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Օ՛, այդ ամենից  
Արյունս արդեն մաղձի է փոխվում:

## ԱՂԱՄՈՍ

Իսկ իմը վաղուց, վաղուց է փոխվել...  
Եվ այդ մաղձը սև՝ սև օճ կդառնար  
Ու ինձ կխայթեր, եթե այդ մաղձից  
Ու այդ վրեժից Բոգուս մեջ Բանկարծ  
Ծնունդն իր չառներ մի սուրբ Բայտմություն:  
Ես հրաշք պիտի անեմ աշխարհում:  
Պիտի մեր ցրիվ զորքը գումարեմ  
Եվ զինեմ պիտի լեռնականների գնդերը վայրի  
Ու այդ հեղեղը բաց պիտի թողնեմ  
Հոռոմաց վրա...

## ՔԵՐՈՎՔԵ

Բայց ինչպե՞ս, ինչո՞վ...

## ԱՂԱՄՈՍ

Ոսկո՞վ, գուտ ոսկով...

## ՔԵՐՈՎՔԵ

Եվ ունե՞ս ոսկի...

## ԱՂԱՄՈՍ

Չունեմ, բայց շուտով, ჩեմց վաղը գուցե  
Կունենամ անչափի...

## ՔԵՐՈՎՔԵ

Գուցե թաքուցյալ  
Գանձի տե՞ղ գիտես...

## ԱՂԱՄՈՍ

Գանձի տե՞ղ, օ, ոչ...

## ՔԵՐՈՎՔԵ

Էլ ինչպե՞ս հապա...

## ԳՈՐԳԻԿ

Խենթ է, խելագար...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Նա հավատով է այդ ամենն ասում:  
Հավատով ասված ամենայն խոսքի  
Պիտի հավատալ:

## ԱՂԱՄՈՍ

Ուկով կիցկեմ  
Ես հոռոմների կոկորդը ազահ  
Եվ ոսկե շղթա կդնեմ նրանց  
Զորավարների ազահ ձեռքերին,  
Ետ կառնեմ Անին, եւս կառնեմ հողը...

## ՔԵՐՈՎՔԵ

Խորհրդավոր է խոսքի, բարեկամ,  
Ու չեմ հասկանում քեզանից ոչինչ,  
Մերթ բարբառում ես այնքան իմաստուն  
Եվ այնքան արդար, ասես քո շուրջով  
Ձրույց են անում մեր նախնիները...  
Եվ մերթ անհեթեթ բաներ ես ասում,  
Ու մոլորվում եմ ու չեմ հասկանում...

## ԱՂԱՄՈՍ

Եվ սակայն շուտով հասկանաս պիտի...  
Ինձ գինի լցրեք...

## ԽՈՒՅՈՒԽ

Եվ ինձ է՝ գինի...

Աստված իմ, աստված, այս ի՞նչն է այսպես  
Տոշորում հոգիս, խմել եմ ուզում...

## ԳՈՐԳԻԿ

Լսածներից իմ ականջները  
Ղծղժում են դեռ, բայց քարավանի  
Զնդոց եմ լսում...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Խուշուշ, կա, չկա,  
Քո Սիմավոնն է!

(Աղամոսը երկար նայում է Խուշուշին, ու սա էլ չի փախց-  
մում իր հայացքը):

## ԱՇԱՄՈՍ

Ի՞նչ Սիմավոնն է...

## ԽՈՒՅՈՒԽ

Վաճառական է:

## ԱՂԱՄՈՍ

Եվ դու իրե՞նն ես...

## ԽՈՒՅՈՒԽ

Իրենն եմ այնքան, որքան իրենն է  
Աստղը երկնքում և օդում ճախրող  
Վայրի տատրակը...

## ՔԵՐՈՎԲԵ

Ուղտի քարավան... \  
Զարմանալի է ուղտ անասունը, /

Աստծո անճոռնի այդ արարածը  
Նվագ է սիրում, զանգակի նվագ:  
Օրերով կերթա ծարավ, անոթի  
Ու բան չի ուզի, միայն թե լինի  
Զանգակի նվագ... Համբերատար է:

### ԳՈՐԳԻԿ

Բայց և ոխակալ...

### ԱՂԱՄՈՍ

Բարությունից է,  
Համբերանքից է դառնում ոխակալ:  
Ծա՛տ է համբերող, բայց երբ տեսնում է,  
Որ համբերանքը չարաշահում են,  
Քինոտում է նա, դառնում ոխակալ:

### ՔԵՐՈՎԲԵ

Հապա ի՞նչ անի...

### ԾԱՂՐԱԾՈՒ

Մի զարմանալի  
Բնույթք էլ ունի: Խսկույն զատում է  
Լավ ու վատ մարդուն: Եվ վատի դեմքին  
Հանկարծ այնպիսի թույնով է թքում,  
Որ սա օրերով երեսը բռնած  
Մղկտում անվերջ ու գալարվում է:

(Զանգակների ձալնը գիշերվա միջով կարկաչում, հասնում է իշխանատանը և լուսն: Գորգիկը դուրս է գալիս ու խսկուն վերադառնում):

### ԳՈՐԳԻԿ

Այո, հիրավի, Սիմավոնն է դա,  
Խուշո՛ւշ, շտապիր, գնա ընդառաջ...

## ԽՈՒԾՈՒՅԹ

Հենց այդ էր պակաս...

### ԳՈՐԳԻԿ

Սատանաներդ

Եկե՞լ են Էլի...

## ԽՈՒԾՈՒՅԹ

Սատանաներս

Միշտ էլ իԱՃ ԲԵՏ Են:

### ԱՂԱՄՈՍ

Սիմավո՞ն... Տեսնեաք ի՞նչ Սիմավոն է

### ԳՈՐԳԻԿ

Ծտապի՞ր, աղջիկ...

## ԽՈՒԾՈՒՅԹ

Ասի՛ չեմ ցնա:

### ԳՈՐԳԻԿ

Թո՞ւմ, խելքի կտոր չունի այս խենթը...

(Մտնում է Սիմավոնը, ճամփորդական շորերով է, գալազանով):

### ՍԻՄԱՎՈՆ

Բարի ողջույն ձեզ, գալս չիմացա՞ք,  
Չեկաք ընդառաջ...

### ԳՈՐԳԻԿ

Չիմացանք, Աերիր...

## **ՍԻՄԱՎՈՆ**

**Բարև քեզ, Խուշուշ:** Գորգիկ, դու գնա,  
Օգնական եղիր իմ ծառաներին:

## **ԳՈՐԳԻԿ**

**Աչքումքիս վրա:**

## **ԱՂԱՄՈՍ**

**Դո՞ւ ես, Սիմավոն...**

## **ՍԻՄԱՎՈՆ**

**Աղամոսը չե՞ս...**

## **ՔԵՐՈՎՔԵ**

**Ծանոթ դուրս եկաք...**

## **ՍԻՄԱՎՈՆ**

Ոչ մի ծանոթ, մենք դպրուանցում  
Մեկտեղ ենք ուսել, քնել նոյն խցում,  
Կիսել աղ ու հաց... Եվ քանի տարի...  
Եվ կարծում էի, թե դու, Աղամոս,  
Մեր այն Խցկոնքում, խօփդ մեջ փակված  
Տքնում ես խոնարհ, մատյաններ ծաղկում,  
Գրքեր ես գրում քերականոթյան...  
Եվ կարծում էի, թե արդեն վաղուց  
Դու վարդապետի կարգ ես ստացել:  
Բայց ի՞նչ եմ տեսնում, աշխարհականի  
Զգեստը հագած, նստել քեզ համար  
Գիճի ես խմում...

## **ԱՂԱՄՈՍ**

**Արդար չես խուսում,  
Տէ որ էն գլխից ասում էիր ինձ,**

Թե ես երբեմ, կարգ չեմ ստանա,  
Վեր չեմ բարձրանա, ե, միով բանիվ,  
Մարդ չեմ դառնա ես... Մոռացե՞լ ես դու...

### ՍԻՄԱՎՈՆ

Ոչ, չեմ մոռացել, կատակում էի:  
Հիշում եմ նաև, որ դու շատ հաճախ  
Ասում էիր ինձ, թե դու, Սիմավոն,  
Լավ վաճառական կլինես կյանքում:

### ԱՂԱՄՈՒ

Տեսնում ես ահա, մենք դեռ պատանի,  
Լավ գուշակներ ենք երկուսս էլ եղել:

### ՍԻՄԱՎՈՆ

Այս, երևի... Եվ սակայն մեր մեջ  
Շնորհաշատը դու էիր միայն,  
Բայց ինչպե՞ս եղավ և ինչո՞ւ եղավ,  
Որ քո շավիղը խոտորվեց այդպես...

### ԱՂԱՄՈՒ

Կարող եմ պատմել, թե ինչպես եղավ,  
Բայց անկարող եմ քեզ մեկնաբանել,  
Թե ինչպես եղավ, որ իմ շավիղը  
Խոտորվեց այսպես...

### ՍԻՄԱՎՈՆ

Հեգնում ես, Բեգնիր  
Եվ սակայն պատմիր, թե ինչպես եղավ...

### ԱՂԱՄՈՒ

Ծամիից ես գալիս, հաց անուշ արա  
Ու գինի խմիր, իսկ ես կպատմեմ...

(Բեմը դանդաղորեն մթնում է, մետո նոյն դանդաղությամբ լուսավորվում: Անտառ է, ծառերի արանքից երևում է վանքի ուրվագիծը: Աղամուր արեղայի զգեստով շրջում է ծառերի մեջ, ծաղիկ է քաղում, հոտոտում, և հանկարծ դիմացից ելնում է սպիտակ շորերով նուրբ ու բարալիկ մի աղջիկ):

## ԱՂԱՄՈՍ

Որտեղի՞ց այսպես դու հայտնվեցիր,  
Մեղա, տե՛ր, մեղա, ծաղկած մասրենու  
Թփի՞ց դուրս եկար, թե՞ այն գետակի  
Ծերմակ փրփուրից...

## ԱՂՋԻԿ

(ծիծաղելով)

Դու այդ ինչե՞ր ես  
Ասում, արեղա, ուխտի ենք եկել,  
Մերոնք ճերքնում մատադ են մորթում,  
Դու ես ծաղիկ եմ հավաքում այստեղ:

## ԱՂԱՄՈՍ

Դու այնքան ես նուրբ ու աներկրային,  
Որ մի պահ թվաց, թե այս մասրենու  
Թփից դուրս եկար կամ այն գետակի  
Ծերմակ փրփուրից...

## ԱՂՋԻԿ

Ծաղկած թփերից  
Ու գետակների փրփուրից ճերմակ,  
Դրա՞վ, կարող են աղջիկնե՞ր դուրս գալ...

## ԱՂԱՄՈՍ

Նայած ում համար, ի՞նձ համար, այո...  
Անգամ իմ խավար ու խոնավ խցի  
Քարե պատերից ամենայն գիշեր  
Եղնում է հանկարծ մի շքաղ աղջիկ:

Եվ Բիմա Այլում, նայում եմ ես քեզ  
Ու տեսմում եմ պարզ, որ այդ աղջիկը  
Հենց դու ես, որ կաս...

### ԱՂՋԻԿ

Իմ խեղճ արեղա,  
Ես երբնիցեւ խուցդ չեմ մտել:

### ԱՂԱՄՈՍ

Ինքդ չգիտես, հաճախ ես մտել...  
Այդ ինչ աշքեր են, այդ ինչ կրակ է,  
Ու քիչ է մնում, որ սև սքեմս  
Բոնկվի հանկարծ ու դառնա մոխիր...

### ԱՂՋԻԿ

Ինչե՞ր ես խոսում, քեզ պես արեղա  
Չեմ տեսել երբեք... Ում հանդիպել եմ,  
Աշքերը իսկույն թեքել է մի կողմ,  
Ասես չարք եմ ես... Իսկ դու նայում ես.  
Շանթում ես ասես, և այդ շանթերից  
Աշքերս են ցավում, սրտիկս է ցավում,  
Ու հաճելի է այդ ցավը, գիտե՞ս...

### ԱՂԱՄՈՍ

Իրա՞վ ես ասում...

### ԱՂՋԻԿ

Եվ ինչո՞ւ պիտի  
Ես քեզ սուս ասեմ...

### ԱՂԱՄՈՍ

Դու ոտից գլուխ  
Ծերմակ ես այդպես, ու սև եմ, ավա՞ն,  
Ես ոտից գլուխ... Զերոնք ներքնում

Մատադ են մորթում, և ալ արյունը  
Հոսում է հիմա, գնում խառնվում  
Գետակի մաքո՞ւր, մաքո՞ւր ջրերին...

### ԱՂՋԻԿ

Աստված իմ, աստված, դալուկ ես որքան,  
Եվ սակայն ուրիշ դալկություն է դա,  
Սոմի դալկություն, որ կարծեն ահա բռնկի պիտի...

### ԱՂԱՄՈՍ

Եկ քեզ Բամբուրենմ...

### ԱՂՋԻԿ

Ամո՞ւր Բամբուրիի:

(Երկար-Երկար Բամբուրվում են, իսկ ծառերի ետևից աքե-  
ղամերի մի սև երամ լրտեալուն է ճրանց):

### ԱՂԱՄՈՍ

Ձերոնք ներքենում մատադ են մորթում,  
Իսկ դու, իմ տեսիլք, գնա ու նորից  
Ծաղկած մասրենու թփի մեջ մտիր,  
Սուզվիր գետակում, որի ջրերին  
Արդեն մատադի արյուն կա խառնած...

### ԱՂՋԻԿ

Ես ոչ մի տեղ էլ չեմ մտնի, օ՛, ոչ,  
Ոչ մի գետակում չեմ սուզվի երբեք,  
Ես նորի՞ց կգամ, ես նորի՞ց կգամ...

(Աղջիկը դամդաղորեալ ակսում է Բնուանալ Բենջ Առյօն դան-  
դաղությամբ սկսում է մթնել ու ապա Առյօն դանդաղությամբ լու-  
տալորմին):

### ՍԻՄԱՎՈՆ

Ու եկա՞վ նորից...

## ԱՂԱՄՈՍ

Չեկավ այլևս,  
Դուստրն է եղել ինչ-որ իշխանի,  
Հայտնել էին հորն, ու սա աղջկան  
Ամուր փակել էր իր դդյակի մեջ  
Եվ ինձ թռիղը էր տեսիլքը նրա:  
Դդյակը գտա... Ու խենթի նման  
Գիշեր ու ցերեկ պտտվում էի  
Ծուրջն այդ դդյակի, որ գոնե հեռվից  
Տեսիլքն իր տեսնեմ... Ցնդել էր, չկար,  
Ցնդել ցողի պես, մշուշի նման:

## ՄԻՄԱՎՈՆ

Եվ վասն դորա՝ կարգալույծ արին:

## ԱՂԱՄՈՍ

Ո՛չ, վաճառայրը բարի գտնվեց...

## ՄԻՄԱՎՈՆ

Էժան ես պրծել: Սակայն ի վերջո  
Քեզ վասն ինչո՞ւ կարգալույծ արին:

## ԱՂԱՄՈՍ

Ասեմ, ու լսիր: Կարգալույծ արին,  
Քանզի տերն ինձը ինձ ողորմություն  
Արեց ի վերուատ... Աչքերս բացեց  
Ու միտքս բացեց, և ես ուսեցի  
Արվեստ մի վերին ու զարմանալի...

## ՄԻՄԱՎՈՆ

Ի՞նչ արվեստ է դա...

## ԱՂԱՄՈՍ

Գերագույն արվեստ,  
Ուսկի բաղադրել կրակի ձեռքով...

## ՍԻՄԱՎՈՆ

Լսել եմ, այդ, կա նման արվեստ,  
Հոռոմի լեզվով ալքիմիկոս են  
Կոչվում այն մարդիկ, որ զբաղվում են  
Այդ մութ արվեստով: Հասու եմ նաև,  
Որ ոչ մեկը դեռ չի գտել ոսկին,  
Եվ համոզված եմ, որ երբեքցե  
Չի էլ գտնելու... Դա ցնո՞րք է լոկ...

## ԱՂԱՄՈՍ

Օ՛, ոչ, Սիմավոն, ցնորք չէ քնավ,  
Մեծ ու գերագույն մի խորհուրդ է դա:  
Եվ այդ խորհուրդը խորունկ ու մթին  
Անդունդներ ունի, ուր պիտի իջնել  
Գիտության լույսով, նաև հավատի  
Կանթեղով անշեց: Եվ այդ ճամփան է,  
Որ գերել է ինձ ու տանում է ինձ...

## ՍԻՄԱՎՈՆ

Եվ վասն դորա՝ կարգալովծ արիւ...

## ԱՂԱՄՈՍ

Այո՛, այս անգամ գրեցին ուղիղ  
Կաթողիկոսին... Ո՛չ վանահայրը,  
Նա ուսյալ մարդ է: Գրեցին նրանք՝  
Վանքի բվերը: Գրեցին, թե ես  
Մոգության դժ(.) ճամփան ամ ընկել,  
Հերեւութիկոս եմ, ներ եմ, սրբապիղծ...  
Եվ նման բաներ: Հավատաքննիչ  
Եկավ վերնից ու ատյան արին:  
Եվ այսպես եղավ իմ դատաստանը...

(Բեմը դանդաղորեն մթնում է ու դանդաղորեն լուսավորվում:  
Վանքի գրատան սրահն է: Պատի տակի քարն նատարանին նըս-  
տած են յոթ վանական: Դիմացի սրունին կործած, սրունի նման  
ուղիղ կանգնած է Աղամոսը: Մեջտեղի քարն սեղանը դեռ  
ազատ է):

## Ա. ՎԱՆԱԿԱՆ

(Նայելով Աղամոսին)

Ի՞նչ կոկոզավիզ տեսքով է կանգնած...

## Բ. ՎԱՆԱԿԱՆ

Նայեցեք Բապա, ինչ ամբարտավան  
Քմծիծաղով է նայում ամենքիս,  
Կարծես թե ինը պիտի մեզ դատի  
Եվ ոչ մենք՝ իրեն:

## Գ. ՎԱՆԱԿԱՆ

Շամբո՛ւշդ զքեզ...

## Դ. ՎԱՆԱԿԱՆ

Հարրեցո՛ղդ պիղծ...

## Ե. ՎԱՆԱԿԱՆ

Եղկելի՛դ, Ձե՛ռդ...

## Ա. ՎԱՆԱԿԱՆ

Սադայելական ժանտախտի վիմվածք,  
Հիշում ես մի օր դեմ առ դեմ կանգնած,  
Ինձ աճվանեցիր Անդակատ հիմար...  
Դե, Բապարտացիր քո լայն ճակատով՝  
Խիստ հարմար տեղ է աղվեսադրոշմ  
Տպելու համար... Կրակը վաղուց  
Բորբոքել եմ խիստ: Խարանը արդեն  
Այնքան շիկացել, որ ճերմակել է,  
Ի՞նչ ճենճերահոտ կփոխ չորս դին...

## Բ. ՎԱՆԱԿԱՆ

Բայց խարանումով պետք չէ, որ գործը  
Գոցված Բամարենք...

## Գ. ՎԱՆՍԱԿԱՆ

Երբեք ու երբեք...

Խարանն ինչ է որ, խարանը ոչինչ,  
Հետո էլ պիտի բթամատերը  
Տապարով հատել, որ չկարենա  
Սատանայական անոթների հետ  
Էլ գործ ունենալ...

## Դ. ՎԱՆՍԱԿԱՆ

Ոտքի ջերը,

Ոտքի ջերը պիտի կտրատել,  
Որ չկարենա էլ մոգերի հետ  
Հանդիպման գնալ...

## Ե. ՎԱՆՍԱԿԱՆ

Իսկ ես մի ուրիշ

Պատիժ հղացա: Նետենք խենթանց,  
Սա խոսք է խոսում, թե այս աշխարհը  
Կլոր է իբրև, գնդի ձև ունի...  
Նետենք խենթանց, թող խենթերի հետ  
Նստուկներն իրենց դնեն այդ գնդին  
Ու գլոր-գլոր գնան տարտարոս...

## ԲՈԼՈՐԸ

Մատները մատենք, բրածեծ անենք,  
Դնենք գելարան, նետենք խենթանց...  
Մեզք սուրբ մավատի նվիրյալներն ենք,  
Սուրբ Քրիստոսի զինվորներն ենք քաջ,  
Այդ լավ իմացիր, նեռդ սրբապիղծ...

(Մտնում են մավառաքննիշը և վաճառայրը):

## ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Ինչ քստմնելի աղմուկ է այստեղ,  
Թվում է ոչ թե աստծո խաղաղ

Ու երանավետ մի տուն ես մտել,  
Այլ բյուզանդական մի գեշ գինետուն...

### Ա. ՎԱՆԱԿԱՆ

Ներիր, սրբազն, ստուգապես ներիր...

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻԶ

Ամբաստանյալը այս կորովադեմ  
Երիտասարդն է...

### Բ. ՎԱՆԱԿԱՆ

Նա ինքն է՝ նեռը...

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻԶ

Խոսքերդ կշոիր, մենք դեռ չենք քննել  
Գործերը նորա ու դեռ չգիտենք,  
Նե՞ն է նա, թե՛ ոչ:

### Գ. ՎԱՆԱԿԱՆ

Ներիր, սրբազն,  
Հայտնապես ներիր, բայց յուր մեղքերը  
Պարզ են լուսի պես...

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻԶ

Լուսը, աբեղա,  
Լոկ արտաքուստ է այդքան պարզ թվում,  
Բայց ներքուստ բարդ է ու անքննելի:  
Հաճախ այնպես է նա մեզ կուրացնում,  
Որ շուրջքոլորդ չենք տեսնում ոչինչ:  
Եվ դորա համար ժամանել եմ ես,  
Որ ձեզ այդքան պարզ թվացող լուսը  
Ոչ միայն աչոք, այլ մտոք զննեմ,  
Տեսնելու համար, թե ձեր այդ լուսին  
Չե՞ք խառնել արդյոք ամբաստանության

Ամտես ասեղներ, նախանձի խիթեր  
Եվ զրպարտության գեռուններ զազիր...

### ՎԱՆԱԿԱՆՆԵՐ

(Հոլորը միասին փովում են հատակին ու ալդպես փոված ճղճում):

Երդվում եմք տիրոջ սրբազն խաչով,  
Որ մեր գրյանքը ճշմարտություն է...

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Վանահայր, խոսիր... Պատմիր կարճառոտ  
Ո՞վ է, ի՞նչ մարդ է այս վանականը:

### ՎԱՆԱՀԱՅՐ

Նախ՝ ասեմ, որ նա այր է խիստ ուսալ  
Ու հանճարամիտ...

### ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ

— Մեղա՛, տե՛ր, մեղա՛...  
— Օ՛, երկինք, փլվիր, խոսի՛ր, տարտարոս...

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Լոեք, պապանձվեք:

### ՎԱՆԱՀԱՅՐ

Նա անգիր գիտե  
Մեսրոպյան գրով մինչև արդ գրված  
Սատյաններն ամեն, քաջահմուտ է  
Երրայերենին և հունարենին:  
Ընթեղցել է հին իմաստնասիրաց  
Ու քերթողների մատյաններն ամեն:

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Հիանալի՛ է: Դու երեկոյան  
Խմ խուզը արի, որ մայրամուտի

Խաղաղության մեջ մնձ Սոկրատեսից  
Զրուցենք մի բլու և Հորացիոսի  
Տաղերը հիշենք... Հիանալի՝ է:  
Վաճախայր, խոսք ավարտին հասցրու:

### ՎԱՆԱՀԱՅՐ

Հոյժ հետամուտ է ամեն գիտությանց,  
Անանիա կոչյալ մնձ Ծիրակացու  
Թվելի և քննում, շարժմունքն աստղերի  
Եվ քիմիական վարդապետության  
Դասեր է առել ոմն մեծանուն,  
Հմուտ արաբից...

### Դ. ՎԱՆԱԿԱՆ

Մի ժոգից, դնից,  
Քրիստոնեության մի նենգ հալածչից:

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Մենք պարտավոր ենք օգտակարության  
Դասեր ստանալ ամենայն տեղից,  
Ամենայն ազգից, ամենայն ցեղից,  
Խսկ ամենից շատ մեր ոսխներից...  
Ամբաստանյալն այս ցարդ դեռ չի արել  
Այնպիսի մի բան, որ արժանի է  
Դատափետության...

### Ե. ՎԱՆԱԿԱՆ

Ամբաստանյալն այդ  
Բոնել անտառում աղջի՛կ է պագել,  
Աղջի՛կ է պագել...

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Աղջի՛կ է պագել,  
Գործե՞լ ես իրավ այդպիսի արարք...

## ԱՂԱՄՈՍ

Եղել է, այո, ճմառ մի դիպված:

## ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Երևի իմշ-որ մի չար սատանա  
Մտել էր քո մեջ ու խճճել էր  
Հոգու կծիկը...

## ԱՂԱՄՈՍ

Ո՛չ, սատանան չէր,  
Արարիշն իմքը...

## ՎԱՆԱԿԱՆՆԵՐ

— Լսեցի՞ք...  
— Տեսա՞ք սրբապիղծ հոգին...

## ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Բայց ի՞մ աղջիկ էր...

## Ա. ՎԱՆԱԿԱՆ

Ոչ խղճուկ մորտի...  
Ազնվականի, Վուան իշխանի...

## ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Հիշեցի, այո, ճանաչում եմ այդ  
Աղջկա մորը... Վանահայր, սակայն  
Այդ մեղքի համար ինչ պատիժ տվիր  
Այս սանձազերծին...

## ՎԱՆԱՀԱՅՐ

» Ծգնակեցությամբ  
Փակեցի խցում և ստիպեցի,  
Որ հունարենի քերականության  
Դասագիրք գրի:

## ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Հիասքանչ պատիժ,

Գրեց...

## ՎԱՆԱՀԱՑՐ

Գրեց և այն էլ

Կատարելաբար:

## ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Այդ պատիժու միշտ

Ուժի մեջ պահիր... Եվ այսուհետև  
Վատահ կիհնեմ, որ ձեր այս վանքից  
Կինարմատները կվերադառնան  
Առանց պագվելու: Խոսիր, վանական...

## ՎԱՆԱՀԱՑՐ

Իմշպես ասացի, ամբատանյալը  
Մտերմացել էր մի արարի Բետ  
Եվ քիմիական վարդապետության  
Դասեր էր առնում այդ գիտուն մարդուց...  
Այլազան իրեր, սրվակներ բերում,  
Լցնում էր խուզը և գիշերն ի լույս  
Փորձեր էր անում: Շատ զարմանալի  
Ներկեր ստացավ, բուրավետ խեժեր...  
Դրանց վաճառքով վանքս շենացավ,  
Մաղկեց օրեցօր: Ինքն այդ ամենից  
Մի դահնեկան էլ շպահեց իրեն  
Եվ սակայն հիմա...

## ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Մի շարունակիր,

Ամբատանյալը ալքիմիկոս է:  
Պղիճճ ուզում է վերածել ոսկուն  
Այս, ինչ աստված է ստեղծել կյանքում,

Անձեռնաւուիս է: Իսկ նա ուզում է  
Աստծո ստեղծած տարրերը փոխել...  
Այլ խոսքով՝ ասած, երազում ես դու  
Կյանքի պղինձը դարձնել ուկի,  
Տառապանքի ժանգն՝ անանց թերկրություն...  
Բայց եկեղեցին հաստվեց աշխարհում,  
Որ ոչինչ, ոչինչ կյանքում չփոխվի,  
Իսկ ես զինվորն եմ այդ եկեղեցու:  
Դու էլ կարող ես դառնալ կորովի  
Զինվորը նրա, այն էլ ի՞նչ զինվոր...  
Ընտրություն արա:

### ԱՂԱՄՈՍ

Ընտրություն չունեմ:  
Իմ ուղին մեկ է: Ես փնտրեմ պիտի:  
Որո՞մեմ ահտի իմ երազանքը  
Եվ գնամ միայն նրա ետևից...

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Այդպիսի բաներ: Ի դեպ, վաճառայր,  
Հո միսը մի՞նչ չէր այն խորովոի,  
Որ ճաշակեցինք ատյանից առաջ,  
Մարտողությունն կարգին չէ կարծես...

### ՎԱՆԱՀԱՅՐ

Հի՞նչ... ի՞նչ ես ասում, մենց նոր եր մորթած...

### ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉ

Այդպիսի բաներ: Լսիր, Աղամոս,  
Քեզ կարգալուծ եմ անում այս պահից,  
Դու ոսխսն ես իմ...

### ՎԱՆԱԿԱՆՆԵՐ

— Փա՛ռք քեզ, արարիչ...  
Ծառագեց նորից սուրբ ճշմարտության

Արևը մթնած...

— Փա՛ռք քեզ, սրբազն...

## ՀԱՎԱՏԱՔՆԻՉ

Լունք, անբանենք...

(Աղամոսին)

Իսկ դու, բարեկամ,  
Երեկոյան դեմ իմ խուզը արի,  
Որ Սոկրատեսից զրուցենք մի քիչ  
Եվ Հորացիոսից տաղեր վերհիշենք...

(Բնմշ դամդաղորեն լրավորվում է: Աղամոսն ու Միմավոնը առաջվա պես մատած եմ դեմ-դիմաց):

## ՄԻՄԱՎՈՆ

Այդպիսի բաներ... Բայց չեմ հավատում  
Ես քո արվեստին...

## ԱՂԱՄՈՍ

Եվ իզուր, սակայն:  
Ես օրինակով միտքս կպարզեմ,  
Որ լավ հասկանաս... Կան վայրի ծնոտեր,  
Պտուղը լեղի, մանրիկ ու լեղի,  
Բայց երբ պատվաստ ես անում այդ ծառին,  
Ազնվանում է պտուղը նրա:  
Այդպես են նաև մետաղներն ամեն,  
Պղիճճն հատկապես: Կարծես ձգտել է  
Նա ոսկի դառնալ, բայց չի կարեցել:  
Ինչ-որ մի տարր է պակասել նրան:  
Եվ ես այդ տարրը գտել եմ արդեն:  
Եվ ահա այստեղ, կրծքիս վրա է  
Գաղտնիքը նրա:

## ՄԻՄԱՎՈՆ

Եվ սակայն ինչո՞ւ

Դեռ չկա ոսկիդ:

## ԱՂԱՄՈՍ

Մի քար, մի քար է  
Պակասում լոկ ինձ, քար, որ թեծ Բրից  
Երկյուղ չունենա ու չքայլայվի:  
Ես գիտեմ Բաստատ՝ քարն այդ կգտնեմ  
Արագած լեռամ երակների մեջ:  
Վաղը Արագած պիտի բարձրանամ:

## ՍԻՄԱՎՈՆ

Որքան Բիշում եմ, ուկու մկատմամբ  
Դու մի առանձին սեր չես ունեցել,  
Այդ ինչպես Բանկարծ ուկեսեր դարձար:

## ԱՂԱՄՈՍ

Այս ուկին այլ է, որոնման տեմչ է  
Եվ ճշմարտության ստույգ որոնում...

## ՍԻՄԱՎՈՆ

Դու չարչարեց ես քո միտքը ամվերջ  
Եվ սակայն իզուր:

## ԱՂԱՄՈՍ

Իզուր չէ, օ՛, ոչ,  
Միտքը միշտ իրեմ չարչարի պիտի,  
Որ թեսր առնի Երևի առաջ  
Հավքերը բոլոր արարածներ են  
Եղել գետնամած և չարչարանքով  
Ու տառապանքով թեսր են առել,  
Դարձել թեավոր: Միտքն էլ է այդպես...

## ՍԻՄԱՎՈՆ

Բամ չեմ Բասկանում: Խուշուշ, եկ այստեղ,  
Տես, ինչ մանյակ եմ քերել քեզ Բամար,  
Ամեն զմրուխտը մի սալորի չափ...

## ԽՈՒԾՈՒՅԹ

(Վերցմում, մի պահ Բիացած նայում է մանյակիթ):

Վա՞խ, ինչ մամյակ է... Բայց պետք չէ առ ինձ...

(Աղբամարիանքով նետում է սեղանին):

## ՍԻՄԱՎՈՆ

Խուզուշ, Բարբած ես երևում աշքիս:

## ԽՈՒԾՈՒՅԹ

Ի՞նչո՞ն երևում... Հարբած եմ, այն է  
Ի՞նչպե՞ս եմ Բարբած...

## ԱՂԱՄՈՍ

Գինի թեր, Խուզուշ,  
Այս գիշեր պիտի խրախճանք անենք,  
ՄԵՐ Բրաշալի, մի մեծ խրախճանք...

(Խուզուշ գնում է):

## ՍԻՄԱՎՈՆ

Բամ չեմ Բասկանում:

## ԱՂԱՄՈՍ

Ու չես Բասկանաւ:  
Կամացի Բոգին ո՞վ է Բասկացել,  
Որ դու Բասկանաւ: Եվ նամանավանդ  
Այսպիսի՝ կնոջ...

## ՍԻՄԱՎՈՆ

Ինչպիսի՝ կնոջ...

## ԱՂԱՄՈՍ

Խուզուշի մնան առեղծվածային,  
Անիմանալի ու չքնաղ կնոջ...

## ՍԻՄԱՎՈՆ

Նա հասարակաց կին է պարզապես...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Կատվի մոռութը մաին չհասավ,  
Միտք արեց, ասաց, այսօր ուրբաթ է...

## ՍԻՄԱՎՈՆ

Լեզուի քեզ քաշիր...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Եվ ինչո՞ւ քաշեմ,  
Այդ Խուշուշն ասես լուսնյակը պատռել,  
Միջից է եկել...

## ԱՂԱՄՈՍ

Իրավ է ասում:  
Ու այն էլ ասեմ, որ թե նա սիրի  
Որևէ մեկին, ապա կմեռնի  
Այդ սիրո համար...

(Խուշուշը մտնում, գինու նոր գավեր է դնում սեղանի0):

## ԽՈՒՇՈՒՅՑ

Եվ ինձ էլ գինի...  
Աստված իմ, աստված, այս ի՞նչ է այսպես  
Տոշորում հոգիս... Խմել եմ ուզում,  
Երգել եմ ուզում և կաքավել եմ  
Ուզում ես սաստիկ...

## ԱՂԱՄՈՍ

Երգի՛ր, կաքավի՛ր,  
Ինչ կուզես արա... Նվագիր, Գուսան,  
Նվագածուներ, փողերը փշեք...

(Խուշուշը պարպում է գավաթը և մկում է երգելով պատել):

## ԽՈՒՅՈՒՆ

Սերը կրակ է,  
Գինին կրակ է,  
Սրտիկս լեցուն,  
Ու լեզուս փակ է,  
Սրտիկս լեցուն,  
Սրտիկս տաք է,  
Բայց, այս, իմ սերը  
Ամպերի տակ է:  
Եղի՛ր, փոթորիկ,  
Ամպերը վանիր,  
Իմ ծուխն ու բոցը  
Միմչ երկինք հանիր:  
Մի քողնիր, որ ես  
Այսպես լուս միսամ,  
Թևերը կոտրած  
Հավքի պես ճիսամ...  
Աստված, տատրակի  
Մի գույգ թև տուր իջձ,  
Իմ ճորտակ սիրութ  
Զորեղ տեր տուր իջձ  
Սրտիկս մող է,  
Միւում է, թաց է,  
Աշքերս փակ եմ,  
Ու սիրտս բաց է...  
...

(Աղասիսց վեր է կենում, սկսում է Խույունի մաս կատարել  
թիմ պարել):

## ՍԻՄԱՎՈՆ

Անզգամ աղջիկ, անամոթ աղջիկ,  
Ես քեզ ցույց կտամ: Այս խմորը դեռ  
Օտառ ջուր կտանի...

(Գնում է):

## ԾԱՂՐԱԾՈՒ

Սպառնաց, գնաց:  
Իմ աճպարաբներ, չարախաղացներ,  
Դե, ասեք, լսենք. ովքե՞ր եմ արծվի  
Բները քանդում. ովքե՞ր եմ քանդում..

## ԲՈԼՈՐԸ

Մկներն են արծվի բները քանդում,  
Մկներն են արծվի բները քանդում:  
Աճե՛ծք մկներին...

## ԵԱՂՐԱԾՈՒ

Ովքե՞ր են արծվի ձվերը ուտում...

## ԲՈԼՈՐԸ

Մկներն են ուտում ձվերը արծվի,  
Աճե՛ծք մկներին...

## ՎԱՐԱԳՈՒՅՐ...

## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### Առաջին պատկեր

(Դշնանատան բակը: Վաղ առավոտ եւ Միթզադ: Աղամոսը, Թախաղը ձեռքին, դուրս է գալիս ու կանգնում բակում):

## ԱՂԱՄՈՍ

Լուսաստղը այսօր որքան պայծա՞ն է  
Ու որքան խոշոր: Եվ խոտերն այսօր  
Ինչ զարմանալի բույրով են բուրում:  
Մեծ արևագալ, օգնական իհծ լեր,  
Օգնական ինձ լեր, ով լառ Արագած,  
Ու շնորհիր ինձ այն քարը անկեզ,

Որ ես կարեմամ մյութի վերածել  
Իմ երազանքն ու իմ տառապանքը...

(Եղևանատմից դուրս է գայիս Խուշուշը, մազերն արձակ, գիշերավիճ սպիտակ շապկով):

### ԽՈՒՇՈՒՇ

Չէի՞ր սպասում...

### ԱՂԱՄՈՍ

Սպասում էի

Քեզ իմ ողջ կյանքում: Գիտեի, որ կաս,  
Որ կաս ինչ-որ տեղ: Որոնում էի  
Ու չէի գտնում... Ի՞նչ գեղեցիկ ես,  
Մազերդ արձակ ու թևերդ բաց...

### ԽՈՒՇՈՒՇ

Այսօր աշխարհը ուրիշ է ասես,  
Նույնը է ամեն ինչ, նույնը չէ սակայն...  
Լուսաստղը, նայի՞ր, ինչ վառ է շողում,  
Եվ ինչ-որ բան է շշնչում քամին,  
Առաջին անգամ եմ ես Բասկանում  
Ծուկը նրա...

### ԱՂԱՄՈՍ

Խուշուշ, սիրելիս,

Սովորույթ ունեմ գիշերը քնել  
Մի ձեռքս դրած ճակատիս վրա,  
Մյուսը՝ սրտիս... Եվ ամեն գիշեր  
Այն ձեռքս էր այրվում, որը Բանգչում էր  
Ծակատիս վրա... Սակայն այս գիշեր  
Այնպես սաստիկ էր այրվում այն ձեռքս,  
Որ միշտ ակամա Բանգչում է սրտիս:  
Ինչպե՞ս բռնկվեց այս կրակը սուրբ...  
Սակայն ինչպես էլ բռնկված լինի;

Օրինյա՞լ լինի թող... Թող օրինյա՞լ լինես  
Անձրևի նման, ցորյանի նման,  
Ռդկույզի նման թող օրինյալ լինես,  
Իմ Մագթաղինե...

### ԽՈՒԾՈՒԾ

Գնա՞ Յք. Աղանոս,  
Այստեղից գնանք, կարող են տեսնել,  
Գնանք ծիրանի այն ծառը գրկեաք,  
Որ զա հովանի լինի մեր սիրուն:

(Գնում, կանգնում են ծիրանի ծառի տակ: Աղանոսը գրկում է Խուշուշին և սկսում համբուրել):

### ԱՂԱՄՈՍ

Քեզանից հողի, խոտի, անձրևի  
Բուրմունք է գալիս ու սիրո բուրմունք,  
Եվ քո աչքերն են անհմանալի,  
Եվ քո շուրթերին անհայտ աշխարհի  
Երանությունն է դողում ու հեռում,  
Եվ քո մարմինը փխրում է ասես  
Իմ մատների տակ...

### ԽՈՒԾՈՒԾ

Իսկ ես քեզանից  
Լեռան ու հողմի բուրմունք եմ առնում,  
Զորավոր լեռան, զորավոր հողմի...  
Եվ թերիդ տակ ես ինձ զգում եմ  
Տատրակի նման ու լալ եմ ուզում...

### ԱՂԱՄՈՍ

Իմ երազանքի ճամփին քեզ գտա...  
Դու գեղեցիկ ես ու հրաշալի  
Երազանքին պես: Եվ սակայն նորից  
Կանչում է ճամփան, ու ստիպված եմ

Ծարավ ցուրթերով ու ծարավ արյամք  
Բաժանվել քեզմից:

### ԽՈՒՅՈՒՅ

Երբ վերադառնաս,  
Քեզ կպարգևեմ այն, ինչ կարող է  
Կիմը պարգևել իր սիրեցյալին:  
Բայց սիրտս, սիրտս, շգիտեմ իմուն,  
Ամպերջ ճմլվում և ուզում է լալ...

### ԱՂԱՄՈՍ

Չէ, չլաս, Բոգիս, ու եկ բաժանվեմք:

### ԽՈՒՅՈՒՅ

Մի քիչ էլ մնա...

### ԱՂԱՄՈՍ

Եկ շուտ բաժանվեմք,  
Որ շուտ մանդիպննք...

### ԽՈՒՅՈՒՅ

Չէ՛, քիչ էլ մնա...

### ԱՂԱՄՈՍ

Իրիկնամուտին այստեղ կլինեմ...

### ԽՈՒՅՈՒՅ

Այդքան ժամանակ ինչպե՞ս սպասեմ...  
Մի քիչ էլ մնա...

### ԱՂԱՄՈՍ

Դե, մնաս բարով...

## ԽՈՒՅՈՒՆ

Չէ, քի՛չ էլ մնա...

## ԱՂԱՄՈՍ

Հասկացիր, Բոգիս...

## ԽՈՒՅՈՒՆ

Ես հասկանում եմ, բայց սիրտս, ավաղ,  
Ինչպե՞ս հասկանա...

(Աղամոսը Խույզուշին գրկում, առևուժ է թներին ու ջարժվութ  
դեպի իջևանատում։ Միմավոնը լուսամուտից տեսմուն է Թրանց  
Աղամոսը համրութում է Խույզուշին, վերցնում մախաղն ու ճամփա  
ընկնում)։

## ԱՂԱՄՈՍ

Դե, մնաս բարով...

## ԽՈՒՅՈՒՆ

Բարի ճանապարհ։ Ես ամբողջ օրը  
Կաղոթեմ աստծուն...

(Խույզը մտմուա է ներս։ Թեմը որոշ ժամանակ դաստիքն է  
մնում։ Հետո դուրս է գալիս Քերովեն, Ըստում խաչքարի դեմ ու  
ակսում է տաշել։ Թի՛ հետո դուրս է գալիս Խույզուշը, Թառում գե-  
րամին ու սկսում է սագերը սանրել)։

## ՔԵՐՈՎՔԵ

Տոյք էր այս գիշեր ու սաստիկ էր տոյք։

## ԽՈՒՅՈՒՆ

Այո, տոյք էր խիստ։

## ՔԵՐՈՎՔԵ

Եկ ամրող գիշեր  
Անհանգիստ եղա, կես քում, կես արթում։

## ԽՈՒՅՈՒՅԹ

Ես մանապես:

### ՔԵՐՈՎԲԵ

Երևում է, հա,  
Քնատ ես թվում: Թվում է նաև,  
Թե ամենօրվա այն Խուշուշը չեաւ

## ԽՈՒՅՈՒՅԹ

Այդ ինչո՞ւ, վարպետ...

### ՔԵՐՈՎԲԵ

Ես ի՞նչ իմանամ,  
Այսօր մի տեսակ ուրիշ ես թվում:

## ԽՈՒՅՈՒՅԹ

Ի՞նչ տեսակ, վարպետ...

### ՔԵՐՈՎԲԵ

Զգիտեմ, Խուշուշ,  
Աչքերդ եմ ուրիշ, հայացքդ է ուրիշ,  
Մերթ թվում է, թե երանություն է  
Իջել քեզ վրա ու մերթ թվում է,  
Թե տխուր ես խիստ ու մտահոգված:

## ԽՈՒՅՈՒՅԹ

Ասենք այդպես է, և սակայն ինչպե՞ս  
Դու նշարեցիր...

### ՔԵՐՈՎԲԵ

Ով որ խաչքար է  
Տաշում, սիրելիս, նա սուր աչք ունի...

## ԽՈՒԾՈՒԾ

Թող տերը փրկի ինձ սուր աչքերից:

## ՔԵՐՈՎԲԵ

Բայց իմ աչքերը բարի են, Խուշուշ,  
Իմ սուր աչքերից դու մի վախենա:

Աղամոսն ո՞ւր է, դեռ չի՝ արթնացել:

## ԽՈՒԾՈՒԾ

Արագած ելավ...

## ՔԵՐՈՎԲԵ

Այդպիսի մարտիկ  
Լեռներ են սիրում, ծովեր են սիրում,  
Անդունդներ ու վիճ... Սաստիկ անհամզիստ,  
Սաստիկ խոռվյալ այրամարդ է նաև

(Դուրս է գալիս Արամանյակը):

## ԽՈՒԾՈՒԾ

Օ՛, այսօր ծույլդ վաղ է արթնացել:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Մի շարախտոսիր, գլուխս է ցավում,  
Ու ես չգիտեմ, գինո՞ւց էր արդյոք,  
Թե այն երեկվա խոաք ու զրույցից...  
Բան չհասկացա, այդ Աղամոսը  
Սո՞ւրբ է, իմաստո՞ւն, թե՞ խենթ ու խելառ...

## ՔԵՐՈՎԲԵ

Սուրբը և խենթը մոտիկ են իրար,  
Նույնը են համարյա...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Այնպես կուզեի  
Թռղնել ամեն ինչ ու գնալ, գնալ  
Նրա ետևից...

## ԽՈՒԾՈՒԾ

Այն մեկին թողած,  
Այս մեկի՞ն կպար...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Այդ Աղամոսը  
Խորհրդավոր է ու ձգում է ինձ:

## ՔԵՐՈՎՔԵ

Եկ, Արամանյակ, եկ, գործիդ անցիր,  
Մի քիչ որ քրտնես, այդ գլխացավիդ  
Կյոշի իսկույն...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Ինչ արած: Նստեմ:

(Դուրս է գալիս Գուսանը, մատում գերաճիմ):

## ԳՈՒՍԱՆ

Բարի առավոտ ու արդար արև

## ՔԵՐՈՎՔԵ

Արևշատույցուն բարի Գուսանից:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Մեր այս Գուսանը լուս է ամվերջ,  
Ոչինչ չի խոսում...

## ՔԵՐՈՎԲԵ

Բայց երբ խոսում է,  
Արար աշխարհը լսում է նրան:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Հորեղբայր Գուսան, դու երեկ տաղդ  
Անավարտ թողիր, ու ես չիմացա,  
Ի՞նչ եղավ վերջը քաջ Պահլավունին...

## ԳՈՒՍԱՆ

Դն, ասեմ, լսիր...

Եվ գնաց Գագիկ արքան,  
Եվ գնաց դուռը կայսեր,  
Եվ գնաց Գագիկ արքան,  
Խորխորատն ընկավ դավի,  
Սուզ արեց աշխարհն Հայոց.  
— Ավա՛ղ քեզ, մանուկ արքա,  
Ախ, ավա՛ղ, Բազար ավաղ,  
Մեր հուրիեր, մեր հրածին...

Իսկ այն նեմգ Սարգիսը Վեստ  
Անիի բալնիքն առած,  
Բյուզանդիոն չվեց շտապ  
Ու դրեց կայսեր առաջ,  
Եվ կայսրը եղավ, Բագավ  
Արնացոլ իր ծիրանին  
Եվ խաղաց դեպի Անի,  
Որ քաղաք մտնի շուքով...

— Ո՛չ երբեք, — բերդի գլխից  
Կոնչաց Պահլավունին, —  
Բանալին Անվո քաղքի  
Ահա իմ ձեռքին է դեռ,  
Բանալին Անվո քաղքի

Իմ սուրճ է, սո՞ր իմ, շողա,  
Եվ շաշիր կայսեր գլխին,  
Շառաշիր կայծակի պես...

Ամո՞թ քեզ, սակայն ամոյթ,  
Կայսերդ քրիստոնյա,  
Ամո՞թ քեզ, հազար ամոյթ,  
Դավադիր Մոնոմախոս,  
Այս անգամ կաշառեցիր  
Դևինի ամիրային,  
Անհավատ ամիրային  
Հանեցիր սուրբ խաչի ռեմ:

Եվ արի Պահլավունին,  
Գրիգոր որդուն առած,  
Արշավեց դեպի Դվին,  
Արշավեց գնդով ընտիր,  
Եվ սակայն ճենք էր սաստիկ  
Ամիրան Արուլսուար,  
Ամիրան Արուլսուար  
Խորամանկ, պիղծ էր սաստիկ...

Ամիրան Արուլսուար  
Փոխեց հունն Ազատ գետի,  
Շրջակա այգիքն ամեն  
Ողողեց գետի ջրով,  
Խաղողի այգիներում  
Դարաններ լարեց թաքուն,  
Խաղողի վազերի տակ  
Զորք պահեց աղեղնավոր...

Խրվում էր հողերի մեջ  
Նժույգը Պահլավունու,  
Նժույգը Պահլավունու  
Խճճվում վազերի մեջ,  
Կովում էր սակայն արին  
Նեւաների տարափի տակ,

Հողի մաջ խրվում խորունկ,  
Կովում էր Պահլավունին,  
Կովում էր ծերն ավեր,  
Կովում էր, խոլ մոնչում,  
Եվ տեսավ հանկարծ, ավաղ,  
Որ ընկավ խոցված որդին,  
Թուլացավ բազուկը ծեր,  
Մշուշվեց աշքն արցունքոտ,  
Ու խրվեց խոնավ հողում,  
Ու ինքն էլ ընկավ խոցված...

### ԱՐԱՄԱՆՅԱԿ

Հե՞ վախ, ես այնտեղ լինեի պիտի...

### ՔԵՐՈՎՔԵ

Մեր արքաներն ու նախարարները  
Չկարողացան այս հողը պահել,  
Մենք պիտի պահենք... Ես պիտի սլահեմ  
Այսպես անշտապ ու համբերանքով  
Այս որձաքարից փշուր առ փշուր  
Կորգելով ոգի ու գեղեցկություն...  
Եվ պահի պիտի այն մշակմ ահա,  
Որ սարալանջին կորեկի նվազ  
Իր արտն է հնձում... Եվ Աղամոս՝  
Իր խենթ ու խելառ երազանքներով,  
Եվ սլահի պիտի այս գուսանը ծեր  
Խոսքովն իր արդարի... Եվ պահի պիտի  
Ծառն այս ծիրանի, որ արմատները  
Քարի մեջ խրած, պտուղ է տալիս...

(Անվում է ձիերի դոփյուն, Գորգիկ խևույս պարս և գայլա  
իջևանառնից):

### ԳՈՐԳԻԿ

i

Ձիերի դոփյուն... Ախորժալուր է  
Այդ ձայնն իԱՃ համար... Կին է առջևից,

**Մեծաշուք տիկին, իսկ ետևից ել  
Ծառաներն են յուր...**

(Զիերի դրվագունը կանգ է առնում, մտնում է Թուխմանը՝ գե-  
ղեցիկ, չքեղ):

### **ԹՈՒԽՄԱՆ**

**Ողջո՞ւն ամենքիդք**

### **ԳՈՐԳԻԿ**

**Ողջուն քեզ, հարգո, մեծաշուք տիկին:**

### **ԹՈՒԽՄԱՆ**

**(Դիտելով Խուշուշին)**

Որքան հանդուգն է այս արարածը,  
Նստել արանց դեմ, մազերն է հյուսում:  
Հանդուգն է, այո, զի գեղեցիկ է,  
Ի՞նչ մազեր ունի, մետաքս են ասես,  
Ծենաց աշխարհի ոսկեգույն մետաքս...  
Անունդ ի՞նչ է...

### **ԽՈՒՇՈՒՇ**

**Խուշուշ է, տիկին:**

### **ԹՈՒԽՄԱՆ**

**Եվ իմշո՞ւ ես դու եկել ու ընկել  
Այս անկյունը խոլ...**

### **ԽՈՒՇՈՒՇ**

**Է, բախտ է, տիկին:**

### **ԹՈՒԽՄԱՆ**

**Կշողշողայիր դու ԱՅիհ մեջ:**

## ԽՈՒՅՈՒՅ

Ում շողշողալու շնորհ է տրված,  
Ամենայն տեղ էլ կարող է շողալ:

## ԹՈՒԽԾԱՄ

Եկ, սիրումիկս, քեզ տաճեմ Ամի,  
Խմ տունը տաճեմ...

## ԽՈՒԾՈՒՅ

Ասում ես, սակայն  
Չես տաճի երբեք...

## ԹՈՒԽԾԱՄ

Այդ իմչո՞ւ, մոգիս...

## ԽՈՒՅՈՒՅ

Դե, դա շատ է պարզ... Իմբդ ասացիր,  
Որ գեղեցիկ եմ ու Ամիի մնջ  
Կարող եմ շողալ... Դու կԲանդուրժն'ա,  
Որ շողամ կողքիդ...

## ԹՈՒԽԾԱՄ

Օձի խելք ունես...

## ԽՈՒԾՈՒՅ

Խելք չունեմ, օ՛, ոչ, բայց այդ բաները  
Լավ գիտեմ, տիկին:

## ԹՈՒԽԾԱՄ

Երևում է պարզ,  
Որ թեև կյանքում դեռ շատ չես ապրել,  
Բայց շատ բաներ ես մաղել քո ճամփին

## ԽՈՒՅՈՒԾ

Շիշտ ևս երևի...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Իսկ թիմա, Խուզուշ,  
 Մի քան հարցնեմ... Ձեր այս կողմերում  
 Չի՝ երևացել մի քիչ խենթավուն,  
 Մի քիչ գեղեցիկ, արբենալ սիրող  
 Մի յափառական...

## ԽՈՒՅՈՒԾ

Երևացել է:

## ԹՈՒԽՆԾԱՄ

Ամունջ գիտե՞ս:

## ԽՈՒՅՈՒԾ

Գիտե՞մ՝ Աղամոս...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Եվ ո՞յլ է սակայն...

## ԽՈՒՅՈՒԾ

Լուսադեմին եր,  
 Եղավ ու գնաց դեպի Արագած:  
 Բայց քո ի՞նչն է նա, մեծաշուք տիկին,  
 Նա յափառական, իսկ դու...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Ի՞նչ...

## ԽՈՒՅՈՒԾ

Եքեղ

Ու մեծամարտուստ...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Արագա՞ծ գնաց ու ե՞տ է գալու:

## ԽՈՒՇՈՒԾ

Աճպայման, տիկին, իրիկնադեմիզ  
Այստեղ կլինի...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Ի՞նքը քեզ ասաց...

## ԽՈՒՇՈՒԾ

Ի՞նքը ինձ ասաց...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Իջևանատեր,  
Տար ծառաներին ու տեղավորիր:

(Գնում է):

## ԳՈՐԳԻԿ

Աչքունքիս վրա...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Լսեցի՞ր, վարպետ...

## ՔԵՐՈՎԲԵ

Լսեցի, այո...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Մի բան կա այստեղ:  
Ասում էի, չէ, որ Աղամուսը խորհրդավոր է:  
Ինչո՞ւ է, տեսնես, տիկինն այդ ջբեղ  
Ընկել ետևից...

## ՔԵՐՈՎԲԵ

Է, ի՞նչ իմանաս,  
Աշխարհը բարդ է, ու կյանքը՝ խրթիմ:

(Դարձրազ ծինորի դուիլում: Գորգիկը դուրս է գայլու, ձեռք  
անկատիմ՝ մաղում է մառուն):

## ԳՈՐԳԻԿ

Թո՛ւմ... Հոռոմներ են, այն էլ շատվորիկ,  
Կգամ, կլցվեմ, կուտեն, կխմեն,  
Կաղտոտեն չորս դիմ, մետո կգնամ,  
Մի քոռ պղիճճ իսկ չվճարելով:

## ՔԵՐՈՎԲԵ

Է՛, ձեզ ինչ ասեմ, Բայց իշխաններ,  
Է՛, քեզ ինչ ասեմ, դավաճան Սարգիս,  
Մարդօ էլ իր ոտողը, իր սուրբ Բայրեմիմ,  
Այն միակ բանը, որ չի վաճառվում,  
Օտարի՛ն ծախի... Դե լսիր ասեմ,  
Երեք բան կյանքում կործանարար են  
Հայրենիաց համար... Եվ առաջինը  
Երկառակության ախտն է մոլեգին,  
Որ ախտուուն է դավաճանության  
Ապա երկրորդը կաշառքն է, որով  
Անարդարության ուղին են հարթում...

(Մաղրածութ, որ մինչ այդ դուրս եր եկել ու լսում եր Քե-  
րովերիմ, ջարունակում է նրա խոսքը):

## ԾԱՂՐԱԾՈՒ

Երրորդն այն ձեռքն է բիրտ ու վայրենի,  
Որ իմաստունի բերանն է փակում  
Ու բացում լեզուն սուտ ու կեղծիքի...

(Մտմում են բյուզանդացի սպան ու գինվորները: Սպան գա-  
յուն է դեպի իշխանատում, իսկ գինվորները ձեռքի մտրակներով  
սկսում են Բայրածեղ ծիրանի ծառին, վերին ճյուղերի պտուղները  
թափելու համար):

## ՍՊԱ

Իշնանատերն ո՞վ է ձեզանից...

## ԳՈՐԳԻԿ

Ես եմ, քո ծառան...

## ՍՊԱ

Գիճի կրերես,  
Գառան խորովու և թարմ կարմրախայտ:

## ԳՈՐԳԻԿ

Գիթի կլիմի, նաև խորովու:  
Սակայն կարմրախայտ, կմերես, տիար,  
Չունեմ այս պահին:

## ՍՊԱ

Հրամայո՛ւմ եմ:

## ՄԱՂՐԱԾՈՒ

Այդ կարմրախայտը փոքրիկ է թեև,  
Բայց անհնազանդ մի արարած է  
Եվ հրամանով չի ելնում գետից,  
Չի պառկում իսկույն թեժ տապակի մնջ...

## ՍՊԱ

Հանդնում է, տես: Լինի կարմրախայտ...

(Նայեղով Խուշուշիթ)

Իսկ այս թոշնակը ո՞ր աշխարհից է  
Հայտնվել այստեղ...

(Մտմում է իշնանատում, իսկ զիթվորմանց ցարումակում են  
Ծորակներ ծիրամի ծառը):

## ՔԵՐՈՎՔԵ

Հե՛յ, Բե՛յ, զինվորներ,  
Մի՞քն չեք կարող մարդու պես քաղեւ..

## ԶԻՆՎՈՐ

Ծառը բարձր է շատ...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Այո, բարձր է շատ:  
Իսկ թե բարձր է շատ, ուրեմն պիտի  
Մտրակահարվի...

## ԳՈՒՍՏԱՆ

Ծիրանի իմ ծառ,  
Ծիրանի իմ ծառ,  
Այս շեկ ժայռի մեջ  
Ինչպե՞ս է մնում  
Մորճիկդ պայծառ,  
Պտուղդ պայծառ...  
Անցնող ու դարձող  
Քարով է տալիս,  
Փայտով է տալիս  
Ու խարազանով...  
Ինչպե՞ս է սակայն,  
Որ ապրում ես դեռ,  
Ինչպե՞ս է սակայն,  
Որ մնում է դեռ  
Մորճիկդ պայծառ,  
Պտուղդ պայծառ,  
Ծիրանի իմ ծառ,  
Ծիրանի իմ ծառ...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Վարպետ, չգնա՞մ, շանսատակ անեմ  
Այդ զինվորներին...

## ՔԵՐՈՎԲԻՆ

Տեղի վեր ընկիր,  
Նրանք զինավառ, իսկ դու մեն-մենակ,  
Մենակ ու անգեն... Խեղճ հայոց աշխարհ...  
Վեր կաց, զավակս, վեր, գնանք գետակ,  
Ես ոտից գլուխ այրպում եմ արդեն,  
Գնանք, գետակում զովանանք մի քիչ:

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Գնանք, այլապես համբերությունս  
Հասւնում է արդեն...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Ու մենք էլ առ հետո:

(Գնում եմ: Բեմում մնում է միայն Խուշուշը, և այդ ժամանակ դուրս է գալիս Սիմավոնը և նատում կողքին):

## ՍԻՄԱՎՈՒ

Ինչո՞ւ մանյակը դեն շպրտեցիր:

## ԽՈՒԾՈՒԾ

Ես չեի ուզում իմ պարանոցից  
Ծանրություն կախել... Բերած մանյակդ  
Ծանրագին էր շատ:

## ՍԻՄԱՎՈՒ

Եվ սակայն առաջ  
Դու սիրում էիր այդպիսի բաներ...

## ԽՈՒԾՈՒԾ

Ո՞ր կիզը կյանքում այդպիսի բաներ  
Զի սիրում, ասա...

## ՍԻՄԱՎՈՆ

Ի՞նչ, դադարե՞լ ես  
Դու կիմ լիմելուց...

## ԽՈՒԾՈՒՅԹ

Ընդհակառակը,  
Հեմց մոր է միայն, որ դառնում եմ կիմ։

## ՍԻՄԱՎՈՆ

Է՛ ի՞նչ կա Բապա...

## ԽՈՒԾՈՒՅԹ

Ոչինչ, պարզապես  
Ուզում եմ լիմել Բավքի պես ազատ։  
Տեսե՞լ ես, սակայն, որ Բավքը վգիմ  
Մամյակ ունեմա...

## ՍԻՄԱՎՈՆ

Դե, լսիր, Խուշով,  
Ամեա իմ գիտեմ, դու սեր ես ձգել  
Այդ Աղամոսին։ Սակայն այդ խենթը,  
Այդ շրջմոլիկը քեզ կկործանի  
Ու դեպի ամկում կտանի նա քեզ...

## ԽՈՒԾՈՒՅԹ

Օ՛, ամկումի մնջ սարսուռ կա ու դող,  
Խսկ ես այնպես եմ սիրում սարսուռ  
Եվ սիրում դողը...

## ՍԻՄԱՎՈՆ

Խենթացել ես դու,  
Սակայն լուրջ խոսենք։ Խուշով, ես կյանքում  
Սիրում էի քեզ, բայց չգիտեի,

Զի իմն էիր դու... Եվ սակայն թիմա,  
Երբ Աեռանում ես, գնում ես անդարձ,  
Ես մոր եմ զգում գիմն իմ կորստի  
Եվ չափն իմ սիրո ու տառապանքի:  
Ողջամիտ եղիր, եկ, գնանք Ամի,  
Մեր պսակն անենք Անվո տաճարում...

### ԽՈՒՅՈՒՆ

Ոչ, դա չի լինի, չի լինի երբեք...  
Եվ ինչո՞ւ ես դու այդպես գունատվել  
Եվ ինչո՞ւ ես դու այդպես դողդողում:

### ՍԻՄԱՎՈՆ

Եվ չե՞ն վախենում դու իմ վրեժից,  
Ես ահավոր եմ ու վրիժառու:

### ԽՈՒՅՈՒՆ

Ես ոչ մի բանից արդեն վախ չունեմ,  
Զի երջանիկ եմ...

### ՍԻՄԱՎՈՆ

Բայց նայիր, որ այդ  
Երջանկությունդ շատ կարճ չտևի...

### ԽՈՒՅՈՒՆ

Թեկուզ և մի օր, թեկուզ և մի ժամ...

(Մտնում է իշնանատութ)

### ՍԻՄԱՎՈՆ

Ես չգիտեի, որ այդքան աჩեղ,  
Ահավոր ես, խանդ... Եվ բացի այդ էլ,  
Թե Աղամոսն այդ իր ասած թրաշքն

**Իրապես անի, ապա կդառնամ  
Ես չնշիմ մի մարդ, չնշիմ արարած:**

(Գորգիկը քերում, սեղան է դնում կամարմերի տակ: Քիչ թե.  
Մոտ դուրս է գալիս բյուզանդացի սպան ու մատում է սեղանի մոտ:  
Սիմակը բարձրանում է տեղից ու մոտենում Արամ):

**Ողջո՞ւմ, զորապետ:**

**ՍՊԱ.**

**Ողջուն քեզ, ողջուն:  
Ո՞վ ես, ինչացո՞ւ...**

**ՍԻՄԱԿՈՆ**

**Վաճառական եմ:**

**ՍՊԱ.**

**Եկ, մատիր կողքիս, մեկտեղ ճաշ ամենք,  
Թե չէ մեն-մենակ տխուր է սաստիկ:**

**ՍԻՄԱԿՈՆ**

**Միրով, և սակայն ես պիտի լինեմ  
Հյուրասիրողը...**

**ՍՊԱ.**

**Խնդրեմ, օ՛, խնդրեմ,  
Ընորի կամես ինձ...**

(Խուշուշը քերում, ուսուելիք է դնում սեղանին: Սպան զար-  
կում է Խուշուշի թետույքին: Խուշուշը խփում է ծեռքին ու հե-  
ռանում):

**Բարբարո՞ս եք դեռ:  
Ես քնքշությամբ եմ մոտենում նրան,  
Նա զարկում է ինձ... Չէ, ազգ եք չնշին:**

## ՍԻՄԱՎՈՆ

Չնչին ենք գուցե, բայց ոչ բարբարոս...  
Ինչպես դեռ հնուց մեր քերթողահայր  
Մովսեսն է ասել, ածու ենք փոքրիկ,  
Բայց գործեր ունենք, որ արժանի են  
Հիշատակության...

## ՍՊԱ

Հիշատակությա՞ն...  
Այդ ի՞նչ գործեր են, որ ես չգիտեմ:

## ՍԻՄԱՎՈՆ

Եղել են և շատ... Եվ սակայն շուտով  
Հայոց աշխարհում կատարվի պիտի  
Այնպիսի մի գործ, որից դղութ  
Աշխարհը համայն...

## ՍՊԱ

Էլի՞ պարծեցաք...  
Մի ասա տեսնեմ, թե ի՞նչ գործ է դա:

## ՍԻՄԱՎՈՆ

Նախ մի-մի գավաթ դինի ճաշակենք:  
Թող ձեր մեծ կայսեր կենացը լինի  
Եվ քո կենացը լինի, զորապետ:  
Ձեր հովանու տակ աշխարհը հայոց  
Դր բախտը գտավ...

## ՍՊԱ

Քչերն են սալայն,  
Որ հասկանում են ճշմարտությունն այդ:

## ՍԻՄԱՎՈՆ

Զեր հովանու տակ ու ձեր զորությամբ  
Քարավաններս շարժում եմ ազատ  
Աշխարհից աշխարհ և գոր եմ անշափի...

## ՍՊԱ

Դու գործից խոսիր... Ի՞նչ գործ է, որից  
Դղրդա պիտի աշխարհը համայն...

## ՍԻՄԱՎՈՆ

Լսիր, զորապետ, Բայոց աշխարհում  
Ի Բայս է եկել իմաստուն մի մարդ,  
Մի մոգ, մի կախարդ, որ ի զորու է  
Ուկու վերածել մետաղներն ամեն...

## ՍՊԱ

Ի՞նչ, ի՞նչ ասացիր...

## ՍԻՄԱՎՈՆ

Այո, զորապետ,  
Ուկու վերածել մետաղներն ամեն:

## ՍՊԱ

Ես չեմ հավատում, մեզանում էլ կան  
Այդպիսի մարդիկ, սակայն ոչ մեկին  
Դեռ չի հաջողվել այդ հրաշքն անել:  
Ո՛չ, չեմ հավատում:

## ՍԻՄԱՎՈՆ

Ինքս էլ նախապես  
Չէի հավատում... Եվ սակայն հետո,  
Երբ հասու եղան ճրա արվեստին  
Ու հմտությանը, լցվեցի խորին,  
Ստույգ հավատով: Դո՛ւ էլ հավատա:

## ՍՊԱ

Ասենք, Բայ եք դուք և ընդունակ եք  
Ամենայն ինչի: Բայց ճանաշո՞ւմ են  
Դու այդ կախարդին:

## ՍԻՄԱՎՈՆ

Այն էլ շատ մոտից:  
Խորունկ միտք ունի, ամենագետ է,  
Աստծո մատը կա նրա ճակատին:

## ՍՊԱ

Բայց ո՞ւր է ապրում, որտե՞ղ է հիմա:

## ՍԻՄԱՎՈՆ

Այստեղ էր երեկ...

## ՍՊԱ

Այստե՞ղ և գնա՞ց...

## ՍԻՄԱՎՈՆ

Գնաց, բայց կգա... Այդպես, զորապետ,  
Շուտով, ჩենց վաղը հայոց աշխարհում  
Ուկին կդառնա այնքան լիառատ,  
Որ հավերն անգամ ոսկի կկտցեն,  
Եվ մենք կդառնանք մեծ ու զորավոր...

## ՍՊԱ

Այդպիսի բաներ, այդպիսի բաներ...  
Զարմանալի է, և սակայն, սակայն...

(Խոսքը կիսատ է թողնում: Բնմը դանդաղորեմ մթնում է ու  
հետո դանդաղորեն լուսավորվում: Պատի տակի գերաճին միայնակ  
նստած է Խուզուշը ու երկար-երկար նայում է ճանապարհին...  
Հանկարծ վեր է կենում, ձեռքը դնում ճակատին ու նայում հեռուց):

## ԽՈՒՅՈՒԾ

Նա՛ է, գալի՛ն է, նա՛ է, գալի՛ն է:

(Մտնում է իջևանատուն ու դուրս գալիս ջրով լի տաշտակը  
ձեռքին: Քիչ հետո մտնում է Աղամուք):

## ԱՂԱՄՈՍ

Ես եկա, Բոգիս: Իմ որոնածը  
Գտա ու եկա:

## ԽՈՒԾՈՒԾ

Դե, ճատիր, ճատիր,  
Քոշերդ հանեմ, ոտքերդ լվամ,  
Որ խոնջությունդ անց կենա մի քիչ:

(Աղամոսը ճատում է գերանին, Խուշուշը հանում է նրա քոշերդ և սկսում է եռանդով ոտքերդ լվանալու Հենց այդ պահին դուրս է գալիս Թուխամը):

## ԹՈՒԽԱՄ

Զարմացար անշուշտ...

## ԱՂԱՄՈՍ

Զարմացա, բայց քիչ...

## ԹՈՒԽԱՄ

Է՛յ, Խուշուշ աղջիկ, չքվիր այստեղից:

## ԽՈՒԾՈՒԾ

Ես գործ եմ անում:

## ԹՈՒԽԱՄ

Մի սրա՞ն նայիր...

## ԽՈՒԾՈՒԾ

Թե ինձ շատ նայի, վնասը քոնն է:

## ԹՈՒԽԱՄ

Լսեցի՞ր, տեսա՞ր այս ծամկտրանին:

## ԽՈՒՅՈՒՆ

Ե՞ս եմ ծամկտրած... Ծամերիս նայիր,  
Հասնում են մինչև իմ կրունկները  
Եվ Աղամոսին շատ են դուր գալիս...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Այդ ե՞րբ հասցրիր խելքահան ահել  
Եվ այս աղջկան... Սրբի տեղ դրել,  
Չոքել է քո դեմ...

## ԽՈՒՅՈՒՆ

Նա սուրբ է, իրավ...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Սուրբ է, ինչպես չե...

## ԱՂԱՄՈՍ

Դու գնա, Խուշուշ,  
Ես Թուխնամի հետ քիչ զրույց կանեմ,  
Խսկ դու հաց սարքիր:

## ԽՈՒՅՈՒՆ

Թե դու ես ասում,  
Խսկույն կգնամ:

(Գնում է):

## ԱՂԱՄՈՍ

Ինչո՞ւ ես եկել...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Եկա ասելու, որ ատում եմ քեզ,  
Որ անիծում եմ այն օրն ու ժամը,  
Երբ հանդիպեցինք:

## ԱՂԱՄՈՍ

Իսկ ես օրինում եմ:  
Թող օրինյա՛լ լինի այդ օրն ու ժամը,  
Զի մենք կարճ մի պահ երջանիկ եղանք:

## ԹՈՒԽԾԱՄ

Եվ այդ կարճ պահը ինձ համար դարձավ  
Անվերջանալի, երկար տառապանք:

## ԱՂԱՄՈՍ

Տառապա՞նք... ինչո՞ւ... սիրո պարգևած  
Տառապանքները վայելք են նույնպես:

## ԹՈՒԽԾԱՄ

Թող տերը քեզնից անպակաս անի  
Այդ վայելքները...

## ԱՂԱՄՈՍ

Սիրով կը նդումնեմ...

## ԹՈՒԽԾԱՄ

Բայց ընդունակ չես դու տառապելու,  
Զի անզգամ ես... Հիշիր այն օրը,  
Մեր հանդիպումի առաջին օրը...  
Ես քեզ կանչեցի, որ դու զմոսես  
Դիակն ամուսնուս, բայց դու ոչ վիշտս  
Ու ոչ սկերս հարգեցիր այնժամ  
Եվ սկսեցիր ինձ սիրահետել...

## ԱՂԱՄՈՍ

Դու քո վշտի մեջ ու սկերի մեջ  
Գեղեցիկ էիր ու անմատչելի...  
Իսկ անմատչելին իմ երազանքն է  
Ու իմ տենչանքը...

## ԹՈՒԽՆԾԱՄ

ԵՎ ԱԿԱԵցիր

Վարպետորդու պես խայծերդ ճետել...

## ԱՂԱՄՈՍ

Ես քո ականջին ասացի միայն,  
Որ քո վշտի մեջ ու սների մեջ  
Շատ ես գեղեցիկ... Եվ, խոսքը մեր մեջ,  
Դա դուր եկավ քեզ...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Անիծյալ լինեմ...

Օ՛, ես փոխանակ շաշուն ապտակով  
Դեմքդ այրելու, փխրեցի իսկովն:  
Ի՞նչ գտա քո մեջ... Բյուր պայազատներ,  
Մեծատոհմիկներ միայն քղանցքիս  
Դիպչելու համար հոգի կտային...  
Ի՞նչ գտա քո մեջ, քո այդ վայրենի,  
Բիրտ հայացքի մեջ, որ ամենայն ինչ  
Փոեցի քո դեմ...

## ԱՂԱՄՈՍ

Ընորհապարտ եմ

Քո սիրո համար ու քո քնքշանքի,  
Ընորհապարտ եմ քո մարմնի համար,  
Ուր բնակվում է արարիչ ոգին,  
Կյանքի խորհուրդն ու երանությունը...

## ԹՈՒԽՆԾԱՄ

Ընորհապարտ ես... Եվ սակայն հետո  
Կանացիական հպարտությունս  
Ունատակ տալով, փախար տմարդի...

## ԱՂԱՄՈՍ

Ե՞ս...

## ԹՈՒԽԾԱՄ

Մոռացե՞լ ես դու այն գիշերը...

## ԱՂԱՄՈՍ

Այդ ո՞ր գիշերը...

## ԹՈՒԽԾԱՄ

Վերջին գիշերը...

(Բնմը դաճաղորեն մթնում է: Քարե Ակուղ, Բորբոք վառվում է քուրած: Քուրային դրված կավե անոթների դեմ Աղամոսը հեթանոս քուրմի նման ծնկաչոք՝ ինքը իրեն խոսում, ասես աղոթում է):

## ԱՂԱՄՈՍ

Տե՛ր, սատար եղիք, մերթ թվում է թե  
Ուկու փայլ առավ ու մերթ այդ փայլը  
Երազի նման ցնդում է անհետ...  
Թող քիչ էլ եռա... Մոլեգնությունը  
Պակասում է դեռ... Իսկ երբ թերի է  
Մոլեգնությունը, ծնածը միշտ էլ  
Թերի է լինում և օրապակաս...

(Մոմի աշտանակը ձեռքին գիշերալին թափանցին զգեստով  
Ակուղ է իշնում Թուխծամը):

## ԹՈՒԽԾԱՄ

Դեռ չե՞ս ավարտում այդ մոգությունդ,  
Որ գնանք վերն...

## ԱՂԱՄՈՍ

Ո՞ւր գնանք, հոգեկ...

## ԹՈՒԽԾԱՄ

Այդ ինչպե՞ս թե ուր... Մեր անկողինը  
Բացել եմ վաղուց, թեզ եմ սպասում:

## ԱՂԱՄՈՍ

Ա՞յս, անկողինը... Թուխծամ, հասկացիր,  
Այս գիշեր կյանքիս ժամն է գերագույն,  
Շուտով, շատ շուտով երազս պիտի  
Ցոլցլա իմ դեմ... Ցոլցլա ամբողջ  
Իր շքեղությամբ... Եվս մի վայրկյան,  
Մի քանի վայրկյան... Նայիր, մի՞թե սա  
Ցոլանք չէ ոսկու... Նայիր, մի խոսիր...

(Իրար Բենված նայում են երկար-երկար, Բետո Աղամոսը  
զայրացած շուռ է գալիս):

Թո՞ւի, չար սատանա, անիծյալ գրող,  
Խարերա տեսիլք, Անճավոր ցնորք,  
Ցոլանքը խամրեց, խամրեց ու կորավ...  
Եվս մի վայրկյան, մի քանի վայրկյան  
Ու շողար պիտի...

## ԹՈՒԽԾԱՄ

Չի՝ շողա, գնանք...

## ԱՂԱՄՈՍ

Այս, դո՞ւ էլ, դո՞ւ էլ ինձ չես հավատում...

(Գլուխմ առնում է ափերի մնջ, Հատում քարն հստարանիմ:  
Թուխծամը գնում, բացում է կողքի դուռը և թիշ Բետո վերադառ-  
նում, ձեռքին մի մեծ սինի՝ լի ոսկով ու անգին քարերով):

## ԹՈՒԽԾԱՄ

Ահա քեզ ոսկի ու անգին քարեր,  
Գանձարաններս լիքն են դրանցով,  
Առ, որքան կուզես, միայն ձեռք քաշիր  
Այդ սին ու պատիր երազանքներից:

(Աղամոսը գլուխը բարձրացնում, նայում է իրեմ պարզած  
սիմուա, ելում է տեղից, ոտքով հարվածում սինում, որ յօշում

Է Թուխմամի ձեռքից: Թուխմամը սկսում է շոյեկ Աղամուֆի մա-  
զերը):

Խենթս, միակս, տանջվածս, լավս,  
Իմ բարբարոսս, եկ գնանք վերև,  
Գնանք՝ այդ հոգնած ճակատդ շոյեմ,  
Գնանք՝ Բանդարտեմ քո այդ բիրտ արյան  
Վայրենի եռքը... Գնանք, բարբարոս...

### ԱՂԱՄՈՍ

(Հանկարծ վեր է թոշում)

Օ՛, սքանչելի իմ ճախողոթյուն,  
Որ մայրն ես գյուտի, գտա վերջապես...  
Գտա... Այդ քարն էր, այո, այդ քարն էր  
Միայն պակասում ,որ շողար ինքը՝  
Ինքը՝ հրաշքը... Գտա ու գնամ  
Նրա ետևից...

### ԹՈՒԽՄԱՄ

Սպասի՛ր, իմ բիրտ,  
Լուսաբացին էլ կարող ես գնալ...

### ԱՂԱՄՈՍ

Գտա... Գնացի... Գտա... Գնացի...

(Բեմը լուսավորվում է: Աղամոսն ու Թուխմամը նորից կանգ-  
նած են իրար դեմ):

### ԹՈՒԽՄԱՄ

Եվ մոռացե՞լ ես դու այդ գիշերը...

### ԱՂԱՄՈՍ

Եվ դա գիշե՞ր ես անվանում դու լոկ... \  
Դա Բույսի թոհչք և երազանքի  
Անկում էր դաժան: Այն ակնթարթն էր,

Երբ մողե մարդն ու ոգեղեմ աստված  
Իրար դեմ-դիմաց կանգնում են որպես  
Ամեղ ախոյան: Այն ակնթարթը,  
Երբ իրար գալիս ու կայժակնային  
Մի բռնկումով միաձուլվում են  
Կյանքի գաղտնիքն ու խորհուրդը մարի:

### ԹՈՒԽԾԱՄ

ԵՎ ես չկայի այդ վայրկյամիդ մեջ...

### ԱՂԱՄՈՍ

Անդունդ էիր դու, ճգում էիր վար,  
Պիտի թռչեի ես այդ անդունդով...

### ԹՈՒԽԾԱՄ

ԵՎ թռար... Այն էլ բարբարոսի պես:  
Լսի՞ր, Աղամոս, միտքս թշնամիդ  
ԵՎ սակայն սիրտս քո ճորտն է հլու...

### ԱՂԱՄՈՍ

Իսկ իմ մեջ, Թուխծամ, ընդհակառակն է...  
Միշտքս ասում է՝ ողջամիտ եղիր,  
Թուխծամը լավն է, նա ամենալավ  
Կիմն է աշխադին ու սիրում է քեզ,  
Նրա մոտ գնա: ԵՎ սիրտս սակայն  
Հմբուտանում է իւ ուղեղի մեջ:

### ԹՈՒԽԾԱՄ

Ինչո՞ւ է այդպես, ինչո՞ւ է այդպես...

### ԱՂԱՄՈՍ

Չգիտեմ, Թուխծամ, չգիտեմ ոչիմչ...  
Կգա ժամանակ, երբ մարդն աշխարհում

Աստծո օգնությամբ և իր սեփական  
Մտքի գորությամբ կրացի գաղտնիքն  
Ամենայն նյութի ու երևույթի,  
Սակայն մի գաղտնիք կմնա հավետ  
Անլուծանելի... Գաղտնիքը սիրո...

### ԹՈՒԽԾԱՄ

Հենց այդ գաղտնիքն է տոշորում հոգիս...  
Երբ դու մեռացար, ինձ այնպես թվաց,  
Թե ինձ ձգեցին անապատ մի չոր:  
Ու ոտից գլուխ այրվում էի ես:  
Քեզ էր պահանջում արյունն իմ ծարավ,  
Եվ իմ ձեռքերի տիսոր քնքշանքը  
Քեզ էր աղերսում... Հիմա էլ ահա  
Այդ աղջնակը, այդ լիրը Խուզուշը...  
Լսիր, Աղամոս, եկ գնանք ինձ մետ...

### ԱՂԱՄՈՍ

Գնանք, ծվարենք քո ճոխ պալատում,  
Ուտենք, հղիանանք ու ճարպակալած՝  
Փուե՞նք ձանձրույթից... Չէ, Թուխծամ, երբե՞ք...  
Դա իմ բախտը չէ: Ես գնամ պիտի,  
Թափառեմ անվերջ, որոնեմ պիտի...

### ԹՈՒԽԾԱՄ

Դու քո գտածն ես ուզում կորցնել  
Եվ որոնում ես այնպիսի մի բան,  
Որ չես գտնելու...

### ԱՂԱՄՈՍ

Կգտնեմ, Թուխծամ,  
Որոնեմ պիտի ու փորձեմ անվերջ,  
Ու թե չգտնեմ, բյուր անգամ դարձյալ  
Որոնեմ պիտի... Ինձ որոնումի

**Երջանկությունը և հրաշքն է պետք:  
Որոնեմ պիտի, ինձ հրաշքն է պետք...**

(Իջևանառնից նախ դուրս է գալիս Միմավոնը, ապա Շաղ-  
րածուն՝ լարախաղացների, աճպարաբների, նվագածուների մետ)

### **ՍԻՄԱՎՈՆ**

**Եկա՞ր, Աղամոս...**

### **ԱՂԱՄՈՍ**

**Փա՛ռք համբարձյալին,  
Փնտրածս գտա, գտա ու եկա...**

### **ՍԻՄԱՎՈՆ**

**Եվ ի՞նչ...**

### **ԱՂԱՄՈՍ**

**Այս գիշեր հրաշք կլինի...**

### **ՍԻՄԱՎՈՆ**

**Չի լիմի հրաշք, չի լինի երբեք...**

### **ԾԱՂՐԱԾՈՒ**

**Իմ աճպարաբներ, լարախաղացներ,  
Դե, ասեք, լսենք, կլինի՞ հրաշք...**

### **ԾԱՂՐԱԾՈՒԻՆ ԽՈՒՄԲԸ**

**Առանց հրաշքի լույսը չի բացվում,  
Առանց հրաշքի չի բխում աղբյուր,  
Ծիլը չի ծլում առանց հրաշքի,  
Առանց հրաշքի Բավքը չի թռչում...**

## Երկրորդ պատկեր

(Քարաք լու ժայռերի արամբում հրանք է վատզում, և ամբողջ թեմը ողողված է կարմիր Բրացություն։ Կրակիմ կավե կագռակ է դրված։ Աղամոս ու Խոչշուշը կանգնած են կրակի դեմ)։

### ԽՐԻՍՈՒԹ

Ա՞ն, ինչ գուշներ են այս կաթուայի մեջ,  
Աստղեր են ասես ծնվում ու մարում  
Ու մոր ասսուայի հն ծնվում վերստին...  
Այս ինչ գեղեցիկ մոլեգնություն է,  
Եվ ինչ խոռվք է... Հավատա, Խոգիս,  
Իմ սիրտն է հիմա խոյն վիճակում է։

### ԱՂԱՄՈՍ

Եվ մարդու համար յոկ այդ վիճակն է  
Բնական վիճակ... Երբ որ չի սիրում  
Մարդ արարածը, ուրեմն թերի  
Ու անկատաք է։ Նյութը էլ է այդուես  
Եվ ունի հոգի... Պղիճճը, ահա,  
Զգտել է ասես, որ դառնա ուկի,  
Բայց չի խոռվել այնքան մոլեգին,  
Որ ազնվանա։ Այս, նյութերն էլ  
Ոգեղեն են միշտ... Եվ ես կրակով  
Ոզում եմ հիմա այնպես խոռվել  
Նյութի պաղ ոգին, որ ճառ էությամբ  
Ընթանա դեպի կատարելություն...»

### ԽՈՒԾՈՒԹ

Աղամոս, հոգիս, մի սև խոռվք է  
Խրիկմամուտից իմ սիրտը մտել  
Ու տանջում է ինձ։ Չե՞ս ասի արդյոք,  
Թե մեծաբարուստ, սիրուն տիկինն այն  
Ի՞նչ ումեր քեզ հետ և ի՞նչ էր ուզում։

### ԱՂԱՄՈՍ

Իմ սերն էր ուզում...  
\\

## ԽՈՒՅՈՒՅ

Եվ նրան թողած,  
Դու ի՞նձ ես սիրում...

## ԱՂԱՄՈՍ

Սպասիր մի պահ...

(Պարկից ինչ-որ բաներ է Բաթուն ու ցույց տալիս Խուզովին)

Տեսնո՞ւմ ես իրմ այս...

## ԽՈՒՅՈՒՅ

Երկաթ և այր...

## ԱՂԱՄՈՍ

Բայց ոչ պարզ երկաթ, մագմիտիս է առ,  
Խենթ հոգի ումի: Ռսկ սա երկաթ է,  
Մոտեցմուն եմ, տես, ձգեցին իուար  
Ու կպան իրար...

## ԽՈՒՅՈՒՅ

Այս, իրավ, կպան,  
Այդ ինչպե՞ս եղավ, ձգեցին իրար  
Ու կպան իրար... Այդ ինչպե՞ս եղավ,  
Հրաշք է ասես...

## ԱՂԱՄՈՍ

Իսկ սա դրամ է,  
Ուկեղրամ է, մոտեցմուն եմ, տես,  
Նույն մագնիտիսին... Չեն ձգում սակայն,  
Չեն կպչում իրար...

## ԽՈՒՅՈՒԾ

Չե՞ն կաշում, իրավ...  
Բայց ի Աչ, Զա ոսկի, ու երկա՞թ եմ ես...

## ԱՂԱՄՈՍ

Երկա՞թ... Աշխարհի քնքշանքն է քո մեջ,  
Քո մատների մեջ, քո պարանոցի  
Եվ քո կոպերի նվազումներում...  
Քնքշություն ես դու և կրակ ես դու,  
Իսկ ես աշխարհում կրակն եմ սիրում,  
Կրակից մաքոր ոչ մի բան չկա:  
Նայիր այս բոցին, ասես իրանիդ  
Բեկրեկումն է սա... Իսկ այս բոցը շեկ  
Ասես ծփանքն է ոսկե մազերիդ:  
Եվ այս կայծերը, որ մերթ հանգչում են  
Ու մերթ բռնկվում, այնպես նման են  
Առեղծվածային քո հայացքներին:  
Ու երբ քեզ տեսա, մեկն այդ կայծերից  
Իմ սիրտը ընկավ, իսկ սիրտս, Խուզուշ,  
Շա՞տ է դյուրավառ:

## ԽՈՒՅՈՒԾ

Աստված իմ, աստված,  
Եվ այդ ժամանակ իհշպիսի խոսքեր  
Ասացիր դու ինձ, ու ես խենթացաւ  
Եվ իմ գլուխը այնպես պտտվեց,  
Ասես թե եկել, կանգնել էի այս  
Անդունդի եզրին: Դու օր ցերեկով  
Անդունդն այս տեսել ու նայե՞լ ես վար...

## ԱՂԱՄՈՍ

Տեսել եմ, Զայել: Ի՞նչ անտակ ամդունդ,  
Ի՞նչ վիր է խորին... Այս անդնդաշատ  
Հայոց աշխարհում դեռ չէի տեսել  
Այսպիսի անդունդ: Ու երբ կանդ առա

Ու վար նայեցի, ձգում էր նա ինձ,  
Դնչանս աչքերդ են ձգում, սիրելիս,  
Հոգիդ է ձգում...

### ԽՈՒՇՈՒԾ

Դեռ այս անդունդը  
Չի իջել ոչ ոք, դեռ մարդկային ոտք  
Չի դիպել այնտեղ: Արծիվն է միայն  
Երբեմն իշնում ահեղ կոհնչով:

### ԱՂԱՄՈՍ

Ու ես այս տեղը ընտրեցի, Խուշուշ,  
Որ հեռու լինի մարդկային աչքից,  
Ու մեր կրակը չտեսնի ոչ ոք:

### ԽՈՒՇՈՒԾ

Նստեմ, Աղամոս, և դու գլուխադ  
Դիր իմ ծնկներին, որ ես քո այրվող  
Ծակատը շոյեմ, քո բաշը շոյեմ,  
Գուրգուրա՞մ վրադ...

(Խուշուշը նստում է, Աղամոսը գլուխադ դնում է նրա ծնկներին):

### ԱՂԱՄՈՍ

Կյանքն ինչ ահեղ է  
Ու երանելի: Որքան հրճվալի  
Պահեր է նա դեռ պահել ինձ համար:  
Ես առավոտյան քո ստիճաների  
Թրթիոն զգացի, բայց դեռ չեմ տեսել  
Նրանց լույսը սուրբ...

### ԽՈՒՇՈՒԾ

Կտեսնե՞ս, հոգիս...

## ԱՂԱՄՈՍ

Նոր Բացի բույրը առա քո մարմնից,  
Բայց չեմ ճաշակել դեռ ոչ մի պատահ:

## ԽՈՒՇՈՒԾ

Ու կճաշակե՞ս... Ես քոնն եմ, Բոգիս,  
Ես ոտից գլուխ քո զոհն եմ խոնարի...

## ԱՂԱՄՈՍ

Ոչ, իմ պարգևն ես: Իմ այսքան, այսքան  
Խոնջենքից Բետո ու տառապանքից,  
Տերն ինքն ի վերուստ ինձ շնորհ արեց  
Եվ ինձ պարգևեց Բայտնությունը քո...

## ԽՈՒՇՈՒԾ

Երջանիկ եմ ես... Առաջին անգամ  
Իմ ամբողջ կյանքում երջանիկ եմ ես:  
Պարզի՞ր, Աղամոս, ի՞նչ բան է արդյոք  
Երջանկությունը...

## ԱՂԱՄՈՍ

Երջանկությո՞ւնը...

Ինքս էլ մի կարգին չգիտեմ, Խուշուշ,  
Երեխ կյանքում որոնումն է դա,  
Այս ապականված ու չար աշխարհում  
Լուսի որոնում, քարու որոնում,  
Լեռնային մաքուր, պայծառ աղրյուրի,  
Անձանոթ ծաղկի, անձանոթ Բավթի,  
Անձանոթ աստղի Բավե՞րժ որոնում...

## ԽՈՒՇՈՒԾ

Դու Բայտնվեցիր, ու երջանիկ եմ,  
Այնքան երջանիկ, որ վախենում եմ,  
Ես չգիտեի, որ, այո, կյանքում

Երջանկությունն էլ կարող է լինել  
Այսքան ահավոր... Լսո՞ւմ ես, Բեռվից  
Իմչ-որ մի բու է անվերջ կոնչում,  
Եվ ահավոր է կոհնչը ճրա:

### ԱՂԱՄՈՍ

Այնտեղ քիչ Բեռու ավերակներ կան,  
Սուավոտ տեսա, ավերալից է  
Կոնչում այդ բուն...

### ԽՈՒՇՈՒԾ

Ես վախենում եմ  
Այդ Սիմավոնից, ահավոր է նա...  
Երբ Բետս խոսեց, դողում էր այնպես  
Ու գունատ էր խիստ... Այդ ավերակից  
Ես ճրա ձայնն եմ ասես թե լսում,  
Բայց չեմ վախենում, զի ինձ Բետ եւ դու...

### ԱՂԱՄՈՍ

Ու մի վսիթենա...

(Բարձրանում է տեղից, մոտենում է կայսերին):

Տե՛ս, կաթսայի մեջ  
Ծիածաններ են արդեն գոյանում:

(Ծոցից Բանում է մի մազաղաթ ու երկար նայում: Նրանք  
չեն նկատում, որ բյուզանդացի սպան ու զինվորներն անձայն  
գալիս ու մթան միջից Բետնում են իրենց: Աղսմուք մագաղաթը  
ծոցն է դնում ու աղոթքի պես սկսում է շշնչագ):

Իսկ Բիմա ահա աստծով առնեմ  
Մի նուկի մառեխ և ապա առնեմ  
Մի նուկի ծծումք, գումարեմ նաև  
Մի բուռ մուղթարի և առավելս  
Կրակն արծարծեմ...

## ԽՈՒՇՈՒՇ

Ինչե՞ր ես խոսում,  
Քո ասածներից քան շհասկացա...

## ԱՂԱՄՈՍ

Ու չես հասկանա... Ծածով լեզու է,  
Աղավնալեզու: Իսկ հիմա ահա  
Ուրբաթը դնեմ այս լուծովյթի մեջ  
Եվ դնեմ ապա քարն իմաստության  
Եվ առավելս կրակն արծարծեմ...

## ԽՈՒՇՈՒՇ

Նայի՞ր, Աղամոս, ճայիր, պղինձը  
Արդեն սկսեց ոսկու փայլ առնել...

## ԱՂԱՄՈՍ

Այո, սկսեց... Փառք քեզ, արարիչ,  
Փառք ու գոհություն, որ չզլացար  
Ու ինձ մեկնեցիր այս Բրաշքը սուրբ...  
Կարծես, հիրավի, շողում է ոսկին:  
Եվս կարճ մի պահ՝ ու նա կհասնի  
Կատարելության...

## ԽՈՒՇՈՒՇ

Սակայն ինչ չար է  
Կոնչում այդ բուն, ու ես ահավոր  
Զայներ եմ լսում այդ ավերակից  
Ու մոլք անդունդից... Իսկ դու, Աղամոս,  
Զայներ չե՞ս լսում...

## ԱՂԱՄՈՍ

Ես հիմա միայն  
Քո ձայնն եմ լսում ու ձայնն եմ լսում

Լոկ այս կրակի... Ի՞նչ հիասքանչ է  
Կրակը երգում...

(Մի պահ լոռում է ու ասես երազի մեջ շնորհում)

Դու այս մասրենու  
Թփի՞ց դուրս եկար, թե՞ այն գետակի  
Ծերմակ փրփուրից... Զերոնք գետափին  
Մատաղ են մորթում, և ալ արյունը  
Հոսում է հիմա, գնում, խառնվում  
Գետակի մաքո՞ր, մաքո՞ր ջրերին...

### ԽՈՒՇՈՒՅԾ

Ի՞նչ մասրենու թուփ, ի՞նչ մատաղ է դա,  
Դարձյալ ոչ մի բան չեմ հասկանում ես...

### ԱՂԱՄՈՍ

Ախ, ոչինչ, ոչինչ... Զգիտեմ ինչու  
Հանկարծ հին մի Բուշ հենց այս վայրկյանին  
Այցի եկավ ինձ:

(Սպան ու գինվորները մոտենում են նրանց):

### ՍՊԱ.

Այս ի՞նչ ես այստեղ  
Եփում, բարեկամ...

### ԱՂԱՄՈՍ

Ապուր է, տիար...

### ՍՊԱ.

Ապուր է, այո, գիտեմ ինչ ապուր,  
Քաջատեղյակ եմ ես ամեն ինչի:

## ԱՂԱՄՈՍ

Մատնե՞լ են, այո՞, այդ Սիմավո՞նը...

## ՍՊԱ

Մատնե՞լ... Ոչ, ինչո՞ւ... Պարծեցել է լոկ  
Քո իմաստությամբ ու քո արվեստով,  
Լսիր, ուրեմն, թե ինչ եմ ասում.  
Առ այդ ապուրդ ու գնաճք ինձ հետ,  
Տանեմ Բյուզանդիոն:

## ԱՂԱՄՈՍ

Ի՞նչ եմ կորցրել  
Քո Բյուզանդիոնում...

## ՍՊԱ

Բան չես կորցրել,  
Սակայն կգտնես փառքն ու պատիվը  
Պալատականի ու մագիստրոսի:

## ԱՂԱՄՈՍ

Ես պալատների ապրանք չեմ, տիար,  
Ծրջմոլիկ եմ ես ո. թափառական,  
Եվ այդ փառքը ինձ բավ է լիուլի:

## ՍՊԱ

Բայց նպատակն ես դու Բյուզանդիոնի  
Եվ պարտավոր ես ինձ Բպատակվել:

## ԱՂԱՄՈՍ

Իսկ ես ել, տիար, նրա Բամար եմ  
Այս բոցը վառել, որ ել շլինեմ  
Հպատակը քո: Համբերիր մի քիչ,  
Հենց որ այս գործը ավարտի բերեմ,

Ոսկով կրեռնեմ գրաստները քո:  
Գիտեմ, որ շատ ես սիրում դու ուսկի,  
Անչափ ես սիրում... Աշխարհի վրա  
Ամեն ինչից շատ ուսկի ես սիրում:  
Այդպես չե՞, տիար, ճիշտ չեմ ասում ես...

### ՍՊԱ

Մի շաղակրատիր: Հրամայում եմ՝  
Առ այդ ապուրդ ու գնանք ինձ հետ..

### ԱՂԱՄՈՍ

Այս, բեռներդ ոսկով կրարձեմ,  
Առոք ու փառոք կուղարկեմ քեզ տուն.  
Եվ դա կաշառք չե, պարզապես՝ նվեր...

### ՍՊԱ

Դե, բավակա՞ն է, վերջ տուր ասացի...

### ԱՂԱՄՈՍ

Ոսկի փոեմ զինվորներիդ դեմ,  
Եվ ոսկու համար նրանք կակսեն  
Իրար միս ուտել ու կոկորդ կրծել,  
Եվ շունչ կբաշի աշխարհը հայոց:  
Դե, ասա, ասա, թե զինվորներդ  
Չեն սիրում ոսկի ու ոսկու համար  
Կոկորդ չեն կրծի...

### ՍՊԱ

Համբերությունն

Մի շարաշահիր...

### ԱՂԱՄՈՍ

Համբերող եղիր  
Ու քիչ էլ լսիր: Ով ոսկի ունի,

Հարգում են նրան: Ես իմ հայրենյաց  
Նժարի վրա ոսկի կղնեմ,  
Լեռնաշափ ոսկի... Եվ ուզած-չուզած  
Քո ագար կայսրը գլուխ կթեքի  
Ոսկու շողշողուն այդ լեռների դեմ...

### ՍՊԱ

Բարբարոս արմեն... Թե կամքով չդաս,  
Ապա կտանեմ քեզ շղթայակապ:

### ԱՂԱՄՈՍ

Թե բարբարոս եմ, ինչո՞ւ ես հապա  
Կողոպտել ուզում մտքիս և մոգուս  
Հրաշալիքը...

### ՍՊԱ

Ասացի ես քեզ...  
Դու հպատակն ես մեծ Բյուզանդիոնի,  
Այդ իսկ պատճառով նրանք են նաև  
Քո միտքն ու մոգին...

### ԱՂԱՄՈՍ

Այդ ի՞նչ ասացիր,  
Նաև իմ մի՞տքը... նաև իմ մոգի՞ն...  
Հա՛-հա՛-հա՛-հա՛-հա՛...

### ՍՊԱ

Զինվորներ, ի գեն...

### ԽՈՒՅՈՒՅ

(Խույուչն ինքն իրենով ծածկում է Աղամոսին ու գոռում):

Հե՛յ, հե՛յ, արթնացե՛ք, օգնեցե՛ք, մարդիկ...

(Զինվորները մի պահ վարանում են: Հենց այդ ժամանակ գիշերային շաբաթով, մագերն արձակ, Աևասպատ թեմ է ընկնութուխնամը ու Առվնապես ինքն իրենով ծածկում Աղամոսին):

Հե՞յ, Բե՞յ, արթնացե՞ք, օգնեցե՞ք, մարդիկ...

### ԹՈՒԻԽԾԱՄ

Զայնդ չի հասնի... Ես չար երազից  
Վեր թռա հանկարծ ու դուրս նետվեցի:

### ՍՊԱ

Ես կարծում էի, անպաշտպան է սա,  
Բայց ինչ գեղեցիկ ու ինչ վայրենի  
Պաշտպաններ ունի...

### ԹՈՒԻԽԾԱՄ

Զեռք չտաք նրան,  
Ես ձեզ բոլորիդ ոսկով կողողեմ,  
Զեռք չտաք նրան:

### ՍՊԱ

Քո ոսկին, տիկին,  
Թողլ որ առայժմ իր տեղում մնա,  
Մեզ թիմա միայն այս ոսկին է պետք:

### ԽՈՒՇՈՒԾ

Հե՞յ, Բե՞յ, արթնացե՞ք, օգնեցե՞ք, մարդիկ...

### ՍՊԱ

Զինվորներ, իսկույն ոլորեք թևերն  
Այդ էգ վագրերի ու ամուր պահեք...

(Զինվորները ոլորում են նրանց թևերը: Սպան մոտենում է Աղամոսին):

Ցուր մագաղաքն ալն, որ թաքցրել ես  
Քո կրծքի վրա...

### ԱՂԱՄՈՍ

Ո՛չ, չես ստանա...

### ԽՈՒԾՈՒՅԹ

Ա՞ն, տուր, Աղամոս...

### ԹՈՒԽՆԾԱՄ

Աղաշում եմ, տո՛ւր...

### ԱՂԱՄՈՍ

Ո՛չ, չի ստանա... Տիրեմն ձերն ան  
Նաև իմ մի՞տքը, նաև իմ հոգի՞ն...  
Դուք այդ երկուսն էլ հիմա կստանաք...

(Աղամոսը ոստնում, վերցնում է կաթսան ու մկում է ժայռվ վեր բարձրանալի Հայտնվում են Ծաղրածուն, աճպարաները,  
լարախաղացները):

### ԽՈՒԾՈՒՅԹ

Կանգ առ, Աղամոս, անդունդ է ցածում,  
Անդո՞ւնդ է, անդո՞ւնդ...

### ԱՂԱՄՈՍ

Անդունդ է, գիտեմ...

### ՍՊԱ

Հիմար արմենը այդ ի՞նչ է անում...

### ԾԱՂՐԱԾՈՒ

Բարձրանում է վեր...

## ՍՊԱ

Բայց ինչո՞ւ Բամար...

## ԾԱՂՐԱԾՈՒ

Որ նետվի ներքն...

## ԽՈՒԾՈՒԾ

Կանգնի՛ր, Աղամոս,  
Գալի՛ս եմ, կանգնիր...

## ԱՂԱՄՈՍ

Չէ՛, չգաս, Բոգիս...

## ՍՊԱ

Զինվորնե՛ր, Բասեք, բռնեցեք նրան..

(Խուզուշն ու զինվորները ակտում են մագլցել ժայռն ի վեր,  
բայց զինվորները իրար ետևից վար են գրորվում, և միայն Խու-  
զուշն է, որ թերեւ ու ճարապիկ մագլցում է վեր):

## ԽՈՒԾՈՒԾ

Կանգնի՛ր, Աղամոս...

## ԱՂԱՄՈՏ

Չէ՛, չգաս, Բոգիս...

(Աղամոսը նետվում է ներքն, Խուզուշը ճշում ու նվադած  
ընկնում է ժայռի կրծքին):

## ՍՊԱ

Ախ, Բիմար արմեմ, Բիմար ու Բամառ...

(Բոլորը, մաս Թուխամը, մոտենում են անդունի եզրին):

Իսկ տեսարանը գեղեցիկ է հույժ,  
Կիսահազ ոսկին մոթ անդունդն ի վար  
Ծորում է, ցոլում... Գեղեցիկ է հույժ...

(Թուխծամը մոտենում, ապտակում է սպային):

### ԾԱՂՐԱԾՈՒ

Լո՞յս դարձավ, գնաց...

### ԾԱՂՐԱԾՈՒԻՆ ԽՈՒՄԲԸ

Լո՞յս դարձավ, գնաց...

Լո՞յս դարձավ, գնաց...

(Բեմը դանդաղորեն մքնում է ու արագորեն լուսավորվում:  
Խուզուշն ու Թուխծամը, սևեր հագած, նստած են գերանին: Քիչ  
այն կողմ Գուսանն է, Ծաղրածուն, աճպարաբերը, լարախաղաց-  
ները: Քերովքեն ու Արամանյակը նստած տաշում են):

### ԳՈՒՍԱՆ

Ծիրանի իմ ծառ,  
Ծիրանի իմ ծառ,  
Այս շեկ ժայռի մեջ  
Ինչպե՞ս է մնում  
Մորճիկդ պայծառ...  
Պտուղդ պայծառ...

### ԽՈՒԾՈՒԾ

Աստված իմ, աստված, դիակն էլ չկա,  
Որ ես մազերս պատանքի նման  
Տարածեմ վրան ու մոմերի տեղ  
Աչքերս վառեմ...

### ՔԵՐՈՎՔԸ

Այո, այդ վիրից  
Անհնարին է դիակը հանել:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Դի կեր կրտառա նա արծիվներին:

## ԳՈՒՍՏԱՆ

Լավ է կեր դառնա նա արծիվներին,  
Քան թե որդերին:

## ԾԱՂՐԱԾՈՒ

Երբ գահավիժեց  
Նա անդունդն ի վար, ասես թե աստղ էր,  
Ասուայ էր ասես, որ գահավիժեց:  
Եվ մուլք անդունդ երկար ժամանակ  
Լուս էր ցոլցլում, ասես թե լուս էր  
Բխում անդունդից...

## ԾԱՂՐԱԾՈՒԻՆ ԽՈՒՄԲԸԸ

Լո՞ւս դարձավ, գնաց...  
Լո՞ւս դարձավ, գնաց...

## ԽՈՒՇՈՒԾ

Եվս մի վայրկյան,  
Մի քանի վայրկյան, ու տեսներ պիտի  
Նա իր հրաշքը, չտեսավ սակայն...

## ՔԵՐՈՎՔԵՑ

Հայ էր, աղջիկս, իսկ հայի բախտը  
Միշտ էլ այդպես է: Որոնում է նա,  
Մաքառում, տքնում, ու թվում է թե  
Ուր որ է ահա կատարվի պիտի  
Հրաշքը վերին, բայց վերջին պահին  
Ինչ-որ բան գալիս, ողջը խաթարում,  
Ավերակում է... Ու չկա՞ հրաշք...

## ՍԻՄԱՎՈՆ

Բարի առավոտ... Գիշերս ինչ-որ  
Իրարանցում կար, բայց քունս խորն էր

Ու չհասկացա՛ ի՞նչ է կատարվում:  
Ինչո՞ւ եք լոել, ինչո՞ւ չեք խոսում...

### ԾԱՂՐԱԾՈՒԻՒ ԽՈՒՄԲԸ

Մկները են արծվի բները քանդում...

### ԽՈՒԾՈՒՅԹ

Եղումգներովս պիտի ես հիմա  
Աշքերդ փորեմ...

### ՍԻՄԱՎՈՆ

Հեռու ինձանից,  
Անառակ դու կին...

### ՔԵՐՈՎՔԵ

Պետք չէ, աղջիկս,  
Այդպիսիների արդար պատիժը  
Գերուստ է գալիս:

### ՍԻՄԱՎՈՆ

Այդ ի՞նչ եք ասում,  
Բամ չեմ հասկանում...

### ՔԵՐՈՎՔԵ

Լավ ես հասկանում...

### ՍԻՄԱՎՈՆ

(Արամանյակին)

Տղա՛, ինձ լսիր, ի՞նչ որոշեցիր,  
Գալո՞ւ ես ինձ հետ...

### ԱՐԱՄԱՆՅԱԿ

Ես որոշեցի,  
Որ քեզ մենց հիմա այս արդար մուրճով  
Շանսատակ անեմ:

## ՔԵՐՈՎՔԻ

Տղա՛ն, սուրբ մուրճի  
Մի պղծիր դրա զազրելի արյամք:

(Սիմակոնը, նտես Աայելով, դուրս է վազում):

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Հորեղբայր Գուսան, ասա, վերջապես  
Մեր Բայոց ազգից դավաճանները  
Ե՞րբ կվերանան...

## ԳՈՒՍԱՆ

Դավաճաննե՞րը...  
Զգիտեմ, տղաս: Եվ գիտեմ սակայն,  
Որ ամենայն ազգ ունի սեփական  
Դավաճանները: Դավաճանությունն  
Ազգի բնույթը չէ, բնույթը է մարդու:  
Մենք մերն ենք տեսնում ու մերոնց գիտենք...

## ԱՐԱՄԱՆՑԱԿ

Բայց մերոնք շատ են...

## ԳՈՒՍԱՆ

Օատ չեն, մենք ենք քիչ,  
Ու շատ են թվում դավաճանները:  
Մի շուրջ մայիր, քանիս ենք այստեղ...  
Այսքանիս միջից մեկն էր դավաճան:

(Դրսից բակում է մի աղիողորմ ճիշ, և մղկտալով մերս է ընկ-  
առմ Սիմակոնը):

## ՍԻՄԱՎՈՒ

Վա՛խ, վա՛խ, երեսս, ջո՛ւր Բասցրեք, ջո՛ւր,  
Այրվում է, վառվում, ջո՛ւր Բասցրեք, ջո՛ւր...

## ՔԵՐՈՎԲԵ

Աստված ապտակեց...

## ԾԱՂՐԱԾՈՒ

ՈՇ, դեռ աստված չէ,  
Ուղտը, նառ ուղտն է թքել երեսին,  
Ուղիղ երեսին, ուղիղ աշքերին:

## ԳՈՒՍՏԱՆ

Ով սուրբ կենդանի...

## ՄԻՄՈԽՎՈՒ

Վախ, երես, վախ,  
Վախ, աչքերս, վախ, ջուր Բասրեք, ջուր...

(Ոչ ոք չի շարժվում տեղից Այսօնությունը գոռալով դուրս է նետվում):

## ՔԵՐՈՎԲԵ

Առաջին պատիժն արդեն ստացավ,  
Թող Բաջորդներին սպասի հիմա...

## ԳՈՐԿԻԿ

Եկա... Հսեցե՛ք. այդ Բոռումները  
Շատ չարչարվեցին, որ անդունդն իշնեն,  
Որ գտնեն ոսկին ու Աղամոսի  
Ծոցից վերցնեն ինչ-որ մագաղաթ,  
Բայց չկարեցան անդունդը իշնել...

## ՔԵՐՈՎԲԵ

Նրանք կարող են ասպատակ անել  
Դաշտերը ուայոց... Բայց հայոց վիճերն  
Ու անդունդները չեն կարող մտնել:  
Մեր ոգու Օման խորունկ են սաստիկ  
Ու անմատչելի...

## ԳՈՐԳԻԿ

Իսկ ես, Քերովքե,  
Այդ ուկուց ահա մի կտոր գտա,  
Վիճի եզրին էր թափվել ու սառել...  
Նայում եմ, ու մերժ թվում է, թե սա  
Ուկի է իրոք, նայում եմ դարձյալ՝  
Ուկի չէ ասես... Ու մոլորվում եմ...

## ՔԵՐՈՎՔԵ

Հապա բեր նայեմ... Խամրել է, ավաղ,  
Պղինձ է դարձյալ, ու չկա ոսկին...  
Ու չկա ոսկին: Ու մինչև հիմա  
Ես չհասկացա, թե առասարձակ  
Կյանքում կա՞ ոսկի... Ուկիմ երկի  
Երազն է մարդու: Նրա երազը  
Խլեցին կյանքում: Երկի չկա  
Առավել դաժան, ահավոր մի բան,  
Երբ որ երազդ են խլում այս կյանքում  
Ու որոնումիդ երջանկությունը...

## ԽՈՒՅՈՒԾ

Ավա՛ղ, ողջ կյանքում ես միայն մի օր  
Երջանիկ եղա...

## ՔԵՐՈՎՔԵ

Դրա համար էլ  
Փառք տուր աստծուն...

## ԹՐԻԽՆԾԱՄ

Իսկ ես ոչ մի օր,  
Կյանքում ոչ մի օր չեղանիկ,  
Ուկիների մեջ ու շքեղության  
Չեղա երջանիկ... Բայց ես էլ պիտի  
Փառք տամ աստծուն: Երբ Աղամոսը

Աւպրում էր ու կառ, ու ես, թշվառու,  
Ետևից շնկած, որոնում էի,  
Տառապում էի, բայց ապրում էի:  
Ի՞նչ պիտի անեմ սրանից հետո,  
Ի՞նչ պիտի անեմ...

### ՔԵՐՈՎԲԵ

Համբերես պիտի:

### ԹՈՒԽՆԾԱՄ

Իմ ամրողջ կյանքը համբերանք էր լոկ,  
Բայց էլ սեր չկա, ուրեմն չկա  
Այլևս և ուժ...

(Հեռու-մեռվից, ասես խորունկ անդունից, երածտության  
ձևով լսվում է Աղամոսի անկման աղաղակը):

### ԾՍՂՐԱԾՈՒ.

Լսո՞ւմ եք, մարդիկ,  
Դա Աղամոսի անկումի ճիշն է...  
Անդունդը խորն է ու շատ է խորը,  
Եվ նրա ձայնն է դեռ արձագանքում...

### ԹՈՒԽՆԾԱՄ

Ո՞չ, չե՞լ համբերի... Ու թե սեր չկա,  
Ամենքինն եմ ես, որպես հերատուկ...

### ՔԵՐՈՎԲԵ

Տե՛ր իմ, խենթացա՞վ...

### ԹՈՒԽՆԾԱՄ

Ամենքինն եմ ես,  
Բայց նախ և առաջ Սիմավոնինը..  
Նրան զզվանքով իմ ծոցը կառնեմ,

Զզվանքով Յրան կշոյեմ քնրուշ  
Ու շոյանքներով կթունավորեմ...

### ՔԵՐՈՎԲԻՆ

Իրավ խենթացավ...

### ԾԱՂՐԱԾՈՒ

Կանացի ոխն է  
Արթնացել իր մնջ...

### ԹՌԻԽՆԾԱՄ

Կընկնեմ ետևից  
Այդ բյուզանդացու, կգտմեմ մրան,  
Ու թե կանացի հմայքով չեղավ,  
Ապա հմայքով իմ ոսկիների  
Թակարդ կլարեմ... Օ՛, Ձրանք շուտ են  
Այդ թակարդն ընկնում... Լսեցի՞ք, մարդիկ,  
Ամենքիմ եմ ես, որպես հերատուկ...  
Ծո՛ւտ, իմ մժույգը...

(Դուրս է վազում):

### ԽՈՒՇՈՒԾ

Խեղճ, իմ խեղճ Թուխծամ,  
Տառապած Թուխծամ...

### ԱՐԱՄԱՆՅԱԿ

Գորգիկ, ասում ես,  
Այդ հոռոմները չկարողացա՞ն  
Անդունդը իշնել...

### ԳՈՐԳԻԿ

Չկարողացան...

(Դարձյալ հնովից-հնոու լսվում է Աղամոսի անկման առաղակը):

## ԾԱՂՐԱԾՈՒ

Անդունդը խորն է ու շատ է խորը,  
Եվ ճրա ձայնն է դեռ արձագանքում...

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Նա ինձ է կանչում... Ես գնամ այստի  
Ու իշնեմ անդունդ...

## ՔԵՐՈՎՔԵ

Սա էլ խենթացավ...  
Դեռ այդ անդունդը չի իշել ոչ ոք:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Սակայն ես կիշնեմ:

## ՔԵՐՈՎՔԵ

Դա մահ է ստույգ:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Սակայն ես կիշնեմ: Ես վեր կհանեմ  
Այն մագաղաթը, ես կվերծանեմ  
Գաղտնիքը ճրա: Ես, Աղամոսի  
Գաղտնիքը բռնած, կգնամ անվերջ,  
Որ այդ հրաշքը լինի երբնէ...  
Եվ հավատում եմ, այդ սուրբ հրաշքը  
Կլինի կյանքում...

## ԳՈՒՍԱՆ

Ծիրանի իմ ծառ,  
Ծիրանի իմ ծառ,  
Ես էլ ասում եմ,  
Այս շեկ ծայոի մեջ \,  
Ինչպես է մնում \,

Մորճիկդ պայծառ...  
Պտուղդ պայծառ...

(Դարձյալ լսվում է Աղամոսի անհման աղաղակը):

## ԾԱՂՐԱԾՈՒ

Անդունդը խորն է ու շատ է խորը,  
Եվ նրա ձայնն է դեռ արձագանքում:

## ԳՈՒՍՏԱՆ

Մոռացել էի բոլոր տաղերը  
Ոխի, սխրության ու հերոսության...  
Զգում եմ սակայն, որ իմ մեջ նորից  
Որոտն է ծննդում... Գնամ, որոտամ  
Աշխարհով արար, երգեմ ոգեվիճ.

— Ե՛կ նորից, Պահլավունի,  
Ակնոր սպարապետ,  
Ակնոր արծվի նսան  
Կոնչա լեռներն ի վար,  
Սլացիր լեռներն ի վար,  
Որոտա լեռներն ի վար...

Ես գիտեմ հիմա, այն ազգն է տոկուն,  
Ով իմաստության խենթությունն ունի...

## ՔԵՐՈՎՔԵ

Իրավ ես ասում, սակայն ասածդ  
Թերի է, Գուսան: Այն ազգն է տոկուն,  
Ով իմաստության խենթությունն ունի,  
Բայց նաև ունի իմաստությունը  
Մեծ համբերության... Ես գիտեմ հիմա,  
Հրաշքն ապրում է այդ Աղամոսի  
Խենթ երազներում, բայց և ապրում է  
Իմ այս մուրճի մեջ ու այս խաչքարի  
Եվ այն մեջքածալ մշակի հոգում,  
Որ սարալանջին կորեկի նվազ  
Որ արտն է հնձում... Որ ապրում է նա

**Այս ճյուղակոտոր ծիրանի ծառի  
Ավիշների մեջ...**

### **ԽՈՒՇՈՒԾ**

**(Գնում, փարզում է ծիրանի ծառին):**

Ծիրանի իմ ծառ,  
Իմ Աղամոս, ծարավ ես, ծարավ...  
Ու ես սափորով միշտ ջուր կկրեմ  
Մեր պաղ գետակից, որ զովություն տամ  
Քարի մեջ խրված քո արմատներին...  
Ծիրանի իմ ծառ, ծիրանի իմ ծառ,  
Իմ Աղամոս...

**(Քար լուսական մեջ լսվում է միայն Քերովքեի մուրճի զնօղը):**



Ո՞ր սե աղջիկ արևին  
Իր սե մազերը ցրել,  
Լաց է լինում ժիժաշով՝  
Վարդ կոշիկն է կորցրել:

## ԿԱՄԻՏՏԵՍ

Եվ ես նրան մի անգամ  
Այսպես տեսա երազում...  
...Ամպը լացել, ჩեռացել,  
Ու թաց հողն էր երազում:

Նա հանդերից էր գալիս,  
Գյուղի ճամփով խաղաղիկ,  
Սև սքեսի փեշերին  
Փուշ էր կպել ու ծաղիկ:

Միսում էր դաշտը գարնան,  
Միսում էր թաց ու տրտում,  
Եվ Արարատը պարզված  
Ցոլցում էր կապույտում:

Ծամփեղերքին ծվարել  
Աչքը ծավի մի ծաղիկ  
Ու իր թախիծն էր խառնում  
Դաշտի տխուր ծիծաղին:

Նա նանլերից էր գալիս,  
Գումատ շուրթերը մխում,  
Դողում էին ակամա,  
Ու մեղեղին էր բխում...

Կարկաչում էր մեղեղին  
Կոկորդաձայն ու թավիշ,  
Կարոտանքից թրթոռում  
Ու տպայտում էր ցավից:

Լեռան աղբյուրն էր ասես  
Քարերի մեջ հնկեկում,  
Ու երամը կոռումկի  
Իր հոգնած չուն էր բեկում:

Եվ նա այդպես երգելով  
Դողացող ձեռքս առավ  
Ու ինձ տարավ հերկերով,  
Այգիներով ինձ տարավ...

Տարավ դժվար լեռներով,  
Մացառներով ու փշով,  
Լույսի միջով ինձ տարավ  
Ու կապուտակ մշուշով:

...Լեռան շուրթին ծվարած  
Գյուղը ծխում երկնքում,  
Զրաղացի ու հացի  
Անուշ բույրով է խնկում:

Եվ հին տնակն իր անտաշ,  
Իր վայրենի քարերով  
Մեջքը տվել արևին,  
Տաքանում է արևով:

Ներսում մութ է... Մրապատ  
Գերաններ են ու թարեք,

Ու թախծում է թարեքին  
Հազարամյա մի Նարեկ:

Ծող է կաթում երդիկից,  
Հին թարեքին ու կուժին,  
Ծող է կաթում Նարեկի  
Հազարամյա մշուշին:

Ծող է կաթում երդիկից,  
Լուս է կաթում ու արև  
Օրորոցին, որ կապույտ  
Նուսխայով են գարդարել:

Եվ մեղեդին է ծփում  
Օրորոցի տաք շնչով,  
Իր պանդուխտին սպասող  
Հարսի խոնարհ մրմունջով:

Ծավալվում է ու ծփում  
Առաստաղի տակ մրոտ  
Ու պատեպատ է խփում  
Անմեկնելի մի կարոտ:

Ու պատեպատ է խփում  
Քնքություն մի ամոթիւած,  
Մի ամոթիւած բարություն  
Ու տիսրություն մի հոգնած:

Եվ Վարդապետն է լոռում  
Օճորքի սև շուքի տակ,  
Սև սքեսի փեշերից  
Հուս է կաթում և օրինանք..

Եվ տանում է ինձ նորից  
Մացաներով ու փշով,  
Լուսի միջով է տանում  
Ու կապուտակ մշուշով:

...Գարնան գոլ է դաշտերում,  
Գարնան բույրեր են հարրած,  
Եվ քայլում է դաշտերով  
Մի շիկահեր այգաբաց:

Աճեցող մուժի հետ  
Մինչև սարը ոլորվել,  
Ու ձգվել է մի երկար  
Ուկեղերձան հորովել:

Եվ եզները սպիտակ  
Իրեմց կողերը հոճում,  
Լույս են խմում ու ռսկեն  
Ծառագայթ են որոճում:

Եվ մաշում է մեղեդին  
Արշալույսի մեջ արդար,  
Ծավալվում է արևի  
Ալիքների հետ խարսյաշ:

Մի սերմնացան է ասես,  
Որ բարի բուշը բացում  
Ու դաշտերի վուա թաց  
Օրհնություն է տարածում:

Ցեղերին է տարածում,  
Ցողաթաթախ այդ հանդին  
Ու տարածում հավերժից,  
Անսահմանից էլ անդին:

Եվ Վարդապետն է քայլում  
Շաղի միջով ու շողի,  
Սև սքեմի փեշերից  
Կաթում է հոտը հողի:

Եվ տանում է ինձ նորից  
Մացառներով ու փշով,

\

**Լուսի միջով է տանում  
Ու կապուտակ մշուշով:**

...Լեռան քարե լանջն ի վեր  
Իրըն քարե աղերսանք,  
Բարձրանում է կիսավեր,  
Խաչը բեկված հին մի վաճք:

**Ու նման է օա այնպես  
Այն հոգնատանջ Հիսուսին,  
Որ Գոդգոթա է եղում  
Սեփական խաչը ուսին:**

Կամարների շուրթերին  
Հին տողեր են, հին գրեռ,  
Որ պատել են մամուռով,  
Առեղծվածի պես լոել:

Խորանի մեջ մամոռուած  
Խաղում է շող մի տրտուն  
Ու կամարից կաթկթող  
Արտասուքը մկրտում:

Եվ ծփում է մեղեղին,  
Ասես թե լուս է զտված,  
Ասես թնում է վերում  
Աներնույթ մի աստված:

Թնում թեթև ու հետո  
Գմբեթն ի վեր համբարձում,  
Գնում է օա, անհունի  
Կապույտ դոներն է բացում:

Վարդապետը վերացած,  
Քայլ է անում տրտմաշուք,  
Սև սքեմի փեշերից  
Լուս է կաթում ու արցունք:

Եվ տանում է ինձ մորից  
Մացաներով ու փշով,  
Լոյսի միջով է տանում  
Ու կապուտակ մշուշով:

...Իր մամուռով, հատակի  
Ըսկիներով իր բուռ-բուռ  
Ցոլցում է ժայռի տակ  
Խղճի նման մի աղբյուր:

Վարդավա՛ն է... Կակաչի  
Բոցը հովից ծիծաղում  
Ու քարափի շրթունքից  
Մարջան ու լալ է կախում:

Լաղ են կախել ու մարջան  
Գյուղի հարսն ու աղջիկներ  
Ու շիկնել են արևից,  
Երգ ու պարից են շիկնել:

Թղթուում է օդի մեջ  
Հարրանը զրնգուն,  
Շաղ է գալիս ջրի հետ  
Ու փշրվում է քնքուշ:

Մի շեկ աղջիկ հովի դեմ  
Իր շեկ մազերը ցրել,  
Լաց է լինում ծիծաղով՝  
Վարդ կոշիկն է կորցրել:

Լաց է լինում ծիծաղով,  
Մեջքի շիվը թեկբեկում,  
Մաղիկն ասես ցողի տակ  
Բարակ ցողունն է թեքում:

Եվ թնջում է մեղեղին,  
Կարկաչում է սիրավոր,

Քարեքար է նա թոշում  
Լորիկի պես վիրավոր:

Ծավալվում է ծայրեծայր  
Սիրո պես տաք ու փիսրուն,  
Փուլ է գալիս ամպի պես  
Ու անձրևի պես տիսրում:

Եվ Վարդապետն է քայլում  
Աչքերում լույս ու թախիծ,  
Ու փեշերից սքեմի  
Ցող է կաթում ու ծաղիկ:

Եվ տաճում է ինձ նորից  
Մացառներով ու փշով,  
Լույսի միջով է տաճում  
Ու կապուտակ մշուշով:

...Բայց այս ի՞նչ է, Վարդապետ,  
Սև շանթն այս ո՞վ է ճոճում,  
Տես, եզները սպիտակ  
Զարհուրանք են որոճում:

Եվ կարկուտը սևակնած,  
Եվ կարկուտը դժնդակ,  
Կակաչի բոցը առած,  
Տրորում է ոտքի տակ:

Եվ արյուն է կաթկթում  
Օրորոցին, թարեքին,  
Եվ արյուն է կաթկթում  
Հազարամյա նարեկին:

Աղջնակն այն, որ թեքում,  
Բեկում էր մեջքն իր դալար,  
Ինչ-որ բրդոտ ձեռքերում  
Գալարվում է խելագար:

Ո՞վ է սև ծուխն այս վառել,  
Սև շանթն այս ո՞վ է ճոճում,  
Տես, եզները սպիտակ  
Մար ու մուր են որոճում:

Ամապատ է, անապատ,  
Արևը թույն է ու ժանգ,  
Ամապատ է, անապատ,  
Ամեղրածիր մի պատանք...

Եվ Վարդապետն է քայլում  
Իր սև թևերը բացած,  
Ասես թե խաչ է քայլում  
Ամապատով շիկացած:

Թայլում է նա, շուրթերին  
Սև լոռությունն է այրվում,  
Սև սքեմի փեշերից  
Մար է կաթում ու արյուն:

Մի սև աղջիկ արևին  
Իր սև մազերը ցրել,  
Լաց է լինում ծիծաղով՝  
Վարդ կոշիկն է կորցրել

Եվ Վարդապետն է քայլում,  
Լաց է լինում ծիծաղով,  
Սև սքեմի փեշերից  
Մար է կաթում ու աղոթք:

Եվ մեղեղին է հնչում  
Ավագների վրա տաք,  
Ասես մխանք է զոհի  
Ու մրեղեն պատարագ:

Ասես աղբյուրն է լեռան  
Քարերի մեջ հեկեկում,

Ու երամը կոռումկի  
Իր հոգնած չուն է բեկում:

Հնչում էին կապույտում,  
Զնդում քամբիո ու զանգեր.  
— Հանգե՛ք, որբեր իմ արնոտ,  
Հանգե՛ք, զոհեր իմ, հանգե՛ք...

Եվ մարում է մեղեղին  
Անարձագանք ավազում,  
Եվ Վարդապետն է քայլում,  
Եվ Վարդապետն է վազում:

Եվ Վարդապետն է վազում  
Ծուրթին ծիծաղ, շուրթին ճիշ,  
Պատառոտված սքեմից  
Մար է կաթում ու քրքիջ:

Եվ Վարդապետն է վազում,  
Եվ Վարդապետն է վազում,  
Եվ քրքիջը խելագար  
Խլանում է ավազում...



... Եւ զարմացավ Ծնիկնորին,  
Որ մարդն աշխան լավ է վառվում...

## ԲԻԿԵՑ ՇԱՎԵՅՑԻ

### Ա.

Երբ գարնան հետ պատանու տաք երակներում  
Արյունն այնպես է վարարում,  
Որ խենթանում է ու եռում՝  
Նոր մանուկ է աշխարհ գալու...  
Երբ շուրթերը ոչինչ շասած, անզոր լոռում,  
Ու միայն սիրտն ու միայն սիրտն է թրթոռում՝  
Նոր մանուկ է աշխարհ գալու...

Իսկ արյունը պատանեկան  
Ստեղծված է, որ տաք եռա,  
Սիրտը, սիրտը՝ որ խենթանա,  
Խելագարվի ու թրթոա...

Եվ տաք, այդ տաք վարարուսից,  
Խելագարվող այդ արյունից  
Մանուկներ են աշխարհ գալիս:

Ամեն վայրկյան այս աշխարհի ամեն մասում  
Մանուկներ են աշխարհ գալիս,

Ամեն վայրկյան  
Կյանքն իր այնքան սովորական խոսքն է ասում.

— Մանուկներ են աշխարհ գալիա  
— Մանուկներ են ծնունդ առնում  
Ծիլերի պես, ծաղիկների  
Ու աստղերի...

...Բայց իմ ծնունդն այս աշխարհում  
Դժվար եղավ անասելի:  
Բայց իմ ծնունդն այս աշխարհում  
Հրաշք եղավ,  
Հերիաթ եղավ չհնարված:  
Մի սև ոճիր՝ մարդու կերպար ու տեսք առած  
Ու ձեռքի մեջ առած ահեղ մի յարադան,  
Բարձրացել էր, որ աշխարհում  
Հայ նանուկներ աշխարհ չգան,  
Բարձրացել էր, որ չծնվեմ,  
Բայց ծնվեցի...

## Բ

Կա մի աշխարհ—  
Իմ գիշերվա երազն է նա,  
Կա մի աշխարհ—  
Իմ վերքն է նա տվնջական:  
Այնտեղ եմ ես ծնվել մի օր,  
Այն լեռներում բարձրագնա,  
Որոնք թիմա երազի պես կան ու չկան:  
Այն լեռները— կապույտի մեջ՝ կապույտ ալիք,  
Կատարներին փրփո՞ւր է դա, երա՞զ, թե՞ ձյում,  
Այն լեռները, որ խոյանում  
Դեպի ոլորտն արևալիր  
Եվ հասնել են ուզում աստծուն...  
Այն լեռները՝ կապույտ ցառում,  
Այն լեռները՝ կապույտ երազ,

Որ աստծուն են հասնել ուզում

Ու չեն հասնում:

Այն լեռները... Իսկ անդնդում

Եփրատն այնպէս է որոտում, այնպէս թնդում,

Որ դառնում է ճերմակ մի ողբ, ճերմակ մի սուզ...

Ու ժայռեր կան, որ կարծրացել անարտասուր

Եվ աչքերում՝ ամեն մեկը մի բարանձավ,

Պահել մորմոք, պահել են ցավ

Ու դարձել են խոսող քանդակ:

Ժայռերն ի վեր՝ հսկայական երկնքի տակ՝

Հազարամյա վանք ու մատուռ՝

Քանդակագարդ, պղնձադուռ,

Իսկ երկնամուխ ձների մեջ

Այնքան սլացք ու երազանք,

Որ թվում է՝ հիմա նրանք

Լուսն տեսիլք պիտի դառնան

Ու համբառնան...

Իսկ որմերին՝ քարե ողկույզ,

Քարե արև ու քարե լույս,

Ապա՝ դեմքեր զարմանալի՝

Աստծո տեսքով, սրբի տեսքով

Դեմքեր տաճզված, դեմքեր հայի,

Զեհաղ տեսքով աստվածամոր ու Եվայի՝

Հայութիներ՝ աչքերը բռց,

Մայրագորով ու լիածոց:

Իսկ եթե մեկն այդ քարենեն

Վանքերի մոտ հողը պեղեր,

Ապա նրանց հիմքերի տակ պիտի գտներ

Ուկուց ձուլված Անահիտներ

Եվ Աստղիկներ լուսաստինք:

Կապույտ լեռներ, կապույտ երկինք...

Ու երկնքի անանձնական հայացքի տակ՝

Հովհաններում, ուր խայտում են գետ ու վտակ

Եվ լեռների խորշերի մեջ ժայռակուտակ՝  
Հազարամյա ու հայանուն գյուղեր ու շեն,  
Որ կարող են ու կիրշեն  
Մահը ամման ու գեղեցիկ մեր Արայի,  
Հարսանիքը Արտաշեսի ու Սաթինկան,  
Ապա կոհվն Ավարայրի,  
Որ իմացյալ մահով ընկան  
Նախապապերն իրենց հզոր:

Գյուղեր ու շեն... Եվ գարնանը գիշեր ու օրը  
Հովհաններին ու ձորերին ու սարերին  
Փուլում էր երգը մաճկալի,  
Իսկ ամռանը ոսկե փոշին ոսկե կալի  
Ծխանների կապույտ ծխին  
Եվ մորաթուխ հացի բույրին միահյուավում  
Ու օրհնանք էր դառնում խաղաղ:

Գյուղեր ու շեն, ապա մի հին գյուղաքաղաք...  
Այստեղ ծագումն արեգակի  
Մաքրի երգն էր ողջունում  
Եվ Ասիից թերված հայրենն հայրենաբառ  
Ինչպես այստեղ՝ հին Անիում,  
Այստեղ էլ վեմ, ժայռ ու ապառ  
Դարձել էին կամար ու այուն,  
Դարձել տաճար, կամուրջ ու տուն,  
Դարձել մի նոր, փոքրիկ Անի:

Եվ ամեն օր շողերի մեջ վաղորդայնի  
Մաքոքների ձայնն էր հնչում  
Իրրև մի երգ արդար ու պարզ:  
Գործում էին, գործում էին աղջիկ ու հարս,  
Գործում կտավ ու կտավին  
Հայրենների ոսկե թելերն էին հյուսում,  
Հյուսում կարոտն իրենց հեռու պանդոխտ յարի,  
Սպասում՝ սիրահարի  
Ու սև թելերն իրենց ցավի  
Խառնում չին ճերմակ հենքին այդ կտավին

Գործում էին, գործում էին...  
Նսկ թխաքեղ տղամարդիկ  
Դրսում մանած էին թանում,  
Ներկում կտավ ու մանուսա:  
Ու երբ կարմիր ու երբ դեղին,  
Լաջվարդ կտավն էին տանում,  
Փոռում էին տանիքներին,  
Թվում էր թե այդ քաղաքում  
Հանդես է, տոն...

Բայց տոն չկար այդ քաղաքում:  
Մյնաւեղ քարին՝ լեռան հետև,  
Ու չարն էր միշտ դռան հետև:  
Եվ այդ չարը՝  
Զեռքին ահեղ մի յաթաղան,  
Եվ այդ չարը՝  
Կերպարանքով ենիշերու,  
Հաճախ խուժում ապերասան,  
Ավարում էր քեռ-քեռ քրտինք,  
Արյուն հեղում առու-առու...

Ու երբ խորշակն ավարառու  
Հեռանում էր ու խլանում,  
Սրից փրկված տղամարդիկ  
Նորից մանած էին թանում,  
Հարս ու աղջիկ նորից նատած  
Գործում էին ու կտավին  
Հյուսում թելերն իրենց ցավի,  
Մորմոքն իրենց կորույալի,  
Իրենց սկ սուգն էին հյուսում:

Բայց կյանքն իրենն է միշտ ուզում...  
Նսկ հնամյա այս քաղաքի երակներում  
Հին անեցու զվարթ արյունն էր դեռ եռում,  
Տրոփում էր զվարթ Ամին...  
Եվ ամառվա ջինջ զիշերով  
Իրենց վրա առած երկնի

Աստեղնահյուս մեծ Բովանդին,  
Նրանք կավե կտորներից  
Հայրեն ու տաղ էին ասում...  
Մեկն ասում էր և սպասում,  
Որ մոտակա մի կտորից  
Ուրիշն իրեն արձագանքի...  
Եվ արձագանքն հնչում էր միշտ  
Աղբյուրի պես ու զանգակի:

Թե սիրու տեր  
Աղջկա ձայնն էր դողանջում,  
Տղան գիտեր՝  
Այդ իրեն է թաքուն կանչում:  
— Այ թուխ տղա, սրտիկ ու սեր,  
Մեր այգու մեջ վարդ է բուսեր,  
Երեկ առտու վարդերուն տակ  
Մատանուս ակն եմ կորուսեր...  
Եվ քիչ հետո վարդենու տակ  
Ծայր էր առնում թաքուն մի սեր՝  
Այս, երևի  
Մատանու ակն էին փնտրում...

Ծաճանչների հետ արևի  
Նորից լուծ մաքոքների ձայնն էր հնչում  
Երգի նման արդար ու պարզ:

Գործում էին, գործում էին աղջիկ ու հարս,  
Գործում կտավ ու կտավին  
Հայրենների ոսկե թելերն էին հյուսում,  
Հյուսում կարուտն իրենց պանդուխտ հեռու յարի,  
Սպասումը սիրամարի  
Ու սև թելերն իրենց ցավի  
Խառնում էին ճերմակ հենքին այդ կտավի:  
Գործում էին, գործում էին հարս ու աղջիկ,  
Եվ նրանց հետ մի աղջնակ,  
Որ իմ մայրը պիտի դառնա,  
Երբ անց կենա մրրիկն արնոտ:

Իսկ այդ փոքրիկ, նին քաղաքից  
Ծառ հեռու չեր դաշտը Կարճու:  
Կարմո դաշտը... Անձայրածիր, անպարագիծ...  
Գարճան օրը յոթը անգամ սեգ Բյուրակնից  
Բերում թուխ-թուխ, ծանր ամպեր,  
Դաշտի վրա յոն էր մանում  
Ու յոթն անգամ արև անում:  
Ու յոթն անգամ դաշտի վրա ցող էր կաթում,  
Ու յոթն անգամ դաշտի վրա շող էր կաթում,  
Ու յոթն անգամ կապում կապույտ մի ծիածան:  
Ու ցողի տակ,  
Ու շողի տակ  
Ծփում էր արտն ալեծածան,  
Ալեկոծում զմրուխտ ու լույս:  
Ծփում էր արտն ալեծածան  
Ու գեղջուկի հոգու վրա  
Փովում իբրև ոսկե մի հույս:

Եվ ամռան հետ ծովանում էր հույսը ոսկի:  
Թուխ արտույտը լուսաբացին  
Ցողն էր ըմպում հասուն հասկի  
Ու փառք ծոնում արդար հացին:  
Իսկ գյուղացին կայծակնակերպ իր գերանդով  
Քայլ էր անում պապենական ծով-ծուփ հանդով  
Ու ոսկի էր փոռում շերտ-շերտ,  
Հույս էր փոռում ոտքերի տակ:  
Ու կիտվում էր կուտակ-կուտակ  
Աստղահատիկ արդար ցորենն ու լույս գարին:  
Այդ ծով բարին...  
Հագուրդ կտար դա որկորին իսկ Ծարայի,  
Սակայն, ավաղ, միշտ դատարկ էր տաշտը Բայի:

Ցուրքն էր տալիս տերունական,  
Բեկից առած պարտքն էր տալիս  
«Օ՛, ոչ, պարտք չեր՝ ձնագնդի՝

**Գլոր-գլոր սարից գալիս,  
Սար էր դառնում:**

**Պարտքն էր տալիս, ինքը նորից մնում անմաս  
Եվ տվածը նորից իբրև պարտք էր առնում,  
Ու թեկին էր անցնում մաս-մաս  
Պապենական հողը հայի...  
Ուզած-չուզած՝ պանդուխտ դարձիր  
Կամ ֆիդայի...**

**...Ու պանդիտում էին հրանք:  
Օսար ու շար քաղաքների պատերի տակ  
Ցավից երգեր էին հյուսում,  
Թե՛ իմ քյաքուլը թել արեք  
Ու ինձ համար պատաճք կարեք:**

**...Ու ֆիդայի էին դառնում:  
Մոսին առնում, ելնում էին սարերն ամպած  
Պաշտպանելու պատիվ ու հաց:  
Եվ սրտերում թշնամական գնդակը տաք  
Ընկնում էին սարի, քարի ու թփի տակ:**

**Բայց գարնան հետ,  
Երբ Բյուրակնից գալիս էին ամպերը թուխ,  
Իրենց ծոցից կայծակ հանում ու որոտում,  
Հորովելն էր ձգվում նորից ամպշող օդում,  
Եզներն էիի ձգում էին,  
Գեղջոկն էի իր եզան հետ  
Սկսում էր գրուցն իր հին  
Լեցուն ցավով,  
Ծիգ ու ջանքով,  
Անզոր ցասմամբ  
Ու քնքանքով...**

**Եզներն էլի ձգում էին,  
Մաճկալները քրտնաճակատ՝  
Ակոսի ծիրն էին ծրում**

Ուղիղ՝ որպես սև ճառագայթ:  
Աշքերի մեջ տխուր մի հույս,  
Արշալույսից մինչ արշալույս  
Հերկում էին,  
Ու զարթնում էր մայրությունը տափաստանի...  
Հերկում էին,  
Երգում էին՝  
Ու ճրանց հետ մի պատանի,  
Տու իմ հայրը պիտի դառնա,  
Երբ անց կենա մրրիկն արնոտ:

3.

Բայց այդ գարուն երգ չլսեց դաշտը Կարմո։  
Նախ լուսություն իջավ մի մեծ,  
Գյուղի շրթունքը կարկամեց,  
Զարհուրանքից ու զարմանքից  
Քար կտրեցին մարդիկ մի պան  
Ու համրացան...  
Եվ հետո խոլ փոթորկի պես  
Ահագնացավ անզոր մի ձայն։  
— Այդ ինչպե՞ս թե թողնել հավետ տուն ու երդիկ,  
Պապենական հանդեր ու կալ,  
Այդ ինչպե՞ս թե թողնել հավետ մի ողջ երկիր,  
Թողնել հավետ ու հեռանա։  
Ախր, աղբյուրն այս սառնորակ  
Մո՛ր նման է քեզ հետ խոսել,  
Ապ ու պապիդ քրտինքն է տաք  
Այս ակոսին կաթ-կաթ հոսել։  
Ախր ամեն շիրիմի տակ  
Սիրտ է թաղված պապի ու հոր,  
Ինչպե՞ս թողնել ու հեռանալ,  
Տեր, դու եղիր մեզ դատավոր։

...Ու չիմացան՝  
Մարագների օճորքներից,  
Հողի տակից ու խորքերից



Հանե՞լ Բին զենք ու հրացան,  
Ընդդիմանա՞լ,  
Թե՞ հեռանալ:  
Սակայն ինչպե՞ս ընդդիմանալ,  
Երբ այրերին տարել վաղուց,  
Աշխարհակալ պատերազմի  
Սկզբոց երախն էին գցել:

Ինչպե՞ս պիտի ահեղ շարին  
Դեմ կանգնեին մանուկ ու ծեր:

Եվ գեղջուկներն այդ պարզամիտ,  
Որ միշտ հույսին էին փարվել,  
Ինչպե՞ս և ի՞նչ իմանային,  
Որ ինչ-որ տեղ, ինչ-որ մարդիկ,  
(Ծերմակ ձեռնոց հագած մարդիկ),  
Իրենց սև մահն են արարել  
Եվ արարել այնքան հմուտ,  
Այնքան ճարտար ու բանիմաց...  
Եվ դուրս եկան:  
Արեգական շողբի դիմաց  
Գարուն էր տաք և ինչ գարուն,  
Հողի ուռած երակներում  
Վարարում էր մի տաք արյուն  
Եվ մայրություն էր աղերսում:  
Եվ դուրս եկան:  
Դրսում արև,  
Սակայն սև էր իրենց ներսում:  
Ու երբ ծայրը քարավանի  
Հասավ գյուղի շիրիմատուն,  
Այնտեղ մայրեր քանի-քանի  
Ծունկի եկան լուռ ու տրտում,  
Ծունկի եկան, խաչ հանեցին,  
Խաչ հանեցին ու ձայնեցին.  
— Ելեք հողից ապ ու պապեր,  
Ախ, մեր օրը սև է կապել,  
Ելեք, որ մենք պառկենք հողում:

Եվ մամուապատ քարերը հիմ  
Էլ առավել քար կտրեցին:  
Եմիշերիմ քշեց իր ձիմ  
Ռի մտրակի շառաշյունով  
Աթեղ շանթեց, արյունոտեց  
Ռի շուրթերի վրա մորթեց  
Ծիչը ցավի:

Երկինքը՝ մեծ, օդը՝ ծավի,  
Եվ արևի ձեռքերն անտես  
Հողի ծալքից շղարշ-շղարշ  
Գոլ եւ Բամում ու ծածամում,  
Եվ զանգակիկ ծաղիկն ահա  
Ամսեղի դողամշներ է շուրջը ցանում:  
Երկինքը՝ մեծ, օդը՝ ծավի,  
Եվ ձմբալի ջրերն ուրախ  
Լալիւ էիմ առանց ցավի:  
Արևը տաք, օրը բարի,  
Եվ մսւմուտն իսկ շիրմաքարի  
Ասնա ծիծաղ լիներ կանաչ,  
Կանաչ էիմ խաշքար ու խաչ,  
Եվ նանաչ էր աշխարհն արար:

Երկինքը՝ մեծ, օդը՝ ծավի,  
Բայց զնգում եր ճիչը ցավի.  
— Եղեք հողից, ապ ու պապեր,  
Ախ, մեր օրը սև է կապել,  
Եղեք, որ մենք պառկենք հողում...

Սեզի կանաչ քողն էր դողում՝  
Սարսուում էր մորթը հողի:  
Հետո նրանք վեր նայեցին  
Դեւոփի գահը արարողի.  
— Ո՞ւր ես տանում, ասա, մեզ ո՞ւր...  
Սակայն հայի աստվածն, ավաղ,  
Ծերությունից խոլ էր ու կույր  
Եվ չլսեց, չասաց ոչինչ:

Օրը մեծ էր, երկինքը՝ ջինչ:  
Ու սև սուգը քարավանի  
Մն ակոսի պես ակոսեց դաշտը գարնամ  
Ու գնացին:  
Եվ նրանց հետ այն պատանին,  
Որ իմ Բայրը պիտի դառնա:

Ե

Իսկ այն փոքրիկ, ճին քաղաքում,  
Որ զարթնում էր մաքոքների զվարթ նրգով,  
Հիմա վայրի մի խուժան էր աղաղակում:

Մամ ո՛ թալան էր քաղաքում:  
Մաքոքները լոել էին,  
Չէին գործում ճերմակ կտավ,  
Մինչդեռ այնքան կտավ էր պետք՝  
Մի ողջ ազգի պատանքացոս

Գետակի մոտ՝ այնտեղ, ցածում,  
Ծվարել էր փոքրիկ մի տուն,  
Եվ այդ տան մեջ դողում էին  
Ու դողալով լուս աղոթում  
Մի հեզ աղջիկ ու ծեր մի կին:

Աղմուկն արդեն խոլ որոտում  
Ու հասնում էր այդ տնակին:  
Եվ ի՞նչ, և ի՞նչ պիտի անեն  
Մի հեզ աղջիկ ու ծեր մի կին:

Արդեն դոմերն են կոտրտում,  
Արդեն զնգում է ապակին,  
Միայն հրաշք պիտի լինի,  
Անհնարին, չեղած հրաշք,  
Որ ազատվեն մի հեզ աղջիկ ու ծեր մի կին:

Եվ մրաշքն այդ, իրոք, եղավ,  
Հանկարծ կինն այն տեղից ելավ  
Ու մոտեցավ լուսամուտին:

Եվ ի՞նչ... Հանկարծ լուսամուտից  
Կարմիր ոսկի տեղաց գետին,  
Այն խուժանի գլխի վրա  
Ուսկի տեղաց՝ մի բուռ լիրա...  
Այդ աղջկա ու ծեր կնոջ  
Տարիների տքնությունից,  
Տարիների հոգմությունից  
Կաթիլ-կաթիլ քամված լիրա:

Խուժանն իսկուն վրա նետվեց, անցավ իրար:  
Եվ այդ պահին իրար ձեռքից ոսկի խլող  
Այդ խուժանի միջով անցան,  
Զորալանջի արահետով վեր բարձրացան  
Պառավ մի կին ու մի աղջիկ,  
Որ իմ մայրը պիտի դառնա:

## Զ

Քարերն ամեն իրենց տեղում, անշարժ են, լուս,  
Լոկ հայի բախտն է գլորվել...  
Գարնան գիշեր... Լուսնկայից  
Ծերմակել են հանդ ու բլուր,  
Եվ քարավանը ոլորվել,  
Կծկվել է դաշտի մեջ բաց:  
Քարավանը... ի՞նչ քարավան՝  
Ասնս գայլի երախի դեմ  
Մի արնածոր սիրտ է կախված:

Գարնան գիշեր, անհուն գիշեր,  
Դու կապույտի ,անսահմանի,  
Ոգեղենի պայծառ խորհուրդ...  
Լույսն է ամպից սյուն-սյուն իշել,  
Որ մարդկային հոգին տանի

Դեպի աստծո ոլորտը լուրթ:  
Գարնան գիշեր, ճառագայթից,  
Աստղալուսից ու ագատից  
Դու ճարտարկած հսկա տաճար,  
Գարնան գիշեր, բարի, բարի,  
Ու թվում է, թե աշխարհի  
Սրտում հիմա ոչինչ չկա  
Չնչին ու չար...

Գարնան գիշեր, քո կապուտակ,  
Քո լուսեղեն գմբեթի տակ  
Մարդ արարածն արարչասեր  
Միայն սիրուց պիտի խոսեր,  
Խոսեր սրտի սուրբ շշուկով,  
Լցվեր վճիտ արտասուրով,  
Խորհեր պիտի ու աղոթեր...  
Եվ ո՞չ երբեք արյուն ոթեր...  
Բայց ոթեցին:  
Նժուզգներով իշան սարից,  
Մայր ու մանկան կոյսուտեցին,  
Բեռ ու պաշար կողոպտեցին,  
Խսկ այրերին, զույգ-զույգ կապած,  
Գետափի տարան:

*Մ*ահը մի է ու մի տեսակ,  
Բայց այդ ճերմակ լուսնյակի տակ  
Հազար տեսակ, հազար ձևի  
*Տ*անջանք ու մաս հնարեցին:  
Նախ մի փայտե խաչ բերեցին,  
Ու թե դարեր, դարեր առաջ  
Զեռք ու ոտքից էին խաչում,  
Ապա հիմա հայ գյուղացու  
Աչքերի մեջ մեխ գամելով  
Խաչ հանեցին:

Ժանգոտ պայտեր էին բերել,  
Մարդկանց ոտքերը պայտեցին,

Կոկորդները թրատեցին,  
Սրատեցիս ու զարկեցին  
Եվլ կրսամեռ թողած նրանց  
Կանգնեցին ու սակարկեցին.  
— Ով ուզում է ժանգիստ մեռնել՝  
Երկու ոսկի,  
Մի գնդակը՝ երկու ոսկի,  
Թանկ չէ բնափի  
Եվ աշխարհում այնպես եղավ,  
Որ գնվեց մահն էլ կաշառքով։

Ու շարեցին մրանց շարքով։  
Եվ մրանց մետ այն պատամուն,  
Որ իմ թայրը պիտի դառնա։

Տնքում էր լուր հողը գարնամ,  
Իսկ լուսմկամ՝ աշքն աշխարհի,  
Նայում էր լուր ու անտարբեր։

Ա՛յս, գոնեն դուք, բարդ-բարդ ամպեր,  
Ա՛յս, գոնեն դուք վարագուրեք  
Աշքն ամամոթ լուսնկայի։

Գնդակմերը ճարմատեցին,  
Եվ գետակի ջրերը պաղ  
Կարմրեցին ու տաքացան արյամբ հայի։

## Է

Հովն է փշում հարավային,  
Յասամամի կապույտ բոցից  
Կաթիլ-կաթիլ ցող է կաթում,  
Ուկե մի շող հուրիրատում  
Եվ ճեղքում է կանաչ շապիկն ալվան վարդի։  
Վարդ է, ինչ վարդ,  
Աշքիդ առաջ արդեշումն  
Իր թերթերն է ամա բանում,  
Մեծանում է ու մեծանում,

Դառնում հսկա,  
Աշխարհի չափ հսկա մի վարդ...  
Ու այդ վարդի թերթերի մեջ  
Մի աղջիկ է քնել հանդարտ,  
Ինքն է քնել...  
Գարնան արևն իր վետվետուն լույսը հինել,  
Քող է արել, փոել վրան:  
Զո՞րն է իշնում լանջով լեռան,  
Թե՛ երկնքով չուն է անցնում դա կոռունկի:

Տոն է, տոն է հավթոռուկի...  
Երկնի կապուտ գմբելթի տակ  
Ծախր են անում աղավնիներն այն սպիտակ,  
Ծախր են անում անթիվ-անթիվ աղավնիներ,  
Վարուժաններ ու մարիններ,  
Ծախր են անում, գտնում իրար  
Ու թև-թևի՝  
Վերանում են ու լողանում  
Ծաճանչների մեջ արևի:

Աշխարհն արդար, երկինքը խոր...  
Միշտ այսպիսի ջինջ պահերին եմ երնի  
Այս աշխարհում ծնունդ առնում  
Երգեր,  
Աստղեր,  
Մանուշակներ:  
Երգը հնչում էր հիրավի.  
— Ախ, ինձ առներ ջուլթակ տղան,  
Մաքոք նետեր, անուշ պագներ...  
Ու ճախրում են կապուտի մեջ  
Երգեր,  
Աստղեր,  
Մանուշակներ:  
Բայց ոչ, երգ չե... Աչքը բացեց,  
Գիշեր է սև, սև մի մարագ...  
— Բաջի, ելեք, ելեք արագ,  
Քանի մուլք է, ընկեր ճամփա:

...Քրդուիհին է, որ իրիկունք իրենց խղճաց  
Եվ օթևան տվեց ու Բաց:

— Ելեք, թե մարդու իմանա,  
Բացի, մահն է թե իմ, թե ձեր:

Ու մթամ հետ ճամփա ընկան այն կինը ծեր  
Եվ աղջիկն այն, որ իմ մայրը պիտի դառնա:

## Ը

Իսկ վատանիս՝ ճակատն արնած,  
Ըսկած է դեռ գետի ափին:  
Բարձրացել է արոեն աղփին,  
Բայց գետափին ընկած է նա:

Եվ մի անգի՞ սևագլուխ ու ամենի  
Սավառնում է արդեօ մրան,  
Որ աշքերը բնից պեղի,  
Սիրտը Բանի  
Ու վայրաբար խրախճանի:

Բայց այս անգամ այդ գիշակեր  
Անգդի բնազն էլ սխալվեց՝  
Ո՛չ, մեռած չլր դեռ պատանին:

Ու արթնացավ, ծարավ էր շատ  
Թե ծարավ է, ուրեմն կա,  
Ապրում է դեռ:  
Ու չիմացավ՝ ինչի համար  
Սկսեց լալ ու շշնչալ ինչ-որ բառեր,  
Որ միացան, դարձան «Հայր մեր»...

Արծիվների, անգների երամզ սև  
Իջնում էր վար, ելնում էր վեր,  
Մագիլներում՝ դեռ տաք սրտեր,  
Կտուցներում՝ աչք ու աղիք:

Գետը ծփում էր խաղաղիկ:  
Խմեց: Լվաց ճակատն արնոտ,  
Խսկ արցունքը հոսում էր դեռ:

Շուրջը կանաչ, կանաչ արտեր,  
Եվ բյուրավոր ոտքերի տակ՝  
Հունից ելած մի ճանապարհ:  
Ոչ, ցերեկվա լույսով արդար  
Նա չի գնա ճանապարհով,  
Լույսն այս երկրում աղետ է չար,  
Ու լոկ խավարն է ապահով:

Եվ նա մտավ արտը կանաչ:  
Ծանոթ բույրեր  
Եվ ակոսներ փիսրուն ու տաք...

Եվ փիսրուն հողն իր գլխի տակ,  
Պառկեց մի տաք ակոսի մեջ:  
Եվ աշխարհում այս բովանդակ  
Մենակ էին դեմ-հանդիման  
Մի պատաճի և մի երկինք՝  
Հսկայական ու կապուտակ:

Եվ պատաճին արտուն պառկած,  
Զրուց բացեց կապույտի հետ.

— Այսր այդպես աչքդ միշտ բաց՝  
Նայել ես մեզ գիշեր-ցերեկ,  
Ասա, ինչ ենք արել քեզ չար:

Երբ արեգակը քո արդար  
Հարավսային գոլ հովի հետ  
Գարնան գալու լուրն է դրկել,  
Եղել ենք մենք, հողն ենք հերկել,  
Խորն ենք հերկել...

Արդար սրտով սնրմ ենք ցանել  
Ու մեր մաքից ե՞րբ ենք հանել

Ըոլոն-թոլոն քո հավքերին,  
Անցվորներին, աղքատներին...  
Ու բուռ-բուռ է  
Նրանց համար ենք սերմանել:

Ասա, ի՞նչ ենք արել քեզ շար:  
Դու էլ մեզ Բետ եղել ես հաջտ,  
Գարնան օրով տաք ու պայծառ  
Ցոթը անգամ ամպ ես ճամփել դու Կարնո դաշտ  
Ու յոթն անգամ արև արել:  
Ցո՛թը անգամ ցող էր կաթում Կարմո դաշտին,  
Ցո՛թը անգամ շող էր կաթում Կարնո դաշտին,  
Ու յոթն անգամ կապում կապույտ մի ծիածան:

Ու կանգնում էր արտը... արտ չէր՝  
Ուկե մի պատ...

Ասա, ի՞նչ ենք արել քեզ վատ:

Արծիվների, անգղների երամզ սև  
Խջնում էր վար, ելնում էր վեր,  
Մագիլներում՝ դեռ տաք սրտեր,  
Կտուցներում աչք ու աղիք:

Արտը ծփում էր խաղաղիկ,  
Եվ արտի հետ՝ մի լույս ծաղիկ,  
Մի ցողաթաց ապրեմ-չապրեմ:

Հետո քնեց, կոպերի տակ՝  
Երկինք, երկինք մի կապուտակ  
Ու մի ճերմակ ապրեմ-չապրեմ:

Երբ արթնացավ, աչքերի դնմ  
Ապրեմ-չապրեմ ծաղկի նման  
Մի պայծառ աստղ էր հուրիրում:

Եվ նա ելավ, բռնեց ճամփան  
Ու հայացքը լուսնկալույս հեռաստանին,

Քայլեց Բեռուն...  
Քայլեց Աորից այն պատաճին,  
Որ իմ Բայրը պիտի դառնա:

❖

Մեր մարդկային արյունը տաք՝  
Թեև Բեղուկ, սակայն ունի  
Զարմանալի հիշողություն:  
Նա ի բնե երեխ շատ է ընդունակ  
Որդոց որդի հաղորդելու  
Մորմոք ու ցավ,  
Թախիծ ու թույն  
Եվ տառապանք, և տառապանք:

Իսկ մեր ցավը հին է, օ՛, հին...  
Եվ գիշերվա ճանապարհով  
Մենակ քայլող այդ պատաճին  
Իր արյան մեջ վաղուց ուներ  
Ծվեճճերը այն խավարի,  
Որ ահավոր կովլից հետո  
Իջել էր լուռ ու չարաշուք  
Դաշտի վրա Ավարայրի:

Այդ ցավի մեջ  
Սև մութը կար այն քարայրի,  
Որ դյուցազուն, միամորիկ  
Մեր Միերին իր գիրկն առավ  
Ու կողպվեց, փակվեց Բավետ:

Եվ փոշի կար, և փոշի կար  
Մեր Անիից լուսագմբեթ,  
Մի բուռ փոշի, մի բուռ մոխիր,  
Մի բուռ աճյուն...  
Ախտորյանի  
Հառաշն ու ողբը շառաշուն  
Եվ սև սուգը նախնիների,

Որ թողեցին ավեր ԱՇԻՆ  
ԵՎ գնացին կուլ գնալու  
Օտարության հեռաստանին:

Եղենին սև ճամփաներով  
Քայլում էր լուռ այդ պատանին,  
ԵՎ հնավանդ նրա ցավին  
Հյուսվում էր ցավ մի դժնդակ,  
Այնպիսի ցավ, որ մինչև այդ  
Չէր միացել ոչ մի դարում,  
Ոչ մի ուրիշ երկնքի տակ:

Քայլում էր նա, և այդ ցավին  
Խառնվում էր աჩեղ մի ճիչ:  
...Թփերի մեջ պառկած էր լուռ  
ԵՎ թփերի, փշի միջից  
Տեսավ նա պարզ:

Բերել էին,  
Բերել էին աղջիկ ու հարս,  
Բերել էին  
Աբրեշումի թելի նման լույս աղջկներ,  
Լույս աղջկներ, որ գիտեին  
Արշալուսի նման շիկնել,  
Կույս ալջիկներ, ողոնց կրծքին  
Չէր դիպել շրդն իսկ լուսնյակի...  
ԵՎ ի՞նչ... Պատսոռ-պատառ արին  
Զգեստները նրանց հագի,  
Մերկացրին արևի դեմ:

ԵՎ թետր ճիչ... խենթ ճիշերից  
Միահյուսված աჩեղ մի ճիչ,  
Որից փշուր-փշուր եղան  
Արեգակն ու երկինքը շինչ:

...Քայլում էր նա, և այդ ցավին  
Հյուսվում էր մի անզոր ցասում:

Մայր ու մանուկ սև խուժանից

Մի փշուր հաց են աղերսում:

— Հա՞ց... ինչո՞ւ հաց...

Սիրտ ու ջիգյար կա խորոված:

Չեզանից առաջ այստեղ եկած քարավանի

Սիրտն ու ջիգյարն ենք խորովել,

Համեղ է շատ:

Ու ճայթում է սև խուժանի

Քրդիչն իբրև ահեղ մի շանթ:

...Քայլում է նա, և այդ ցավին

Հյուսվում է մի անզոր բողոք:

...Մանուկներ են կմախքացած,

Մանուկներ են մերկ ու հողոտ,

Մանուկներ են

Տառապանքից իմաստնացած,

Ակնագուուից դուրս պողթկացած

Սև ու ճերմակ արևներով:

Մանուկներ են՝ քայլող բողոք,

Քայլող կսկիծ, քայլող ծարավ

Ու քայլող սով են անողոք:

Մանուկներ են՝ ողջ աշխարհի

Խղճին նետված անձայն բողոք:

...Քայլում է նա, ու այդ ցավին

Հյուսվում է մի անմար կրակ,

Դաժան մի հուր, ահեղ մի բոց:

— Բավ է,— ասաց ենիշերին,—

Ել հոգնեցինք քրքրելուց

Կանացի շոր, մարմին ու ծոց, Վ

Եկեք վառենք այս լրբերին...

Դե, ոսկուն ինչ պիտի լինի,

Չի մոխրանա, հայ չէ ոսկին...

Ու վառեցին,  
Ոտքից գլուխ նավթ շաղեցին  
Ու վառեցին...  
Ու վառեցին ծոցվոր կանանց,  
Ալևրված մամիկների,  
Թոթով ու թույլ մանուկների  
Գլուխն ի վար նավթ շաղեցին  
Ու վառեցին...  
Ու պարեցին բոցերը շեկ,  
Ու պարեցին վառվող կանայք,  
Ու մոխրացան պարող կանայք  
Այդ հրեղեն, ահեղ պարում:

Եվ զարմացավ ենիշերին,  
Որ մարդն այդքան լավ է վառվում...  
Հանգել էր բոցն արդեն վաղուց,  
Ենիշերին երգ սովելով,  
Տաք մոխրին էր արդեն մաղում  
Ու ոսկի էր փնտրում նորից,  
Բայց պատաճու,  
Բայց պատաճու աշքերի մեջ  
Բոցեր էին դեռ փողփողում,  
Պարում էր դեռ հրդեհն այն չար  
Եվ կպարի հուր-հավիտյան այն ցավի մեջ,  
Որ ժառանգել է իր հորից:  
Հետո ցավն այդ անցնի պիտի իմ արյան մեջ  
Ու մրրկի պիտի նորից:  
Բայց պատաճին ի՞նչ իմանար դեռ աշխարհում,  
Որ երբ մարդ են, երբ կենդանի մարդ են վառում  
Ցանկանում են ճշմարտության լուսը մարել:  
Իսկ այս անգամ ուզում էին հավետ մարել  
Մի պարզ, մի պարզ ճշմարտություն.  
Այն, որ հողն այս,  
Փոքրիկ ամելյունն այս աշխարհի  
Հողն է եղել, հողն է հայի...  
Մի պարզ, մի պարզ ճշմարտություն,  
Այնքան նման ճշմարտությանն այն հասարակ,

Թե երկիրն այս արևի շուրջն է պտտվում,  
Ծշմարտություն, որի համար  
Մի օր նոյնպես մարդ են վառել:

## Փ

Բայց այդ պահին, ախ, երևի,  
Կար աշխարհում ինչ-որ մի վայր,  
Մի արևոտ, կանաչավետ  
Ու ցողաթաց մի դաշտավայր,  
Ուր չկար մահ ու չկար ցավ  
Եվ ուր չկար անգամ թափահծ,  
Զրերն էին ուրախ զնգում  
Եվ ծիծաղում աշ ու ձախից...  
Սովում էին հավքերն այնտեղ  
Երգերն իրենց անհոգության,  
Արծաթե խոփն էր փողփողում,  
Ծոնչում էր հին մի գութան:  
Ծերմակ գառներ էին մայում,  
Սահում էին ճերմակ ամպեր,  
Ծիչով իրար էին փարվում  
Զրերն ուրախ ու անհամբեր:  
Ու մանուկներ կային այնտեղ՝  
Հագած ճերմակ, ծափ ու ծաղիկ,  
Շուրթի վրա ամեն մի տան  
Մուխ կար կապոյտ ու խաղաղիկ:  
Հավքեր կային զարմանալի  
Եվ անծանոթ ծառեր կային  
Եվ բարություն և բարություն  
Եվ բարություն մի մարդկային:  
Լուսի նման սեր կար առատ,  
Որ ծավալվում էր ծայրեծայր...  
Ախ, երևի, ախ, երևի  
Կար աշխարհում ինչ-որ մի վայր...

## ԺԱ

Ողջույն, Եփրատ, հայոց դու գետ,  
Հայոց ոգի, հայոց երակ,  
Ժայռ ու քարի մեջ մոլեգնող,  
Ժայռը փշրող, քարը հեզնող  
Ծերմակ միրիկ, ճերմակ կրակ:  
Դար ու դարեր Տավրոսն ի վար  
Իջել ես դու արար-վարար,  
Իջել ես դու առու-առու,  
Իջել ես դու վտակ-վտակ,  
Հյուսվել ես դու ասքի նման  
Եվ հորդացել,  
Ժայռերի դեմ հոխորտացել  
Եվ ծածանել հողմերի դեմ  
Քո բաշն ահեղ ու սպիտակ:  
Մեր փոթորկոտ երկնքի տակ  
Դու պատմոթյան հետ շառաչել,  
Մեր պատմոթյան հետ հառաչել.  
Կուրծք ես տվել ու ծառացել  
Քո ոստիսի, քո բախտի դեմ  
Ու երկնքի:

Հայոց դու գետ, հայոց երակ,  
Մեր արյան պես արդար ու Բին...  
Կար ժամանակ, որ մեր սիրո աստվածութիւն  
Մշո դաշտի մուտք իր վրա քող էր անում  
Եվ պաղպաջուն քո ջրերի մեջ լողանում,  
Լողանում մերկ ու գեղեցիկ...

Եվ պարմանիք. մեր պարմանիք սիրակարց.  
Մշո բարձրիկ լեռներն ի վեր մինչ առավոտ  
Թեծ խարույկներ էին վառում,  
Որ հիանան աստվածութու  
Լուսաստինք գեղեցկությամբ...  
Սակայն Աստիիկը ամոթխած  
Տավրոս սարից վար էր քերում կապույտ մի ամա,

Մշի: դաշտի մուլթը փոխում կապույտ մուժի  
Եվ լողանում էր ապահով  
Ծղարշի տակ այդ մշուշի:  
Եփրատ, նորից ջրերիդ մեջ  
Մերկ աղջիկներ են լողանում՝  
Անահիտներ ու Աստղիկներ,  
Խոնարհիկներ. Համեստիկներ  
Եվ Լուսիկներ լուսասինք:

Բայց լողն է դա նրանց վերջին,  
Ու ողբի հետ քո սպիտակ  
Նրանց սև ողբն է բարձրանում,  
Հասնում երկինք:

Նրանց խել, մերկացրել,  
Նրանց լլկել են վայրաբար...

Եվ կուգեին, ակս, կուգեին,  
Որ ջուրը քո ջոր չլիներ,  
Լիներ հալած կուպր ու կապար,  
Որ նետվեին, հրդեհվեին,  
Մոխրանային վայրկենաբար:

Տես, ձեռք-ձեռքի, ամոթահար,  
Ծամերն իրենց կապած իրար,  
Քո ժայռերից գիրկդ են նետվում  
Ասուպների լույս անկումով:

Եվ լեռները, և լեռները,  
Պատկառանքի ընկրկումով,  
Եփրատ, ճամփա են քեզ տալիս,  
Որ սրբազն բեռդ տանես,  
Տանես քո ողբն ամեղաձայն

Հայոց դու գետ, հայոց երակ,  
Կար ժամանակ, որ ափերիդ  
Տոն էր, հանդես ու ծիածան:

Այստեղ փողեր էին փշում,  
Այստեղ թմբուկ էին զարկում,  
Խոլ նժույգներ էին վարգում  
Ու տոնն անում նավասարդի:

Թմբուկներ են նորից զարկում...  
Մայրը ահա չոր ու ցամաք  
Կուրծքը բացել  
Ու ոսկրացած իր բռունցքով  
Զարկում, զարկում է մոլեգին,  
Ու թմբուկի ձայն է գալիս,  
Չոր թմբուկի...

Եվ փողեր են փշում նորից,  
Ողբն իր փողն է նորից փշում,  
Որ վայում է գալարաձայն՝  
Նման բուքի:

Աղավնիներ էին թևում  
Կապույտի մեջ այս հթերի...  
Ու երամներ, ու երամներ կան վերևում  
Սև երամներ են մայրական անեծքների:

Հայոց դու գետ, հայոց երակ,  
Հայոց երազ Արածանի...

Բայց ո՞վ կտա, Էլ ո՞վ կտա  
Նրանց սուրբ ծուխը ծխանի,  
Սուպոտը նավասարդյան...

Զավակներիդ քարավանները քրքրված  
Եկել ահա որբ ու շվար,  
Ծովացել են ափերդ ի վար,  
Ծովացել են որպես սոսկում,  
Որպես մորմոք ու տառապանք:  
Եկել են, տես,  
Որ ճակատներն իրենց այրված,

Կուրծքը, կուրծքը մողմահարված,  
Շուրթերն ու սիրտը ծարաված  
Պարզեն շնչիդ, ջրափոշուդ,  
Ալիքներին քո պաղպաջուն...  
Հայացքներով լուռ աղերսում,  
Մանուկները ջուր են ուզում,  
Մի կաթիլ ջուր:

Բայց ահարկու ենիշերին,  
Վիշապի պես նստել ջրին,  
Սև երախից ծուխ է ժայթքում,  
Մոխիր ու բոց...

Եվ ճրագի պես թրթոում,  
Մարում են լուռ, անշունչ մարում  
Մանուկները,  
Մանուկները այն գրկանոց:

Սակայն սուգի ու ողբի մեջ  
Այդ որտեղից զրնգացիր  
Ու որտեղից թռար հանկարծ  
Ուրախության անզուսպ դու ճիշ...

Մայրն է գտել կորած որդուն,  
Սեղմել կրծքին իր ցամաքած  
Ու ծպտում է, ծպտում է լուռ  
Արտասուրի ծովի միջից:

Սեղմել կրծքին  
Ու շուրթերով իր պապակած  
Համբուրում է,  
Համբուրում է դեռ կատաղի.  
— Քո սուգն էինք արել արդեն,  
Մեր սուգի մեջ, մեր ողբի մեջ  
Դու որտեղից իջար հանկարծ,  
Ո՞վ, ծիրանի պայծառ ծաղիկ...

ԵՎ համբուրում,  
Համբուրում է դեռ կատաղի  
Գտած որդուն, այն պատաճուն,  
Որ իմ հայրը պիտի դառնա:

Մակայմ եկավ ենիշերին,  
Զեռքը սրին, հայացքն արնած.  
— Դեռ արո՞ւ կա քարվանի մեջ...  
Մայրը ոտքերն ընկավ նրա  
Ու աղաչեց,  
Գութ աղերսեց ավազակից.  
— Ախ, էֆենդի, տասը զավակից  
Միայն այս մեկն է մնացել...  
ԵՎ աչքերը ավազակի  
Ժպտացին մեղմ ու քնքշագին.  
— Ոչինչ, բազի, հիմա իսկույն  
Մատադ կանեմ քո զավակին:

Մայրն աղերսեց ու ծառս եղավ,  
Մայրն ու Եփրատը ծառս եղան՝  
Հառաչելով որոտագին:  
Մայրը տեսավ, իր զավակին  
Տարան քարափ, քարով զարկին,  
Գլորեցին անդունդն ի վար՝  
Ալիքների մեջ Եփրատի:

Մայրը կանգնեց երկնքի դեմ,  
Կանչեց երկինքն իր մայրական ահեղ դատին:  
— Հայի աստված,  
Անսիրտ աստված,  
Թքել եմ ես քո ճակատին:

Ու ծառս եղան՝  
Մայրն ու Եփրատը ծառս եղան՝  
Սև անեծքներ հանճարելով.  
— Ոչ, չմեռնես, ենիշերի,  
Այլ ծակծկվես,

Որ ջրերդ վազեն տաք-տաք,  
Էլ հողի մեջ սերմ չձգես,  
Դառնաս ավեր, խոլ ջրաղաց,  
Անցած փեթակ...

Ու մոլեգնեց ենիշերին,  
Զեռքը նորից տարավ սրին,  
Սուրբ շողաց,  
Սուրբ սովեց,  
Մոր անհծող գլուխն ընկավ,  
Ընկավ գլուխն արնոտ հողին,  
Ընկավ գլուխն ու... չլոեց...

Եվ մի վայրկյան,  
Երկու վայրկյան  
Խոսեց գլուխն արյունածոր,  
Ու անեծք էր խոսքը նրա,  
Մի անծանոթ, մի ամենի,  
Ահեղ անեծք...

Ենիշերին նախ վարանեց,  
Ապա նորից սուրբ Բանեց  
Ու խենթացավ..  
Այն թրատված գլուխն էի նա թրատեց,  
Հետո դարձավ,  
Զարկեց, Բատեց,  
Սոհահարեց, ասպատակեց  
Ու մոլեգնեց մինչև գիշեր:

Եվ լոռիթյուն իջավ հետո,  
Բլուրները կապոյտ հագան,  
Խակ Տավրոսը մեծին վայել սև էր Բագել:  
Եփրատը կանգ առավ մի պահ,  
Խեղդեց արցունքն իր մայրական  
Եվ սկսեց պատարագել...

## ԺԲ

Երգում էր նա քարերի մեջ քար աշխարհի,  
Երգում էր նա կուրծքը տված ժայռ ու քարի,  
Երգում էր նա կապուտի մեջ ու լուսիշյան  
Երգը ողբի և հարության:  
Երգում էր նա, և թախմալուր նրա հանգում  
Նարեկա մեծ տառապյալի  
Զայնն էր ասես արձագանքում:  
Երգում էր նա, որ աշխարհում այս բարձրաբերձ  
Լեռներ կան վեր՝ կատարներին երազ ու ձյուն,  
Որ խոյանում դեպի ոլորտը աստղամերձ  
Եվ հասնել են ուզում աստծուն,  
Բայց չեն հասնում...  
Փեշերն ի վար կախված քարերն, օ՛, ծանր են շատ:  
Երգում էր նա, որ լեռներում այս բարձրաբերձ  
Մարդն էր ապրում,  
Նա, ստեղծման սուրբ կրակով հոգին սրբած,  
Փոթորկում էր դեպի վերին ոլորտը բաց,  
Ուր լույսը մեծ ու բարությունն առատ է շատ,  
Փոթորկում էր իր ոգեղեմ  
Կապուտ ու լույս փոթորիկով,  
Բայց փշրվում էր նա ուժատ:

Տառապանքի քարերը ժեռ՝ ծանր էին շատ:

Երգում էր նա, ու թախմալուր նրա հանգում  
Կոմիտասյան մեղեղին էր արձագանքում:  
Երգում էր նա, որ լեռներում այս բարձրաբերձ  
Ու լեռների հովիտներում պտղինավետ  
Մարդն էր ապրում...  
Նա երգով էր խոսում քարի ու հողի ենտ,  
Իր տիսրաչյա եզների հետ  
Թեթևություն ու հույս բերող  
Հորովելով էր զրուցում:  
Մարդն էր ապրում...  
Նա, որ գիտեր իր տիսրության սև մութ ամպից .

Քամել հույսի, քամել լույսի կաթիլն անբիծ  
Եվ իր տխուր ուրախությամբ ուրախանալ...  
Նա, որ գիտեր տառապանքի ապառներից  
Ազնվության աղբյուր հանել  
Ու աղբյուրի պես ցոլանալ:

Երգում էր նա, որ բարձրաբերձ այս լեռներում  
Մարդն էր ապրում...  
Եվ տքնության, տառապանքի  
Գիշերներում մեծ ու անհուն  
Աչքը հառած մի թեռավոր, պայծառ աստղի,  
Իր տքնությամբ ազնվանում,  
Մաքրվում էր ու մեծանում,  
Որ մարդկության հսկա ծառին  
Նաև իր լույսն ու բարությունը պատվաստի:

Երգում էր նա,  
Եվ ափերի ժայռին գամկած,  
Մարդն էր մեռնում,  
Մարդն էր մեռնում արճաքամված,  
Մեռնում էր որբ ու կարեվեր:

...Զարը մարդուց զորեղ էր դեռ:

Երգում էր նա քարերի մեջ քար աշխարհի,  
Երգում էր նա կուրծքը տված ժայռ ու քարի,  
Երգում էր նա կապույտի մեջ ու լոռություն  
Երգը ողբի ու հարության:

## ԺԳ

Եվ առավոտ եղավ ու լույս  
Չըերն ի վար Եփրատ գետի  
Արեգակը ծվեռ-ծվեռ  
Ծիրանիներ փոեց կրկին:

Կեռմաններով լեռնային մեղ արամետի  
Ցած են իշնում հեզ մի աղջիկ ու ծեր մի կին:

Առավոտ է, ջինջ առավոտ,  
Ծող է շաղում արդեմ արփին,  
Եվ ջրահեղձ ո՞ի պատանի  
Ընկած է դեռ գետի ափին  
Եվ մի անգա՞ սևազլուխ ու ամենի  
Սավառում է արդեմ վրան,  
Որ աչքերը բնից պեղի,  
Սիրտը Բանի  
Ու վայրաբար խրախնանի:

Բայց այս անգամ էլ գիշակեր  
Անգղի բնազդը սխալվեց.  
Ո՛չ, մեռած չեր այդ պատանին:

Ընկած էր նա, բայց նրա փակ աչքերի դեմ  
Գարնան օրն էր իշել Կարճո տափաստանին:  
Գարնան օրն այն, որ յոթն անգամ սեգ Բյուրակնից  
Բերում էր թուխ, ծանր ամպեր,  
Դաշտի վրա թոն էր մանում  
Ու յոթն անգամ արև անում:  
Ու յոթն անգամ դաշտի վրա ցող էր կաթում,  
Ու յոթն անգամ դաշտի վրա շող էր կաթում,  
Ու յոթն անգամ կապում կապույտ մի ծիածան:

Իջնում էին մայր ու աղջիկ ու քարացան:

— Սպանել ու ջուրն են նետել,  
Զուրն է բերել...  
— Բայց չէ, մայրիկ, շնչում է դեռ.  
Դեռ չի մեռել:  
— Ինչ ջահել է ու ինչ մորճուկ,

Ես դեղ ու ճար կանեմ նրան,  
Զուր բեր դու, ջուր...  
Եվ պատանին աչքը բացեց,  
Վրան թեքվել են գուրի պես  
Մի Բեգ աղջիկ ու ծեր մի կին:  
Դեռ արյուն է վերքից կաթում,  
Բայց նա ոտքի ելավ կրկին:

Ու կինն ասաց.  
— Գնանք, որդի,  
Գնանք մեզ հետ բարձրանանք սար:

Սարը բարձր էր:  
Ու երկնքին, ու լուսերին էր հավասար:

Եվ գնացին:

Դեռ պատանու այրող վերքից  
Շիթ-շիթ արյուն էր կաթկթում,  
Բայց գնացին:  
Լեռան գագաթն արևի դեմ հուրիրատում  
Ու շողում էր հազարերանգ:  
Ու գնացին, ելան նրանք՝  
Այն կինը ծեր, որ մեծ մայրս պիտի դառնա,  
Եվ այն աղջիկն ու պատանին,  
Որոնց շուրթերը դեռ լուս  
Ու սրտերը ու լոկ սրտերն են թրթում:

Եվ բարձրացան,  
Ելան նրանք...  
Այրող վերքից շիթ-շիթ արյուն էր դեռ կաթում  
Եվ լեռնային արահետին  
Աստղերի պես հուրիրատում,  
Հուրիրատում լուսերի մեջ ու լուսթյան:


Իսկ անդադում Եփրատը դեռ  
Երգում էր երգն իր հարության:

## ԺԴ

Երգն հարության... Այդ լուսալիք երգի միջով  
Քայլ էր անում մի պատանի  
Խարտիշագեղ ու հրաչյա...

Եվ գարնամ հետ, երբ պատանու երակմերում  
Եռա արյունն ու վարարի,  
Խելագարվի ու պղպջա,  
Նոր մանուկ է աշխարհ գալու:  
Մանուկներ են աշխարհ գալու  
Ծիլերի պես,  
Ծաղիկների  
Ու աւտղերի:  
Այսպես, ծնունդն իմ՝ աշխարհում  
Դժվար եղավ անասելի,  
Հրաշք եղավ,  
Հեքիաթ եղավ, չհնարված:

Մի սև ոճիր՝ մարդու կերպար ու տեսք առած  
Ու ձեռքի մեջ առած աჩեղ մի յաթաղան,  
Բարձրացել էր, որ աշխարհում  
Հայ մանուկներ աշխարհ չգան,  
Բարձրացել էր, որ չծնվեմ,  
Բայց ծնվեցի...



... Իր խաչքար դառնամ  
իմ մարմնի խաչով:

## Ո-ԵՒՅՎԵՍ

### Ա.

Ես եկել եի, որ այստեղ լոեմ,  
Ես եկել եի, որ չոքեմ ծունկի,  
Քարանայ այստեղ առանց արցունքի,  
Հետո իմ փոքրիկ հողը հեռանամ,  
Գլուխս դնեմ նրա քարերին  
Ու թե լամ՝ այնտեղ,  
Մորմոքամ՝ այնտեղ...  
Եվ սակայն ինքս էլ չհմացա՝ ինչպես  
Շորթերս դիսկան աղի տաք համին...

Այս, ոսկորները...  
Դեր-Զորի քամին  
Մանկան ոսկորից սրինգ էր սարքի՝  
Եվ արշալուսի խաղաղության մեջ  
Սուլում էր մահվան անմահ նվազներ:  
Սրինգն էր սուլում  
Ու տեսիլներ էր կախում լազուրում:  
Պատառոտվում էր պատանքն ավագի,

Ավագի տակից ելնում էր, ծփում  
Մի խարտյաշ մանկան գանգուր մի ալիք...

— Ա'ն, գնանք, որդի,  
Քելք արա, ո՞չ է...  
— Մերիկ, ա'ն, մերիկ,  
Ոտի կս է ցավում,  
Այս ճամփան՝ ավագ,  
Այս ճամփան փուշ է,  
Ու ծարավ եմ ես,  
Ծարավ եմ,  
Ծարավ...

**Դեր-Զորի քամին**  
Մանկան ոսկորից սրինգ էր սարքել  
Եվ նվագում էր ծարավի, մահվան  
Անմահ նվագներ:

Ես եկել էի, որ այստեղ լոեմ,  
Ես եկել էի, որ չոքեմ ծունկի,  
Քարանամ այստեղ առանց արցունքի,  
Բայց ագռավները...

Ի՞նչ ունեն արդյոք սև ագռավները  
Չոր ու ամայի այս անապատում,  
Որ գալիս, լուսը սևով են պատում,  
Ծախրում են, ճշում, կոնչում են չոր,  
Կտուցով քանդում ավազը տոշոր,  
Բախվում են իրար, թևին են տալիս,  
Ասես թե որս են խլում իրարից...

Ու ես միշեցի.  
Երկար են ապրում ագռավներն այս սև  
Ու մեռվից կրկին այստեղ են հասել,  
Որ կերակրովեն վաղեմի հուշով,  
Որ մանկան մաքուր աշուկներ հանեն,  
Սրտեր ծվատեն  
Ու խրախճանեն...

Ագուավճե՞ր, սակայն,  
Իզո՞ւր եք եկել,  
Նրանք վաղուց են մոխրացել այստեղ,  
Վաղուց են դարձել փոշի ու աճյուն,  
Եվ ձեր թները գուր են շառաչում  
Այս դեղին, այս սև  
Ավագի վրա՝  
Այս անծայրածիր գերեզմանոցի...

## Բ

Աշխարհում՝ անթիվ գերեզմանոցներ,  
Անթիվ շիրիմներ՝ հողագունդն ի վար...  
Եվ սակայն շիրիմն իմ ժողովրդի,  
Իմ մի բուռ, փոքրիկ իմ ժողովրդի  
Ամենամեծն է  
Աշխարհում արար...

**Դեր-Զորի քամին**  
Մանկան ոսկորից սրինգ էր ասրբել  
Եվ արշալուսի խաղաղության մեջ  
Սոլում էր մահվան անմահ նվազներ:  
Սոլում էր, հուշում,  
Որ ավագի տակ  
Մի կարմիր-կանաչ  
Ու մի կապուտակ  
Երազ կա թաղված...  
Եվ անապատը,  
Որ հսկա ու փակ  
Մեռյալի կոպ էր թվում իմ աշքին,  
Շարժվում էր ասես,  
Ու այն կապուտակ,  
Այն կարմիր-կանաչ  
Երազն էր ցոլուն...  
... Գյուղի բարդին էր կատարն օրորում,  
Ու լուսերի մեջ արևագալի  
Զիլ գրնջում էր օրիներգը կալի:

Արեգակի մեջ ու մղեղի մեջ  
Որոճում էին եզներն սպիտակ,  
Եվ մանուկների ատամների տակ  
Համ էր ցորենի,  
Համ էր արևի  
Ու համ էր կաթի...

Տաք մղեղի մեջ ու արեգակի  
Հարս ու աղջիկներն օրորվում էին  
Ու ցորեն էին էրնում մաղերով,  
Աշխարհի վրա ասես շաղելով  
Սեր ու բարություն:

Հետո գիշերը՝ սոսափյունի մեջ,  
Աստղալուսի մեջ ու անհունի մեջ  
Կավե կտուրներն անրջում էին,  
Եվ հոգնած, փակված կոպերի տակով  
Լուս շրջում էին  
Երազանքները՝  
Հույսների ոսկե աստղերով առի:

Ծեկ անապատը  
Դեղին ու հսկա կոպ է մեռյալի,  
Որ իր տակ հավետ ու անդարձորեն  
Թաղել էր արև ու լուսի ցորեն,  
Թաղել տերևի թրթիռ ու սոսափ,  
Ողկուզի շնորհ, ջրերի հոսանք,  
Հողի բուրումներ, մրգի բարություն,  
Մեղվի տաք տրնանք ու համբերություն,  
Արարչությունն է թաղել մայր հողի  
Եվ արարողի երազն է թաղել:

Սոլում է քամին ու երգում ահեղ,  
Որ ավագի տակ  
Թաղված են աստղեր ու մարգարեներ...

Եվ ավազները շարժվում են ասես,  
Եվ ավազներից ելնում է ահա

Մի ասպետական կորովի հասակ,  
Հեթանոսորեն գեղեցիկ մի այր  
Ու շշնչում է լուսն քարբառով.  
— Ես կարող եի դարիս ճակատը  
Բանատեղծության աստղերով զուգեև,  
Բայց իմ ճակատը փշրեցին քարով...

Սուլում էր քամին ու երգում ահեղ,  
Որ ավագի տակ թաղված են երգեր  
Ու մարգարեներ...

Եվ ավագները շարժվում են ասես,  
Եվ ավագներից ելնում է ահա  
Մի սքեմավոր, սևավոր մի այր:  
Սև թևերի պես սքեմը բացած,  
Սավառնում է նա իբրև սև մի տենդ,  
Սավառնում իբրև ոգու ցավը խենթ,  
Սավառնում, հածում, հետո թևաբեկ  
Ծունկի է իշնում նա անապատին,  
Ծունկի է իշնում  
Իբրև խելագար,  
Սևասոն սամում...

Ավագ է առնում նա անապատից,  
Մոխիր է առնում նա անապատից  
Ու ծամում,  
Ծամում...

Եվ հետո  
Հանկարծ  
Մոխիրից սևացած նրա շուրթերին  
Թառում են, դողում լուսերը վերին,  
Եվ սկսվում է  
Մի սուրբ պատարագ...

Հողմեր են սովել,  
Մլացել վայրագ,  
Չվել են տարիք,

Եվ ավագներ են չվել տարագիր,  
Բայց անապատում ալիքվում էր դեռ  
Զնգացող ցավը,  
Զնգացող ծուխը,  
Զնգացող բոցը  
Այդ պատարագի...

Եվ պատարագի ալիքի միջով  
Դեռ քայլ են անում մի խարտյաշ մանուկ  
Ու ցամքած մի մայր...

— Ան, գնանք, որդի,  
Քելք արա, ո՞ւշ է...  
— Մերիկ, ան, մերիկ,  
Ոտիկս է ցավում,  
Այս ճամփան՝ ավազ,  
Այս ճամփան փուշ է,  
Ու ծարավ եմ ես,  
Ծարավ եմ,  
Ծարավ...

Ակնա ջրերը, ախ, արար-վարար,  
Ակնա ջրերը կապուտաչ էին,  
Ակնա ջրերը քարափներն ի վար  
Ջրնգոց էին ու կարկաչ էին,  
Ակնա ջրերը  
Աստղերի անհայտ  
Ակունքից գալիս  
Ու լալիս էին,  
Ծիծաղից լալիս...

Արևն ընկնում էր ակնաղբյուրի մեջ  
Ու սառնությունից սարսում, դողում  
Իսկույն ճաքում էր,  
Ակնա ջրերի պաղպաջունը ջինջ  
Ծուրթերիդ վրա աստղային կում էր...  
Երկրի անձրես, ախ, արար-վարար

Ու կապուտաշ էր,  
Երկրի անձրևը քարավիճերն ի վար  
Շունչ ու շառաշ էր,  
Երկրի անձրևը երակ-երակ էր,  
Երկրի անձրևը կապույտ լեղակ էր,  
Երկրի անձրևը հորդ էր, հեղեղ էր,  
Եվ ամեղ կիրճը նրա դեմ նեղ էր,  
Գետը ուշում էր տեղատարափից  
Եվ Բովազի պես  
Վեր էր մագլցում  
Ժայռ ու քարափից:  
Տե՛ր, այդ անձրևից մի երակ տայիր,  
Գեթ մի շիթ տայիր,  
Խարտյաշ մանկիկը ընկել ավազին,  
Հեռում է, ճայի՛ ր,  
Հեռում, լոռում է  
Ու մարմրում է...  
Բայց դո՞ւ՝ խով,  
Դո՞ւ՝ կույր,  
Դո՞ւ այս աշխարհի  
Խիղճը անմաքոր,  
Մայրը քեզանից չի հայցում ոչինչ,  
Լոկ վեր է հղում սայրատոր մի ճիշ,  
Հետո երգում է,  
Երգում ծիծաղով,  
Ցնորված երգում,  
Որ կախօրրան է պարտեզում կապել  
Ու վրան վարդի թերթեր է թափել,  
Սոխակին կանչել, ասել է. «Արի՝  
Ու քունը Բակիր իմ մինուճարի»...

Սակայն սոխակի թեր չէ, օ՛, ոչ,  
Ավազի թեն է  
Իջնում զավակին,  
Ագռափի սևն է  
Իջնում զավակին...

Իմ Արարատյան սրբազան Բողից  
Երկնքի միջով ես այստեղ հասա...

Ու եղավ մի ժամ, մե՛ծ, աჩեղ մի ժամ,  
Եղր ինքնաթիղի շուքը Բեշտասար  
Եվ իմ հայացքը շոյում էին լուռ  
Մեզանից Բատված,  
Մեզանից զատված  
Մեր Բովիտները կանաչ ու տխուր...

Ու ես իմ կյանքում առաջին անգամ  
Զգացի, Երկիր, քո ձգողական  
Ուժը ահավոր:  
Զգում էին ինձ,  
Զգում էին վար,  
Մեր Բովիտները,  
Վիհերը խավար,  
Տաճապարհները մեր կայծակնաձն,  
Որ շառաշել են մեր պատմության հետ  
Ու ահագնացել...  
Բայց լուռ են հիմա,  
Թափուր են հիմա...

Մշուշ կար ցածում,  
Մշուշ մի թեթև,  
Ու ինձ թվում էր, թե դա ծուխն է լուրջ  
Այդ հսկայական զոհասեղանի,  
Որ մխում է դեռ:  
Ու ես երկնքից Եփրատը գտա,  
Ու լեռապարը գտա Տավրոսի,  
Ու գտա մի վանք,  
Որ թվում էր, թե  
Ուր որ է պիտի հայերեն խոսի:

Ու շեներ տեսա Բովիտներն ի վար,  
Ու շեներ տեսա լանջերին քարոտ,

Ո՞րն ես, Արաբկիր, իմ ծննդավայր,  
Իմ արյան մորմոք, իմ արյան կարոտ...

Ու ես երկնքից իշել էի վար,  
Թափառում էի երկրում իմ ավեր  
Եվ ոգում էի անդունդներն ի վեր.

Մեր շենքերն այստեղ  
Ավերվում են լուս,  
Ավերակներս են  
Ինձանից խլել...

Ակնա ջրերը  
Հոսում են տխուր,  
Աղբյուր-ակներս են  
Ինձանից խլել...

Աստղիկը մերկ է  
Մշո մուժի տակ,  
Իմ աստվածներն են  
Ինձանից խլել...

Մհերի դուռը  
Մնացել է փակ,  
Առեղծվածներս են  
Ինձանից խլել...

Այստեղ Բանգչում է  
Ծիրիմը պապիս,  
Պապիս աճյունն են  
Ինձանից խլել...

Ահեղ Եփրատը  
Զարկում է ափին,  
Այդ շառաչյունն են  
Ինձանից խլել...

Թափառում էի հովիտներն ի վար,  
Դեգերում էի անդունդներն ի վեր...

Մշուշն էր ծփում.

Մշուշ չէր դա, ո՞չ,

Դա ծուխն էր կապույտ

Այն հսկայական զոհասեղանի,

Որ մխում է դեռ:

Եվ աշքերիս մեջ արցունք էր դառնում

Ծուխն այդ մահահոտ:

— Ախ, իմ հայրենիք,

Իմ ծննդավայր,

Իմ ասպատակված,

Իմ որբ, իմ ցավոտ,

Գնում եմ դեպի շիրիմդ հսկա,

Որ ավագներին ընկնեմ ծնկաչոք,

Որ լոեմ այնտեղ,

Քարանամ այնտեղ,

Որ խաչքար դառնամ

Իմ մարմնի խաչով...

## Դ

Արևը ելել,

Իմ գլխի վրա կանգնել հսկումի

Եվ ինձ ձուկել էր իմ ստվերի հետ:

Անապատային շիկացած մի տեսդ,

Իմ ներքանների մաշկը այրելով,

Հասնում ճակատիս

Ու բոցկլտում էր ճակատիս վրա:

Ինձ քամի էր պետք ու քամի չկար:

Ես ուզում էի քայլել ավազով,

Բայց ձայներ էին խճճում ոտքիս,

Եվ հառաչանքի թեժ բոցերն էին

Կտրում իմ ճամփան:

Զուր էր աղերսում անապատը շեկ,

Եվ անապատի ալիքները շեկ

Մարող, մարմրող մանուկների պես  
«Ձո՞ւ» էին ճշում...

Ես ուզում էի շշնչալ նրանց.

— Եղե՛ք, մանուկներ,

Ես ջուր կրերեմ ձեզ Արագածից,

Մեր աղբյուրների սառնորակ լացից  
Ալիք կրերեմ,

Որ դնեմ այրվող ձեր ճակատներին.

Հովեր կրերեմ,

Զովեր կրերեմ,

Սոսափ կրերեմ,

Զով ամա կրերեմ,

Որ ձեզ պարուրեմ...

Ես ուզում էի այդպես շշնչալ,

Եվ սակայն ձայնս ելնում, դիպչում էր  
Անապատի պես իմ չոր հագագին

Ու խլանում էր,

Մարում տխրագին:

Կանգնել էի ես

Համրությամբ կքած,

Էարե արցունքիս

Ծանրությամբ կքած,

Կանգնել էի ես

Ու խրվում էի ավագների մեջ:

Կարմիր էր ավազն ու ավազը՝ սև,

Բնոսոր էր ավազն ու ավազը՝ սև,

Դեղին էր ավազն ու ավազը՝ սև,

Ու խրվում էի ես դեղին ու սև

Այդ հառաչի մեջ,

Ես խրվում էի իմ դաժան դարի

Մղձավանջի մեջ...

Եվ անապատը հառաչում էր ձիգ.

— Դա՛ր քսաներորդ,

Ես խարան էի քո խղճի վրա,  
Բայց այդ խարանից քո խիղճը չայրվեց  
Եվ նոր, նորանոր սև խարաններից

Քո դեմքը եղծվեց  
Ու ծաղկատարվեց...

Ծաղկատար դեմքով դու ինչպե՞ս պիտի  
Պտտվես չքնաղ արեգակի շուրջ...

Եվ անապատը հառաջում էր ձիգ,  
Եվ անապատի այդ հառաջանքում  
Ասես մահացած մարգարեների

Բողոքն էր զանգում.

— Դա՞ր քսաներորդ,

Դարեր ու դարեր մենք սեր նյութեցինք,  
Բջիջ առ բջիջ քամեցինք բարին,  
Մեր մի բուռ սրտով մենք փոթորկեցինք  
Ու փոթորկումի

Մեր մաքրությունը տվինք աշխարհին,

Մենք խարույկ ելանք,

Ողջակիզվեցինք,

Դարձանք լուս ու հոր,

Կայծակների պես

Մենք փշրվեցինք,

Որ քեզ պարգևնենք երկինք մի մաքոր

Եվ հայացքիդ դեմ կախենք հարության

Առասպելները

Հիասքանչ ու մեծ...

Դու ի՞նչ արեցիր սերը մեր նյութած,

Մեր նյութած բարին.

Ինչպե՞ս կարեցար Դեր-Զոր արարել,

Ինչպե՞ս կարեցար այս քուրան վառել,

Ինչպե՞ս կարեցար սև խրախմանքի

Կանչել դու շարին...

Եվ հառաջում էր անապատը ձիգ.

— Տե՛ր, քիչ էր կարծես ինձ վերուստ տրված

Բախտն ամայության,

Հավերժ ամլության,

Հավերծ համրության  
Այս բախտը տխուր,  
Որ քերիր Բետո իմ մեջ թաղեցիր  
Ողջակիզության փոթորիկն այս խով  
Եվ տվայտանքը այս խով ձայների...

— Այս, գնաճք, որդի,  
Քելք արա, ո՞չ է...  
— Մերիկ, այս, մերիկ.  
Ոտիկս է ցավում,  
Այս ճամփամ՝ ավազ,  
Այս ճամփամ՝ փուշ է,  
Ու ծարավ եմ ես,  
Ծարավ եմ,  
Ծարավ...

Եվ արթնանում էր հուշն անապատի,  
Եվ հուշերի պես արթնանում էին  
Ալիքները տաք,  
Նախ շնչում էին ալիքները տաք,  
Հետո հառաշում,  
Մոնշում էին ալիքները տաք,  
Պտտվում էին կրունկի վրա,  
Դառնում ամենի մի պտուտահողմ  
Ու երկնքի մեջ միսրճվում էին  
Դեղին,  
Շիկացած,  
Հրեղեն մի ոխ...

b

Հետո գիշեր էր:  
Դեռ լուսին չկար:  
Ագռավներն ասես  
Իրենց թների սևի սևն էին  
Քամել ու փողի այդ անապատին:  
Դեռ շրջում էի ես դառնապատիր

Ավագների մեջ

Ու մաքուր էի որպես առաքյալ:

Այս անապատի բոցը ինձ զտել,

Ավագն այրող հողմը մկրտել,

Եվ արցունքներս մաքրել էին ինձ...

Ես մաքուր էի, զուտ էի ու շինչ

Որպես առաքյալ...

Հեռվից նայողին կարող էր թվալ,

Թե անապատի թախծության վրա

Շրջում է այրվող, մերկացած մի սիրտ,

Կամ առկայծում է թափառիկ մի հուր...

Քամին դեռ մանկան ոսկորը առած,

Սուզում էր տխուր,

Ու սև էր, սև էր, սև էր ամեն ինչ...

Ու միայն տեղ-տեղ

Մահացող մանկան աշքերի նման

Ֆոսֆորափայլն էր շողում տեմդագին

Ֆոսֆորի փայլը,

Ոսկորի փայլը,

Ալդ ահավորը,

Ալդ սարսուագին

Ամենի ցուրտը...

Անապատներում գիշերը ցուրտ է:

Եվ ցերեկային շոգ տենդից Բետոն

Ես ոտից գլուխ

Սարսուում էի...

— Ո՞ր եք, ագուավներ, ո՞ր եք հեռացել,

Եկեք, ֆոսֆորի այս փայլը կտցեք

Ու տարեք, գցեք

Աշխարհի սրտին

Ու խղճի վոա:

Սև էր գիշերը...

Ու սև գիշերը,

Ֆոսֆորափայլի մոմերը ձեռքին,

Հսկում էր մահվան ալդ մեծ եզերքին:

Բայց մոմերն ի՞նչ են,  
Ո՛չ, մոմեր պետք չեն,  
Ես Արարատի ճակատից պոկած  
Կայծակ կրերեմ, շանթեր հրեղեն,  
Նրանց արմատը այստեղ կխրեմ,  
Որ ծառերն աճեն շանթ ու կայծակի  
Ու նման ոսկե արևածագի  
Նահատակներիս վրա շողջողան...

• • •

Հետո գիշերը կանգնել էի ես  
Եփրատի դաժան կամուրջի վրա  
Լուսինը ելավ:  
Անապատային կարմիր մի լուսին:  
Կարմիր լուսնի տակ  
Եփրատը կարմիր ցոլանք էր տալիս,  
Ու թվում էր ինձ,  
Թե երակն է նա,  
Բացված երակն է  
Հայոց աշխարհիս:  
Կանգնել էի ես:  
Սպիտակ հագած մի բարակ աղջիկ  
Եփրատի դաժան կամուրջի վրա  
Եվ լուսնկայի անուրջի վրա  
«Սուրբ-սուրբ» էր եղգում:  
«Սուրբ-սուրբ»-ը՝ սարսուռ,  
«Սուրբ-սուրբ»-ը՝ ոգի,  
«Սուրբ-սուրբ»-ը՝ լուսը  
Անմահ մորմոքի,  
«Սուրբ-սուրբ»-ը՝ կարոտ  
Ու վերին թախիծ,  
«Սուրբ-սուրբ»-ը հյուսված  
Կիրակնալուսից ու մլոնշաղից,  
Հյուսված արցունքից  
Ու խնկաբույրից,  
Պոկված դեղձենուց,  
Լեռան աղբյուրից,  
Պոկված մայր հողի բացված երակից,

Զոհասեղանի կապույտ կրակից,  
Մեր ամդունցների խորացումներից,  
Մեր կատարների ցոլացումներից...

«Սուրբ-սուրբ» էր երգում:  
Լսում էր, լսում Եփրատը լուծ  
Ու հետո ասես ինչ-որ բան հիշո՞վ  
Ու հայերեն էր Եփրատը խշում:  
«Սուրբ-սուրբ» էր երգում...  
Ու տիեզերքում  
Լոռություն էր խոր:  
Ու «Սուրբ-սուրբ»-ի մեջ  
Իմ հայրենիքն էր ցոլում հեռավոր:

Լեռները կապույտ  
Ու թանձը կապույտ ալիքներ տալով.  
Ծփում են, ծփում ու չեն քարանում,  
Տիեզերական զրնգուն ու զով  
Մի լոռություն է այդ վեհարանում:

Արարատ լեռը անհունին թիկնել,  
Ցոլքեր է նետում ձյան ու սառուցի,  
Կատարի ամպը արևից շիկնել  
Ու բաշ է դարձել քնած առյուծի:

Իսկ այնտեղ՝ ցածում,

Ապրիլ է նորից...

Զնիալը լացել,

Խեճքացել,

Անցել,

Հետքից թողել է փրփուրը ծաղկի...

Ցոլանքների մեջ արևածագի

Մեղսի

Ու ծաղկի

Ներդաշնությունն է քաղցրորեն զնգում,

Դաշտը ծայրեծայր այրվում է քնքուշ,

Դաշտը ծայրեծայր հեղեղ է ծաղկի,

Հրդեն է ծաղկի,

Ծաղկի զրնգոց...

Ապրիլը դաշտից առել կայծ ու բոց,  
Լեռներն է ելել  
Ու լեռներն ի վեր  
Վառել մասրենու վայրենի թիեր,  
Վառել կակաչներ ու հորոտ-մորոտ,  
Զանգակածաղկի ծիծաղն արևոտ  
Եվ Բրաչքներ է վառել անանուն,  
Խակ հավերժության կապույտ սահմանում  
Վառել է ահա՝  
Հարության նման  
Հրեղն ու բորբ  
Մի ցայգածաղիկ...  
Ախ, իմ հայրենիք,  
Անապատները նետեցին վրադ,  
Որ դու չծաղկես...  
Ու հիմա հեռվից,  
Այս անապատից  
Նայում եմ ես քեզ,  
Ես քեզ եմ նայում, իմ հին տառապանք,  
Ես քեզ եմ նայում, դարավոր իմ խաչ,  
Եվ մահվան մթին այս անապատում  
Ես ծնկաչոք եմ  
Քո ծաղկի առաջ...  
  
Լեռները կապույտ  
Ու թաճճը կապույտ ալիքներ տալով,  
Ծփում են, ծփում ու չեմ քարանում...  
Արևածագի լույսերով օծված  
Խաղաղություն է այդ վեհարանում...  
Այնտեղ՝  
Հավերժի կապույտ սահմանում  
Վառվում, ցոլում է ծաղիկը հրկեզ  
Քո ցայգածաղկի  
Կերոնի առաջ  
Ծնկաչոք եմ ես...



Մէջ Հերոսն է Կանգնած Հայոց փոքրիկ հողի...

## ՃԻՆԱՊԱՐԾ ԱՐՏԻ ՄԻՋՈՎ.

### ՆԱԽԵՐԳ.

Իմ գանգրահեր մանուկ, փոքրիկ քո ձեռքը տուր  
Ռ եկ իջնենք քեզ հետ ձորն այս կանաչ ու ճոխ.  
Տե՛ս, օրն ինչքան է ջինջ, թվում է ոչ թե ջոր՝  
Լուս է բերում Զանգուն շեկ ժայռերի միջով:  
Եվ դու շնչում ես խոր, իմ գանգրահեր մանուկ,  
Ու իմ ձեռքը թողած՝ պանում ես ներքն,  
Խինդի ալիքն է քեզ իր թներին տանում,  
Եվ ուզում է սիրտդ խայտա՛լ, ճշա՛լ, երգե՛լ:  
Սլանում ես ներքն... Կանգ առ մի պահ սակայն,  
Նայի՛ր այս հուշարձան աղբյուրների շարքին,  
Լսիր նրանց սրտի երգը հերոսական,  
Երգը անմահության, խիզախության, փառքի:  
Կա՛նգ առ,

Նայի՛ր,

Այստեղ Կոշելյն է հպարտ,  
Գաստելլոն է այստեղ ու այստեղ է Զոյան,  
Զայկինան է այստեղ Ուզյայի հետ կանգնած,  
Մատրոսովն է՝ հոգում հազար երգ ու խոյանք:  
Կա՛նգ առ այստեղ.

## Նայի՞ր,

Այնպես անցան նրանք

Իրենց կյանքի ուղին, այնպես վեր ու անբիծ,  
Որ մահվանից հետո հիշատակը նրանց  
Զինց աղբյուր է դարձել քո լուսավոր ճամփին  
Ու խոյանում են վեր՝ հպարտ, հաղթահասակ,  
Գրանիտից կերտած աղբյուրները փառքի,  
Իբրև հերոսների մի փառականծ դասակ,  
Որ հավերժի առաջ լուս կանգնել է շարքի:  
Եվ այդ անմահների անմահական շարքում,  
Մատրոսովի կողքին

(Սի՞րտ, հպարտ ևս զարկում)

Մեծ հերոսն է կանգնած հայոց փոքրիկ հողի...

Թեքվիր, իմ լավ մանուկ, այս աղբյուրի ցողին,  
Զուր չէ սա հասարակ, երգ է սա սխրանքի,  
Այս կարկաչը վճիտ նրա ձայնն է անգին,  
Նրա կյանքը երկրորդ, հիշատակը պայծառ,  
Որ այս ջրի նման երկարում է անծայր...  
Իմ գանգրահեր մանուկ, իսկ դու գիտե՞՞ս արդյոք  
Թե նա ինչ է արել բախտի համար քո մեծ,  
Նա ճամփան է մահվան փակել իր լայն կրծքով  
Եվ իր սրտի միջով ճանապարհ է բացել  
Դեպի խաղաղություն, դեպի օրն այս մաքուր,  
Դեպի արևն այս վառ, դեպի գարունն այս ճոխ,  
Որն այնքա՞ն է պայծառ, թվում է ոչ թե ջուր՝  
Լուս է բերում Զանգուն շեկ ժայռերի միջով...

## 1

Ամուս առավոտ է: Ցողն է ծիածանում,  
Կապույտ մուծ է ելնում Մթնաձորից հեռու,  
Եվ կածանով քարակ, որ գետափ է տանում,  
Զուրն է իջնում ահա քնքուշ մի եղջերու:  
Աչքերի մեջ նրա արշալույսն է բեկվում,  
Ցողշողում է մորթը արեգակի հրից,

Եվ Հունանը զգուց իր ճամփան է թեքում,  
Տոր եղնիկն այդ երկշոտ հանգիստ իշնի ջրի:  
Թեքում է իր ճամփան ու քայլում է հեռու,  
Բրիգադի արտն է գնում ստուգելու:  
Մերթ օրորվում արտերն ու «հերանց են գնում»,  
Մերթ ծփում են քամուց ու մերր ծառս են լինում,  
Այնպես հորդ են ծփում թեք լանջերից ներքն,  
Որ ուզում է սիրտդ խնդությունից երգել:  
Նա պոկում է մի հասկ ու ափի մեջ փշրում,  
Հարդը տալիս քամուն, հատիկներն է հաշվում:  
Լեցուն հատիկներն են աստղերի պես խոշոր  
Լայն ափի մեջ նրա ցոլում ոսկեփոշով:  
— Բերքը լավ է,— ասում ու քայլում է հեռու,—  
Ժամանակն է կարծես հունձը սկսելու,  
Ժամանակն է, այդ ...

Սակայն որոտ մի խոլ.

Եվ քացում է Հունան իր կոպերը ծանր.  
Շուրջը դաշտն է ռազմի, շուրջը գիշեր է խոր,  
Սեղմված է կրծքին սառը հրացանը:  
Աշուն է, ցուրտ ու մեզ: Մովի քամին թերթ  
Վառողի ծուխն է սև դեռ օրորում օղում,  
Ինչ-որ գյուղ է այրվում բլուրների հետև  
Եվ հորիզոնն ամրող արյունոտում:  
Աշուն է, ցուրտ է, մեզ:

Մի՞թե երազ էր այն

Լեռնաշխարհը կանաչ, երկինքը խոր ու ջինջ,  
Մթնաձորի մուժը, առավոտը ամոան,  
Եվ ծփանքը արտի՝ նավսի հեռու լանջին:  
Ոչ, երազ չէր, սակայն երազ դարձավ հանկարծ,  
Եվ ամեն ինչ կյանքում փոխվեց հենց մի օրում,  
Երբ առաջին ոռոմբը Բրեստի վրա ընկած՝  
Արձագանքեց անեղ Ծավի կապույտ ձորում:  
Եվ լեռնաշխարհը քո, տունը հայրենական,  
Երջանկությունը քո ու ամոան օրը շոգ  
Երերացին հանկարծ ու հանկարծ շուր եկան  
Քո մոր կոպից կախված արցունքի մեջ խոշոր... \

Երջանկությունը քո... Հեշտ չի տրվել նա քեզ,  
Որ դու հեշտ ու խաղաղ այն ոստիսին զիշես:  
Հունա՞ն, արի՝ զինվոր, մինչ գիշեր է ամպոտ,  
Մինչ դադարի պահն է խրամատին իշել,  
Ես ուզում եմ քեզ հետ քայլել կյանքի ճամփով՝  
Քո մանկության շեմքից խրամատն այս մինչև  
...Նմուանն այնպես ցինչ է Ծավի գետը կապույտ,  
Ավիի ավազն այնպես հաճելի է ու տաք,  
Մանուկները խմբով ահա ջուրն են թափվում  
Ու ճեղքում են գետի ալիքները հստակ:

Սակայն ինչպես ցոկեմ ես քեզ խմբից այդ հոծ,  
Ինչպես գտնեմ, Հունան, քեզ ջրերի մեջ լուրթ,  
Բոլորն աշքեր ունեն, քո աշքերի պես բոց,  
Եվ անտառի մորուց սևացած ձեռք ու շուրթ

Բայց ես գտնում եմ քեզ... Մի փրփրած ալիք  
Ահա ուզում է քո ճանապարհը շեղել,  
Դու քո փոքրիկ, ուժեղ կուրծքը առաջ տալիս  
Ու ճեղքում ես գետի ջուրը կապտահեղեղ  
Երեկոն է հետո իշնում լուր ու դանդաղ,  
Անտառներն են կարծես այրվում նավսի լամջում,  
Ու քո մայրը ահա, կանգնած շեմքին ձեր տամ,  
Զայն է տալիս հեռվից ու քեզ տուն է կանչում:  
Դու եկած ես ձորից: Ահա և տունը ձեր,  
Հայրդ ծալապատիկ նստել է տաճ շեմքին,  
Լայն ճակատի վրա կնճիռներ ու գծեր,  
Ամենօրյա հոգսն ու հոգնությունը դեմքին:  
Հին խսիրի վրա, բարդու ծառի ներքո,  
Մայրդ խոնարի ու լուռ՝ ձեր սուփրան է բացում,  
Գարեթացն է միակ կիսում արդար ձեռքով:  
Ու լուս է...

Այնտեղ, ձորերի մեջ, ցածում,  
Խստանում է մութը, ու մութի հետ կարծես  
Ավելի է մթնում հոգնած դեմքը քո հոր,  
Կնճիռների ծալքում հազար հոգս ու հարցեր  
Եվ հոնքերի ներքո մի տխրություն կա խոր:

Հետո տեղից ելնում ու հառաջելով երկար  
Դիմում է քո խոնարհ, քո բարեգութ նանին.  
— Նվազ է հացն էլի, կյանքը շատ է դժվար,  
Բատրակության պիտի տանք Հունանին:  
Փոքրիկ բատրակ տղա... Տարիների մուժից  
Ահա տեսնում եմ քեզ լծափայտին նստած,  
Հոգնած, նիհար եզներն արդեն ընկել ուժից,  
Բայց ակոսում են դեռ աշնան հողերը թաց:  
Ի՞նչ աշուն է, նայիր... Ողջ անտառն է վառել,  
Կածանների վրա հոնն է հիմա կաթում,  
Տերևներ են թափում լորիները ջահել  
Եկ սարալանջն ամբողջ իրենց ուկով պատուա:  
Ի՞նչ աշուն է... Հիմա դու կուգեիր այնպես  
Անտառների խորքում շրջել անհոգ, անփոյթ,  
Ռիրախ խմբով ելնել նավսի կատարը վես  
Կամ ընկույզի գնալ Մթնաձորը կապույտ:  
Սակայն հոգսն է նստել քո ուսերին վտիտ,  
Երջանկությունը դեռ անձանոթ է սրտիդ,  
Ու չգիտես դու դեռ, որ հյուսիսում հեռու  
Հոկտեմբերյան կովի կարմիր մրրիկներու:  
«Ավրորայից» թոած մի լուսեղեն ական  
Վճռել է բախտը քո ու ապագան:  
Ու չգիտես դու դեռ, որ լեռներից այս սեգ  
Ու ձորերից այն կողմ կա մի վսեմ քաղաք,  
Ուր Կրեմլն է կանգնած: Եկ Կրեմլում լուսե  
Մեծ Խլիչն է ապրում, ու նա գիտե, որ այս  
Հեռու, փոքրիկ գյուղում, լեռների մեջ կորած  
(Որտեղ ինքը թեկուզ չի եղել երբեք),  
Կա մի բատրակ տղա, գեղուկի պարզ մանուկ,  
Որի համար կյանքում երջանկություն է պետք...  
Երջանկությունը քո... դու չզգացիր անգամ,  
Թե նա ինչպես գտավ քեզ արնի տակ ջերմ.  
Այդ այն օրն էր, գուցե, երբ առաջին անգամ  
Ղողանչեց զանգը զիլ ու քեզ դասի կանչեց:  
Կամ այն օրը, գուցե, երբ զարմանքով մանկան  
Դու իմացար, որ մե՛ծ, մե՛ծ է աշխարհն արար,  
Եկ աշխարհում այդ մեծ ճամփաներ կան այնքամ.

Որոնք փովեն սիստի քո ուտքերի առաջ,  
Որ աշխարհը միայն ձեր ծորը չէ կապոյտ,  
Ձեր անտառը փարթամ ու գետակը ձորի,  
Որ քեզ, Ծավում ծնված գեղջուկի պարզ որդուդ,  
Կտակված է ամբողջ մեկ վեցերորդն հողի:

Ս.մոան գիշեր է զով: Զորում գետն է ծփում,  
Ալիքները բախում իր ժայռեղեն ափին,  
Խսկ կտորի վրա մանուկների խմբում  
Իր հեքիաթի թելն է ձգում Զաքար պապին:  
Բայց քնում է պապին, հենց հեքիաթի կեսում  
Իր կտրիճին թողած հրաշք-այգու ճամփին.  
— Հետո՞՝, պապի, հետո՞՝,— բայց պապին չի խոսում,  
Պապին քնել է լուս:

Լուսն է ցոլում ամպից...

Եվ մանուկներն ահա հարթ կտորին նստել,  
Հեքիաթից թև առած՝ զրուցում են անվերջ:  
— Ո՞վ կարող է հիմա նավսի կատարն ելնել:  
— Ո՞վ կարող է, տղերք, այ, քաջ է նա, կասեմ:  
— Արջ կլինի այնտեղ:  
— Անտառում շատ է մութ:  
— Կարծում ես արջ չկա՞՞ր հրաշք-այգու ճամփին:  
— Դե, իհարկե, չկար...  
— Ախր սուտ ես ասում...  
— Սո՞ւտ եմ ասում, կուգես, այ, հարցրու պապին,  
Բայց երազ է տեսնում Զաքար պապին արդեն,  
Երկար, ճերմակ մորուքն իր մահակին հենած...  
— Ինչո՞ւ ելար, Հունան:  
— Ես գնում եմ, տղերք:  
— Այդ ո՞ւր, ո՞ւր ես գնում...  
— Նավս եմ գնում...  
— Մենա՞կ...  
— Եկեք մեկտեղ գնանք...

Փոքրիկ, խիզախ տղա, ես քեզ հետ եմ եղել,  
Ես քեզ հետ եմ կարծես քայլել ամբողջ կյանքում,  
Ահա դժվար ճամփան ձեզ տանում է վերև,

Մուտք գիշեր է, ձորում գետն է արձագանքում  
Ու դուք ելնում եք վեր համառ, խիզախ, տոկում,  
Ծակատներդ տված գիշերվա զով հովին,  
Վերելքի իղձն է վեն ձեր լուսավոր հոգում,  
Ու տենչանք է դարձել ձեր սիրտն ամբողջովին:  
Փոքրիկ, խիզախ տղա, ևս հասկանում եմ քեզ,  
Դու բարձրացիր, ելիր, մոտ է կատարն արդեն,  
Միշտ սրտիդ մեջ պահիր վերելքի տենչը վեր,  
Զէ՞ որ կյանքում այնքան գագաթներ կան քո դեմ:

Հետո տեսնում եմ քեզ նստած ձեր տան շեմքին,  
Կարդում ես դու ուշիմ սև հոնքերդ լարած,  
Իմշ-որ վեհուլյուն է իշել քո թուխ դեմքին,  
Աչքերիդ մեջ խոշոր կրակներ կան վառված:  
Կարդում ես դու ուշիմ, քո հայացքի հանդեն  
Բացված դասագրքից հառնում է մի նկար.  
Ծահումյանը կրծքին իր շասիկը քանդել,  
Ձեռքը դրել սրտին ու կանգնել է հսկարտ:  
Անապատ է անծայր, գիշեր է ու քամի,  
Ու մուտք գիշերվա մեջ համսուզարկն է թնդում,  
Բայց հնչում է ըմբոստ ձայնը Ծահումյանի,  
— «Կեցցա՛ կոմունիզմը ամբողջ հողագնդում»:

Փակում ես դու գիրքը ու նայում ես վերև,  
Լուսամ է ոսկեզօծել կատարները լեռան,  
Խորումկ մի թախիծ է քո շինչ հոգին գերել,  
Կարո՞՞ն ես դու արդյոք ապրել նրա նման:  
Ու պատասխան որպես քո հոնքերն են լարվում  
Սեգ թոփիչքի սպատրաստ արծվի թևերի պես,  
Աչքերիդ մեջ պայծառ լույսն է բոցավավում,  
Եվ այդ լույսը այնպես, այնպես սազում է քեզ:  
Դու ե՞րբ հերոսացար... Այդ այն օրն է գուցեն,  
Երբ առաջին անգամ մաճը քո ձեռքն առած  
Եվ հայացքը հառած արշալույսին բոցե՛  
Համայնական հողը ակոսեցիր պարարտ:  
Երբ մորովելը քո արշալույսի մետ զով  
Ալիք-ալիք փուլեց աշնան խոնավ ցելին,

Եվ անտառները մութ ու ժայռերը հգոր  
Խոլ արձագանք տվին քո ջինջ հորովելին:  
Եվ սիրեցիր կյանքում դու վաստակը արդար,  
Խորունկ ակոսները հայրենական հողի,  
Գիշերները հնձի, արտերը քո փարթամ  
Ու գերանդու փայլը հասկերի մեջ դեղին:  
Եվ դու դարձար այնպես ճշմարիտ ու բարի,  
Դու սիրեցիր ելնել բարձունքները անհաս,  
Կամ Ածուխդը հեծած' ամենից խենթ, վայրի,  
Սլանալ ու սուրալ կածաններով կանաչ:  
Սլանալ ու սուրալ ինչպես լեռան քամին,  
Ինչպես փոթորիկը, ուրախությունն ինչպես,  
Ուրախությունը քո, որ այդ պայծառ ժամին  
Դու անկարող էիր քո սրտի մեջ զսպել:  
Այո՛, այնքան առատ, շոայորեն այնքան  
Քեզ պարզն էր տրված ուրախությունը խենթ,  
Որ անկարող էր քո սիրտը պատանեկան  
Այն չկիսել մի այլ, քնքուշ մի սրտի հետ...  
Ո՞վ կլինի արդյոք, դեռ չգիտես ոչինչ,  
Որտեղի՞ց է գալու, անհայտ է քեզ հավետ,  
Բայց զգում է սիրտդ ինչ-որ խայտանք մի ջինջ,  
Եվ անկարող ես դու այն սրտիդ մեջ պահել:

• .  
Եվ տարիներ անցան: Լեռների զով գրկում  
Պատանության անզուսպ պացումներ կային,  
Հետո հասունացած' դու կանգնեցիր շարքում,  
Դու համարձակ, շիտակ, խոհեմ բանակային:  
Դու անվիեպ խփիր, պետք է գալու դա քեզ,  
Սև փողերն են հեռվից ուղղում քո մեծ հողին,  
Դու սիրում ես, սակայն սովորիր և ատել,  
Սիրիր մարդուն, ատի՛ր քո ոսկին:

Հետո լուս էր, գարուն... Դու այդ հիշում ես պարզ,  
Լեռնաշխարհն էր ելնում քանձր մատախուիդց,  
Երկնքի մեջ անհուն շողում էր լեռը նավս,  
Լանջին ամպի օման հոտն էր փովել գյուղին:

Լուսմ էր, լուսմ էր ծփում կատարների միջև,  
Ու անտառն էր ծփում լեռների թեք լանջին,  
Հորովելը սարից ալիք-ալիք իջել  
Ու ձուլվել էր հովտում տրակտորի կանչին  
Ծովսմ էր ելուսմ գյուղից իբրև երազ ու հուշ,  
Ինչ լավ էին ծաղկել հոնի ծառն ու մորին,  
Բայց ընդհատվեց հանկարծ հորովելն, ու քնքուշ  
«Սոնա յարը» զնգաց Ծավի կապույտ ձորից:  
«Սոնա յարը», սակայն շիկնեցիր դու հանկարծ,  
Ու շերմացավ սիրուի ինչ-որ թաքուն հրից...  
Աղջիկները ահա ժպտացին քեզ հանդարտ  
Եվ կծերը առած աղբյուրն իշան ջրի:  
Եվ նրանցից մեկը, որ սև ծամեր ուներ,  
Աչքեր ուներ՝ ամոան գիշերվա պես մաքուր,  
Թարթիչների տակից նայեց քնքուշ ու մեղմ  
Ու ժպտաց քեզ թաքուն...  
Սոաջին սերը քո... Նա քեզ թուվիչ ժպտաց  
Այդ լեռնուին խավար թարթիչների տակից,  
Նրա քայլքից թեթև, արշալուսից այդ թաց,  
Գարնան օդից, ցողից, կապույտ մանուշակից:  
Երջանկությունը քո... Այդ այն օրն էր գուցե,  
Երբ սեփական ձեռքով դրիր հիմքը քո տան,  
Որի հարկի ներքո հետո քո մայրը ծեր  
Ծոայլ ձեռքով բացեց հարսանիքիդ սուփիրան,  
Միծառները հետո քո տան քիվի ներքո  
Հյուսեցին բույնն իրենց ապրիլի զով ծեգին,  
Ու լեռնուին սևաշ օրոր ասաց երգով  
Քո նորածին որդուն, քո թուխ Հենգելիկին:

...Սակայն ողջը փոխվեց ու շուտ եկավ հանկարծ,  
Ուսկե ամպի նման ցնդեց հենց մի օրում,  
Երբ առաջին ոումբը Բրեստի վրա ընկած՝  
Արձագանքեց աჩեղ Ծավի կապույտ ձորում:  
Եվ դու, որ քո կյանքում վաստակն էիր սիրում,  
Քո հողն էիր սիրում հայրենական,  
Առար հրացանը, առար նոնակ ու ոումբ,  
Եվ զինվորի այս գորշ շինելը դու հագար... \

...Եվ գիշեր է հիմա, գիշեր է մութ, ահեղ,  
 Երկնքի սև լաթին աստղերը չեն շողում,  
 Դոլգայայի վրա նենգ ոսխն է թառել՝  
 Իր դիրքերը փորած քո հայրենի հողում:  
 Ոսխը քո... Անթիվ տանկեր է նա բերել,  
 Որ խոփերի հետքը քո դաշտերից ջնջի,  
 Ավերի տունը քո, որ կերտել ես երեկ  
 Այնտեղ՝ Ծավի ձորում, Նավսի կանաչ լանջին:  
 Որ արտերը ոսկի, քո իսկ ձեռքով վարած,  
 Ծարակ անի անկուշտ հրդեհների բոցին,  
 Որ ուրուրը, մահվան դաժան բեռը առած,  
 Պտույտ գործի որդու խաղաղ օրորոցին:  
 Որ չլինի գարուն Ծավի կապույտ ձորում,  
 Աղջիկները չերգեն, ու չծաղկի հոնին,  
 Որ է չելմես նավսի կատարները շողուն  
 Ու չնայես կապո՛յտ, կապո՛յտ հորիզոնին:  
 Բայց ոչ, դա չի լինի. իբրև ազնիվ որդի  
 Բաց դրոշի առջն ու քո ժողովրդի  
 Դու երդում ես տվել:

(...Օգոստոս Էր, ամառ,  
 Հիշո՞ւմ ես դու արդյոք, իմ Հայաստան, իմ մայր,  
 Երբ որդիները քո եկել դասակ դասակ  
 Ու գունդ առ գունդ եկել՝ սնաչ, պարթևասակ  
 Ծարվել էին այնտեղ, հրապարակում այն բաց,  
 Ուր նվիշն է կանգնել քարե պատվանդանին:  
 Ու երբ շարքի առաջ ալ դրոշը ծփաց,  
 Երդում տվին նրանք...)

Ու երդումի ձայնին  
 Լեռնաշխարհը ամբողջ արձագանքեց կարծես:  
 Հայ ժողովուրդ, իմ մայր, այդ դու գինվոր դարձել՝  
 Երդում էիր տալիս որդիներիդ շուրթով,  
 Երդում էիր տալիս, որ քո խիզախ սրտով  
 Կմարտնչես հանուն քո նոր բախտի, քո տան  
 Հանուն քեզ պարգևած այս մեծ երջանկության):

• • •

Եվ դիվիզիան դնաց: Հետո աշուն էր ցուրտ,  
Սեգ Կովկասի վրա ամպերն էին իջել,  
Հրետանու զարկը անդունդներն էր ցնցում  
Ու խոլ արձագանքում կատարների միջն...  
Զքնար լեռներն էին պատեղ ծխի մուժով,  
Ասես դրոշ էր սև, որ ոստին էր կախել,  
Անթիվ իր տաճնիերի բիրտ ու վայրի ուժով  
Թշնամին էր բահևուս մեր գորոքանն արելոյ  
Զինվո՞ր, Բոգնած զինվո՞ր, քայլում ես դու ահա  
Այրված քաղաքների ու գյուղերի միջով.  
Նրանք շնչում էին, ծաղկում էին խաղաղ,  
Նշանք շքեղ էին. զնգուն էին ու ճոխ:

Նայիր ահա այստեղ, այս հրդեհված այգուս  
Մի տմակ է եղել պատշգամբով կապոյտ,  
Բայենիմերն էին ամեն գարնան ծաղկում,  
Եվ ամձրնա իր վճիռ խնդությունն էր թափում:  
Արևին են նայել լուսամուտները ջինջ,  
Վարդի թուփն այս ծաղկել ու ռացել է թերթեր,  
Զով է արել քնքուշ այս վիրավոր կեշին,  
Երբ մանուկը նստել ու դասերն է սկրտել:  
Սակայն նայիր, Բիմա մի ծխնելույզ է լոկ,  
Ու մոխիր է միայն երջանկության տեղակ,  
Մոնչում է քամին իբրև արդար բողոք,  
Իբրև որդեկորույս մոր աղաղակ:

Զինվո՞ր, Բոգնած զինվո՞ր, ի՞նչ է մազերիդ մեջ,  
Ծամփաների փոշի՞ն, թե ճերմակել ես դու,  
Շերմակի՞ն ես, փոյլո չէ, վրեժի հուրն անշեջ  
Ծիկացել է արդեն քո սրբազն սրտում:  
Լսո՞ւմ ես դու որոտն ստեպներից հասած.  
Մայր Վոլգան է այնտեղ գրոհների բոցում:  
Արդար է գործը մեր:

Ու մենք գիտենք՝  
Տոն կլինի նաև մեր փողոցում...

Եվ սկսվեց տոնն այդ հրետանու երգով  
Ու մեր սալյուտների անձրևներով փայլում...  
Հողն էր տարութերում մեր քայլերի ներքո,  
Ու վրեժն էր մեր խիտ շարքերի հետ քայլում:  
Եվ բանակները մեր արշավեցին առաջ,  
Արշավեցին ոխով մի սրբազն,  
Եվ քաջ գնդապետի՝ Սաֆարյանի վարած  
Հայոց գնդերն ահա Դոլգայային հասան:

## 2

Դոլգայա լեռը. նա բլուրների մեջ հոծ  
Խոյանում է վերև նման քարե պատի.  
Իրու հեքիաթական մի անառիկ ամրոց  
Հսկում է նա վերից ամբողջ շրջապատին:  
Դոլգայայի կուրծքը ականներն են ծեծել,  
Դոլգայայի լանջը արկերով է հերկված,  
Արմատահան է ողջ շուրջը անտառը ծեր,  
Եվ ժայռերը բոլոր արյունով են ներկված:  
Դոլգայայի լանջը պատած է ականով,  
Դոլգայան է կանգնել իր փողերը հառած՝  
Դեպի հաղթանակ ու խաղաղություն տանող  
Մեր մեծ երթի առաջ:

Դոլգայայի դիմաց՝ խոնավ խրամատում  
Զինվորներն են ահա նատել հոգնած ու լուս,  
Մեկը նոր ստացած իր նամակն է կարդում,  
Մեկը յիկն է տվել ու ծխում է տխոր:  
Մելս երգում են Հունանն ու տղերքը նրա,  
(Որոտում է Բեռվում մի մոլորված ական),  
Ոլորվում է թեթև՝ խրամատի վրա  
Մախորկայի ծուխն ու երգը հայրենական:  
Հանկարծ շշոկ անցավ՝ «Գնդապետն է գալիա»:  
Թափ տվեցին տղերքն զգնստները փոշոտ,  
Եվ խրամատ մտավ գնդապետը արի՝  
Խստությունն ու բարին աչքերի մեջ խոշոր:  
Զինվորները խմրով ողջունեցին նրան,

Ու զրոյցը ձգվեց խրամանուս խոնավ,

— Զանձրանո՞ւմ եք, տղերք...

— Այո՛, կարծես, մի քիչ:

— Ոչինչ, վաղը արդեն մենք կակսենք գործել:

— Ծառ ամուր է ճատել այնտեղ գերմանացին:

— Այո՛, ամուր է քիչ, սակայն պետք է փորձեք

— Փորձել և գրավել,— ասաց Սաքանյանը

Ու բարձունքին նայեց անվրդով ու հանգիստ:

— Եվ գրավել, այո՛,— գնդապետի ձայնը

Հրամանի նման հնչեց հատու և խիստ,—

Դե ուրեմն այսպես, վաղը լուսաբացին

Հարձակվում ենք. պետք է փոքրիկ ջոկատներով

Հենց այս գիշեր ելնել, հասնել նրանց գծին,

Խրամատներ փորել ու հարձակման պահին

Անակնկալ առնել նրանց կրակային

Կետերն ամեն:

Սակայն ձեր ջոկա ո՞վ կտանի...

Բայց այդ հարցով, լավ է դիմենք քաջ Հունացին...

Սսա, Հունան:

— Ես եմ, սերժանտ Ավետիսյան,

Զամգեզուրից եմ ես, լեռների լավ ծանոթ,

Քաջ եմ տղերքը իմ, մենք կարող ենք անձայն

Լեռան լանջը հասնել ոլոր այն կածանով

Եվ գրոհել ծեգին...

Գնդապետը անթարթ

Նայեց երկա՛ր, երկա՛ր, աչքերի մեջ քո սև.

Հարացքը քո այնպես շիտակ է ու հսկողարտ,

Չկա վարանումի նշույն անգամ այնտեղ:

Շիտակ ես դու նայում: Թո ձուլածո դեմքից

Դեռ չի ջնջվել քնքուշ հետքը պատանության,

Բայց հոգերիդ միջն ընկած խորունկ մի գիծ

Հներերն են քո լարել զույգ թների նման:

Խոշոր ու սև աչքեր, ազնիվ ու լայն ճակատ,

Եվ լեռնցու գծեր՝ գեղեցիկ ու կոպիտ...

Զինվորի շոր հագած կարծես կանգնած է այդ

Դմ հայ ժողովրդի հերոսական ոգին...

Կարո՛ղ ես դու, այո՛...

Մութ բարձունքն է քո դեմ:  
Ժամն է: Բարձրանում է տեղից դասակն արդեն:  
Հունան, արի՝ զիմվոր, ժամն է արդեն հիմա,  
Ցաման ալիքն արդեն ծփում է քո սրտում,  
Եվ ուզում եմ քեզ Բետ ևս քայլ առ քայլ գնալ  
Խոնավ խրամատից մինչև անմահություն:

\* \* \*

Լոռություն է խորունկ, լոռություն ու գիշեր,  
Եվ լսում ես միայն դու զարկերը սրտիդ.  
Արդյոք ի՞նչ ես խորհում, արդյոք ո՞ւմ ես միշել,  
Թխորակ քո որդո՞ւն, անտառնե՞րը ձեր խիտ,  
Թե՞ քո մորը պառավ: Ա՞յս, քո մայրը պառավ...  
Հինգ որդի նա ուներ ու մենակ է հիմա,  
Պատերազմը մտավ նրա տունն ու տարավ  
Խնդությունը նրաւ նա մենակ է հիմա,  
Եվ դաշտից գալով տուն՝ լուս նստում է շեմքի՞ւ  
Ու նայում կարոտով ամայի ճամփեքին:  
Ա՞յս, մայրիկ, գուցե ես չեմ արել դեռ ոչինչ,  
Գուցե չեմ հատուցել դեռ սիրուն քո արդար,  
Եվ եթե այս կովից տուն դառնամ ես նորից,  
Կիհնեմ կրկնակի, կրկնակի հոգատար:  
Բայց, մայրիկ, ժամը չէ՛, չեմ դառնա ես դեռ սուն,  
Դու դեռ մի սպասիր ինուավոր քո որդուն:  
Տե՛ս, գնում ենք ահա գիշերով այս խորին,  
Որ կյանքի թշնամուն դուրս քշենք մեր հողից:

Լոռություն է խորունկ.

Բայց մի դեղին հրթիռ  
Օդ է ելնում թափով ու ցած իջնում խաղաղ:  
Կանգ է առնում մի պահ տրոփը ձեր սրտի,  
Ու թվում է մի պահ, թե ողջ աշխարհն ահա  
Տեսնում է ձեզ...

Այս,

Հիմա աշխարհն արար

Տեսնում է ձեզ,

Նայում ձեր վերելքին խիզախ,  
Հույսով ձեզ են նայում Բալկաններից խավար  
Ու Փարիզից տաճշված մինչև Մադագասկար,  
Մինչև Խաղաղական ձեզ են նայում հիմա:  
Ձեզ են նայում նրանք, ով մերկ է ու անտում,  
Ովքեր տառապել են աշխարհի մութ բանտում,  
Ձեզ են նայում հույսով:

Դե, բարձրացեք, քաջեր, ելեք՝ մութ է քանի,  
Նշմարե՞լ է ոստին արդյոք վերելքը ձեր...  
Հրթիռներն են կախվում նման հարցականի,  
Անպատասխան հաճաշում անտառների մեջ ծեր:  
Արդեն կիսել եք դուք բարձունքի լանջը թեք.  
Արդեն անցել եք դուք փշալարի տակից,  
Բայց ձեր անցած ճամփան լոկ ճամփա չէ, երբե՞ք  
Ավելի եք մոտիկ հիմա հայթանակին:  
Ավելի եք մոտիկ խաղաղությանը դուք,  
Ձեր օջախին, տանը, ձեր հարազատ գյուղին,  
Տառապանքի միջով դեպի երջանկություն,  
Դեպի բախտ է տանում ձեր այդ դժվար ուղին:  
Սողում եք դուք փոշոտ, հոգնած ու հևասպառ,  
Մացառներն են քերծում խրոխտ դեմքերը ձեր,  
Ո՛չ, ճամփա չէ դա լոկ, սերունդների համար  
Դա լեզենդ է, հեքիաթ, պատմություն է ու երգ:

Հրթիռները նորից... Նկատել են, այո՛,  
Հրթիռներից անթիվ, կարծես, ցերեկ է լուս:  
Ակոսում են օդը ականները վայող,  
Գնդակներն են սուրում խեճթ ու խելակորոյս:  
Բայց, հարազատ երկիր, հող իմ հայրենական,  
Դու անսահման, դու մեծ, ամենազոր ու թանկ,  
Քո բլուրը, փոսը, քո ամեն գուղձն անգամ  
Պաշտպանում է նրանց այնպես, ինչպես նրանք  
Իրենց կրծքով, կյանքով, իրենց բոսոր արյամք  
Պաշտպանում են, մայր հող, քո ամեն թիզը թանկ:  
Լուսանում է. ծովսը աղջամուղջի հովից  
Տարածվում է, փոփում անտառների վրա,

Բարձրանում է արևն, ու հայելին ծովի

Փայլփլում է հեռվից երանգներով շոայլ:

— Հունան, նայիր ահա, ի՞նչ գեղեցիկ է, տե՛ս,

Ծովն արևի ներքո, ի՞նչ շքեղ է, թովիշ...

— Գեղեցիկ է, սակայն, երբ Դոլգայան առնենք

Ու բարձունքից նայենք մեր հայրենի ծովին,

Այլ ժամանակ արդեն նա ավելի ուրախ

Ու գեղեցիկ փայլով կշողշողա մեր դեմ...

Դոլգայայի լանջին խրամատներ փորած՝

Սպասում են նրանք հարձակումին ահեղ:

Աշուն է, ի՞նչ աշուն... Ելնող արևի տակ

Անտառները ոսկի հրդեհներ են թվում,

Ու ճեղքելով օղը իրենց սեպով ճերմակ,

Կոռոնկները տխուր դեպ հարավ են չվում,

Թողած ուկրախնական բարդիները սեգ՝

Արյուն ու վիշտ տեսած ուկրախնական հողում,

Նրանք չվում են լուս: Սակայն «Յունկերսը» նենզ

Սուրում հեռվից, նրանց ճանապարհն է շեղում:

Չվե՛ք դուք, կոռոնկներ, բայց գարնանը նորից

Խցեք ուկրախնական բարդիներին այն վես,

Մենք ոսխի հետքը կջնջենք մեր հողից,

Խաղաղություն կտանք ողջ աշխարհին ու ձեզ:

Էլ չի լինի արյուն, ու «Յունկերսները» նենզ

Էլ չեն շեղի երեք ձեր երկնային ուղին,

Եվ դուք խաղաղ կիշնեք և ապահով կիշնեք

Մեր հայրենի դալար բարդիների ճուղին:

Լոռություն է, ինչպես փոթորիկից առաջ

Սեղմվել է խումբը խոնավ խրամատում,

Եվ հայացքը խաղաղ հեռու դաշտին հառած՝

Զինվոր Սաքանյանը ինչ-որ բան է պատմում.

— Այո, ժամանակն է հիմա վար ու ցանքի,

Սարերում մեր Լոռու ակսել են վաղուց...

— Մեր կոլխոզում հիմա,— ասում է Սեթն հանգիստ,—

Այգեկութ է հիմա, ոսկեհատն են քաղում:

— Իսկ Վոլգայի վրա, է՞ին, Վոլգայի վրա

Հիմա ձկան որսի լավ օրերն են գալիս,—

Վասիլին է ասում, ու աշքերում նրա

Երազանքն է ցոլում կապոյտ ու թախծալի:  
«Առավոտ է, արև Երևանում հիմա,—  
Խորհում է ինքնիրեն մի պատաճի զինվոր,—  
Դեղնել է ողջ ամտառն իմստիտուտի դիմաց,  
Լսարանում դաս է ու լոռություն է խոր»:  
Ու լոռություն է խոր Ծան ռազմի դաշտում,  
Թևածում է խաղաղ շունչը առավոտի,  
Եվ սեղմվել եք դուք խոնավ խրամատում,  
Դոլգայալի լանջին, Անձգ թշնամուն մոտիկ:  
Դուք՝ զինվորներ մի բոլո, Արանք՝ ամբողջ մի գումար,  
Դուք լանջին եք լեռան, Արանք՝ լեռան վրա,  
Բայց դուք թիկունք ունեք, Արանք չունեն թիկունք,  
Դուք տենչերով եք լի, տենչանք չունեն Արանք:  
Զեր ճակատի աստղը՝ պայծառ աստղ է հույսի,  
Խսկ ճակատին Արանց՝ թաղումի խաչն է սև,  
Ալ է դրոշը ձեր՝ նման արշալույսի,  
Խսկ Արանցը՝ սև ու խավարամած գիշեր:  
Մինչ դուք բախտ եք տանում, վիշտ են բերել Արանք,  
Կոմունիստներ եք դուք, Փաշիստներ են Արանք...»

Ո՞ւ են հիշում արդյոք դժվար ժամից առաջ,  
Ի՞նչ են մտաբերում, արդյոք ի՞նչ են խորհում.  
Հունա՛ն,— Հենզելի՛կն է քո աչքերի առաջ,  
Թե հայրենի գյուղը Մավի կապոյտ ձորում,  
Կամ գուցե ողջը դու մոռացել ես հիմա,  
Եվ հիշում ես միայն դու ոստիին ու քեզ,  
Հիշում, որ դու հիմա պիտի ելնես, գնաս  
Ու կուրծք-կրծքի՝ քո նենգ ոստիի հետ բախվես...  
Այդպես ամպրոպն է խոլ սկիզբ առնում հանկարծ,  
Փոթորիկն է այդպես տափաստանում պարում,  
Դու ես երգում աჩեղ, պատերազմի աստված,  
Եվ հարձակման սկիզբն ազդարում:

Հետո մի պահ նորից լոռություն է տիրում,  
Մի անսահման, մի մեծ, խորունկ մի լոռություն,  
Փոշու ամպերն է գորշ քամին տարութերում,

Ու վառողի ծուխն է կապույտի մեջ ցնդում:  
Բայց մի վայրկյան էր դա: Հետո «ուուան» թնդաց  
Ու անհնար դարձավ ցասման թափը այսինք,  
Եվ թշնամու համար այնպես անակնկալ  
Սկսեցին մերոնք իրենց գրոհն ահեղ:

Արդյոք ինչքա՞ն տևեց, վայրկյա՞ն էր դա, մի օ՞ր,  
Ծե՞ մի դար էր ամբողջ, դու չես հիշում ոչինչ,  
Նոնակն ես քո հիշում, հետո պայշտունը խոլ,  
Թշնամական դօտից հառաշանքներ ու ճիշ:  
Հետո երկրորդ, երրորդ նոնակն ես դու նետում,  
Խարիսկում է դօտը... Դու քայլում ես առաջ,  
Փոշու ամպեր են գորշ, վառողաբույր օդում  
Տարածվում է մի խոլ, մի մետաղն շառաչ:  
Ու դու տեսար հանկարծ հենց քո կողքին, մոտիկ,  
Երերում է Սեթը, հողն է սեղմում ափում,  
Ընկնում է նա, փորձում նորից ելնել ոտի,  
Դու գրկում ես նրան .

. . . . .      Հետո մուժ է կապույտ  
Ծաղիկների վրա ցողն է ծիածանում,  
Խոլ խշշոց է լսվում Մթնաձորից հեռու,  
Եվ կածանով բարակ, որ գետափ է տանում,  
Ցած է իշնում ահա քնքուշ մի եղջերու:  
Աշքերի մեջ նրա արշալուսն է բեկվում,  
Շողշողում է մորթը արեգակի հրից,  
Եվ դու ահա զգուշ ճանապարհի ես թեքում,  
Որ եղջիկը չքնաղ հանգիստ իշնի ջրի...  
Իշնի ջրի...

Զո՞ւրը...

Ծավ գետի ջուրը ջինջ  
Երկնքի պես կապույտ ու սառուցի պես սառ  
Դու ծարավ ես, Բոգնած,

Օրը տոյթ է, կիզիչ,  
Դու իշնում ես գետը, գնում ես դու, հասար...  
Բայց ցամաք է գետը, ավազ է գորշ ու չոր,  
Ծիկացել են գետի քարերն անգամ կապույտ,  
Դու քարձրանում ես վեր շեկ ժայռերի միջով,

Մի աղբյուր կար այստեղ, մի պաղ, վճիռ աղբյուր.  
Ծառ է հեռու ջուրը... Ո՛չ, հեռու չէ, Բասար,  
Ահա շուրթիդ կպավ մի պաղպաջուն ալիք,  
Դու աչքերդ ես բացում,

Աղբյուրը չէ դա սառ,  
Վասիլին է թեքվել ու քեզ ջուր է տալիս:  
— Վիրավո՞ր եմ...

— Այո...

— Բայց դու թող ինձ, գնա,  
Տե՛ս, կովում են մերոնք, գնա, նրանց հասիր,  
Ես կկապեմ վերքս, կրարձրանամ, կգամ...  
Նա համբուրում է քեզ: Օրորալով հազիվ  
Դու ելնում ես տեղից... Սեթն է ընկած կողքիդ,  
Նա գունատ է, անշարժ: Իսկ քեզ այնքան մոտիկ  
Մի գնդացիր մոլի արճիճ է դեռ մաղում  
Ու գրոհող ջոկին գետնին գամած պահում:

Քողարկված դօ՞տ է դա... Հենց այդպես է, այո՛,  
Անհայտ էր դօտն այս մեզ, ինչպես անել սակայն...  
Ակոսում են օդը գնդակները վայող,  
Հեռվից որոտում է «ուռան» հերոսական:

Գնդացիրը դօտից դադար տվեց մի պահ,  
Վասյան տեղից ելավ, ուզեց նետվել առաջ,  
Բայց երերաց տեղում: Ու լսեցիր ահա  
Դու մեծ սրտից բխող մի զապված հառաչ:

4

Վասյան... գնդացիրը... Ինչպես անել սակայն,  
Ի՞նչ խորհեցիր արդյոք դու աչքերդ փակած:  
Դա մի վայրկյան էր լոկ: Դու ուզեցիր նորից  
Հիշել դեմքը որդուդ, կնոշդ դեմքն Բիշել,  
Հիշել նրանց, սակայն լուսի շողերը շեն  
Խանգարում են կարծես: Գուցե այդպես է միշտ,  
Երբ որ շատ ես սիրում, անմնար է գուցե  
Դիմագծերն Բիշել...

Հեռվում, ծովի վրա լուսաբացի քամին  
Բեկբեկում է լուսի արաթետները շեղ:

Դու եկնում ես տեղից, գնում երերալով,  
Գնում որպես վրեժ, որպես սպառնալիք:  
Ետ ես նայում մի պահ, հեռվից հորձանք տալով,  
Ծավալվում է մերոնց գրոհն ալիք-ալիք:  
Բայց այս դօտը ահա... Շողերի մեջ, փոշում,  
Դու գնում ես՝ աչքդ հրակնատին հառած,  
Շոն ես գալիս մի պահ ու ողջ ձայնով գոչում.  
— Այս գնդացիրը էլ չի գործելու, առաջ...

Դա մի վայրկյան էր լոկ: Հրակնատի անցքից  
Դուք նայեցիք իրար՝ դու և ոստիսը քո.  
Նա՝ սարսափից իր սև, դու՝ անսահման հանգիստ  
Ու բռնած սիրտը քո...

Նա կրակեց, հետո

Ծարավ էիր դու խիստ, սարսափելի ծարավ  
Ու բարձրանում էիր կանաչ լանջով նավսի,  
Սղբյուրն ահա, սակայն տես ինչքան է բարակ,  
Սրտասուքի նման կաթում է զա հազիվ:  
Բայց կաթիլն էլ վերջին ակունքում կանգ առավ,  
Ցամաքել է արդեն շուրջը աղբյուրակի  
Եվ դու ծարավ էիր, սարսափելի ծարավ,  
Ծարավ չոի,  
Օդի,

Ծարավ կյանքի...

Շառաչելով անցավ նրա սրտի միջով,  
Երկիր, քո տառապանքն արճիճի հետ ահեղ,  
Դու ծա՞ն եղիր, շաշի՛ր ու մոլեգնի՛ր, Սև ծով,  
Քո մեծ սրտով երգիր երգը նրան վայել:  
Մեզ արտասուք պետք չէ, անձն է դա խաղաղ,  
Սուրա մեզ հետ առաջ, ատելության հեղեղ...

Դոլգայայի վրա որպես պատվո պահակ  
Ծածանվում է փառքի դրոշն արյունաներկ:  
Ու կանգնեցին այնտեղ զինվորները լոին,  
Շովը շաշեց, երգեց ու ծառս եղավ վրդով,  
Հունանն ընկած էր լուս կուրծքը գնդացրին,  
Ընկած գունատ, խաղաղ, պատառութված սրտով...

Նրա սրտի միջով բացված ճամփով այդ մեծ  
Զորագնդերը մեր իրենց ցամամբ արդար  
Գնում էին հոգմած, փոշոտ ու հողմածեծ  
Դեպի խաղաղություն ու հաղթանակ...

### ՎԵՐՁԵՐԳ

Ալատեղ պետք էր դնել վերջակետը գուցե ։ ։  
Եվ կամ պատմել այն վառ ծաղիկների մասին,  
Ծաղիկների մասին շաղոտ ու անբասիր,  
Որ գարունն է նրա հողաթմբին բացել։  
Բայց ներոսի կյանքը մահով չի ավարտվում,  
Եվ անկարող ես դու վերջակետը դնել։  
Մեծ սրտերի զարկը գնդակով չի հատվում  
Ու չի լոռում երբեք...

Դուք հիշո՞ւմ եք այն մեծ

Արշալույսը բացված հողագնդի վրա,  
Հաղթանակի օրվա արշալույսը շոայլ,  
Երբ մենք լալիս էինք ու ծիծաղում էինք,  
Եվ վառողից այրված շրթունքներով մեր տաք  
Ռայխատագի շեմքին մենք համբուրվում էինք,  
Գրկախառնվում քեզ հետ, մեծ Հաղթանակ։  
Ու լոռություն եղավ։ Գնդակներով ծակված  
Ռայխատագի պատին ու պատմության վրա  
Մենք գրեցինք մեկ-մեկ մեր անունները պարզ,  
Մենք գրեցինք այնտեղ բոլոր նրանց ի դաս,  
Ով զենք կառնի մեր դեմ ու կփորձի կրկին  
Մտնել մեր հողը սուրբ, մեր հայրենի այգին։  
Եվ այդ վասն պահին բոլորն այնտեղ տեսան,  
Ընկերների ձեռքով քարե կամարներին  
Մեծ տառերով գրված. «Հունան Ավետիսյան։  
Նա հայրենի Ծավից հասավ մինչև Բեղլին»։

Ծավի ձորում հիմա գարուն է ու արև,  
Նորից խոփը արծաթ Նավսի լանջն է ჩերկում,

Հուրն են իշնում ծեզին աղջկները ջահել  
Եվ Հունանի մասին երգ են հիմա երգում:  
Խնձորենու ծառն այն, որ Հունանն էր տնկել,  
Զուգվել, շորորում է ճերմակ ծաղկաթերթում,  
Հովանու տակ նրա Հենզելիկը նատել,  
Ահա ուշիմ ու լուրջ դասերն է իր սերտում:  
Ու բաց դասագրքից՝ հայացքով իր խաղաղ  
Հայրն է նայում իրեն, ու նա կարդում է լուռ.  
«Այս գնդացիրը էլ չի գործելու, առա՞ջ,—  
Գոչեց Հունանը քաջ ու իր կրծքով ամուր  
Փակեց հրակնատը: Գնդացիրը լոեց...»:

Գնդացիրը լոեց... Խաղաղություն իշավ,  
Ծավի կապույտ ձորում լուս է հիմա հորդել,  
Սակայն խտանում են հեռվում ամպերը չար,  
Ատոմային ռումբ են ձուլում այնտեղ քո դեմ:

Բայց իմ Զանգվի ձորում առավոտ է ու լուս,  
Կանաչել են, հորդել ալգեստանները ճոխ,  
Օրն այնքան է պայծառ, թվում է ոչ թե ջուր՝  
Լուս է բերում Զանգուն շեկ ժայռերի միջով.  
Եվ խոյանում են վեր խրոխտ, հաղթահասակ  
Գրանիտից կերտած աղբյուրները փառքի,  
Իբրև հերոսների մի փառապանծ դասակ,  
Որ հավերժի առաջ լուռ կանգնել է շարքի:  
Եվ այդ անմահների անմահական շարքում,  
Մատրոսովի կողքին

(Սի՞րտ, հպարտ ես զարկում)

Մեծ հերոսն է կանգնած հայոց փոքրիկ հողի,  
Կանգնած լույսերի մեջ, ճաճանչի ու շողի...  
Հորձանքի հետ իր խենթ Զանգուն լուս է տանում,  
Շողշողում է պայծառ արեզակը վերից:  
Եվ մանուկներն անթիվ թեքված ջուր են խմում  
Հերոսության, փառքի այդ ջինջ աղբյուրներից:



Ուստամբոյ արտար,

Ոնք հավերժության վիճուն եռ գրել,

Կոյք ենիդով քո սուրբ Հանչարի:

## ԳԻՇԵՐԱԿՅԱՆ, ԶՐՈՒՅՅԵ ՆԱՌԵՎԱԿՅԱՆ ՀԵՏ

Նարեկա վաճքը՝ երկնքից կախված քարե մի բուրվառ,  
Եղ այրվող մի սիրտ,

Հրդեմվող մի սիրտ՝ բուրվառում քարե...

Ու ես իմ դարից խենթ ու հողմավար

Այցի եմ գալիս

Քե՞զ, խղճի ճորտակ, քարու մարգարե,

Քե՞զ, բուժիչ քարքառ, լույս անպարագիծ,

Աստծո ախոյան ու զրուցակից,

Քանզի սրբորեն չոքելու համար,

Իմ տագմապները ոգելու համար,

Խոկալու համար,

Տոկալու համար,

Թեթևամալու, հառնելու համար

Խղճիդ խորանն է ամենից հարմար...

Ներիր, ճգնակյաց,

Դրբն ուխտավոր մի ոտարորիկ,

Վանա կասուտակ լճակի ափով ես պիտի գայի,  
Ես գերեզմանդ պիտի փնտրեի երկնքի կոպին,  
Ծունկի իշնեի  
Ու քեզ իմ դարի օրհնանքը տայի:

Եվ սակայն ներիր, ներիր, բարեգո՞ւթ,  
Ներիր, ոչու հաց, լույսի մանանա,  
Անկարող եմ գալ,  
Իձգից իւլված է լեռնաշխարհն իմ լուրթ,  
Գերեզմանը քո ու լիճը Վանա:

...Տո՞ն պիտի լիներ այդ վանքի բակում,  
Լիներ Վարդավառ,  
Երգեին պիտի ու կաքավեին հարսն ու աղջիկներ,  
Զուր պիտի տեղար,  
Լո՞ւս պիտի տեղար անձիկներն ի վար,  
Եվ օրը պիտի  
Նրանց ծիծաղի ցոլանքից շիկներ:

Եվ պիտի լիներ նաև այլ մի տոն,  
Շիրիմիդ վրա  
Տո՞ն պիտի լիներ բանաստեղծության,  
Եվ քերթողները կարդային պիտի ներբողներ ու ձո՞ւ  
Վասն արևի,  
Սիրո,  
Թախծության:

Բայց լսիր, ահն՝ դ,  
Այն աղջիկները,  
Որ գային պիտի բակը քո վանքի  
Եվ ամեն մեկը նմանվեր պիտի մի աստվածամոր,  
Ոսոխի բրդոտ ու բիրտ թաթերում մեռան լլկանքից,  
Մերկությունն իրենց «  
Ծածկած լոկ իրենց սև ու սուգ ծամով:

Եվ մանուկներն այն,  
Որ վանքիդ բակում

Զոհվող գառների անհոյս մայունից տխրեին պիտի,  
Իրենք, հենց իրենք  
Գառների նման ճերմակ ու մաքոր  
Սրահար եղան ավազների մեջ ու անապատի:

Եվ քերթողները,  
Որոնց ճակատին քո մատն էր վերին,  
Եվ ամեն մեկը լուսի ճամփորդ էր,  
Խղճի սուրբ մի աստղ,  
Անապատների ճանապարհներին  
Զարդված գանգերով ընկան դիտապատ:

Գիշեր է հիմա,  
Աստղերի տխոր զբնգոցի տակ  
Ինչոր նահատակ ասուաներ մեռան,  
Եվ Կաթնձիրը,  
Որ երկարում է հրեղեն ու տաք,  
Ասես հառաջն է Արարատ լեռան...

Գիշեր է նորից  
Արլենացել նորից ցավն իմ տվալտող  
Ու մորմոքում է կրկին ու կրկին,  
Եվ Կաթնձիրը մի տող է միայն,  
Հրեղեն մի տող,  
Մեր տառապանքի չգրված գրքից:

Լսիր ինձ, անո՞յն,  
Ու ես ոխ ունեմ, քեն ունեմ քո դեմ,  
Ես գանգատ ունեմ և ունեմ անեծք,  
Ինչո՞ւ սուզվեցիր  
Դու աստվածային ոլորտն այն վսեմ,  
Ինչո՞ւ քերեցիր ու դրիր մեր մեջ  
Այս խիղճը անեղծ...

Եվ ինչո՞ւ պիտի  
Քո աստվածային ու սուրբ բարբառով  
Մեր անձն ու հոգին

Այդ անզոր խղճին մենք առնչեինք,  
Կանգնած վայրենի այս լեռների մեջ՝ վայրենի քարով  
Մեր ժանիքները պիտի սրեինք ու կոնչայինք:

Մեր ինչի՞ն էին, ասա, հարկավոր  
Ուտան ու վանքեր,  
Օծված ինքնության այս վսեմ ոճով,  
Սրեինք պիտի մեր ժանիքներն ու սրերը մեր կեռ,  
Ասպատակեինք վայրենի քոչով:

Պիտի ելք տայինք  
Մեր բնազդների վայրենի քուրին,  
Նենգեինք պիտի ու խարդավեինք,  
Շողոմ խոսքերով դանակ խրեինք  
Հանդիպողների մեջք ու թիկունքին,  
Բարեկամներին պիտի դավեինք...

Բայց մեղա՛, մեղա՛, բյուր անգամ մեղա,  
Ինչե՞ր եմ ասում,  
Բերանս ծեփիր քո արդար աջով,  
Խափանիր, քափի՛չ, խոսքն իմ սևասուն  
Լուսե հեղեղիդ ահեղ շառաչով...  
Մաքրիր ինձ անճառ ճառագայթներով,  
Կասկածանքներիս սև մուժը վանիր,  
Աստծուն առնչված քո սուրբ մատներով  
Խղճիս մեջ խրված այս խայթը հանիր,  
Լկա ինձ կապույտ քո ամպրոպներով,  
Արտասուքներիդ մաքրությամբ ցողիր,  
Սրբիր ճակատս աջով քո ներող  
Եվ ինձ օրինությամբ նորից ողողիր:

Մեղք չունես, գիտես,  
Դեռ ջրինեղյան տապանից իշել,  
Այգի ենք տնկել մենք ձեռքով նոյան,  
Մեր քրտինքն ենք տաք  
Տվել ողկույզի բարությանը ջեռ  
Եվ վայրի հասկը դարձել ցորյան:

**Խղճի արմատը**

Ապառաժների ոյսի մեջ խրած,  
Միրանի ծառի խոնարի տքնանքով  
Բարին ենք հիննել,

Լեռներից պեղված մեր ցոլուն ոսկուց չենք հատել դրամ,  
Ոսկուց ձուլել ենք աստվածութիների:

**Մեր քարերից բիոտ**

Գետերի վրա կամուրջ ենք արել,

Որ սիրո աօնիկ քարավաններց ալցելեն մեր տուն,

Մեր գանքարի հետ երկինք ենք միտել դարեր ու դարեր  
Աշխարի բասար

Հայցեղու բարիք ու խաղաղություն:

Բայց գիւռմ հաստատ,

Նարեկա վա՛քը սրբարար ու հիմ,

Ուր դու ծնկաշոք խիղճ ու արարել,

Ուր դու աստծո հետ

Ջրուցն ես արել քո աստվածային,

Հիմա ոչխարի փարախ են արել:

✓ **Ու մերիր, անե՞ն,**

Քեմ ունեմ քո դեմ և ունեմ բողոք,

Որ քո հեծության մեծությունն ունի,

Մեր ինչի՞ն էր պետք,

Ասա, զրուցն այդ արցունքով ողող,

Որ դու, մարդասե՞ր,

Բացիր աստծո հետ, լույսի, անհունի:

**Մենք կանգնած էինք**

Դաժան աշխարի չորս հողմերի մեջ,

Քառուղու վրա նենգության, նետի, ստության, սրի,

Խավարից, չարից ու դավից հյուսված

Ջրամ էր մեզ պետք,

Դու մեզ աստղծո լույսը հագցրիր:

**Ինչո՞ւ ուզեցիր,**

Որ ապավինենք մտքի կանթեղին,

Որ լույսի փոխենք մեր սիրտը այրվող,  
Երբ անապատից սրարշավ եկող հորդան այն դեղին  
Արտաշնչում էր լոկ մոխիր ու ոխ:

**Մարեհնք պիտի**

Մեր կանթեղների լույսը ոսկեվոր

Ու մեր արտերի ոսկեվոր լույսը պիտի մարեհնք,  
Լույսը ողկույզի, լույսը հավատի, որ մթան մեջ խոր  
Այն աչքերը շեղ մեր ցոլցլանքը ճշմարեին:

Բայց մեղա՛, մեղա, ստուգապես մեղա,  
Ներիր քուշանիս ու հոնիս կոպիտ,  
Որ բարբառեցի անմահ լույսի դեմ,  
Մտոք կույր եղա,  
Ներիր կամ շանթիր ինձ, որպես Հոքի:

Լույսն է աշխարհի ճշմարտությունը,  
Միակն ու մերկը,  
Լույսն է աշխարհի գեղեցկությունը,  
Միակը դարձյալ,  
Լույսը ծաղիկն է արևածագի  
Ու լույսը երգ է,  
Լույսն է երկի այն անքննելին,  
Որի անունը կյանք է հանդերձյալ:

**Քո աստվածն ինքն էլ**

Խտացած լույս էր ու լույսի գումար,

**Քո մատյանն ինքն էլ**

Տառապած շորթով լույս է բարբառում,

Ամեն ինչ կյանքում սպառում ունի,

Ունի վերջ ու մահ,

Եվ լույսը միայն չունի սպառում:

Լույսի համար են բարձրացել խարույկ ու փոխվել լուսի,

Ու լույսն է միայն, որ պարզ է այլքան,

Այդքան անմեկին,

Ու լույսն է միայն, որ անկշիռ է,

Նման է մոխիր,

Ու ամկշիռ է տրվում ամենքին:

Լուսն է խտանում ու դառնում է հասկ,

Բողբոջ է դառնում,

Լուսն է ծիծաղում

Ակնադրյուրների կապուտակ կոպին

Եվ առավել է լուսն իմաստնանում

Ու գեղեցկանում,

Երբ փոխվում աստղի

Ու շողշողում է շեղրի մեջ խոփի:

Եվ ինքը՝ խոփը, հենց շեղր է լուսի,

Մենք խոփմ ենք դարեր աստծո պես պաշտել,

Եվ դուք եք վկան,

Հովհաններ Մուշի, Տարոնի, Կարսի,

Եվ դուք եք վկան, իմ Կարնո դաշտեր:

Լուսնյակ է եղել,

Անուշ է եղել քունը հոտաղի,

Կապույտ անհունը

Մեզ վրա կապույտ օրինանք է հեղել,

Մեզ վրա ոսկե շշուկն է փովել աստղային տաղի,

Եվ մեր խոնչանքը վաստակած աստծո խոնչանք է եղել:

Բայց արյուն հոսեց մեր ակոսներով,

Մեր լուսի հասկը

Գլխատվեց անհույս ու անապաքեն,

Ու ես վեճ ունեմ, քեն ունեմ, մերո՞ղ,

Նախնիներիս դեմ ոյս ունեմ ու քեն:

Սուածին մետաղն, ասում են, դու ես ձուլել, իմ երկիր,

Բայց խոփմ ո՞ւմ էր պետք,

Մրերն էին պետք ու մկունդ, ու մետ,

Եվ ո՞ւմ էին պետք

Մեսրոպյան տառերն այս երկաթագիր,

Մեզ երկաթակիր հրոսակների շառաչյուն էր պետք:

Դուք մեր ափի մեջ ինչո՞ւ դրեցիք խղճի մաճն արդար,

Ցաթաղան տայիք, տապար ու կացին,

Եվ ինչո՞ւ դրիք  
Աստղոտ ցորենի հրաշքը խարտիաշ,  
Որո՞մ դնեիք,  
Որ թույն խառնեինք օտարի հացին...

Բայց ների՞ր, ների՞ր,  
Վեհորեն ներիր մի վերջին անգամ,  
Խոկ թե ներումի խոսքեր չգտնես,  
Անեծքով շանթիր,  
Ես չլի, դա իմ մորմոքն էր անկամ,  
Որ մերթ կուրանում  
Ու նմանվում է սևասուն խանդի:

Ներիր, բարեգո՞ւթ,  
Փարատիր մաղձի մոլուցքն այս դեղին  
Եվ կասկածանքիս ամպերը ցորիր,  
Հուշիր ինձ նորից  
Դու ճշմարտությունն այն հայտնի ու ԲԻԱ,  
Որ նա, ով սուր է իր ձեռքը առնում,  
Ընկնում է սրից:

Եվ դու դարեղար  
Շնորհել լույսը քո սուրբ կանթեղի  
Եվ արտասուքիդ  
Ցողերով ես մեզ անվերջ լվացել,  
Որ մենք կարենանք, ներքնում թողած մաղձը մեր լեղի,  
Ոգու պես թեթև երկինք թևածել:

Քանզի գիտեիր,  
Որ փոքր է հողը ու փոքր է ածուն,  
Եվ դար ու դարեր  
Հողմղ այդ հողից սահման է պոկում,  
Ուրեմն այսի երկինք վերանանք,  
Հասնենք աստղծուն,  
Ուրեմն այսի խորանանք, իշնենք անդունդը ոգու:

Եվ դու, նորոգի՞չ,  
Մերթ վերին լույսին մեզ առնչեցիր,

Մերթ անդունդները,  
Ոգու վիհերը տարար գահավեժ,  
Ու մենք լուսի հետ մութը շնչեցինք,  
Մենք ժառանգեցինք ալեբախության տանջանքը հավերժ:

Մե՛ծի, գիտեիր,  
Տիեզերական խորհությը վերին,  
Որ շարժման մեջ է ամեն զորություն,  
Ալեբախումն է,  
Որ մաքրություն է բերում ծովերին,  
Ու տառապանքն է բերում խորություն:  
Ու մեզ մաքրեցիր,  
Որ դառնանք վերին լուսին արծանի,  
Որ անդունդներից հանենք բարձության աստղերը կորած,  
Եվ մեր քարը բիրտ,  
Որ պիտի դառնար լոկ ոխ ու ժանիք,  
Լուսի սյուն արինք,  
Հրաշքի խաչքար  
Ու խղճի խորան...

Մեր տառապանքից  
Ոգու հրեղեն սյուներ բարձրացան,  
Որ ճշմարտության ու գեղեցկության տեղն էին հուշում,  
Մեր կարոտները  
Արծաթե մաքուր զանգակներ դարձան  
Եվ աստղերի պես  
Լուսի դողանջներ փուեցին մուժում:

Ամենն այդ գիտեմ,  
Բայց երբ գիշերն է իշնում աշխարհին,  
Ներիր, անարա՛տ,  
Զարթնում է նորից թախիծն իմ արյան,  
Զարթնում է նորից պարտությունների մորմոքը դեղին  
Եվ հեկեկում է երակների մեջ իմ բազմադարյան:

Ու երբ հիշում եմ,  
Որ իմ Եփրատը, քարեքար ընկած,  
Ծիածաններ է նորինում անգամ գիշերվա մթնում,  
Որ իմ Բայրենի տնակին իշած խոշոր լուսնկան

Մեր երազներն է այնտեղ որոնում, սակայն չի գտնում,  
Հիշում, որ վանքը, Նարեկա վանքը,  
Ուր դու, հանճարե՞ղ,  
Զրուցում էիր  
Աստծո հետ,  
Լուսի  
Ու առեղծվածի,  
Հիմա ոչխարի փարախ են արել,  
Արյունս նորից փոխվում է մաղձի:

Ու երբ հիշում եմ,  
Որ չի ավարտվել այն նախնիրը դեռ,  
Շարունակվում է գիշերվա դավով, ստով տվնջյան,  
Որ այն Գայլը Գորշ  
Սողալով ելնում Արարատն ի վեր  
Եվ ժանիքներով ջնջել է փորձում  
Նրա անունը աստվածաշնչյան,  
Որ ամեն գիշեր  
Քար են գողանում սրբաքար Անուց,  
Որոնց նախշերում  
Մեր տաք քրտինքի արծաթը դեռ կա,  
Որ մեսրոպատառ մեր հիշատակն են այնտեղ սպանում,  
Ու մորթվող հուշն է գիշերների մեջ հառաչում երկար,  
Որ ջնջում,  
Հերքում,  
Եղծում են ոճիրն այն եղեռնական  
Եվ աշխարհով մեկ դրամով գնված սուտն են որոճում,  
Ու երբ մենք, սեղմած ատամները մեր,  
Լոռում ենք անգամ,  
Ու մեր փոխարեն քարերն են գոչում,  
Ուզում եմ այնպես,  
Ով արդարախանդ,  
Որ մոնչայիր դու երկինքն ի վեր,  
Եվ քո մոռունչով  
Նարեկա վանքը դարձած նետ ու շանթ,  
Երկինք պլանար  
Ու այս աշխարհի խղճի մեջ խրվեր:

Եվ խոռվքի մեջ,  
Խառն ու խորսներամ այդ մառախուղի,  
Որ մորեխների թուխաբը են ասես խավար ու ահեղ,  
Այդ մոխիրների, մխանքների մեջ սև ու անուղի  
Խելվում եմ ասես  
Ու խարիսափում եմ խենթ ու շնչահնելձ:

Ես սարսափում եմ ու շշնջում եմ.

— Բացվի՛ր, առավոտ,  
Ծո՛իս, երկինք ելիր,  
Հորիրա նորից, հայրենի օջախ,  
Խաղաղվիր նորից, արյուն իմ ցավոտ,  
Ու թող համրանան քո շրթունքներին հառաչանք ու ախ...

Բացվի՛ր, առավոտ,  
Թող քո լույսերը անձրևնեն առատ,  
Թող բարին քայլի  
Ամեն կածանով ու արահետով,  
Հայրենի աղբյուր, ցոլա՛ անարատ,  
Ինչպես աղցունքը հավատացյալի՛  
Աղոթքից հետո:

Ու երբ զարթնում են մանուկները մեր,  
Լույսով թաթախվում,  
Դառնում ճնճղուկ և խառնվում են ծաղկին ու հովին,  
Ու երբ արտույտն է  
Հայրենի փոքրիկ մեր արտին կախվում,  
Հաշտարա՛ր վսեմ,  
Հաշտվում եմ քեզ հետ, հաշտվում ոգևին...

Հաշտվում եմ քեզ հետ,  
Չրաղա՛ց արդար, որ դար ու դարեր  
Մեր խղճի մաքուր ալյուրն ես նյութել,  
Փեթա՛կ անխափան,  
Ծոցիդ մեջ առած ծաղիկ ու արև,  
Մեր ոգու մեղրը զտել ես թույնից  
Ու զտում ես դեռ...

Հուսարա՞ր անքուն,  
Անպակաս արել յուղը կանթեղի  
Ու հալածել ես չարքը մթության,  
Դեղապէն հմուտ,  
Բուժիչ զորությամբ բանական դեղի  
Մաղձը փարատել, մեզ ուժն ես տվել ողջամտության:

Դարբի՞ն կորովի,  
Դու լուսի անխոց զրահ ես կոել,  
Որ հագնենք ընդդեմ խավարի, չարի,  
Դատավո՞ր արդար,  
Մեր հավերժության վճիռն ես գրել,  
Կնքել կնիքով քո սուրբ հանճարի:

Հավատում եմ ես,  
Դու պիտի քայլես աշխարհեաշխարհ,  
Քեզ ჩետ քերթության մեր լուսը տանես...  
Սուաբյա՞լ անքիծ,  
Դու ամենեցուն, իբրև սուրբ Աշխար,  
Մեր սիրո հացը պիտի բաժանես:

Պիտի ընթանաս  
Այս ահեղ դարի ճամփեքով խրթին,  
Մեր արդարության բարբառը հաստես,  
Պարտիզապա՞ն հմուտ ու հրաշալի,  
Աշխարհի սրտին  
Մեր խղճի ոստը պիտի պատվաստես:

Հավատում եմ ես,  
Հայոց աշխարհի լեռներից այս մով  
Ալիքի հման դու պիտի պոկվես լուսով քո վերին,  
Փոթորիկն անդով,  
Պիտի հավերժող ալեբախումով  
Մի քիչ մաքրություն խառնես աշխարհի պղտոր ծովերին

Իսկ թե կա, իրոք,  
Ու լինելու է դատաստան ահեղ,

Իսկ պատմությունը հաճախ է արդար ատյանն իր քննում...՝  
Տառապլակ դու մեծ,  
Դու պիտի կանգնես  
Մաքուր,  
Փառաբեն,  
Երբև մի վկա,  
Որ հավասար է հենց իրեն՝ աստծուն...

1988



... Եկունքին իզնեի ժունկի,  
Այդ զրից խմեի մի կում:

## ՏԵՍԻ

Հագիմը կրակ է ու ծուխն,  
Հագիմը կարմիր է ու սև,  
Խոկ իմքը աղջիկ է բարակ,  
Երևի տասնվեց տարու...  
Բացում է թևերը ահա,  
Պարում է, ծփում է ասես,  
Ծփում է իրանը մկուն,  
Կրծքերը դողում են առույգ:

Պարում է, ծփում է ասես,  
Բարձրանում, իշմում է մերքն,  
Կարմիրը և սևը խառնած,  
Կրակն մորիկ է դառնում...  
Պարում է, պարում է, պարում,  
Ու մի զույգ բարալիկ ձեռքեր  
Քնքշորեն իշմում են ահա,  
Արծաթն սկուտեղմ առնում:

Զարթնել եմ... գիշեր է խավար,  
Քունքիս մեջ զարկեր են մուրճի,  
Այս ի՞նչ է պատահել իհա հետ,  
Ո՞ւր էի և ո՞ւր եմ հասել...

Գիշերը աշխարհին թեքված  
Ու հսկա գավաթ է սուրճի,  
Ու մեկը մրուրով նրա  
Իմ բախտն է գուշակում ասես:

... Իսկ հեռու գետակի ալիին  
Կանգնել է սևաշ մի մանուկ,  
Նսյում է, արև են քերում  
Գետակի ջրերը ելած,  
Եվ հետո քարեքար տալով,  
Սպիտակ փրփուր են տանում,  
Նսյում է, չգիտե սակայն՝  
Ամենն այդ ծիծա՞ղ է, թէ՞ լաց...

Նսյում է, չգիտե սակայն,  
Թե ինչո՞ւ ինչ-որ շար ձեռքեր  
Քաշելով տանում են իրեն  
Ու պոկում գետակի ափից...  
Ախ, ամեն առավուս այնտեղ  
Կապուտակ հավքեր են երգել,  
Իսկ բարդին խշշում էր խաղաղ,  
Որ վերից աստղ ու ցող թափի:

Ախ, այնտեղ անուշ էր այնպես  
Ծիփ հոտն ու հոտը հացի,  
Մայում էր սպիտակ մի գառ,  
Եվ օրը լույսով էր լեցուն...  
Նայում է, գետակը ոսկե  
Ծերմակել, փոխվել է լացի,  
Ծերմակած իր տատի նման  
Հառաջում, ծնկներն է ծեծում:

... Բայց ո՞վ է հետևում պատի  
Եվ ինչո՞ւ չի գալիս, ախ, ներս,  
Այդ ո՞վ է իմ մասին խոսում,  
Թե ես եմ զառանցում ցավից.  
«Լիպրել ես այսքան ու այսքան,

Պոետի համարում ունես,  
Էլ ո՞ւր ես երկնչում այդքան,  
Էլ ո՞ւր ես վախենում մահից»...

Խավարը խտացել ասես  
Ու վրւս ամպեր է փոել,  
Որ մերթ տոթ քրտինք են քամում,  
Մերթ փոխվում սարսուն ու դողի:  
Թվում է, որ որ է ահա  
Ուղարիս ծալքերում հրե  
Պիտի որ նայծակը շողա՝  
Նման մի հանճարեղ տողի:

Այդ ո՞վ էր, դու ինքդ հուշիր,  
Որ քան տարեկան մեռավ,  
Հանճարեղ տրտունջը ոգեց  
Ու հանգավ իբրև հուր ասուպ...  
Ինչո՞ւ ես հապաղում այդպես,  
Ծշնջա աղոթքդ լեռան  
Ու գնա, միացիր հավետ  
Մայրիկիդ ու հողին քո սուրբ:

Այդ ե՞րբ էր, որտե՞ղ եմ տեսել՝  
Բարալիկ, մենավոր մի ծառ  
Բոնկվել կրակով աշնան  
Ու բոցը երկինք էր նետել,  
Կապույտը անհուն էր այնպես,  
Անհունը այնպես էր պայծառ,  
Ու բոցը թրթիռ էր ոգու,  
Ու բոցը ոգի էր թեթև:

Հիշո՞ւմ ես, աշխարհում մի օր  
Սպրել է պոետ մի գանգոր,  
Երգել է Ծահանե ու սեր,  
Դաշտային անամոք թախիծ...  
Եվ այդպես գեղեցիկ, ջահել,  
Եվ այդպես թեթև ու անփույթ,

Կտրել է երակը մի օր,  
Կախվել է առաստաղից:

Զգիտեմ, ինչո՞ւ եմ այս սև  
Հուշերը շանթի պես զարկում,  
Զգիտեմ, կայծակի սպին  
Կապո՞յս է լինում, թե՝ կարմիր...  
Ախ, եթե մի հնար լիներ,  
Թողնեիր իմ Բոգին արթում,  
Իսկ ինքդ չքվեիր Բավետ,  
Իմ անզոր, տառապած մարմին:

Ախ, եթե մի հնար լիներ,  
Մարեի քեզ, այրող իմ տեսնη,  
Գնայի լեռները մեր զով,  
Կորչեի կապուտակ միգում:  
Ես այնտեղ Լոր գյուղից վերև  
Սառնորակ մի աղբյուր գիտեմ,  
Ակունքին իշնեի ծունկի,  
Այդ ջրից խմեի մի կում:

Ես գիտեմ, հաճախ է այդպես՝  
Մի աղբյուր, շաղոտ մի ծաղիկ,  
Կամ գարնան ամպրուպ մի մաքուր,  
Կամ անհայտ, անծանոթ մի կիճ  
Հայտնվում հրաշքի նման,  
Քեզ հանկարծ փրկում եմ ցավից,  
Ու կրկին աշխարհը անցավ,  
Ու հա՛շտ է աշխարհը կրկին:

Բայց հիմա հոդերս նվում,  
Հոդերս դարձել եմ հրե,  
Թներս կախվել են, որպես  
Վիրավոր կոռունկի թներ,  
Ուզում եմ շշնչալ, ասել.  
«Զեռքերս գլխիս տակ դրեք»,  
Բայց բառը քարացել իմ մեջ,  
Չի եղանակ չոր կոկորդս ի վեր:

Երևի նման եմ հիմա  
Աշխարհի առաջին մարդուն,  
Որ ցավից ուզել է խոսել,  
Շարժել է շուրթերը իր գոց,  
Չեն ծնվել բառերը սակայն,  
Բառերը տառապել արթուն,  
Բառերը շուրթերը այրել,  
Դարձել են հառաչ ու տնքոց:

Հագինը կրակ է ու ծուխ,  
Հագինը կարմիր է ու սև,  
Ծփում է իրանը ճկուն,  
Կրծքերը դողում են առույգ...  
Աստված իմ, այդ ո՞վ է, ասա,  
Հուշի՞ր ինձ, այդ ո՞ր եմ տեսել,  
Աստված իմ, չքնա՞ղ է որքան  
Եվ հազիվ տասնվեց տարու:

Պարո՞ւմ է, պարո՞ւմ է, պարո՞ւմ,  
Գալարվում բոցի պես ահեղ  
Եվ այդպես գալարքով բոցի  
Մումկի է իշնում նա հլու...  
Եվ հետո ելնում է կրկին  
Ու կրկին սկսում է պարել,  
Զեռքերում սկսութեղն արծաթ  
Ու վրան՝ մի արնոտ գլուխ...

Այդ ո՞վ է հետեւում պատի  
Եվ ինչո՞ւ չի գալիս, ախ, ներս,  
Այդ ո՞վ է իմ մասին խոսում,  
Թե ես եմ զառանցում ցավից,  
«Ասրել ես այսքան ու այսքան,  
Պոետի համարում ունես,  
Էլ ո՞ր ես երկնչում այդքան,  
Էլ ո՞ր ես վախենում մահից»:

Հասկացի՞ր, վախ չունեմ ես, ո՞չ,  
Ես գիտեմ, վայրկյան է դա լոկ,  
Ես գիտեմ, ցավ չկա քնավ,  
Կա միայն կտրվող մի թել...  
Եվ սակայն իմ խորքից մի ձայն  
Ինքն իրեն արձագանք տալով,  
Ասում է. «Ստո՞ւ ես, մերիր,  
Ու մեղք է ցավի մեջ ստել»:

Հասկացի՞ր, ասում եմ կրկին,  
Դու զուր ես բարբառում, ա՞յս, զուր,  
Աշխարհում կարող էի ես  
Վաղուց, շատ վաղուց չինել:  
Ես եղա կովում այն ահեղ,  
Հյուսիսի հողմերի մեջ ցուրտ...  
Մի գիշեր, սոսկալի հոգնած,  
Զյան մեջ եմ, հասկացիր, քնել:

Ու քոնս թեթև էր այնպես,  
Ես ասես ամպերից կառչել  
Ու թեթև փետուրի նման  
Բարձրանում, վեր էի հառնում...  
Այդպես է, ասում են, երբ մարդ  
Քնի մեջ սկսեց սառչել,  
Ինքն այդպես ամուշիո, թեթև,  
Մահն այդպես անցավ է դառնում:

Եվ զուր ես բարբառում այդպես,  
Ես մահից վախ չունեմ քնավ,  
Ես նրան մոտիկ եմ եղել,  
Ես անգամ տեսել եմ նրան...  
Եվ սակայն, սատանան տանի,  
Արշալույսն, ա՞յս, շա՞տ է չքնաղ,  
Չքնաղ է ծաղիկը ցողոտ,  
Հրա՛շք է աղբյուրը լեռան:

Հրա՛շք է շշուկը աստղի,  
Մամուռի արցունքը՝ հրաշք,

Հրաշք է այն դողը թերև,  
Որ կապույտ ավարտն է բոցի,  
Հրաշք է շամանդաղը լուրթ  
Վաղորդյան անդունդի վրա,  
Հրաշք է բուրմունքը՝ բխած  
Կանացի լուսեղեն ծոցից:

Եվ դեռ կան վայրկյաններ վերին,  
Որ կանչել ու կանչում են դեռ,  
Եվ դեռ կա առեղծված մի մեծ՝  
Արարման մուժի պես թովիչ,  
Եվ բալ է առնչվի հանկարծ  
Ինձ նրանց ծվենը թերև,  
Որ հոգիս հրեղեն դողով  
Վերանա մեղավոր հողից:

...Բայց գիշերն այս ինչքան երկար,  
Եվ լույսն այս ինչքան է դեղին,  
Այրվում եմ, թվում է դարեր  
Հենց այսպես խաչված եմ եղել...  
Ու ջուր են շուրթերիս քսում,  
Ու ջուրը թվում է լեղի,  
Թվում է՝ ափերիս մեջ խոր  
Խրվել են ժանգոտած մեխևր:

Թվում է՝ գալարվում ահա,  
Ելուս է սնկածն մի ծուխ,  
Կախվում է աշխարհի վրա  
Իրքն մի անողոք հարցում...  
Ծխի մեջ ճշում ու իսկույն  
Կորչում է խարտյաշ մի մանուկ,  
Ու հետո դողում է կոպիս  
Մի խոշոր, շողուն մի արցունք:

Այդպես էլ չիմացա կյանքում,  
Թե արցունքն ինչո՞ւ է շողուն,  
Ինչո՞ւ է նա այդքան հստակ,

Երբ դառն է այսքան ու աղի...  
Հիմա էլ շգիտեմ նույնիսկ  
Ինչո՞ւ ես կոպերիս դողում,  
Արմատոց ցավիս մեջ խրած  
Արցունքի հրեղեն ծաղիկ:

Ասում են, թե մարդուց բացի  
Զիերն էլ արտասվել գիտեն,  
Զիերն էլ կարոտից լալիս,  
Կախում են բաշերը տիսուր:  
Նժույգնե՞ր, ձեզ շատ եմ սիրել,  
Զեր խոշոր աշքերն իմ դեմ,  
Նժույգներ, այս գիշեր գայիք,  
Տանեիք, դուք գիտեք, ա՞յս, ուր...

Լեռներում կապուտ է ու զով,  
Լեռներում քամին է զնզում,  
Լեռներում ցավ չկա բնավ,  
Կա միայն թախիծ մի լեթեն,  
Նժույգներ, իմ կրծքի վրա  
Փուիք բաշերդ քնքուշ,  
Սուրայիք հովերի միջով,  
Մարմինս հանեիք եթեր:

Այդ ո՞վ էր, չեմ Բիշում հիմա,  
Հներից, քաջերից մեր սեզ,  
Ցավի մեջ գալարվել անքուն,  
Մորմոքել, հառաշել մի օր,  
Թե մահն իր վատթար է, քանզի  
Անկողնում պառկած է հասել,  
Երանի, հազա՞ր երանի  
«Ոիպել էր ի վերա ձիոյ»...

• • • •  
Հագինը կրակ է ու ծուխ,  
Հագինը կարմիր է ու սև,  
Ծփում է իրանը ճկուն,  
Շողում են զիստերը նրբին...

Կարմիրը և սեղ խառնել,  
Պարում է, պարում է թեթև,  
Զեռքերում սկուտեղն արծաթ  
Ու վրան՝ Գլուխը սրբի...

Սալումեն՝, այդ դու ես, գիտեմ,  
Կյանքի պես չքնաղ ու ջահել,  
Կյանքի պես դաժան ու ահեղ,  
Սալումեն՝, այդ դու ես, գիտեմ,  
Արճամած գլուխը սրբի  
Բարալիկ ձեռքերով պահել,  
Պարել ես դարեր ու դարեր,  
Հիմա էլ պարում ես իմ դեմ:

• . . . .  
Այդ ի՞նչ է մթամ մեջ հեռու,  
Թափո՞ր է արդյոք, թե՞ անտառ...  
Թվում է, հողմեր են ելնում  
Եվ պիտի ուր որ է վայեն:  
Թվում է, մթամ մեջ նատել,  
Քամու հետ սուզում է դանդաղ  
Եվ նորից դանակ է սրում  
Մի ինչ-որ սնադեմ Կայեն:

Ու շեղբը ցոլում է մթնում,  
Ու շեղբը ցոլանք է տալիս,  
Ու շեղբի ցոլցլուն սայրին  
Խիղճն ինքն է արնոտվում ասեաւ  
Եվ հետո խավարի խորքից  
Մի զսպված քրքիջ է գալիս,  
Երևի ծիծաղը մահու  
Եվ մահու կատակն է դա սև:

Ու ահա թեքվում է վրաս  
Մի գունատ, ոգեղեն մի դեմք,  
Քիթը կեռ, աչքերի մեջ խոր  
Հրաշքի տեսիլք է ու բոց...  
Ծշնջում, ասում է կարծես,

Թե ի՞նչ է քո ցավն իմի դեմ,  
Խճանից խեցին հավետ  
Մի վերին սրբություն պրոց:

Մարմինս ցնդել էր ասես,  
Թսկանցիկ ոգի էր դարձել,  
Ոգու պես այրվում էր անվերջ՝  
Նաիրյան մորմոքը վրան:  
Եվ սակայն մթան մեջ ամեղ  
Բարձրացավ անոլոք մի ձեռք,  
«Նավզիկեն» անմշակ մնաց  
Ու կիսատ՝ «Աղոթքը լեռան»:

Ասում եմ՝ վարպետաց վարպետ,  
Ցավը չէ ինձ այդքան տաճում,  
Դեռ ունեմ չքաված մեղքեր,  
Մուրհակներ ունեմ չնարած,  
Դեռ հեռու-հեռավոր ափից  
Աճիայտի խորհուրդն է կանչում,  
Ծաղիկը հրաշքի նման  
Ու ցողը աստղի պես վառած:

Դեռ մեղքեր ունեմ չքաված,  
Ակամա ու կամա մեղքեր,  
Որ գալիս ու սիրտս են խրվում  
Իբրև իւայթ, իբրև փուշ ու մառ...  
Այդ ե՞րբ էր, կապուտակ մի բոց,  
Դմ սիրտը մեշտեղից ճկդեկ,  
Տերեկն ինձ հարբած էր պահում  
Եվ ամբողջ գիշերը՝ խումար:

Ու եղավ հանճարեղ մի օր,  
Նա ասաց. ո՞ւր կուզես գնանք,  
Ես այսօր շոա՞յլ եմ ասաց,  
Ես այսօր նման եմ հողի...  
Ի՞նչ ասեմ քեզ, անզոր իմ սիրտ,  
Զգուար ճամփա ու հնար,

Ու թուավ վալրկյանը հավետ,  
Ծուխս դարձավ ու դարձավ մոխիր:

Կապուտան այդ բոցի համար  
Դու պիտի քո կյանքը տայիր,  
Պահնիր, ինչպես մեր նախնիք  
Սրբազն կրակն են պահել:  
Իսկ հիմա ամեն ինչ կորած,  
Ամեն ինչ փոխվել է ցավի,  
Ու սրտիդ ավերի վրա  
Սգում է կակիծը ահեղ:

Եվ մեղքեր ունեմ չքաված,  
Որ արդեն անզոր եմ քավել,  
Որ պիտի ցավիս հետ տաճեմ  
Ու խառնեմ մեղավոր հողին:  
Իմ մայրը գիշերը մեռավ,  
Երբ հանգիստ քնած եմ եղել,  
Չտվի համբույրս վերջին,  
Մահու դեմ մեն-մենակ թողի:

Եվ մեղքեր ունեմ չգործած,  
Որ սակայն առավել լեղի,  
Առավել թունոտ մի խայլով  
Խոցել են ու խիդս պեղել...  
Որտեղ որ արնել է մի սիրտ,  
Մոլեգնել սարսափը դեղին,  
Թվում է, ես էլ եմ կյանքում  
Այդ շարին մեղսակից եղել:

Ի՞նչ ասեմ, Նարեկա վանքի  
Ծգնավոր ահեղ ու արդար,  
Որ ինձ էլ քո ճորտը արիր,  
Որ ես էլ աղոթեմ առ քեզ,  
Որ անգամ տեսորի մեջ այս տոյք  
Ինքս իմ վճիռը կարդամ,

Զգործած մեղքերիս համար  
Ինքս ինձ պատեպատ զարկեմ:

Եվ պարտքեր ունեմ շմարած,  
Շմարած մուրիակներ ունեմ,  
Ու դեռ կան մոգական բառեր.  
Որ փառութել ու դեռ չեմ գտելի  
Հոգուս մեջ դողում է ամվերջ  
Թախծության հրաշքը գումեղ  
Եվ մյութը ոգու հետ կապող  
Աննշմար, հրեղեմ մի թել:

Գեղարդա վիմափոր վաճքի  
Համարեն վարպետին եմ պարտք,  
Ծմկածալ աղոթք եմ ես պարտք  
Տքմանքիդ, քարագործ Մոսիկ:  
Ես պարտք եմ ժայռերից կորզած  
Զեր ոգում խոնարհ ու հպարտ,  
Պարտք եմ ձեր հրաշքին անճառ,  
Ձեր անճար ծարավ ու ծոմին:

Զգիտեմ ,որտե՞ղ եմ տեսել,  
Երևի ծորում էր Գառնո,  
Մի բեկոր ապառած քարից  
Մի կաթիլ արցումք էր ծորում,  
Այդ կապույտ կաթիլից ծնվել  
Ցոլում էր ծաղիկ մի արնոտ,  
Արցումքից ծնված այդ ծաղկին  
Ես պարտք եմ թախիծ մի խորումկ:

Մի հսկա քնքություն եմ պարտք  
Խանդի պես այրվող մի կնոշ,  
Որ մի օր իմ խուզք եկավ,  
Երբ սիրտս հոգմած էր ու ծեր,  
Եկավ զա հողմի պես վայրի  
Ու եկավ զա իբրև շնորհ,

Որ հետո օրերիս վրա  
Դր վայրի քնքանքը գցեր...

Հագինը կարմիր է ու սն,  
Հագինը՝ կրակ ու արյուն,  
Հագինը վառվում է անվերջ,  
Այրում է զիստեր ու իրան...  
Ա՛խ, այդպես շնչաղ ու թերև  
Այդ մե՛ղքն է աշխարհում պարում,  
Զեռքերին սկուտեղն արծաթ,  
Նրսամած գլուխը վրաև

Զարթնել եմ... Գիշեր է նորից,  
Քունքիս մեջ զարկեր են մուրճի,  
Այս ի՞նչ է կատարվել ինձ հետ,  
Ո՞ւր էի և ո՞ւր եմ հասեղ...  
Գիշերը աշխարհին թեքված  
Մի հսկա գավաթ է սուրճի,  
Ու մեկը մրուրով նրա  
Նմ բախտն է գուշակում ասես:

Գուշակի՛ր, մի քաշվիր, ասա՛,  
Ես ինքս էլ տեսնում եմ անգամ,  
Որ նրա մրուրի մեջ սև  
Հագիվիազ մի աստղ է դողում:  
Բոնում եմ ես շողը նրա,  
Ուզում եմ քայլ անել դանդաղ,  
Բայց մինչև ծնկներս, ալադ,  
Խրվում եմ, թաղվում եմ հողում:

Խրվում եմ, թաղվում եմ ուժատ,  
Ասես թե Մինեմ եմ ես որք,  
Հողերս նվում եմ սաստիկ,

Յավում են կոպերս մարող:  
Բայց շողը ամուր եմ բռնել,  
Բռնել եմ ճառագայթն այդ բորք  
Ու իմքս խորհում եմ իմ մեջ,  
Որ դա հենց քո շողն է, Կարոտ...

Կարծո՞ւմ եք, վաղոց է արդեն,  
Իմ կյանքում հրաշքներ չկան,  
Կարծո՞ւմ եք, վաղոց են արդեն  
Կարոտն ու հավատը մեռել...  
Եվ ահա հավատով քուրմի  
Այդ ոսկե աստղի դեմ ծնկած,  
Ուզում եմ մոգական խոսքով  
Երկնքից նրան վար բերել:

Ու նա էլ ցոլանքով իր հուր  
Հմայում ու ինձ է կամշում...  
Չգիտեմ, նա՞ է ցած գալիս,  
Թե ես եմ պանում եթեր...  
Մեր տունը, հովիտն է այնտեղ,  
Մեր ոսկե գետակն է հնչում,  
Կապույտի թրթիռը հագած,  
Մեր բարդին դողում է թեթև:

Ախ, այնպես անուշ է այնտեղ  
Ծխի հոտն ու հոտը հացի,  
Եվ շաղոտ խոտերում կորած  
Սպիտակ մի գառ է մայում...  
Թվում է, թէ ոչինչ չկա  
Կապույտից ու լույսից բացի,  
Ու մայրս թեքվել է վրաս,  
Թեքվել ու վերքիս է նայում:

Նայում է, մատներով բարակ  
Առնում է արևի մի շող  
Ու մրա ասեղով ոսկե

Իմ ցավի փշերը հանում...  
Ու հետո լեռնային ճամփան  
Զրնգուն հովերի միջով  
Մեզ տանում ակունքն այդ գետի,  
Մեզ դեպի երկինք է տանում...

1989

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Հայերգություն</b>	<b>5</b>
<b>Ծուխ ծխանք</b>	<b>17</b>
<b>Ասք սիրո և սրի</b>	<b>33</b>
<b>Ասք Մաշտոցի մասին</b>	<b>47</b>
<b>Ծերմակ ձիավոր</b>	<b>58</b>
<b>Զվարթնոց</b>	<b>72</b>
<b>Թռնդրակեցիներ</b>	<b>89</b>
<b>Ծիրանի ծառ</b>	<b>189</b>
<b>Կոմիտաս</b>	<b>311</b>
<b>...Բայց ծնվեցի</b>	<b>320</b>
<b>Ռեզվինս</b>	<b>855</b>
<b>Ծանապարի սրտի միջով</b>	<b>872</b>
<b>Գիշերային զրույց Նարեկացու հետ</b>	<b>894</b>
<b>Տեսդ</b>	<b>407</b>

ՎԱՀԱԳՆ ԱՐՄԵՆԻԱԿԻ ԴԱՎԹՅԱՆ  
Երկեր Երկու հատորով  
Հատոր II  
(Պոեմներ)

ВАГН АРМЕНАКОВИЧ ДАВТЯН  
Сочинение в 2 томах  
Том II  
(Поэмы)  
(на армянском языке)  
Издательство «Советакан ցրօք»  
Ереван, 1985

Խմբագիր՝ Ա. Ա. Քիշոյան  
Նկարիչ՝ Հ. Ա. Մամյան  
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

**ИБ 4847**

Հանձնված է շարվածքի 25. 09. 1984 թ.: Ստորագրված է տպագրության  
15. 01. 1985 թ.: Ֆորմատ  $84 \times 108^1/32$ : Թուղթ՝ տպագր. № 1: Տառա-  
տեսակ «Նոր»: Տպագր. բարձր: 17,22 պայմ. տպ. մամ., 17,8 մրատ.  
մամ.+1 Աերդիր: Վֆ 08110: Տպաքանակ 80.000: Պատվեր 2335: Գինը՝  
2 ո. 10 կոպ.:

«Սովետական գրող» մրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:  
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна-91.

ՀՍԽՀ մրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի  
պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:  
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и  
книжной торговли Армянской ССР. Ереван, ул. Алавердяна, 65